

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՁՅԱՆ



ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1991-2005 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ - 2023

9155)
2/ 80
h2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՆՅԱՆ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1991-2005 ԹԹ.

5559

ՄԵՍՐՈԲ ԱՐՔ. ԱՃՁԵՆ
ՄԱՏԵՄԱՏԻԿ
244



Spiry Gyulanyan

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
244

ԵՐԵՎԱՆ-2023



ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63
Մ 806

**ՀՐԱՏԱՐԱԿԿՈՒՄ Է ՀՀ ԳԱՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇԱՄՔ**

Խմբագիրներ՝
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Է. Գ. ՄԻՆԱՅԱՆ
Գրախոս
Պատմական գիտությունների թեկնածու
Գ. Խ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Մկրտչյան Վ. Գ.
Մ 806 Հայ-իրանական հարաբերությունները 1991-2005 թթ. /
Վ. Գ. Մկրտչյան.- Եր.: 2023.- 257 էջ:

Աշխատությունում քննարկվում են հայ-իրանական քաղաքական, տնտեսական և գիտակրթական ու մշակութային հարաբերությունները, ինչպես նաև այդ գործընթացին իր որոշակի մասնակցությունն ունեցած Իրանի հայ համայնքի դերը 1991-2005 թվականներին:

Սույն աշխատությունը հեղինակի 2014 թվականին պաշտպանած ատենախոսության լրամշակված տարբերակն է: Գրքում փորձ է արվել անդրադառնալ երկկողմ հարաբերություններում տեղ գտած ձեռքբերումներին ու խնդիրներին:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63

ISBN 978-9939-892-36-8

©ՀՀ ԳԱՍ Պատմության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....11

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀՀ-ԻԻՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Պատմական ակնարկ.....	15
1.2. Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը.....	17
1.3. Արցախյան հակամարտության կարգավորումն ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության համատեքստում.....	31
1.4. Որոշ «խնդիրների» շուրջ.....	72
1.5. ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները միջազգային հարաբերությունների համատեքստում.....	85
1.6. Հայ համայնքի մասնակցությունը միջպետական հարաբերությունների գործընթացին.....	101

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀՀ-ԻԻՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Տնտեսական հարաբերությունների սկզբնավորումը.....	111
2.2. Կենսապահովման միջոցների մատակարարման հարցը.....	117
2.3. Ստահոգիչ երևույթներ.....	125
2.4. Ելևէջումներ տնտեսական կապերում.....	129
2.5. Էներգետիկ համագործակցությունը.....	147
2.6. Իրանական կապուղիները որպես կյանքի ճանապարհ.....	158
2.7. ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերը բազմակողմ համագործակցության համատեքստում.....	172

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀՀ-ԻԻՀ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գիտակրթական կապերը.....	188
3.2. Մշակութային կապերը.....	200
3.3. Հայ համայնքի մասնակցությունը միջմշակութային կապերի գործընթացին.....	213

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....220
SUMMARY.....224
228..... جمع بندي
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ.....231
Հավելված.....241
Անձնանուններ.....243
Տեղանուններ.....251

Խմբագրի կողմից

Վահան Առաքելի Քայքայության պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Իրանը մեր տարածաշրջանի այն երկրներից մեկն է, որի պատմությունը սերտորեն շաղկապված է Հայաստանի պատմության հետ: Հիրավի, այդ երկիրը ավելի քան երեք հազարամյակի ընթացքում հանդիսացել է հայ ժողովրդի պատմական ճակատագրի կերտման անմիջական ու գործուն մասնակիցը:

Հայտնի իրողություն է, որ հայերը դեռևս իրենց պատմության արշալույսին ամենաբազմազան շփումներ են ունեցել հարևան երկրների ու ժողովուրդների հետ: Սակայն պատմականորեն ո՛չ մի երկիր և ո՛չ մի ժողովուրդ աշխարհագրական, քաղաքական, հոգևոր-մշակութային և այլ առումներով այնքան մոտ չի եղել հայերին, որքան Իրանն ու իրանական ժողովուրդը:

Նորագույն ժամանակներում, հատկապես Հայաստանի երրորդ Հանրապետության ստեղծումից հետո, հայ-իրանական հարաբերություններն ապրեցին բուռն ու անկասելի զարգացում: Պատմականորեն կարճ ժամանակամիջոցի ընթացքում, 1991 թ. Հայաստանի նորոգ անկախության ծեղրերումից հետո, հայ-իրանական հարաբերություններն արձանագրեցին բարեկամության, փոխադարձ վստահության և եղբայրական համագործակցության բազմաթիվ հիշարժան էջեր:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Կարեն Մկրտչյանի՝ հայ-իրանական հարաբերություններին անդրադառնալու փորձը գնահատելի է՝ պատմագիտական հետազոտության իրականացման տեսանկյունից:

Անկասկած, աշխատության արժեքավոր կողմն է հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ դրած և լայնորեն կիրառած Հայաստանի ազգային արխիվի և ՀՀ արտաքին գոր-

ծերի նախարարության պատմադիվանագիտական արխիվի փաստաթղթերը: Աշխատության տարբեր բաժիններում նկատվում է դիվանագիտական գրագրությունից օգտվելու հեղինակի հմտությունները: Այդ տեսակետից արխիվային վավերագրերի հիման վրա կատարված է պատմաքննական վերլուծություն:

Աշխատության շահեկան կողմերից է իրանական մասուկից քաղված նյութերի օգտագործումը, որոնք վեր են հանում խնդրո առարկա դարձած տարբեր հարցերի վերաբերյալ իրանական հասարակության և պետական մարմինների դիրքորոշումներն ու մոտեցումները: Դրանք համակողմանիորեն վերաբերում են հեղինակի ինչպես երկկողմ քաղաքական և տնտեսական հարցերին անդրադառնալու, այնպես էլ Արցախի հակամարտության կարգավորման հարցում իրանական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը ներկայացնելու և վերլուծելու ընթացքում: Հեղինակին հաջողվել է ներկայացնել նշված դիրքորոշումների առանձնահատկություններն ու նրբությունները:

Կարծում ենք, որ աշխատության առավելություններից է այն հանգամանքը, որ հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Իրանի հայ համայնքի ներդրումները հայ-իրանական հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացին: Այդ տեսակետից կարևոր է հեղինակի այն պնդումը, որ իրանահայ գործիչների ներգրավումը և երկկողմ հարաբերությունների գործընթացին աշխույժ մասնակցությունը կատարվել է իրանական պետության թույլտվությամբ և համաձայնությամբ:

Աշխատությունը կարող է համալրել թեմայի շուրջ ընթերցողի սեղանին առկա գրականությունը և օգտակար դառնալ արևելագետների, պատմաբանների, ու թեմայով հետաքրքրվող մասնագետների համար:

Էդիկ Գաբրելյանի Միմայան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ կարևոր նշանակություն ունի հայոց նորանկախ պետության հարաբերությունները հարևան և բարեկամ Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը բոլոր պետությունների և, առաջին հերթին, հարևանների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերությունների հաստատումն էր:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումով նա դարձավ միջազգային հարաբերությունների լիրակ անդամ՝ հնարավորություն ստանալով իր կամքով ու հայեցողությամբ մշակել պետության արտաքին քաղաքականությունը: Դրությունը բարդանում էր նրանով, որ գտնվելով ԽՍՀՄ-ի կազմում հասկանալի պատճառներով Հայաստանը չունեւր միջազգային շփումների փորձ, միջազգային քաղաքականության հայեցակարգ և գործելակերպի չափանիշներ: Նրան սպասում էր քաղաքական դաշնակիցների դժվարին ընտրություն, որոնց հետ մոտ ապագայում ժամանակի մարտահրավերներին համարժեք պետք է կառուցեր միջպետական հարաբերությունների և անվտանգային միջավայրի համակարգը: Ակնառու է, որ հարևան Իրանը ներառված էր այդ քաղաքականության առանցքում՝ համագործակցության և երկկողմ կապերի հաստատման ու խորացման դիտանկյունից:

1990-ական թթ. սկզբներին Հայաստանի Հանրապետության համար պատմական հարևան Իրանի Իսլամական Հանրապետությունը դարձավ անխափան հաղորդակցման ուղի, որը հայտնի է որպես «կյանքի ճանապարհ» անվամբ: Սոցիալ-տնտեսական անմխիթար պայմաններում հայտնված Հայաստանի Հանրապետության համար իրանական կապուղիներով սկսվեց կենսապահովման առաջին միջոցների մատա-

կարարումը: Այդպիսով, մասամբ վերացավ Հայաստանի նորանկախ Հանրապետությանը սպառնացող սովը, մեղմացավ ապրանքների դեֆիցիտը:

Հաշվի առնելով վերոնշյալ պատմաքաղաքական իրադարձությունները՝ ներկայումս կարևոր է պատմականության դիրքերից վերլուծել 1990-ական թթ. հիմք դրված հայ-իրանական հարաբերությունները, և գնահատել այդ հարաբերությունների կայացման ու զարգացման գործընթացում մեծ ներդրում ունեցած ՀՀ և ԻԻՀ պետական ու հասարակական նվիրյալ գործիչներին, ինչպես նաև իրանահայ համայնքի անխոնջ անհատներին: Այդ տեսակետից Կարեն Մկրտչյանի՝ հայ-իրանական հարաբերություններին նվիրված աշխատությունը գնահատելի է և ունի գիտաքաղաքական արդիականություն:

Աշխատությունում քննարկվում է հայ-իրանական հարաբերությունների հաստատման և ամրապնդման գործընթացը, ՀՀ արտաքին քաղաքականության իրանական ուղղության շուրջ 15 տարվա պատմությունը:

Կարծում ենք, որ հեղինակին հաջողվել է իրականացնել պատմագիտական հետազոտություն՝ գիտական շրջանառության մեջ դնելով Հայաստանի ազգային և ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվների փաստաթղթերը:

Կարևոր է նշել, որ երկկողմ հարաբերությունները ներկայացնելիս հեղինակը լայնորեն օգտագործել է գիտական գրականությունը և ժամանակակիցների հուշագրությունները, ինչպես նաև իրանական մամուլի նյութերը:

Աշխատության մեջ հեղինակը հատուկ քննարկման առարկա է դարձրել Արցախի հակամարտության կարգավորման գործընթացը Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության համատեքստում:

Աշխատությունը կարող է օգտակար լինել պատմաբանների, արևելագետների, միջազգայնագետների, ուսանողության և ընթերցող լայն հասարակության համար:

Գրախոս **Գրիգոր Խաչատուրի Առաքելյան**
պատմական գիտությունների թեկնածու

Իրանը մեր տարածաշրջանի այն պետություններից է, որի հետ Հայաստանի Հանրապետությունը սահմանային, քաղաքական, ռազմական, տնտեսական կամ որևէ այլ բնույթի խնդիրներ չունի: Ելնելով հենց այդ կարևոր հանգամանքից, ինչպես նաև հիմք ընդունելով մի շարք այլ վճռորոշ գործոններ, Երևանը մշտապես շահագրգռված է եղել բնականոն հարաբերություններ պահպանել Թեհրանի հետ դասելով նրան Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնային և կարևոր ուղղություններից մեկը:

Առկա է նաև երկկողմ հարաբերությունների զարգացման հարցում Թեհրանի անվերապահ շահագրգռվածությունը, քանի որ երկու երկրների միջև դարերի ընթացքում ձևավորված պատմամշակութային ընդհանրությունները գրեթե անխոցելի են դարձրել այդ հարաբերությունները, որի առիավառչյան երկու մայրաքաղաքների միջև այսօր գոյություն ունեցող քաղաքական երկխոսության բարձր մակարդակն է:

Համոզված կարելի է ասել, որ Իրանը Հայաստանին վերաբերող հարաբերությունների հեռանկարային ծրագրերում մեծ դեր է առանձնացնում հատկապես Հայաստանի հետ իր միջպետական սահմանը կապող Մեդրիին, և առհասարակ այդ տարածքով անցնող հաղորդակցական ուղիներին: Նաև դժվար է թերագնահատել արտաքին աշխարհի հետ հաղորդակից դարձնելու Իրանի դերն ու նշանակությունը Հայաստանի համար: Ներկայիս աշխարհաքաղաքական խառնակ հուսովի ծակում, երբ աշխարհի գերտերությունների օրակարգում հայտնվել է ազդեցության գոտիների վերաբաժանման հարցը, Հայաստանի համար կենսական նշանակություն է ձեռք բերում արտաքին գործընկերների հետ հարաբերությունների հստակեցման հրամայականը: Այդ առումով, խիստ արդիական է հայիրանական հարաբերություններում առկա խնդիրների վերհա-

նունն ու «գույքագրումը»՝ հետագա ճշգրտումների ենթարկելու նպատակով:

Իրանը թե՛ տարածքով, և թե՛ բնակչությամբ Հայաստանի ամենամեծ հարևանն է: Այն մեզ շրջապատող հարևան երկրների մեջ միակն է, որտեղ բնակվող հայերն ունեն իրենց ինքնությունը պահպանելու բացառիկ հնարավորություն: Հայաստանն Իրանի միակ քրիստոնեաբնակ և միևնույն ժամանակ իր տարածքով և ազգաբնակչության թվաքանակով, ամենավոքը հարևանն է: Հայաստանի և Իրանի ընդհանուր սահմանը, որն այսօր հայտնվել է տարածաշրջանի քարտեզի վերածնման խնդրում շահագրգիռ պետությունների տեսադաշտում, թեև Հայաստանի ու Իրանի համար եղած բոլոր սահմաններից ամենավոքըն է, սակայն, միևնույն ժամանակ, բացառիկ է իր աշխարհաքաղաքական նշանակությամբ:

Երկկողմ հարաբերությունների բնականոն ընթացքը երաշխավորող վերը նշված առանձնահատկությունները բավարար են ընդգծելու իրապարակման ներկայացված աշխատության արդիականությունը, հատկապես եթե նկատի առնենք դրանում օգտագործված նյութերի ընտրության հարցում հեղինակի ցուցաբերած սրտացավ մոտեցումը:

Հեղինակի ընտրած ժամանակահատվածը երկկողմ հարաբերությունների կանոնակարգման առումով ամենաբուռն ու իրադարձություններով հարուստ շրջանն է, որի ընթացքում երկու երկրների միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ, ձևավորվել են առևտրատնտեսական կապերը կանոնակարգող միջկառավարական հանձնաժողովներ: Երկկողմ հարաբերությունների վերահաստատմանը հաջորդած այդ կարևորագույն ժամանակահատվածում, իրավապայմանագրային դաշտի ձևավորման և փոխգործակցության մեխանիզմների մշակման միջոցով հնարավոր է եղել ստեղծել այնպիսի հուսալի հենակետ, որի վրա հնարավոր է կառուցել երաշխավորված ու բարձր մակարդակի հարաբերություններ:

Այդ ժամանակահատվածի Լարևորագույն դրվագների

մանրամասն նկարագրության շնորհիվ, աշխատությունը կարող է հայ-իրանական հարաբերությունների տվյալ շրջանի պատմությունն ուսումնասիրողների համար «սեղանի գիրքը» դառնալու հավակնության հայտ ներկայացնել:

Կարեն Մկրտչյանի հեղինակած աշխատությունը, հայ-իրանական հարաբերությունների ձևավորման կարևորագույն ընթացքը ներառող շրջանի մասին փաստագրական հարուստ տեղեկությունների շրջանառության հնարավորություն ընծեելուց բացի, թույլ է տալիս պատկերացում կազմել նաև երկկողմ հարաբերություններում առկա խութերի ու դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին: Աշխատությունում ճշգրտված տվյալներով ներկայացվել են երկկողմ հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարած Մոսկվայից Թեհրան թռչող իրանական U-130 «Հերկուլես» ռազմաօդային սպորտաօդանավի ինքնաթիռի Արցախի օդային տարածքում կործանվելու և արևելի իրական մեղավորների բացահայտման համար հայկական կողմի ձեռնարկած արդյունավետ դիվանագիտական քայլերի մասին:

Միմյանց նկատմամբ հակամարտ կեցվածք ունեցող Երևանի ու Բաքվի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և կողմերի միջև ընթացող ռազմական գործողությունների պայմաններում Արցախի հարցում միջնորդական առաքելություն ստանձնելու Իրանի նախաձեռնությունը, տվյալ ժամանակահատվածի տարեգրության կարևորագույն դրվագներից է, որին անդրադարձել է աշխատության հեղինակը:

Արցախի հարցում Իրանի ստանձնած միջնորդական առաքելության մասին հեղինակի ներկայացրած փաստերը և վերլուծությունները արժանի են գնահատանքի: Օտարերկրյա դիվանագետների գործունեության համար բացառիկ միջավայր հանդիսացող Թավրիզ քաղաքում հայկական հյուպատոսության բացման մասին աշխատության հեղինակի հիմնավորումները համոզիչ ու վավերական են:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի երրորդ Հանրապետության (այսուհետ ՀՀ) համար սահմանակից Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ ԻԻՀ) հետ միջպետական հարաբերությունների հաստատումն ուներ կայունության և անվտանգության նշանակություն ԽՍՀՄ-ի փլուզման պայմաններում:

ՀՀ-ն, ի դեմս ԻԻՀ-ի, հնարավորություն ստացավ կապ հաստատել աշխարհի հետ, ինչպես նաև վերականգնվեց հայ-իրանական հնամենի հարաբերությունների պատմական շարունակականությունը, որն ընդմիջվել էր ԽՍՀՄ 70-ամյա գոյության տարիներին:

Փորձելով պատմական գնահատական տալ 1990-ական թթ. հիմնադրված և զարգացման ուղին բռնած հայ-իրանական հարաբերություններին, միանշանակ կարելի է պնդել, որ այն քաղաքական, տնտեսական, գիտակրթական և մշակութային թանկ կապիտալ է, որի մեջ ներգրավված է նաև իրանահայ համայնքը՝ որպես կամուրջ հայկական և իրանական հասարակությունները միմյանց ավելի ճանաչելի դարձնելու հարցում:

Ըստ այդմ, այսօր հայ-իրանական հարաբերությունների գործընթացը դարձել է ոչ միայն հայ, իրանցի և օտար հետազոտողների, այլ նաև բազմաթիվ քաղաքական գործիչների ուսումնասիրության առարկա: Ավելին՝ միջազգային կազմակերպությունների բարձր ատյաններում և դիվանագիտական գործիչների տեսադաշտում շարունակում է արդիական մնալ պաշտոնական Թեհրանի և Երևանի միջև խորացող հարաբերությունները:

Հայտնի է, որ ՀՀ-ն կարևորում է հարևան պետությունների հետ բնականոն հարաբերություններ ունենալը և ձգտում է տարածաշրջանում բաց սահմաններով ու գործընկերության վրա խարսխված հարաբերություններ հաստատելուն՝ պատ-

րաստ լինելով առողջ ու իրատեսական երկխոսության¹: Այս տեսակետից ԻԻՀ-ը շուրջ 30 տարի շրջափակման պայմաններում գտնվող ՀՀ-ի համար նախ և առաջ այն երկիրն է, որը հավասարակշռում է թյուրքական (Ադրբեջանի և Թուրքիայի) գործոնը տարածաշրջանում:

Այսօր, երբ տարածաշրջանում նկատվում է անգիջում մրցակցություն աշխարհաքաղաքական տարբեր բևեռների ու պետությունների միջև շահերի բախման հարցում, հայ-իրանական հարաբերությունները ձեռք են բերել որակական նոր հատկանիշներ:

2020 թ. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից սանձազերծած Արցախյան երրորդ 44-օրյա պատերազմի հետևանքով սասանվեց ԻԻՀ-ի հյուսիս-արևմտյան սահմանների երկայնքով հայկական գործոնը, որը ձևավորվել էր դեռևս 1990-ական թթ.: Ահա թե ինչու ներկայումս կարևորվում է երկկողմ համագործակցության նորովի խորացումը տարբեր բնագավառներում, որի իրագործման համար օգտակար կարող է դառնալ հետխորհրդային տարիների հայ-իրանական հարաբերություններում գրանցված տարբեր զարգացումները և դրանց իմացությունը:

Հիրավի, ՀՀ-ԻԻՀ 46 կմ-անոց միջպետական սահմանն անհրաժեշտ է դիտարկել որպես միջքաղաքակրթական սահման: Ակնհայտ է, որ ԻԻՀ-ն առաջնահերթ և գլխավորապես իր շահերին համապատասխան շահագրգռված է այդ սահմանի պահպանմամբ, որը տվյալ դեպքում համընկնում է նաև հայկական շահերի հետ: Այդ տեսակետից ՀՀ-ն և ԻԻՀ-ն բնական դաշնակիցներ են:

Երկկողմ հարաբերություններում նկատված խնդիրներին և ձեռքբերումներին անդրադառնալիս փորձել ենք հնարավորինս անաչառորեն ուսումնասիրել արձանագրված փաս-

տերն ու իրողությունները հիմք ընդունելով այն, որ աշխատության աղբյուրագիտական հենքն են Հայաստանի ազգային և ՀՀ Արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվների փաստաթղթերը²:

Հիմնախնդրի լուսաբանման համար կարևոր են ԻԻՀ-ում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանի աշխատությունները³, որոնցում համապարփակ ձևով ներկայացված են ԽՍՀՄ փլուզման հետևանքով Այրկովկասում ԻԻՀ-ի առաջացած շահերը ինչպես քաղաքական, պետական անվտանգության, այնպես էլ տնտեսական ոլորտներում:

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները ներկայացնելիս օգտվել ենք իրադարձություններին անմիջական մասնակից հայ և իրանցի պետական գործիչների հուշերից, մի շարք հեղինակների աշխատություններից ու հոդվածներից, ինչպես նաև հայկական և իրանական մամուլում տպագրված հրապարակումներ:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գործ 15, 25, 26, 27, 32, 45, 51, 56, 84, 94, 103, 146, 168, 169, 170, 172, 173, 174, 175, 178, 179, 181, 184, 196, 176:

ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ (այսուհետ՝ ՊՊԱ), ց. 1, գ. 283, 284, 285, 286, ց. 2, գ. 167, 168, 169, ց. 5, գ. 67, 239, 158, 242:

³ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2005: Նույնի Իրանն այսօր (տեղեկատու), Ե., 1999: Նույնի Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., 2013: Նույնի Իսլամ, Ե., 2016: Նույնի Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXV, Ե., 2006, էջ 26-54: Նույնի Հայաստանի Հանրապետության տեղը և դերը Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, «Պատմություն» հանդես, Ե., 2002, N1, էջ 34-44, Նույն հոդվածը տե՛ս «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» գեկուցումների ժողովածու, Ե., 2004, էջ 143-148: Նույնի Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVII, Ե., 1998, էջ 5-20: Նույնի Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ.. հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, 2012 թ., Ե., 2012, էջ 15-54: Նույնի Իրան-Ադրբեջան հարևաններ, թե՞ աշխարհա-քաղաքական ու աշխարհատնտեսական ախտյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հտ. XXIII, Ե., 2003, էջ 7-35:

¹ Տե՛ս ՀՀ արտաքին քաղաքականություն <http://www.mfa.am/hy/foreign-policy/>, նույնը Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 9, գ. 15, թ. 1:

րից, որոնք ներկայացված են օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում:

Հեղինակն իր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունն է հայտնում գրքի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանին, ինչպես նաև 2010-2014 թթ. իր գիտական ղեկավար և միաժամանակ սույն գրքի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանին և գրքի գրախոս, պատմական գիտությունների թեկնածու Գրիգոր Առաքելյանին, ովքեր իրենց օգտակար խորհուրդներով աջակցեցին սույն ուսումնասիրությունն իր ավարտին հասցնելու գործում:

ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՀՀ-ԻԻՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Պատմական ակնարկ

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների ստեղծման գործում վճռական նշանակություն են ունեցել երկու ժողովուրդների ազգային շահերի ընդհանրությունը⁴: Այսրկովկասում թուրք-աղդրեջանական ռազմական ամենափոքր հաջողությունը որոշակի սպառնալիք է ՀՀ-ի և ԻԻՀ-ի համար:

Դեռևս 1919 թ. հուլիսի 7-ին Պարսկաստանը⁵ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Հայաստանի առաջին հանրապետության հետ⁶: 1918-1920 թթ. Պարսկաստանը հարևան երկրների մեջ միակն էր, որի հետ Հայաստանի կառավարությունը տարածքային և այլ կարգի վեճեր համարյա թե չունեցավ⁷: Ըստ էության ԽՍՀՄ ձևավորմամբ դադարեցին հայ-պարսկական հարաբերությունները:

Հատկանշական է, որ 1929 թ. ապրիլի 9-ին և 1932 թ. հունվարի 23-ին կնքվեցին թուրք-իրանական սահմանների կայունացման մասին համաձայնագրեր, որով Թուրքիան Նախիջևանի հետ 12 կմ երկարությամբ ընդհանուր սահման ունեցավ⁸: Իրականում 1921 թ. Մոսկվայի պայմանագրի կնքման ժամանակ թուրք-աղդրեջանական գործակցության արդյունքում սահմանն այնպես է գծվել, որ Սուրմալուի գավառի արևելյան մասում Արաքս գետի և նրա աջակողմյան վտակ Կա-

⁴ Տես Նուրշուրյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Ե., 1999, էջ 108:

⁵ 1935 թվականից պետության անվանումը փոխվեց Իրան անունով:

⁶ Տես Բայբուրդյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ. հայաջբ երկու տասնամյակի հեռավորությունից, էջ 15:

⁷ Տես Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922 թթ.), Ե., 1985, էջ 12-13:

⁸ Տես Մինոնյան Հր., Թուրք-իսրայելական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 413: Բեգիջանյան Է., Նախիջևանը և թուրք-իրանական հարաբերությունները, Տասնամյա հանրամագրումար. Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Ե., 2004, էջ 212:

րասուի միջև, հյուսիսից դեպի հարավ-արևելք ձգվող նեղ ելուստն ընդհանուր միջանցք դառնա Խորհրդային Ադրբեջանին անցած երբեմնի հայկական Նախիջևանի և Թուրքիայի միջև: Տարածքային նման վերածննան հետևանքով ավելի քան 25 կմ աղեղի երկայնքով, դեմ դիմաց ձգվող, իրարից ընդամենը 2-ից 4,5 կմ հեռավորության վրա գտնվող Հայաստանն ու Իրանը զրկվել են միմյանց հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից⁹:

Փաստորեն, ՀԽՍՀ-ն հայտնվեց իր սահմանի արևմտյան երկայնքով թուրքական աղեղում, որտեղ իրանական հակակշիռը թուրքականին վերացավ, և ՀԽՍՀ-ն զրկվեց Պարսկաստանի հետ Արարատյան դաշտի հարավով կապ հաստատելու կարևոր ուղուց, որի հետևանքները զգացվեցին հետխորհրդային տարիներին:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո նոր քաղաքական իրավիճակում պայքար սկսվեց ՌԴ-ի, Թուրքիայի և ԻԻՀ-ի միջև: Այսրկովկասում տիրապետող դիրքեր գրավելու: Ըստ ռուս հետազոտող Ղմիրի Տրենինի, Այսրկովկասը ՌԴ-ի և Թուրքիայի ու ԻԻՀ-ի միջև բուֆերային գոտի է, որի թագավարական դիրքով պայմանավորված է նրա նշանակությունը¹⁰: Այդ պայքարում Արևմուտքն աջակցեց Թուրքիային, քանի որ մտավախություն ուներ, որ նորանկախ իսլամադավան երկրները կարող էին ընկնել իրանական իսլամական վարչակարգի ազդեցության ներքո¹¹: Ավելին, ԱՄՆ-ի գլխավորությամբ միակենտրոն աշխարհի առաջացմամբ ձևավորվեցին միջազգային հարաբերությունները¹²:

⁹ Տե՛ս Melkonyan A., Observations on current regional issues (Steps to counter the Azerbaijani-Turkish tandem), ՊԲՀ, 2022, 1 (219), էջ 225:

¹⁰ Տե՛ս Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Ե., 2006, էջ 157:

¹¹ Տե՛ս Kramer Heinz, Will Central Asia Become Turkey's Sphere of influence. - Perceptions, Journal of International Affairs, March-May, 1996, էջ 2:

¹² Տե՛ս Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան-անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Ե., 2001, էջ 85: Տե՛ս նաև նույնի Հայաստանը

Հաշվի առնելով ԽՍՀՄ-ԻԻՀ 2250 կմ երկարությամբ սահմանի վերացման փաստը՝ իրանական քաղաքական վերնախավի որոշ գործիչներ գտնում էին, որ Այսրկովկասի մի շարք տարածքներ, քանի որ նախկինում գտնվել են Իրանի կազմում, այժմ պետք է «վերադարձվեն»: Սակայն ԻԻՀ-ի դեկլարությունը տուրք չտվեց այդ մտայնությանը¹³: Իրանական իշխանություններն իրատես գտնվեցին և բավարարվեցին նորանկախ պետությունների հետ հարաբերություններ հաստատելով:

Այսպիսով, ԻԻՀ-ն խուսափում է ուժերի փոշիացումից և փորձում իր կարողությունները կենտրոնացնել ընկալունակ տարածաշրջաններում՝ Տաջիկստանում և Ուզբեկստանի պարսկալեզու բնակչության շրջանում, իրեն դավանակից շիա Ադրբեջանում և քաղաքական շահագրգռություններ ունեցող ՀՀ-ում ու Վրաստանում: Ի դեմս ԻԻՀ-ի ՀՀ-ն գործ ունի տարածաշրջանում առաջատար դիրքեր հավակնող հարևան պետության հետ:

1.2. Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները պայմանականորեն փուլային բաժանման ենթարկվելու դեպքում կստանանք հետևյալ պատկերը.

Առաջին փուլին (1992-1994 թթ.) բնորոշ է ԻԻՀ-ի զգուշավոր քաղաքականությունը, փոխադարձ ծանոթության, ու-

անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղական տարածաշրջանի գործոն, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVIII, Ե., 1999, էջ 16-37, Իրանը մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում, «Իրան-նամե», Ա տարի, թիվ 4, 1993, էջ 4-6:

¹³ Տե՛ս Քաջուրյան Վ., Հայաստանի Հանրապետության տեղը և դերը Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, էջ 34-35:

սումնասիրության և վստահության մթնոլորտի ձևավորումն Արցախի պատերազմի պայմաններում:

Երկրորդ փուլին (1994-1998 թթ.) բնորոշ է դիվանագիտական հարաբերությունների մակարդակի բարձրացումը, միջազգային աստիճաններում և տարածաշրջանային նշանակության բազմակողմ հարթակներում համագործակցության խորացումն ու ծավալումը:

Երրորդ փուլին (1998-2000 թթ.) բնորոշ է հարաբերությունների ժամանակավոր «սառեցումը», որը պայմանավորված էր 1997 թ. ԻԻՀ-ում նախագահական ընտրություններով, ապա 1998 թ. ՀՀ-ում իշխանավոխությանը: Ակնհայտ է, որ այդ քաղաքական իրադարձությունները ժամանակատար էին, որի համար էլ ձգձգվում էին նախկինում կողմերի միջև ձեռքբերված պայմանավորվածությունները: Քաղաքական վերնախավերը միմյանց նորովի ճանաչելու խնդիր ունեին:

Չորրորդ փուլին (2000-2005 թթ.) բնորոշ է հարաբերությունների զարգացման որակական փոփոխությունը, որն ուղեկցվում էր նախագահների փոխալյցերով:

ԻԻՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցի շուրջ պատկերացում կազմելու համար հարկ է նկատի ունենալ վերոնշյալ տարբեր փուլերում ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչությունը ղեկավարած պաշտոնյաների դիրքորոշումները: 1992 թ. ՀՀ Արտաքին գործերի (այսուհետ՝ ԱԳ) նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի, 1993-1996 թթ. ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանի¹⁴, ինչպես նաև 1998-2008 թթ. ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի¹⁵ ընդհանուր գնահատմամբ հայ-իրանական հարաբերություններն ունեցել են առաջնային և թագմավարական նշանակություն շրջափակման պայմաններում: Ինչպես տեսնում ենք, փոխվել են ժամանակները, սակայն մոտեցումները մնացել են

¹⁴ Տես Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991-2014 թթ.), Ե., 2016, էջ 284, 296

¹⁵ Տես Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, Ե., 2009, էջ 329:

նույնը:

Ինչ վերաբերում է նախքան ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցին, ապա պետք է նշել, որ դեռևս 1990 թ. աշնանը ՀՀ-ի առջև ծառայած կարևոր խնդիր էր քաղաքական մեկուսացման հաղթահարումը: Խոսքը վերաբերվում է անմիջական հարևանների հետ ուղղակի հարաբերություններին: Կրոնական գործոնը որևէ դեր խաղալ չէր կարող, որովհետև թե՛ ՀՀ-ում, թե՛ ԻԻՀ-ում գիտակցում էին, որ պետական շահերը վեր են կրոնականից: 1990 թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ Պերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը երկրի զարգացման կարևոր երաշխիք է համարում Իրանի հետ հարաբերությունների կարգավորումը, որի հիմքում պետք է ընկած լինի հայ ժողովրդի շահերից բխող պրագմատիզմը¹⁶:

Այսպիսով, հարևան ԻԻՀ-ի հետ հարաբերությունների հաստատման հրատապությունը օրակարգային հարց էր դարձել ԽՍՀՄ դեռևս դե յուրե գոյության պայմաններում:

Վերոնշյալի իմաստով հարկ է նշել, որ ԻԻՀ արտաքին քաղաքականության դոկտրինի հիմքում ընկած է պետական նպատակահարմարության, պետական շահերի և պրագմատիզմի սկզբունքը¹⁷: Իսկ այն հանգամանքը, որ ԻԻՀ հայտարարում է, որ հանդես է գալիս որպես աշխարհի բոլոր մահմեդական ժողովուրդների և առհասարակ ընչազուրկների շահերի իրավունքների պաշտպան, աշխատում է այնքանով, որքանով տվյալ պահին այն համապատասխանում է իր պետական շահերին:

Հարկ է նշել, որ իրանցի որոշ հեղինակներ էլ ԻԻՀ-ի

¹⁶ Տես Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, Ե., 2006, էջ 135, 149:

¹⁷ Տես Բայրուրյան Վ., Հայաստանի Հանրապետության տեղը և դերը Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողով, զեկուցումների ժողովածու, Ե., 2004, էջ 143: Տես նաև Բայրուրյան Վ., Իվանը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում, էջ 34, 35:

հանդեպ արևմուտքի վերաբերմունքը համարում են որպես իսլամապաշտության դեմ պայքար¹⁸։ Մինչդեռ ԻԻՀ-ի նախագահ Մոհամմադ Խաթամիի խոսքով՝ ԻԻՀ-ն գլխավորում է համայն իսլամական աշխարհի հակամերիկյան պայքարը¹⁹։ Այսպիսով, ԻԻՀ-ն հավակնում է ներկայանալ որպես իսլամական պետությունների ազդեցիկ կենտրոն²⁰, որի վերաբերյալ ուղղակի հղումներ կան նաև ԻԻՀ-ի Սահմանադրության նախաբանում²¹ ու Խոմեյնու կտակում²²։

1979 թ. Իսլամական հեղափոխության առաջնորդ Խոմեյնիի խոսքով՝ «*Իսլամը իշխանություն ունեցող քաղաքական կրոն է*»²³։ Այնուհայտ է, որ իսլամի գործունը հարմարեցված է ԻԻՀ-ի արտաքին քաղաքականությանը, իսկ սահմանակից միակ քրիստոնյա պետություն ՀՀ-ի հետ հարաբերությունների խորացումն ու ծավալումը գործնականում համահունչ է վերոնշյալ սկզբունքներին և բխում է իրանական պետության շահերից։

ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունների հաստատման իրավական գործընթացին միանգամայն նպաստեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախանալու հարցով տեղի ունեցած հանրաքվեի արդյունքների հիման վրա սեպտեմբերի 23-ին հանրապետության Գերա-

¹⁸ Տե՛ս **Բաաֆրի Մ. Ա.**, Իսլամական հեղափոխության արձագանքներն աշխարհում, էջ 251-252, և **Քազեմ Սաջադիուր Մ. Մ.**, ԻԻՀ-ի արտաքին քաղաքականությունը, Իսլամական հեղափոխությունը և ապագայի հեռանկարները, (հոդվածների ժողովածու), Ե., 2010, էջ 145-146։

¹⁹ Տե՛ս **Սանուկյան Մ.**, Իրանի Իսլամական հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը, Ե., 2002, էջ 14։

²⁰ Տե՛ս **Ушаков В.**, Амбициозные планы Тегерана, Азия и Африка, № 1999 № 1 (498), էջ 18-22. **Ezzatollah Ezzaty**, Iranian Geopolitics and its Effects on the Persian Gulf Security, The Iranian Journal of International Affairs, Vol. X, № 1 (1), Spring/Summer 1998, էջ 123-124։

²¹ Տե՛ս Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), թարգմ. Գ. Բաղայան, Թեհրան, 2005, էջ 11, 34։

²² Տե՛ս Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Էմամ Խոմեյնու քաղաքական-հոգևոր կտակը, Ե., 2007, էջ 15։

²³ Տե՛ս **Բայրուրյան Վ.**, Իսլամ, Ե., 2016, էջ 7։

գույն խորհրդի կողմից Հայաստանի՝ որպես անկախ պետության հռչակումը։ Այսպիսով, Հայաստանը դարձավ միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտ։ Նույն թվականի դեկտեմբերի 25-ին ԻԻՀ-ն պաշտոնապես ճանաչեց սահմանակից հարևան ՀՀ-ի անկախությունը։ Այդ օրը Մոսկվայում ԻԻՀ դեսպանությունը տարածեց հայտարարություն, որտեղ հույս էր հայտնում, որ ՀՀ-ն, մտնելով միջազգային հանրություն, կարող է խաղալ կառուցողական դեր հանուն իր երկրի ժողովրդի բարօրության և աշխարհի կայունության ու տարածաշրջանի անվտանգության²⁴։ Այսպիսով, իրանական կողմն ի սկզբանե կարևորում էր կայունության և անվտանգության հարցում համագործակցությունը հայկական կողմի հետ։

Նկատի ունենալով ՀՀ արտաքին քաղաքական դիրքը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շրջափակումը, ՌԴ-ի հետ սահմանի բացակայությունը, Վրաստանում 1990-ական թթ. սկզբին տեղ գտած ապակայունությունը, որը գործնականում ՌԴ-ին զրկում էր վրացական երկաթուղիներից անարգել օգտվելու հնարավորությունից, և մի շարք այլ գործոններ՝ ի սկզբանե ՀՀ արտաքին քաղաքականության մեջ ԻԻՀ-ի հետ հարաբերություններին տրվեց առաջնայնություն և հույժ կարևորություն²⁵։ Ամբողջությամբ կիսում ենք ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան Վահան Բայրուրյանի տեսակետը. «*Իրանը նախ և առաջ պատուհան է Հայաստանի համար՝ բացված դեպի արտաքին աշխարհ։ Ընդ որում, դա մշտական, կայուն և անփոփոխելի արժեք է*»²⁶։

ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախօրյակին ՀՀ-ում էր գտնվում ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամավոր Արտավազդ Բաղումյանը։ 1992 թ. հունվարի 31-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Արման Նավա-

²⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 196, թ. 2։ Նույն նաև՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», էջ 45։

²⁵ Տե՛ս **Բայրուրյան Վ.**, Հայ-իրանական հարաբերությունները..., էջ 8։

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 9։

սարդյանի հետ գրույցում Արտավազդ Բաղունյանը նշում է, որ ԻԻՀ-ն շահագրգռված էր ՀՀ-ի հետ հնարավորինս արագացնել միջպետական հարաբերությունների զարգացումը, որը պետք է հակակշիռ հանդիսանար զարգացող թուրք-ադրբեջանական կապերին²⁷:

Այնուհայտ է, որ ի սկզբանե ՀՀ-ում թուրքիայի ներկայությունը բացառվում էր, և ԻԻՀ-ն մրցակցելու խնդիր չուներ: ԻԻՀ-ն պատրաստ էր հաստատել դիվանագիտական հարաբերություններ ՀՀ-ի հետ և կնքել պայմանագրեր: Այդ ամենը հնարավոր էր իրագործել ՀՀ ԱԳ նախարարի ԻԻՀ այցի ընթացքում: Բաղունյանը ընդգծում է, որ իր խոսքերը հիմնված են ԻԻՀ-ի ԱԳՆ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ ունեցած գրույցների վրա²⁸: Փաստորեն, նա ներկայացնում էր ԻԻՀ-ի պաշտոնական տեսակետը:

Այս համատեքստում նա անդրադառնում է ԻԻՀ-ի մտահոգությանը՝ կապված երկրի տարածքային անբողջականությունը վտանգող Ադրբեջան-Ատրպատական աշխարհագրական հասկացողությանը: Փաստորեն, Ադրբեջանի միջազգային ասպարեզ մտնելը դեռ 1992 թ. սկզբին անհնազատացնում էր Թեհրանին՝ անվտանգության տեսակետից:

Պաշտոնական Թեհրանը նուրբ և ձկուն դիվանագիտություն էր բանեցնում հայկական կողմի հետ հենց դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախօրյակին: Ուշագրավ է այն փաստը, որ այդ նպատակով Թեհրանից Երևան էր գործուղվել ոչ թե իրանցի բարձրաստիճան որևէ պաշտոնյա, այլ Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավոր Արտավազդ Բաղունյանը:

Կարծում ենք, որ այդ քայլով իրանական կողմը նախ գերծ էր մնում պաշտոնական սառը արարողակարգից ու ավելի սերտ կապեր էր հաստատում ՀՀ ղեկավարության հետ:

Միաժամանակ Բաղունյանի ՀՀ բանազնացությամբ իրանական կողմն ընդգծում էր նրա սոցիալ-իրավական կարգավիճակը՝ որպես Իսլամական խորհրդարանի պատգամավորի և դիվանագիտական հանձնարարությունների առաքելությամբ գործչի: Բացի վերոնշյալից, ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում իրանահայերի ներգրավմամբ իրանական կողմն ապահովում էր բանակցությունները հոգեբանորեն ավելի հաջողված լինելու գրավականը: Վերջապես, պակաս կարևոր չէր հայազգի գործչի միջոցով հումանիտար, թեկուզ փոքրաքանակ օգնության տրամադրումը շրջափակման պայմաններում հայտնված հայրենիքին:

Իր հերթին հայկական կողմն էլ գրագետ էր օգտվում ԻԻՀ պաշտոնական օրացույցից: Այդ մասին է վկայում այն, որ 1992 թ. փետրվարի 8-10-ը Իսլամական հեղափոխության 13-րդ տարեդարձի օրերին, ՀՀ ԱԳ նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանն առաջինը պաշտոնական այցով մեկնում է ԻԻՀ: ՀՀ պատվիրակությունը բանակցություններ է վարում ԻԻՀ ԱԳՆ-ում: Րաֆֆի Հովհաննիսյանը ցանկություն է հայտնում, որ տարածաշրջանի երկրներում առաջին հայկական դեսպանությունը բացվի Թեհրանում: ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ալի Աբբաս Վելայաթին նշում է, որ տեխնիկական հարցերը լուծելուց հետո Թեհրանում և Երևանում անմիջապես կարելի է հիմնել դեսպանատներ: Վելայաթիի խոսքով՝ Թեհրանում ՀՀ առաջին դեսպանության բացումը միանգամայն բնական էր և տրամաբանական²⁹:

Փետրվարի 9-ին Թեհրանում ստորագրվում է ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ հռչակագիրը: Կողմերը համաձայնվում են, որ նշված փաստաթղթի ստորագրման պահից՝ մեկ ամսվա ընթացքում Երևանում և Թեհրանում բացվելու են դես-

²⁷ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թթ. 10-11:

²⁸ Տես նույն տեղում թ. 11:

²⁹ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թ. 22-23:

պանություններ³⁰: ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև հարաբերությունների սկզբունքների ու նպատակների մասին հռչակագրով կողմերն իրենց գործունեության ելակետ էին ընդունում փոխադարձ տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքը և միմյանց գործերին չմիջամտելը³¹:

Այսպիսով, հիմք է դրվում միջպետական դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը՝ իրավապայմանագրային ձևակերպմամբ:

Ի պատասխան վերոնշյալ այցին՝ 1992 թ. փետրվարի 27-28-ը Երևան է այցելում ԻԻՀ ԱԳ նախարար Ա. Վելայաթին: ՀՀ ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում Վելայաթին հայտարարում է ԻԻՀ-ի դեսպանատան բացման մասին, իսկ նրա տեղակալ Մահմուդ Վայեզին բանակցում է իր հայ պաշտոնակից Արման Նավասարդյանի հետ³²:

1992 թ. մարտի 28-ին Վելայաթին կրկին Երևանում էր: ՀՀ Գերագույն խորհրդում տեղի է ունենում Վելայաթիի և ՀՀ նախագահի գրույցը: ՀՀ նախագահը տեղեկացնում է, որ հունիս ամսին մեկնելու է Ստամբուլ՝ սևծովյան տարածաշրջանում համակողմանի համագործակցության վերաբերյալ համաձայնագիր ստորագրելու, բայց մինչ այդ կայցելի Թեհրան: Վելայաթին Լևոն Տեր-Պետրոսյանին է հանձնում ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի՝ Թեհրան այցելելու հրավերը³³: Այսպիսով, հայկական կողմը ցույց էր տալիս, որ բոլոր դեպքերում Թեհրանն առաջատար նշանակություն ունի Երևանի համար, իսկ Ստամբուլ այցը պայմանավորված էր ՄԾՏՀ որպես միջազգային կառույցի հետ գործակցության համատեքստում:

Դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու առաջին քայլը կատարում է իրանական կողմը: Երևանում ԻԻՀ-ի դեսպանության պաշտոնական բացումը տեղի է ունենում 1992

թ. ապրիլի 30-ին «Հրազդան» հյուրանոցային համալիրում³⁴: ԻԻՀ-ի դեսպանության բացումը ձկուն և նպատակալաց քաղաքականության արդյունք էր: ԻԻՀ-ի գործերի հավատարմատարի պաշտոնը ստանձնում է Բահրամ Ղասեմին: ՀՀ նախագահի մասնակցությունը Երևանում ԻԻՀ դեսպանության բացման արարողությանը վկայում էր միջպետական հարաբերությունները բարձր մակարդակով մեկնարկելու վերաբերյալ:

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների զարգացման գործում շրջադարձային նշանակություն է ունենում 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցը Թեհրան: «Մեհրաբադ» օդանավակայանում ՀՀ նախագահին դիմավորում են ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին և հայ համայնքի գործիչները: Նույն օրը տեղի է ունենում Տեր-Պետրոսյան-Ռաֆսանջանի առանձնագրույցը, ապա կողմերի պատվիրակությունների հանդիպումը: Ռաֆսանջանին նշում է, որ միջպետական համագործակցության բնագավառում ակնկալում է գործնական արդյունքներ³⁵:

Բանակցությունների արդյունքում ստորագրվում է համատեղ հայտարարություն «Համագործակցության, բարեկամության ու բարիդրացիության մասին»³⁶, որը դառնում է միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կարևոր փաստաթուղթ՝ բաղկացած 18 հոդվածից: Առաջին հոդվածում նշվում էր, որ ՀՀ-ն և ԻԻՀ-ն որպես իրավահավասար երկու բարեկամ ու դրացի պետություններ, կգարգացնեն երկկողմ հարաբերություններ՝ ելնելով միմյանց ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու, ուժային սպառնալիքից ձեռնպահ մնալու, տարածայնությունները խաղաղ ճանապարհով լուծելու, միջազգային պարտավորությունների նկատմամբ հարգանքի սկզբունքներից, ձեռնամուխ կլինեն իրենց հարաբերությունների զարգացմանը:

³⁰ Տես նույն տեղում, գ. 196, թ. 10:

³¹ Տես **Բայցորդյան Վ.**, Հայ-իրանական հարաբերությունները..., էջ 7:

³² Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թթ. 55-58:

³³ Տես նույն տեղում, թ. 63:

³⁴ Տես «Հայաստանի Հանրապետություն», 01.05.1992:

³⁵ Տես նույն տեղում, 06.05.1992:

³⁶ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թթ. 88-93:

Շեշտվում էր, որ երկու պետությունները միմյանց ընդհանուր սահմանները դիտում են որպես խաղաղության սահմաններ (2-րդ հոդվ.)³⁷: Հաջորդ հոդվածով կողմերն անթույլատրելի համարեցին սեփական տարածքը միմյանց նկատմամբ ագրեսիայի գործադրման միջոց դարձնել: Միջխորհրդարանական կապերը զարգացնելու համար երկու երկրների խորհրդարաններում ստեղծվելու էին բարեկամական խմբեր (13-րդ հոդվ.)³⁸:

Մայիսի 7-ին կնքվում է ՀՀ և ԻԻՀ միջև հյուպատոսական համագործակցության մասին համաձայնագիր՝ բաղկացած 12 հոդվածից: Առաջին հոդվածով առևտրատնտեսական և գիտատեխնիկական հարցերով երկու երկրների քաղաքացիների փոխայցերի ժամանակ մուտքի վիզայի դիմումը կողմերը կքննարկեն 2, իսկ մշակութային, առողջապահական, մարզական և զբոսաշրջիկների խմբերի այցերի ժամանակ՝ 10 օրվա ընթացքում (2-րդ հոդված): Կնքվում է նաև ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև դիվանագիտական և ծառայողական անձնագիր ունեցող անձանց ելումուտն առանց մուտքի վիզայի ապահովելու մասին համաձայնագիր՝ բաղկացած 7 հոդվածից³⁹:

Այսպիսով, հաջողությամբ մեկնարկում է ՀՀ-ի հարաբերությունների հաստատումը հարևան ԻԻՀ-ի հետ: Ըստ էության կողմերը պաշտոնապես հռչակում են երկկողմ հարաբերությունները զարգացնելու ռազմավարությունը, որն այսօր էլ շարունակում է մնալ օրակարգում: Փաստորեն Ռաֆսանջանիի ակնկալած գործնական արդյունքներն ամրագրվում են կողմերի ստորագրած փաստաթղթերում:

Ինչ վերաբերում է ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության բացման հարցին, ապա հայկական կողմը որոշել էր սակավաթիվ պատվիրակություն ուղարկել՝ պայմանավորված Արցախի պատերազմով: Սակայն դեկտեմբերի 15-ին ՀՀ-ում ԻԻՀ-ի գործերի

հավատարմատար Ահմադ Սոբհանին ՀՀ ԱԳՆ Իրանի բաժնի վարիչ Գրիգոր Առաքելյանին հայտնում է, որ Թեհրանում ներկայացուցչական կազմով՝ ՀՀ փոխնախագահի մակարդակով, պատվիրակություն են սպասում, որում ընդգրկված կլինեն այն ոլորտների պատասխանատուները, որոնցում չէին իրականանում աշխատանքները⁴⁰: Այսպիսով, իրանական կողմը մտադիր էր ՀՀ դեսպանության բացման առիթն օգտագործել միաժամանակ քաղաքա-տնտեսական կապերը խորացնելու նպատակով:

1992 թ. դեկտեմբերի 22-ին Թեհրանում պաշտոնապես բացվում է ՀՀ դեսպանությունը: Բացման արարողությանը մասնակցում են ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, Թեհրանում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմի ներկայացուցիչներ, հայ համայնքի գործիչներ:

ՀՀ դեսպանության անձնակազմին բնակելի տարածքով ապահովելու հարցում օգնում են Իրանի հայ կաթողիկե եկեղեցին և Իրանահայ Ազգային և մշակութային միությունը՝ Մասիս Մաթյանի գլխավորությամբ⁴¹: Վերջինս արժանանում է ՀՀ նախագահի գնահատագրին⁴²: Թեհրանի հայոց թեմի թեմական խորհուրդը որոշում է Վահրամ և Ռոզա Ավագյանների կտակած շենքը հատկացնել ԻԻՀ-ում ՀՀ դեսպանությանը: Շենքի վերանորոգման գործում մեծ դեր են ունենում թեմական խորհրդի ատենապետ Սերոժ Սուքիասյանը և ատենադպիր ժորժիկ Աղազարյանը⁴³:

Այսպիսով, հայ համայնքի աջակցությամբ մայրաքաղաքի կենտրոնում անշարժ գույքի և դրա սեփականության ձեռքբերումը նորանկախ ՀՀ-ի համար ուներ կարևոր նշանակությամբ:

⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 170, թ. 67:

⁴¹ Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 02.09.1992:

⁴² Տե՛ս Միլոզախյան Հ., Իրանահայ համայնքի իրողությունները և Ահարոնյանի «փոթորիկ» մեջ, Թեհրան, 2010, էջ 49:

⁴³ Տե՛ս Բայրուրյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ. հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, էջ 38:

³⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 88:

³⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 92:

³⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ., թիվ 1 (1), Ե., 2002, էջ 52-53:

յուն: Այդ շենքը դարձավ հայկական դիվանագիտական ներկայացուցչության մշտական հասցեն Թեհրանում հավատարմագրված օտարերկրյա դեսպանությունների կողքին: Հիրավի, Թեհրանում ՀՀ դեսպանության բացմամբ հիմք է դրվում ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների մի նոր փուլի, երբ երկկողմ բազմաթիվ առնչությունները հնարավորություն ստացան զարգանալու ոչ թե դիպվածաբար ու տարերայնորեն, այլ կանոնակարգված ու ծրագրավորված ձևով:

Հիշարժան է, որ դեսպանատան գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար Վահան Բայբուրդյանը ստեղծում է «Դեսպանատան բարեկամների միություն» կառույցը⁴⁴: Կարծում ենք, որ այդ կառույցը իրանական հասարակական շրջանակներում ներկայանալի ձևաչափ էր, որը կոչված էր իր լուծման ներդնելու ՀՀ-ԻԻՀ նորաստեղծ հարաբերություններում:

Ուշագրավ է, որ 1993 թ. փետրվարի 16-ին անդրադառնալով ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության բացմանը Վահան Բայբուրդյանը Թեհրանի հայկական ռադիոժամի թղթակցի հետ հարցազրույցի ընթացքում նշում է. «Մենք հավատացած ենք, որ այսուհետև շնորհիվ այս նորաբաց դեսպանատան ջանքերի, Հայաստանի և Իրանի որպես իրավահավասար, դրացի և բարեկամ պետություններ արդյունավետ ձևով կզարգացնեն իրենց երկկողմանի հարաբերությունները, որոնք կնպաստեն տարածաշրջանում կայունության, խաղաղության և անվտանգության հաստատմանը»⁴⁵:

Հարկ է նշել, որ ՀՀ նորաստեղծ դեսպանությունն ուներ տեխնիկական և ֆինանսական դժվարին խնդիրներ, որոնք խոչընդոտում էին ներկայացուցչության լիարժեք գործունեությանը: Այդ մասին է վկայում 1992 թ. հոկտեմբերի 27-ին ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանի նամա-

կը ՀՀ ԱԳ փոխնախարար Գեորգի Ղազինյանին. «...Մենք մեծ ջանքեր գործադրեցինք, որպեսզի հնարավորին չափ շուտ դեսպանատան շենքը կահավորվի: Ուստի, ես հետևողականորեն փնտրում եմ հովանավորներ: Բոլոր դեպքերում հոկտեմբերի 20-ից մենք արդեն դեսպանատան ոչ պաշտոնական բացումը կատարել ենք և գալիս ենք աշխատանքի»⁴⁶: Հիրավի, գնահատելի է Վահան Բայբուրդյանի գլխավորությամբ ՀՀ դեսպանության անձնակազմի աշխատանքը ՀՀ-ԻԻՀ նորաստեղծ միջպատկան հարաբերությունների, հատկապես, ձևավորման և կայացման գործում: Նկատենք, որ ՀՀ դեսպանության աշխատանքները սկսվել էին դրա բացումից դեռևս 2 ամիս առաջ:

Կարևոր էր նաև ՀՀ նորաստեղծ դեսպանության անձնակազմի համալրման հարցը, որի համար էլ 1993 թ. սեպտեմբերի 5-ից ՀՀ դեսպանությունում աշխատելու են մեկնում Գրիգոր Առաքելյանը որպես դեսպանության խորհրդակցական և Ղավիթ Լևաթոսյանը որպես երրորդ քարտուղար⁴⁷:

1992-1994 թթ. ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին հավատարմատարի մակարդակի վրա: 1992 թ. փետրվարի 29-ին ՀՀ-ում ԻԻՀ-ի գործերի ժամանակավոր հավատարմատար է նշանակվում Բահրամ Ղասեմին⁴⁸: Նրա նշանակումն այդ պաշտոնում հավանության է արժանանում ՀՀ ԱԳՆ-ի կողմից⁴⁹: Իսկ 1992 թ. հուլիսի 8-ին ՀՀ-ում ԻԻՀ գործերի հավատարմատար է նշանակվում Ահմադ Սոբհանին⁵⁰: Բահրամ Ղասեմիի պաշտոնազրկումը պայմանավորված էր Արցախի հակամարտության կարգավորման շուրջ իրանական միջնորդական առաքելության ավարտով, որի վերաբերյալ կանդիդատներն առաջադրվել էին:

⁴⁶ Տես նույն տեղում, գ. 173, թ. 4:

⁴⁷ Տես նույն տեղում, գ. 176, թ. 70:

⁴⁸ Տես նույն տեղում, գ. 169, թ. 3:

⁴⁹ Տես նույն տեղում, գ. 25, թթ. 54-55:

⁵⁰ Տես նույն տեղում, գ. 169, թթ. 62-63:

⁴⁴ Տես նույն տեղում, էջ 42:

⁴⁵ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 177, թ. 1:

Թերևս 1993 թ. փետրվարի 27-ին ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանի և ԻԻՀ-ի գործերի ժամանակավոր հավատարմատար Ամնադ Սորհանիի պայմանավորվածությունը երկկողմ դիվանագիտական շփումների աշխուժացման նպատակն ունեթ⁵¹: Արդյունքում 1994 թ. հուլիսի 4-ին ՀՀ ԱԳ-ն իրանական կողմին հաստատում է ՀՀ-ում ԻԻՀ դեսպանի համար ագրեման ստանալու նամակը⁵²: Նույն թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին իր հավատարմագրերն է հանձնում ՀՀ-ում ԻԻՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան Համիդբեգա Նիքքար Էսֆահանին⁵³: Նոյեմբերի 9-ին Վահան Բայբուրդյանը նշանակվում է ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան⁵⁴, իսկ դեկտեմբերի 20-ին իր հավատարմագրերը հանձնում ԻԻՀ նախագահին⁵⁵: Նոյեմբերի 11-ին ԻԻՀ-ի դեսպան Էսֆահանին ՀՀ վարչապետ Հրանտ Բազրաությանին հայտնում է, որ իր կառավարությունը պատրաստ է թազմական կցորդ ուղարկել ՀՀ⁵⁶:

Այսպիսով, երկկողմ հարաբերությունների առաջին տարիները դարձան միմյանց ծանոթանալու, ուսումնասիրելու, դիվանագիտական առանձնահատկություններին հաղորդակից լինելու ժամանակահատված: Այդ ընթացքում է, որ ձևավորվեց դիվանագիտական հարաբերությունները դեսպանի մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը և մտայնությունը: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ունեցավ պատմական նշանակություն երկու հարևան ու բարեկամ երկրների համար: Կողմերը նախ և առաջ հնարավորություն ստացան հաստատել, ինչպես նաև զարգացնել ու խորացնել բազմաբնույթ հարաբերություններ տարբեր բնագավառներում դրանց

⁵¹ Տե՛ս «Ազգ», 02.03.1993:

⁵² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 242, թ. 7:

⁵³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24.09.1994:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, 12.11.1994:

⁵⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թթ. 47-49:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 285, թ. 118:

հաղորդելով պետական աջակցություն և հովանավորություն: Մյուս կողմից դիվանագիտական ներկայացուցչությունները դարձան կարևոր կապող հանգույց հայ և իրանական հասարակությունները միմյանց նորովի ճանաչելի դարձնելու, տարբեր անհատ գործիչների ու պետական, հասարակական կառույցների աշխատանքները ճիշտ հունի վրա դնելու հարցերում:

1.3. Արցախյան հակամարտության կարգավորումն ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության համատեքստում

1980-ական թթ. վերջին Արցախի հիմնախնդիրը մոտ 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վեր հասնեց՝ իր վրա սևեռելով սկզբում Մոսկվայի, այնուհետև (ԽՍՀՄ-ի փլուզումից հետո) տարածաշրջանային և արտատարածաշրջանային տերությունների ուշադրությունը:

Հաշվի առնելով, որ Արցախն աշխարհագրական դիրքով գտնվում է ՀՀ-ի, Ադրբեջանի, ինչպես նաև ԻԻՀ-ի միջև, 1990 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ Գերագույն խորհրդի նիստում վերջինիս նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, կարևորում է հարցի վերաբերյալ ԻԻՀ-ի հետ բանակցելը և նրա դիրքորոշումը պարզելը⁵⁷:

Արցախի հակամարտության կարգավորման սկզբից ԻԻՀ-ի դիրքորոշումը միանշանակ չէր: Այդ դիրքորոշումը լուսաբանելու համար անհրաժեշտ է այն պայմանականորեն տրոհել փուլերի: Առաջին փուլին բնորոշ է Արցախի հակամարտության առաջացումը և հարևան ԻԻՀ-ում նրա արձագանքները: Երկրորդ փուլին բնորոշ է ԻԻՀ-ի միջնորդական առաքելության ստանձնումը (1991 թ. նոյեմբեր - 1992 թ. մայիս): Երրորդ փուլին բնորոշ է Արցախի ազատագրական պատերազմի

⁵⁷ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 117:

ծավալունը և դրա արձագանքները իրանական հասարակական-քաղաքական հարթակներում: Չորրորդ փուլին բնորոշ է 1994 թ. մայիսի 12-ին ՀՀ-ի, Արցախի և Ադրբեջանի միջև զինադադարի կնքումը և Արցախ-ԻԻՀ փաստացի սահմանի առաջացումը (1994-2020 թթ.): Հինգերորդ փուլին բնորոշ է 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախ-ԻԻՀ 26 տարվա փաստացի սահմանի վերացումը⁵⁸:

Ինչ վերաբերում է դեռևս 1988 թ. Արցախի հակամարտության սկզբնավորմանը, ապա Բաքվի ցույցերի ժամանակ չնայած որոշ ցուցարարներ իսլամը խորհրդանշող դրոշների հետ մեկտեղ կրում էին նաև Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահի խոմեյնիի պատկերը, այդուհանդերձ հակամարտությունը չընթացավ կրոնական անհանդուրժողականության հունով: Միայն 1992 թ. հունիսին ադրբեջանական լայնամասշտաբ հարձակման նախօրեին, Բաքվի ռադիոն կոչ է անում պետական մակարդակով սրբազան պատերազմ՝ Զիհադ, հայտարարել «անհավատ հայերին»⁵⁹: Երկրի հասարակական կարծիքը պահանջում էր, որ ԻԻՀ-ն օգնի Ադրբեջանին: Ազգայնական խմբերը պնդում էին, որ Կովկասը պատմականորեն պատկանել է Իրանին, որն այն կորցրել է Ռուսաստանի կայսերապետական նկրտումների հետևանքով և ժամանակն է, որ Իրանը վերադարձնի այդ տարածքները⁶⁰: Այլ կերպ ասած առաջարկում էին վերականգնել մինչև 1813 թ. Գյուլիստանի պայմանագիրը եղած թուրք-պարսկական սահմանը, որն ըստ էության հետապնդում էր Իրանի աշխարհաքաղաքական վերադասավորման պահանջը տարածաշրջանում: Մինչդեռ ադրբեջանական լոբբին Թեհրանից պահանջում էր իրական միջամտություն Ար-

ցախի իրադարձություններին:

Կարծում ենք, որ ԻԻՀ-ի աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից հակամարտության սկզբում ինչ որ տեղ ձեռնառու չէր ո՛չ հաղթած Ադրբեջանը և ո՛չ էլ հաղթած ՀՀ-ի գոյությունը, քանի որ երկու պետություններն էլ հզորանալու դեպքում ռազմավարական առումով կարող էին անցանկալի դեր խաղալ ԻԻՀ-ի համար. Ադրբեջանը՝ Թուրքիայի, ՀՀ-ն՝ ՌԴ-ի դաշնակից լինելու հանգամանքով: Թեհրանը ձգտում էր պահպանել ուժերի հավասարակշռությունը և առաջ մղել սեփական շահերը:

Հաջորդ հանգամանքն այն է, որ ՌԴ նախագահ Բորիս Ելցինի և Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի միջնորդական անհաջող առաքելությունից հետո ԻԻՀ-ի հաջողությունը Արցախի հարցում կբարձրացներ երկրի ազդեցությունը տարածաշրջանում և կզսպեր պանթյուրքական տրամադրությունների տարածումը: ԻԻՀ-ն Թուրքիային համարում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերի պաշտպան և փորձում էր նրան Արցախի խնդրից հեռու պահել: Այս առումով ԻԻՀ-ն ուներ բնական դաշնակիցներ՝ ի դեմս ՀՀ-ի և Արցախի Հանրապետության (այսուհետ՝ ԱՀ), որոնք չէին ընդունի Թուրքիայի միջնորդությունը:

Վերջապես կարևոր էր Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը, որը ԻԻՀ-ի և Ադրբեջանի միջև հակասությունների պատճառ դարձավ⁶¹: ԻԻՀ-ն անհանգստացած էր ՌԴ-ից և չէր ցանկանում տեսնել Այսրկովկասը նրա ազդեցության ներքո: Սակայն շատ զգուշավոր էր և հարգանքով ՌԴ-ի նկատմամբ⁶²:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ ԻԻՀ Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը 1991 թ. նո-

⁵⁸ Հինգերորդ փուլի վերաբերյալ կանդիդատանք մեր հետազոտություններում:

⁵⁹ Տես **Ղեմյան Հ.**, Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործուն, Ե., 2002, էջ 71:

⁶⁰ Տես **Քալայան Տ.**, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Ե., 2004, էջ 31-32:

⁶¹ Տես **Քալայան Տ.**, նշվ. աշխ., էջ 34-36:

⁶² Տես **Ստեյն Հովհաննիսյան Ն.**, The Karabakh problem (The Thorny road to freedom and independence), Yerevan, 2004, էջ 80, նույնի՝ The Foreign policy of Armenia, Yerevan, 1998, էջ 7:

յեմբերին որոշում է ընդունում անմիջական մասնակցություն ունենալ Արցախի հակամարտության կարգավորման գործում⁶³: ԻԻՀ արտաքին քաղաքականությունը դեպի Այսրկովկաս ուղղորդող այդ որոշումը պատմական էր, քանի որ 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո առաջին անգամ իրանական ներկայության հնարավորություն էր ստեղծվում նշված տարածաշրջանում:

1991 թ. նոյեմբերի 17-ին Երևան է այցելում ԻԻՀ-ի ԱԳՆ-ի Արևելյան Եվրոպայի վարչության պետ Բահրամ Ղասեմին, որը հետագայում նշանակվում է ՀՀ-ում ԻԻՀ-ի գործերի հավատարմատար: ՀՀ Պերագոյն խորհրդում Ղասեմին ակնարկում է Արցախի հակամարտության կարգավորման գործում ԻԻՀ-ի միջնորդության մասին: Այդ գրույցից հետո ՀՀ նախագահին է հանձնվում ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթիի ուղերձը, որտեղ վերջինս հանդես էր եկել խաղաղասիրական առաջարկով⁶⁴:

1991 թ. նոյեմբերի 24-ին ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթին մեկնում է Մոսկվա: Նա ԽՍՀՄ-ի նախագահ Միխայիլ Գորբաչովին է հանձնում ԻԻՀ-ի նախագահ Հաշեմ Ռաֆսանջանիի ուղերձը և հայտարարում, որ ԻԻՀ-ն պատրաստ է Արցախի հակամարտության կարգավորման գործում միջնորդի դեր ստանձնել⁶⁵: ԽՍՀՄ-ի փլուզմամբ նպաստավոր պայմաններ ընձեռվեցին Թեհրանին՝ միջնորդական առաքելությամբ ազատ գործելու համար: Վերացավ Մոսկվայից կաշկանդվածությունը:

1992 թ. փետրվարի 8-10-ը Թեհրանում Ռաֆֆի Հովհաննիսյանը և Ալի Աբբար Վելայաթին քննարկում են ԻԻՀ-ի միջնորդի դեր ստանձնելու հարցը: Ռաֆֆի Հովհաննիսյանը շեշտում է, որ հարցը կարելի է լուծել բոլոր շահագրգիռ կողմե-

րի մասնակցությամբ: Նա նշում է, որ Արցախի հարցն Ադրբեջանի և Արցախի միջև ծագած հակամարտություն է, և ՀՀ-ն կողջունի ԻԻՀ-ի քայլերը, եթե երկխոսության միջոցով ԻԻՀ-ն լուծի այն: Վելայաթին ընդգծում է, որ հակամարտությունը պետք է լուծվի բանակցությունների միջոցով և ԻԻՀ-ն կարող է այդ հարցում օգտակար լինել, Ադրբեջանը ևս համաձայն էր դրան⁶⁶:

ԻԻՀ-ի խորհրդարանի նախագահ Սեդդի Քյառուբին նշում է, որ ՀՀ-ն և Ադրբեջանն ընդունել են ԻԻՀ-ի միջնորդությունը, և շուտով Վելայաթին չեզոք դիրքերից կմիանա այդ խաղաղասիրական առաքելությանը: Քյառուբիի խոսքով՝ իրենք հայերին օտարականներ չեն համարում, որ հայերն ու պարսիկները կռվել են միևնույն թշնամու դեմ և զոհվել միևնույն ռազմաճակատում⁶⁷: Նա ակնարկում էր Իրան-իրաքյան պատերազմը, երբ իրանահայությունն ակտիվ մասնակցում էր երկրի պաշտպանությանը: Համանման մի գրույց էլ տեղի է ունենում նախագահ Հ. Ռաֆսանջանիի հետ: Նա հույս է հայտնում, որ Վելայաթին կօգնի խաղաղ ճանապարհով լուծել կնճի-րը:

Ուշագրավ էր Ռաֆֆի Հովհաննիսյանի խորհուրդը. «Մենք Իրանին խնդրում ենք օգնել իր ազդեցությամբ ու հեղինակությամբ՝ լուծելու կոնֆլիկտը, բայց չպետք է մոռանալ, որ հարցի լուծման բանալին Ադրբեջանում և Արցախում է»⁶⁸: Այսպիսով, հայկական կողմը, տալով իր համաձայնությունը ԻԻՀ-ի միջնորդական առաքելության վերաբերյալ, հուշում էր Թեհրանին հարցի լուծման բանալին փնտրել հավասարապես և՛ Ադրբեջանում, և՛ Արցախում՝ նախասպառնությունը չտալով նրանցից որևէ մեկին:

1992 թ. փետրվարի 27-28-ը Երևան են մեկնում ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթին և նրա տեղակալ Մահ-

⁶³ Տես **Բաղայան Գ.**, Հայաստան-Իրան. հարաբերությունները 20 տարեկան են, Թեհրան, 2012, էջ 43:

⁶⁴ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 175, թ. 3:

⁶⁵ Տես «Ազգ», 27.11.1991:

⁶⁶ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թթ. 22-32:

⁶⁷ Տես նույն տեղում, թ. 25:

⁶⁸ Տես նույն տեղում, թ. 26:

մուդ Վայեզին: Բանակցությունների ընթացքում ՀՀ նախագահը բարձր է գնահատում Արցախի հակամարտության քաղաքական կարգավորման ԻԻՀ-ի առաքելությունը: Լևոն Տեր-Պետրոսյանը նշում է, որ Արցախի հարցում մամուլը բացասական դեր կատարեց՝ այդպես էլ վեր չհանելով հակամարտության բուն էությունը⁶⁹: Խնդիրն այն էր, որ մամուլում և քաղաքական որոշ շրջանակներում Արցախի խնդիրը ծգտում էին ներկայացնել որպես Ադրբեջանի նկատմամբ ՀՀ-ի տարածքային պահանջների հետևանք՝ տալով կրոնական կամ ազգային հակամարտության երանգավորում: Մինչդեռ պաշտոնապես հայկական կողմը մերժում է այդ մոտեցումը՝ բանակցությունները ոչ ճիշտ մեկնարկով չընթանալու մտահոգությամբ: Փաստորեն իրանական մամուլը ևս հիմնվում էր ադրբեջանական տեսակետների վրա՝ անտեսելով և չներկայացնելով հայկական կողմի դիրքորոշումը:

Վելայաթին ընդգծում է. «Մեզ համար հակամարտող երկու կողմերն էլ հավասար են, իսկ լարվածության աճն արտացոլվում է մեր սեփական անվտանգության վրա»⁷⁰: Ինչ վերաբերում է Եվրոպային, ապա իրանական կողմը կարծում էր, որ վերջինս ի վիճակի չէ անհրաժեշտ ազդեցություն գործելու Արցախի խնդրի վրա: Այդպիսով Թեհրանը փորձում էր Արցախի հակամարտության կարգավորման գործընթացից հեռու պահել Եվրոպային:

Վելայաթին ընդունում է, որ ՀՀ-ն պատրաստ է խնդիրը լուծել բանակցությունների, այլ ոչ թափուկ գործողությունների ճանապարհով: Նրա առաջարկած բանաձևը բաղկացած էր երեք կետից: Առաջին կետով նախատեսվում էր գինադադարի հայտարարում՝ ԻԻՀ-ի, ՀՀ-ի, Ադրբեջանի և ՌԴ-ի մասնակցությամբ: Վելայաթին առաջարկում էր ԻԻՀ, ՀՀ, Ադրբեջանի և ՌԴ-ի ԱԳ նախարարների առաջին հանդիպումն անցկաց-

նել Թեհրանում: Փաստորեն հաշվի չէր առնվում Արցախի՝ որպես հակամարտող կողմի անհրաժեշտ ներկայությունը բանակցություններին: Ինչ վերաբերում է պատանդների և դիակների փոխանակման հարցին, ապա առաջարկվում էր տարածաշրջան գործուղել Իրանի Կարմիր մահիկ կազմակերպության ներկայացուցիչներին, որոնք պետք է ցույց տային մարդասիրական օգնություն: Եվ միայն երրորդ կետում էր նշվում կողմերի իրավունքների քննարկման մասին: Սակայն այս դեպքում էլ արձանագրվում էր, որ այդ կետն ամենաբարդն է և կարելի է իրականացնել միայն գինադադարի պայմաններում⁷¹:

Այսպիսով, բանաձևում որևէ խոսք չկար Արցախի իրավական կարգավիճակի մասին և այդ հարցը մնում էր անորոշ: Միայն վերջին փուլում պետք է քննարկվեին կողմերի իրավունքները ԻԻՀ-ի և ՌԴ-ի միջնորդությամբ:

Վելայաթին ԻԻՀ-ի առաքելությունը պատճառաբանում էր այն հանգամանքով, որ ԻԻՀ-ն չի կարող անտարբեր մնալ իր սահմանների մոտ կատարվող դեպքերին, ուստի հարցին մոտենում է պատմական օբյեկտիվության տեսանկյունից⁷²: չհստակեցնելով, թե ինչի մասին է խոսքը: Մինչդեռ, ըստ Մահմուդ Վայեզիի, ԻԻՀ-ն իր միջնորդական առաքելությամբ հետապնդում էր երեք խնդիր. ԻԻՀ-ի ազդեցության ոլորտի տարածում Ադրբեջանում, ՀՀ-ի հետ հարաբերությունների հաստատում, ԻԻՀ-ի համար վտանգ ներկայացնող պատերազմի կանխում⁷³:

Այնուհայտ է, որ Վելայաթին և Վայեզին հարցին մոտենում էին սեփական շահերի դիտանկյունից՝ անտեսելով Արցախի կարգավիճակի հարցը: Տարբերությունն այն էր, որ առաջինը կիրառում էր դիվանագիտական, իսկ երկրորդը՝ ավելի մատչելի ձևակերպումներ:

Փոխարենը Տեր-Պետրոսյան - Վելայաթի բանակցու-

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 103, թթ. 55-58, ք. 59, ք. 61:

⁷⁰ Տե՛ս նույն տեղում, ք. 62:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, ք. 57:

⁷² Տե՛ս նույն տեղում:

⁷³ Տե՛ս **Քաղաքացիական Ա.**, Իրան. Հանրապետության, Ե., 2011, էջ 345:

յուններում երկար է քննարկվում այն հարցը, թե ու՞մ կողմից էր հրավիրվելու ՌԴ-ն. ԻԻՀ-ի, թե՞ ՀՀ-ի: Քանի որ իրանական կողմն էր միջնորդը, ապա նա էլ պետք է հրավիրեր ՌԴ-ին: Ի վերջո, Վելայաթին տեղի է տալիս: Լ. Տեր-Պետրոսյանի այն հարցին, թե ինչպիսին է Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի դիրքորոշումը, Վելայաթին պատասխանում է, որ կհամոզվի Մութալիբովին մասնակցելու խորհրդակցությանը: ՀՀ նախագահն ընդգծում է, որ չի կարելի ինչ-որ բանի հասնել առանց Արցախի մասնակցության: Վելայաթիի խոսքով՝ սկզբում պետք էր ապահովել Չորսի հանդիպումը՝ ՀՀ, Ադրբեջան, ԻԻՀ և ՌԴ, իսկ մնացածն իրագործելն (Արցախի մասնակցությունը) ավելի հեշտ էր:

Ակնհայտ է, որ Արցախին բանակցային գործընթացում ապահովելը Վելայաթին առաջնահերթ խնդիր չէր համարում: Ահա թե ինչու Ռաֆֆի Հովհաննիսյանն ընդգծում էր, որ անհրաժեշտ է ընդունված փաստաթղթերի կատարումը, որպեսզի չլինի ժելեզնովողսկի չիրագործված կոմյունիկեի նման: Խորհուրդ է տալիս, որ եթե ԻԻՀ-ն ապահովի Արցախի մասնակցությունը, ապա 50%-ով հաջողության կհասնի: Ըստ էության հայկական կողմը մտահոգ էր և փորձում էր կանխարգելել իրանական միջնորդական կողմի համար բանակցությունների հնարավոր ձախողումը և ապահովել դրական ելքը:

ՌԴ-ի մասնակցությունը բանակցություններին ապահովելու նպատակով ՌԴ-ում ԻԻՀ-ի դեսպան Իզադին հանդիպել էր ԱԳՀ Ջինված ուժերի գլխավոր հրամանատար, մարշալ Եվգենի Շապոշնիկովին, որը բավարար չէր: Անհրաժեշտ էր իրանական կողմից ավելի բարձր մակարդակով դիմում ՌԴ-ին⁷⁴: Ըստ էության, ՌԴ-ին բանակցային գործընթացում ներառելու իրանական կողմի նպատակն էր կանխարգելել Թուրքիայի հնարավոր միջամտությունը հարցին և փոխարենն ամրապնդել սեփական դիրքերը:

⁷⁴ Տես ՀԱՍ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թ. 66:

ՀՀ նախագահը հաստատում է, որ ԻԻՀ-ն կարող է Արցախ ուղարկել Կարմիր մահիկի սեփական ներկայացուցիչներին կազմակերպելու գերիների և դիակների փոխանակությունը⁷⁵: Դրանով հայկական կողմը թույլատրում էր հակամարտության գոտում օտարերկրյա կազմակերպության գործունեությունը, սակայն ԻԻՀ-ն իր վրա պետք է վերցներ Արցախի շրջափակման վերացման խնդիրը՝ նկատի ունենալով, որ գերիների և պատանդների փոխանակումը տեղի է ունենալու Արցախի և Ադրբեջանի միջև:

Հայկական կողմը որոշել էր փետրվարի 25-ին Իվանյանում (Խոջալու) վերցված գերիներին հանձնել ի ցույց այն բանի, որ Վելայաթիի առաքելությունը արդյունավետ է: Սակայն, բանի որ Վելայաթիի այցը Արցախ չկայացավ, տեղի չունեցավ նաև գերիների հանձնումը⁷⁶: Վելայաթիի բանակցությունները հուսադրող էին այն առումով, որ Բաքուն և Երևանը ողջունեցին Թեհրանի նախաձեռնությունը:

Զնայած հայտարարություններին, որ Վելայաթիի առաքելությունը հետապնդում է քաղաքական նպատակներ, աչքի էր ընկնում նրա առաքելության քարոզչական բնույթը⁷⁷: Պատահական չէ, որ Վելայաթին ՀՀ նախագահի հետ հանդիպման ժամանակ (նկատի ունենալով իրանական ՋԼՄ-ների կողմից իր այցելության շուրջ բարձրացրած աղմուկը) հայտնում է, որ մամուլը մեծ դեր է խաղում քաղաքականության մեջ⁷⁸: Անշուշտ, մամուլն ուներ իր դերը, սակայն Արցախի հակամարտությունը ներկայացվում էր ադրբեջանական շահերի դի-

⁷⁵ Տես նույն տեղում, թ. 67:

⁷⁶ Տես նույն տեղում, թ. 64:

⁷⁷ Հարկ է նշել, որ Իրանի ռազիոն 1992 թ. փետրվարի 25-ին թողարկած մեկնաբանությունում, նկարագրելով Արցախի հակամարտության ակունքները և դրա լուծման համար մինչ այդ կատարված ապարդյուն ջանքերը, առանձնացնում է ԻԻՀ-ի նախաձեռնությունը: Մյուս կողմից՝ իրանական մամուլն անհանդուրդակալանությամբ էր խոսում տարածաշրջանում Արևմտքի Եվրոպայի և ԱՄՆ-ի, հնարավոր միջամտության մասին՝ շեշտելով, որ նրա նպատակն է մուտք գործել և հաստատվել այնտեղ:

⁷⁸ Տես ՀԱՍ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թ. 56:

տանկյունից: Ակնհայտ է, որ դա պայմանավորված էր աղբյուր-
ջանական քարոզչամեթոդային հակահայկական գործունեությամբ, Իրանում «համախոհ» լրագրողներին իր կողմը ներքաշելու, Արցախի պատմությունը կեղծելու և միջազգային հանրությանն արագորեն իրամցնելու մարտավարությամբ և այլն:

1992 թ. մարտի 15-17-ը Թեհրանում ԻԻՀ-ի ԱԳ նախարարի միջնորդությամբ բանակցում են ՀՀ-ի և Ադրբեջանի ԱԳ փոխնախարարներ Արման Նավասարդյանն ու Ալբերտ Սալամովը: Բանակցությունների վերջնական փուլին դիտորդի կարգավիճակով մասնակցում է նաև ԻԻՀ-ում ՌԴ-ի դեսպան Վլադիմիր Գուդևը⁷⁹: Արդյունքում ստորագրվում է եռակողմ համալտեղ առաջին հայտարարությունը, որը հայտնի է որպես «Թեհրան 92»⁸⁰: Ըստ այդ փաստաթղթի, մեկ շաբաթով հայտարարվում է զինադադար: Հաջորդ օրը հակամարտության գոտում տեղի է ունենում ռազմագերիների և զոհվածների դիակների փոխանակում, որը կարևոր նշանակություն ուներ:

Փաստորեն իրանական կողմը կարողացավ ստեղծել բարենպաստ պայմաններ ՀՀ և Ադրբեջանի պատվիրակությունների հանդիպման համար, որի արդյունքում ընդունվեց այդ փաստաթուղթը: Արցախյան կողմը հատուկ նշվում էր փաստաթղթում: Եթե անգամ այն չէր անվանվում Արցախ, այլ անվանվում է «Ղարաբաղյան կողմ», առանց որի անհնար էր հասնել խնդրի կարգավորմանը⁸¹:

Իրանական միջնորդական առաքելության ղեկավար է նշանակվում ԱԳ փոխնախարար Մահմուդ Վայեզին, իսկ ինը հոգուց բաղկացած առաքելության ղեկավարի տեղակալ՝ Ուկրաինայում ԻԻՀ-ի նորանշնակ դեսպան Թահմասպ Մազարեդին: Վերջինս ապահովում էր Ստեփանակերտի հետ անմիջա-

կան կապը և կյանքը վտանգելով այցելել էր Արցախ⁸²: Առաքելության կազմում էր նաև ՀՀ-ում ԻԻՀ-ի ապագա դեսպան Մուհամմադ Ֆարիադ Քուլեյնին:

Արցախյան հակամարտության հարցում ԻԻՀ-ի միջնորդական առաքելությանը լուրջ նրբակից դարձավ նորաստեղծ ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի կազմում ներգրավվեցին ՌԴ-ը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Թուրքիան, Իտալիան և այլ երկրներ: Իտալացի դիվանագետ Մարիո Ռաֆայելին խաղաղության համաժողովի նախագահն էր⁸³:

Այդ պայմաններում 1992 թ. մարտի 20-ին Երևան է այցելում ԻԻՀ-ի ԱԳ փոխնախարար Մահմուդ Վայեզին և ներկայացնում Բաքվի հավանությանն արժանացած իրանական առաջարկները: Նախատեսվում էր կրակի դադարեցումից հետո հակամարտության գոտում տեղաբաշխել դիտորդներ, այդ թվում՝ ԻԻՀ-ի ներկայացուցիչներ: ՀՀ-ն, միանշանակ պատասխան չտալով առաջարկություններին, հայտարարում է, թե հակամարտության կարգավորման մեխանիզմը կգործի Ադրբեջանի և Արցախի միջև ձեռք բերված պայմանավորվածություններից հետո⁸⁴: Մարտի 28-31-ը Երևան և Ստեփանակերտ է այցելում Մահմուդ Վայեզին: Մարտի 31-ին նա Թեհրանում հայտարարում է, որ ՀՀ-Ադրբեջան սահմանագծին տեղի է ունենալու քառակողմ հանդիպում, որին հրավիրված էին Արցախի ներկայացուցիչները:

Արցախի իշխանություններն ընդունեցին Վայեզիի ներկայացրած առաջարկությունները, սակայն անհամաձայնություն հայտնեցին Արցախի կարգավիճակի վերաբերյալ: Իրանական կողմը գտնում էր, որ Արցախի իշխանությունները բանակցություններին պետք է մասնակցեն որպես դիտորդ՝ «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի» ներկայացու-

⁷⁹ Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, Ե., 2004, էջ 220:

⁸⁰ Տե՛ս Նավասարդյան Ա., Դիվանագիտություն, Ե., 2010, էջ 206:

⁸¹ Տե՛ս նույն տեղում, էջ 207:

⁸² Տե՛ս Բաղայան Գ., Հայաստան-Իրան..., էջ 47:

⁸³ Տե՛ս Hovhannisyan N., The Karabakh problem (The Thorny road to freedom and independence), էջ 81:

⁸⁴ Տե՛ս Բաղայան Գ., Հայաստան-Իրան..., էջ 37:

ցիչների հետ հավասար իրավունքներով, ինչը Երևանի և Ստեփանակերտի համար անընդունելի էր⁸⁵:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Արցախի իշխանություններն ընդունում են մեկշաբաթյա իրադարձար հաստատելու մասին առաջարկը: Ի պատասխան Վայեգին խոստանում է Արցախը ներկայացնել որպես կարգավորման գործընթացի լիիրավ կողմ: Ցավոք, Վայեգիի խոստումը չվերածվեց գործնական քայլերի: Համատեղ հայտարարության ընդունումից տասը օր անց Վայեգին այցելում է Բաքու և Երևան, ապրիլի 1-ին Ստեփանակերտում բանակցում է ԱՀ-ի Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանի, ԱՀ-ի ինքնապաշտպանական ուժերի իրամանատարական կազմի ղեկավար Սերժ Սարգսյանի հետ: Վայեգին Ստեփանակերտում հակառակորդի ուժերի կողմից ենթարկվում է հրթիռակոծության:

Ապրիլի 2-ին Իջևանում ՀՀ-ի, ԻԻՀ-ի, ՌԴ-ի և Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունենում քառակողմ հանդիպում, որին պետք է մասնակցեին նաև ԱՀ-ի ներկայացուցիչները, որոնք, սակայն վերջին պահին հրաժարվում են: Դա բացառվում է նրանով, որ նախ Արցախի իշխանություններն անհամաձայնություն էին հայտնել Արցախի վերոնշյալ կարգավիճակի վերաբերյալ, ապա ապրիլի 1-ին Ստեփանակերտի հրթիռակոծության փաստը, որոնք էլ իրական երաշխիքներ չառաջացրին Արցախի ղեկավարության մոտ: Այդուհանդերձ, Վայեգիի առաքելությունը շարունակվեց մինչև ապրիլի 20-ը, երբ իրանական կողմը հակամարտող ուժերին համաձայնության է հրավիրում իրանական պլանի շուրջը: Սակայն ռազմաքաղաքական իրադարձությունների սրման պատճառով ԻԻՀ-ի միջնորդական փորձն արդյունք չարձանագրեց⁸⁶:

Ապրիլի 8-ին Վայեգին Ստեփանակերտում բանակցու-

յուններ է վարում Արցախի ղեկավարության հետ, երբ 70 արկ է նետվում Շուշիում տեղաբաշխված «Գրադ» կայաններից⁸⁷: Վայեգիի Արցախում գտնվելը զսպիչ գործոն չդարձավ Ադրբեջանի համար: Նման արդյունքներով նա մեկնում է Մոսկվա՝ համաձայնեցնելու հակամարտության կարգավորման սկզբունքները ռուս գործընկերների հետ, քանզի ՌԴ-ի մասնակցությունը կարգավորման գործընթացին ավելի ծանրակշիռ կլիներ: Նրա ջանքերին զուգահեռ՝ ԱՄՆ-ն ուժեղ ճնշում էր գործադրում Երևանի և Բաքվի վրա, որ հրաժարվեն ԻԻՀ-ի միջնորդական առաքելությունից⁸⁸: Ըստ էության ադրբեջանական կողմն առաջին փորձերն էր կատարում վարկաբեկելու իրանական միջնորդությունը:

Ապրիլի 10-ին Արցախը և Ադրբեջանն իրանական առաքելությանն են ներկայացնում իրենց նկատառումները խնդրի շուրջ: Տարածաշրջանում Վայեգիի մեկամսյա (ապրիլ) գործունեության արդյունքում, որը հայտնի է նաև «մաքոքային դիվանագիտություն» անվամբ, կողմերը համաձայնում են թեհրանում գումարել ՀՀ-ի, Ադրբեջանի և ԻԻՀ-ի ղեկավարների գազաթնաժողով: Ահա թե ինչու ապրիլի 15-ին և նույն ամսի 26-28-ին թեհրանում Ավստրիայի խորհրդարանի նախագահի տեղակալ Ռոբերտ Լիչալը, ապա ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս-Բուտրոս Դալին բարձր են գնահատում ԻԻՀ-ի քայլերը Արցախի հակամարտության կարգավորման հարցում⁸⁹: Ի դեպ, 1992 թ. մայիսի 5-ին ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանի և Դալիի զրույցից պարզ է դառնում, որ վերջինս նշված հարցի շուրջ քննարկում է ունեցել ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի հետ⁹⁰: Նույն հարցը դառնում է նաև քննարկման առարկա, երբ 1992 թ. ապրիլի 20-21-ին թեհրան է այցելում Թուրքիայի ԱԳ նախարարի տեղակալ Օզդեմ

⁸⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 09.04.1992:

⁸⁸ Տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 39:

⁸⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 170, թ. 3:

⁹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 32, թ. 80:

⁸⁵ Տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 38:

⁸⁶ Տե՛ս Դարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 221:

Սանբերգը⁹¹:

Այսպիսով, իրանական կողմը փորձում էր ամրագրել Արցախի հակամարտության հարցում իր միջնորդությունը միջազգային բարձր ատյանում՝ ՄԱԿ-ում, ինչպես նաև տարածաշրջանում, ի դեմս հարևան թուրքիայի:

Ուշագրավ է, որ ԻԻՀ պաշտոնական այցի նախօրյակին՝ 1992 թ. ապրիլի 25-ին, ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Եռօրյա պաշտոնական այցով մեկնում է Սիրիայի Արաբական Հանրապետություն⁹²: Այցը կարևորվում է այն առումով, որ, ինչպես նախագահների առանձնագրույցից պարզ է դառնում, ՍԱՀ-ն էր մշակել իրանական կողմի հետ Արցախի հակամարտության հարցում ԻԻՀ-ի միջնորդության ծրագիրը՝ ՍԱՀ նախագահ Հաֆեզ ալ-Ասադի գործադրած անմիջական ջանքերի շնորհիվ⁹³: Փաստորեն ՍԱՀ-ի և ԻԻՀ-ի համատեղ դիվանագիտական քայլերը նպատակ ունեին կանխել, թույլ չտալ Արցախի հարցում Ադրբեջանին աջակցելու պատրվակով թուրքիայի ռազմաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում:

Ինչ վերաբերում է Թեհրանի եռակողմ գագաթնաժողովին, ապա 1992 թ. մայիսի 7-ին բանակցությունների արդյունքում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յադուբ Մամեդովը և ԻԻՀ-ի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին ստորագրում են համատեղ

հայտարարություն: Կողմերը հայտնում են Արցախի ճգնաժամը խաղաղ լուծելու և տարածաշրջանում կայունություն հաստատելու ցանկություն: Երրորդ կետով նրանք համաձայնության են գալիս ճանաչելու միմյանց անկախությունը: Կողմերը համաձայնում են կազմակերպելու շրջանային և ռազմական պատասխանատուների հանդիպումներ (4-րդ կետ): Կողմերը միմյանց ուշադրությունն են հրավիրում՝ որոնելու ուղիներ գաղթականների դժվարությունները լուծելու (6-րդ կետ): Ըստ հայտարարության՝ Կայեզին կրկին պետք է ժամաներ Բաքու, Երևան և Ստեփանակերտ, որից հետո ՀՀ-ի և Ադրբեջանի ղեկավարների հովանավորությամբ հայտարարվելու էր զինադադար: Դրան զուգահեռ բացվելու էին հաղորդակցության բոլոր ուղիները: Համաձայնությունների կատարմանը, բացի ԻԻՀ-ի դիտորդներից, համաձայնության դեպքում պետք է հրավիրվեին ԵԱՀԿ-ի և այլ դիտորդներ⁹⁴:

Այսպիսով, ԻԻՀ-ը կարծես թե լուծում էր Արցախի հիմնախնդիրը բանակցությունների ճանապարհով: Ընդունվեց եռակողմ համատեղ հայտարարություն: Բայց փաստը մնում է փաստ, որ հայկական կողմի նախապես արված բազմաթիվ զգուշացումները չազդեցին իրանական կողմի վրա, և եռակողմ փաստաթղթում տեղ չգտավ Արցախի ներկայացուցչի ստորագրությունը, ավելին նրա ներկայությունն անգամ չապահովվեց:

Հարցի վերաբերյալ ԻԻՀ-ի նախագահ Ռաֆսանջանին իր հուշերում գրում է. «Հայկական պատվիրակությունն ավելի համակարգված էր աշխատում, ու ենթարկվում նախագահին, բայց ադրբեջանական պատվիրակության անդամների միջև կար տարածայնություն: Նույնիսկ ոմանք աշխատում էին խոչընդոտներ հարուցել իրենց ղեկավարի համար, կամ էլ իրանական միջնորդությունը տապալելու փորձեր էին անում: Այդ-

⁹¹ Տես նույն տեղում, գ. 170, թ. 4:

⁹² Հայտնի է, որ ՍԱՀ-ը ԻԻՀ-ի ռազմաքաղաքական թիվ մեկ դաշնակիցն է Մերձավոր Արևելքում և այս առումով կարևոր ժեստ էր ԻԻՀ-ին ՀՀ-ի կողմից, մանավանդ որ տարածաշրջանում առաջին երկիրը, որ ՀՀ նախագահը այցելում էր, Սիրիան էր: Այլ խոսքով՝ 1992 թ. սկզբին ՀՀ-ի համար կարևոր էր քաղաքական կուրսի ուղղորդումը դեպի իր հարավային իսլամական հարևանները: ՀՀ-ն ցամաքային կապ չունեի արաբական երկրների և տեղի հայության հետ և այդ համատեքստում ԻԻՀ-ի նշանակությունը երիցս կարևորվում էր ՀՀ-ի համար: ՀՀ-ն ցույց էր տալիս աշխարհին, որ կրոնական խնդիրներ չունի իսլամադավան հարևանների հետ: Ավելին, հաջորդ այցը տեղի ունեցավ ԻԻՀ: Փաստորեն չեզոքացվում էր Ադրբեջանի կողմից Արցախը որպես հայերի կրոնական անհանդուրժողականության օրինակ ներկայացնելը: Առավել ևս այն դեպքում, երբ Արցախի հարցը փորձում էր լուծել կրոնապետական շիա ԻԻՀ-ն:

⁹³ Տես ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 103, թթ. 39-42:

⁹⁴ Տես ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 103, թթ. 96-97, նույնը՝ գ. 45, թթ. 55-56: Տես նույնը նաև՝ Абагов А., Хачатрян А., Варианты решения Карабахского конфликта: идеи и реальность, М., 2004, էջ 121-122:

պիսին էր, օրինակ, Ադրբեջանի արտգործնախարարը»⁹⁵։ Փաստորեն, Թեհրանում անգամ բանակցությունների ընթացքում Բաքվի նպատակն էր կեղծ խաղաղարարի տպավորություն ստեղծել ու ազդել իրանցիների վրա։

Ժամանակի մամուլի հրապարակումներում տարածված է այն սխալ տեսակետը, թե իրանական առաքելության ձախողման գլխավոր պատճառը մայիսի 9-ին Արցախի զորամիավորումների կողմից հայոց հինավուրց Շուշի քաղաքի ազատագրումն էր։ Թերևս միայն առաջին հայացքից կարելի է այդպես կարծել, մինչդեռ իրականում պակաս կարևոր չէր այն իրողությունը, որ բանակցային գործընթացից ԻԻՀ-ին դուրս մղելու հարցում ակտիվ դեր ունեցավ Մոսկվան, որն անհանգստացած էր ԻԻՀ-ի թույլատրելի սահմանները գերազանցող ակտիվացումից⁹⁶։

Շուշիի ազատագրումը, Բերձորի (Լաչինի) կրակակետերի վնասագերծումը (18 մայիսի, 1992) և ցամաքային կապի հաստատումը ՀՀ-ի հետ անհանդուրժողականությամբ է ընդունվում ԻԻՀ-ում և մեծ արձագանք գտնում իրանական մամուլում։ Որպես կանոն, մեղավոր է ճանաչվում հայկական կողմը։ Սակայն Բաքվի արևմտամետ և հակաիրանական դիրքորոշման պատճառով որոշ մեղադրանքներ են հնչում նաև Ադրբեջանի հասցեին։ «Էթեվաթ» օրաթերթը (06 հունիսի, 1992) գրում է, որ Ադրբեջանի Ազգային ճակատը Շուշին հանձնել էր միայն այն բանի համար, որ ձախողի իրանական միջնորդական առաքելությունը։ «Քեյհան» թերթը (21 հուլիսի, 1992) գրում է, որ «Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտն ունի էթնիկական բնույթ, և կողմերը պետք է պաշտպանեն իրենց իրա-

⁹⁵ Տե՛ս «Շուշիի ազատագրումը Իրանի նախագահ Ռաֆսանջանիի հուշագրություններում», թարգմանությունը Գ. Առաքելյանի, «Ազգ» շաբաթաթերթ, 20 մայիսի, 2022։

⁹⁶ Տե՛ս **Ալյուտյան Կ.**, Իրանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում 1990-ական թթ., «Հայ աստվածաբան», գիտական հոդվածների ժողովածու, Գ, Ե., 2009, էջ 247։

վունքները»⁹⁷։ Իրանական մամուլն Արցախի հարցը համարում էր էթնիկ, այլ ոչ թե կրոնական հակամարտություն՝ «Լեռնային Ղարաբաղն ընդունելով Ադրբեջանի տարածք»⁹⁸։ Ավելին, նրա համար անընդունելի էր, որ Արցախն ընդգրկվի ՀՀ-ի կազմում կամ դառնա անկախ երկիր։ Հատկանշական է, որ վերոնշյալ թերթը գրում է, թե իրենց համար սահմանների փոփոխումն ընդունելի չէ ոչ մի պարագայում՝ ո՛չ Նախիջևանում և ո՛չ էլ Ադրբեջանում։ Հարկ է նշել, որ ռազմական գործողությունների ծավալմանը զուգահեռ իրանական քաղաքական վերնախավի մոտ ավելի էր արմատավորվում և կարծրանում այն մտավախությունը, որ հայկական զինուժը, անկասկած, գրավելու է Նախիջևանը։

ԻԻՀ-ի կառավարությունը ստիպված էր հաշվի նստել երկրում տիրող հասարակական կարծիքի հետ, որը կոչ էր անում կառավարությանն ավելի խիստ դիրքորոշում ընդունել ՀՀ-ի նկատմամբ։ Մահմուդ Վայեզին ենթարկվեց խստագույն քննադատության։ ՀՀ-ում ԻԻՀ-ի գործերի հավատարմատար Բահրամ Ղասեմին հետ կանչվեց Թեհրան։ Նոր հավատարմատար նշանակվեց Ահմադ Սոբհանին։ «Սալամ» օրաթերթն այդ օրերին վրդովմունքով գրում է. «Հայերն ապացուցեցին, որ իրենք չեն պահպանում ոչ մի պայմանավորվածություն և օգտվելով առիթից (ԻԻՀ-ի միջնորդական առաքելություն) վերագինվեցին ու հաշվեհարդար տեսան շիա բնակչության նկատմամբ»⁹⁹։ Իսկ նախագահ Ռաֆսանջանիի խոսքով՝ ՀՀ-ն պետք է հարգեր իր ստորագրությունը և չզնար նման քայլի։ Մայիսի 19-ին ԻԻՀ-ի ԱԳՆ-ն դատապարտում է հայկական ուժերի կողմից շարունակվող ռազմական գործողությունները¹⁰⁰։

ՀՀ ԱԳՆ-ի հայտարարությունը չէր բավարարում իրանական կողմին։ ԻԻՀ-ի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիին

⁹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 172, թ. 4։

⁹⁸ Տե՛ս նույն տեղում։

⁹⁹ Տե՛ս **Բաղդասյան Գ.**, Հայաստան-Իրան..., էջ 53։

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում։

հասցեագրված ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ուղերձը և Իրանի առաջնորդ Խամենեյին ուղղված Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի նամակը հանձնվում են ԻԻՀ-ի փոխնախագահ Հասան Հաբիբիին¹⁰¹ և այդ կերպ փորձ արվում փրկել հարցականի տակ հայտնված ՀՀ-ԻԻՀ նորաստեղծ հարաբերությունները:

ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին Բերձորի միջանցքի բացումը գնահատում է որպես «*Կովկասի մուսուլմանների տարածքների զավթում*» և որակում որպես զավթողական արարք դասելով այն Աֆղանստանի, Բոսնիայի և Հերցեգովինայի իրադարձությունների շարքին¹⁰²: Փաստորեն, իրանական կողմը Բերձորի միջանցքի բացումը քննադատում էր համահսկամականության դրոշի ներքո:

1992 թ. հունիսին Լոնդոնում իրատարակվող Իրանի ընդդիմության օրգան «Քեյհան» շաբաթաթերթը գրում է. «*Իրանի դիրքը հայ-ադրբեջանական հակամարտության մեջ զնայով ավելի փափուկ է դառնում*»¹⁰³: Այաթոլլահ Մոհամմադ Ռեզա Գոլիպայանիանը դատապարտում էր հայերին՝ «*ազերի մուսուլման եղբայրների արյունը հեղելու համար*» և նշում, որ ԻԻՀ-ի մուսուլման ժողովրդի համար անսպասելի էր հայերի հարձակումը: Շեշտվում էր, որ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Նշան վրդ. Թոփուզյանը դիմել է Թավրիզ քաղաքի գլխավոր մզկիթի ուրբաթօրյա աղոթապետ և Իրանի առաջնորդ Խամենեյի Ատրպատականի ներկայացուցիչ Այաթոլլահ Մաջոմուրիին՝ բարձր գնահատելով ԻԻՀ-ի մարդասիրական ջանքերը ՀՀ-ի և Ադրբեջանի միջև խաղաղություն հաստատելու ուղղությամբ: Թերթն անդրադառնում էր նաև Նշան վրդ. Թոփուզյանի այն հայտարարությանը, որ իրանահայերը դժգոհ են Անդրկովկասի ընդհարումներից: Իրականում այդ հայտարարության նպատակն էր ապահովել իրանահայության անվտան-

գությունը իրանական հասարակության թուրքախոս զանգվածի զայրույթից:

ԻԻՀ-ի չեզոքությունը բացատրվում էր նրանով, որ ԻԻՀ-ի կառավարությունը միջնորդի դեր ստանձնելու պատճառով խուսափում է ռազմական միջամտությունից: Մեջբերվում էր ՀՀ նախագահի օգնական Ժիրայր Լիպարիտյանի խոսքը, որ ՀՀ-ն պատրաստ է միջազգային դիտորդներ ընդունել Բերձորի շրջան, այդ թվում նաև ԻԻՀ-ից: Հարկ է նշել, որ ԻԻՀ-ն չարձագանքեց Բերձոր դիտորդներ ուղարկելու վերաբերյալ ՀՀ-ի առաջարկին:

Բերձորի միջանցքի բացումից հետո Թավրիզում տարածվում են թռուցիկներ՝ ադրբեջանցի եղբայրներին օգնելու համար կամավորներ հավաքագրելու մասին: Ի դեպ, այդ կոչին, բացի մի քանի բախտախնդիրներից վարձկաններ չմեկնեցին Արցախ: Ստեղծվել էր լարված վիճակ թավրիզահայ համայնքում: Հակահայկական կրքերը դադարեցնելու և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար իշխանությունները ստիպված էին ապահովելու նրանց անվտանգությունը¹⁰⁴: 1992 թ. ամռանը տեղի ադրբեջանցիների կազմակերպած հակահայկական ցույցերի հետևանքով Թավրիզում 8000-ից մնացել էր մոտ 1300 հայ¹⁰⁵: Այսպիսով, սպառնալիք էր ստեղծվել նաև իրանահայության անվտանգությանը:

Փորձելով համեմատության եզրեր գտնել Բերձորի միջանցքի բացումից հետո ԻԻՀ-ի դժգոհությունների և մինչ այդ Ադրբեջանի կողմից ՀՀ-ի ու ԱՀ-ի նկատմամբ ոտնձգությունների միջև ՀՀ-ի սահմանամերձ շրջանների վրա հարձակումները, Արցախի հայության զանգվածային տեղահանումները, Արցախի հայկական գյուղերի ոչնչացումը, Շահումյանի շրջանում քիմիական զենքի օգտագործման փաստը, Մարաղայի եղեռնագործությունը, զալխս ենք այն եզրահանգման, որ նշված

¹⁰¹ Տես նույն տեղում, էջ 54:

¹⁰² Տես «Ազգ», 18.06.1992:

¹⁰³ Տես նույն տեղում, 23.06.1992:

¹⁰⁴ Տես Բաղայան Գ., Հայաստան-Իրան..., էջ 56:

¹⁰⁵ Տես «Ազգ», 04.06.1992:

դեպքերը արձագանք չգտան ԻԻՀ-ում: Ավելին՝ նույնիսկ որոշ դեպքերում իրանական ՋԱՄ-ները հայկական կողմի ինքնապաշտպանությունը ներկայացնելիս հիմնվում էին աղբյուրա-նական աղբյուրների վրա:

Վերլուծելով իրանական մամուլի արձագանքներն Արցախի հակամարտության լուսաբանման հարցում հարկ է նկատի ունենալ նրա որոշ առանձնահատկությունները: Նախ՝ հակամարտության կարգավորման հարցում հանդես էր գալիս որպես միջնորդ պետություն, սահմանակից էր հակամարտության գոտուն և, վերջապես, պետք է լուսաբանվեր դավանակից Ադրբեջանի մասին¹⁰⁶:

Իրանական մամուլն ընդհանրապես չանդրադարձավ Ադրբեջանի կողմից ՀՀ տարածք համարվող Արծվաշենի բռնագավթման (08 օգոստոսի, 1992) հարցին: Եվ միայն 1992 թ. օգոստոսի 14-ին ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանի և Երևանում ԻԻՀ ժամանակավոր հավատարմատարի տեղապահ Ազիմ Ջադեի գրույցի ընթացքում անդրադառնալով նշված հարցին, իրանցի դիվանագետն ընդամենը հավաստում է, որ Իրանը քանիցս հանդես է եկել բռնի ուժով սահմանների փոփոխության անընդունելիության մասին հայտարարություններով¹⁰⁷: Ակնհայտ է, որ իրանական կողմը հանդես էր գալիս որոշ կողմնապահությամբ:

1992 թ. հունիսին Ադրբեջանում ժողձակաւոի իշխանության գալուց հետո նոր նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը բացառում է Թեհրանի միջնորդական որևէ առաքելություն Լեռնային Ղարաբաղի հարցում: Ադրբեջանի հետ հարաբերությունների խզման պայմաններում ԻԻՀ-ն սկսում է հարաբերություններ հաստատել Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիևի հետ: Ի հա-

¹⁰⁶ Տե՛ս Ալբուրջան Կ., Ղարաբաղյան հակամարտության արձագանքներն իրանական մամուլում (1992-1994 թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2012, Գ, էջ 187:

¹⁰⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 84, թթ. 6-7:

կակշիռ էլչիբեյի, իրանական կողմը կազմակերպում է Հեյդար Ալիևի այցը Թեհրան՝ ընդունելով նրան նախագահական արարողակարգով: Այդ այցից հետո 1992 թ. հունիս-հուլիս ամիսներին Ադրբեջանի բանակը գրավում է Մարտակերտի շրջանի մեծ մասը, Մարտունու, Ասկերանի և Հադրութի շրջանների մի մասը և Շահումյանի ամբողջ շրջանը¹⁰⁸:

Մյուս կողմից ԻԻՀ-ի միջնորդական առաքելության ծախողումից հետո մամուլում լուրեր են պատվում, որ նա վերցստին պետք է ստանձնի այն: Դրան անդրադառնում են «Ջոմհուրի-է Էսլամի» և «Քեյհան» թերթերը, որտեղ հրատարակվել էր Մահմուդ Վայեզիի հարցազրույցը (26 հուլիսի, 1992)¹⁰⁹: Վերջինս ընդգծում էր, որ քանի դեռ երկու կողմերը կրկին ԻԻՀ-ին չեն դիմել, իրենք, որպես միջնորդ, նոր քայլերի չեն դիմի: Իրանական թերթերը նաև գրում են, որ ՀՀ նախագահը ԻԻՀ-ի հավատարմատարի հետ հանդիպման ժամանակ ցանկություն է հայտնել, որ ԻԻՀ-ը շարունակի միջնորդական ջանքերը: Իբրև արձագանք «Ջոմհուրի-է Էսլամի» թերթը հուլիսի 26-ին տպագրում է «Հայաստանը վստահություն չի ներշնչում» խորագրով մի հոդված, որտեղ հիշեցվում էր, որ ՀՀ նախագահը Թեհրանի խորհրդածողովում զինադադար հաստատելու վերաբերյալ համաձայնագիր է ստորագրել, բայց դեռ ստորագրության թանաքը չչորացած՝ հայկական ուժերը Լեռնային Ղարաբաղի որոշ շրջաններ գրավելու համար ակտիվացրել են իրենց հարձակումները: Նշվում էր, որ Թեհրանի հանդիպմանը Լևոն Տեր-Պետրոսյանի մտքերը և ցանկությունները Լեռնային Ղարաբաղում պատերազմը կանխելու համար հուսադրող էին, բայց տեղի ունեցան դեպքեր, որոնք ոչ միայն անբացատրելի, այլև չափազանց տհաճ ու ցնցող էին: Այդ պատճառով Ադրբեջանի մուսուլման ժողովրդի կարծիքն ինչ-որ չափով փոխվեց ԻԻՀ-ի նկատմամբ, և իսլամական Իրանը մեծ զոհողության

¹⁰⁸ Տե՛ս Բաղդասյան Գ., Հայաստան-Իրան..., էջ 54:

¹⁰⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 172, թթ. 9-10:

գնով կարողացավ կանխել կոտորածներն ու ավերածությունները, բայց, դժբախտաբար, ՀՀ-ի կողմից դրական պատասխան չեղավ: Թերթը հռետորական հարց էր տալիս. Հայաստանն արդյոք հիմքեր ունի՞ Իրանից նոր միջնորդական բայլեր ակնկալելու: Նշվում էր, որ ՀՀ-ն կորցրել է իր վստահությունը:

«Ջահան-է Եսլամ» թերթը (02 հուլիսի, 1992) «Կովկասյան պատերազմի նպատակները» վերտառությամբ հոդվածում անդրադառնում է Շուշիի ազատագրմանը և եզրակացնում. «Ղարաբաղցիներն արտահայտեցին իրենց դժգոհությունն այն բանի համար, որ Լևոն Տեր-Պետրոսյանն առանց Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչի մասնակցեց թեհրանյան հանդիպմանը: Ղարաբաղցիներն ապացուցեցին, որ առանց իրենց համաձայնության հնարավոր չէ որոշումներ կայացնել»¹¹⁰: Մինչդեռ հոդվածագիրը չէր նշում, որ իրանական կողմն ի սկզբանե դեմ էր. չէր ընդունում Արցախը որպես Ադրբեջանին հավասար և հակամարտող կողմ: Իսկ ահա «Ջոմհուրի-է Եսլամի» թերթը (13 հուլիսի, 1992) «Ազգայնականության դերը Ղարաբաղյան ձգնաժամի սրման գործում» վերնագրով հոդվածում անդրադառնալով Արցախի հարցի պատմական ակունքներին գրում է. «Լեռնային Ղարաբաղը խորհրդային համակարգում, Խակառակ նրան շնորհված ներքին ինքնավարությանը, գտնվում էր Ադրբեջանի գերիշխանության ներքո, իսկ ՀՀ-ն հակառակ իր կամքի, թուրքերի ու ադրբեջանցիների հարձակումներից գերծմնալու համար ընդունել էր այդ իրավիճակը»¹¹¹: Մեկ այլ տեղ նշվում է Արցախի հայերի մշտական դժգոհությունը, որ կարևոր պաշտոնները տրվել են ադրբեջանցի փոքրամասնությանը: Սակայն նույն թերթը (10 օգոստոսի, 1992) «Ադրբեջանի երիտասարդ աշխարհիկներն Ամերիկայի նոր ծառաներն են տարածաշրջանում» վերնագրով հոդվածում նշում է. «Կոմունիստները չկարողացան պահպանել Ադրբեջանի տարածքա-

յին անբողջականությունը, եկան աշխարհիկ ազգայնականները և պարտություն կրեցին՝ կորցնելով Ղարաբաղն անբողջությամբ»¹¹²:

1992 թ. օգոստոսին ԻԻՀ-ի ԱԳ փոխնախարար Մահմուդ Վայեզին Թեհրանում լույս տեսնող «Քեյհան» օրաթերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում անդրադառնում է Արցախի հարցին: Ըստ նրա՝ ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության սկզբունքներից մեկը հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելն է, իսկ եթե հարևանը նաև մուսուլման է, պարզ է, որ արտոնյալ պայմաններում կլինի: Ադրբեջանը տարածաշրջանում միակ շիա երկիրն է և դրանով է պայմանավորված ԻԻՀ-ի և Ադրբեջանի ժողովուրդների միջև բազմաթիվ ընդհանրությունները: Վայեզիի խոսքով՝ «Ադրբեջանի ժողովուրդը մեր եղբայրներն են և վստահորեն կարելի է ասել, որ նրանց պատիվը մեր պատիվն է, պարտությունը՝ մեր պարտությունը»¹¹³: Վայեզին պարզաբանում է, որ շատ երկրներ աշխատեցին ԻԻՀ-ին ներքաշել Ղարաբաղի հակամարտության մեջ, սակայն Իրանի ժողովուրդն ավելի քան խելացի է, որ սահմանից դուրս ծագած հարցը ներմուծի երկիր: «Ուստի, մենք ցանկանում ենք, որ հարցը արդարացիորեն լուծվի: Ղարաբաղն Ադրբեջանի տարածքն է և պետք է նրա գերիշխանության տակ էլ մնա: Մենք երբեք չենք ընդունի, որ Ղարաբաղը միանա ՀՀ-ին կամ էլ առանձին պետություն դառնա: Մենք ոչ մի պարագայում չենք ընդունի ոչ բանակցությունների, ոչ պատերազմի և ոչ էլ ճնշման տակ կատարված սահմանների փոփոխություն թե Ադրբեջանում, թե Նախիջևանում: Ղա է մեր պետության և ժողովրդի, ինչպես նաև Ադրբեջանի ժողովրդի ցանկությունը»¹¹⁴:

Ակնհայտ է, որ Վայեզին այս հարցազրույցի միջոցով կարծես ինչ որ տեղ փորձում էր հազուրդ տալ ադրբեջանա-

¹¹⁰ Տես նույն տեղում, թ. 2:

¹¹¹ Տես նույն տեղում:

¹¹² Տես նույն տեղում:

¹¹³ Տես «Ազգ», 18.08.1992:

¹¹⁴ Տես նույն տեղում:

կան հանրության սպասելիքներին, իսկ ինչ-որ տեղ էլ, ըստ իրանական տեսակետի, կանխարգելում հայկական գինուժի հնարավոր ռազմական գործողությունները Նախիջևանում: Առաջինի մասին է վկայում այն, որ 1992 թ. ամռանն ԻԻՀ-ի դիրքորոշումը որոշակի խմբագրման է ենթարկվում Ադրբեջանի արևմտամետ քաղաքականության պատճառով: Ահա թե ինչու, երբ ՀՀ ԱԳ փոխնախարար Գ. Ղազինյանն օգոստոսի 21-ին հանդիպում է ԻԻՀ-ի գործերի հավատարմատարի տեղապահ Ազիմ Ջադեհին, պարզ է դառնում, որ Լոնդոնում իրանական կողմը ՀՀ-ի դեսպանի հետ հանդիպման ժամանակ պատրաստականություն է հայտնել Լեռնային Ղարաբաղի հարցում իր միջնորդական առաքելությունը շարունակել¹¹⁵:

Փաստորեն, իրանական կողմն էր նախաձեռնել իր միջնորդությունը վերսկսելու գործընթացը, մինչդեռ մամուլի վերոնշյալ հրապարակումներում այն վերագրվում էր միայն հայկական կողմին:

Օգոստոսի 28-ին ՀՀ ԱԳ փոխնախարար Գեորգի Ղազինյանը հանդիպում է ԻԻՀ-ի գործերի հավատարմատար Ահմադ Սոբհանիին¹¹⁶: Ջրույցից պարզ է դառնում, որ Թեհրանում և Մեշհեդում տեղի է ունեցել ԻԻՀ-ի արտաքին գերատեսչության աշխատակիցների խորհրդակցություն, որին մասնակցել են նաև արտասահմանում գործող ԻԻՀ-ի դիվանագիտական ներկայացուցիչությունների հարյուրավոր աշխատակիցներ, այդ թվում՝ ՀՀ-ից Սոբհանին: Ըստ Սոբհանիի՝ խորհրդակցության ժամանակ, որքան էլ տհաճ է եղել իրանցի ադրբեջանցիներին, հնչել են Ադրբեջանի քաղաքականությունը քննադատող և ՀՀ-ն դրվատող բազմաթիվ խոսքեր: Փաստորեն իրանական կողմն արդեն 1992 թ. օգոստոսին գոնե դիվանագիտական կուլիսներում խոստովանում էր Բաքվի հակաիրանական կեցվածքը:

Հարկ է նշել, որ իրանական մամուլում տեղ գտան այն-

պիսի հոդվածներ, որոնք ուղղված էին Ադրբեջանի կողմից որդեգրած հակաիրանական քաղաքականության դեմ: Հենց դրա հետ մեկտեղ մի պահ համեմատաբար նվազեցին հակահայկական ուղղվածությամբ հրապարակումները: Կարծում ենք, որ այդ հարցում փոքր, բայց կարևոր քայլ էր 1992 թ. հուլիսի 2-ից Երևանի պարսկերենով եթեր տրվող կեսժամյա հաղորդումների թողարկումը¹¹⁷: Հիրավի, այդ հաղորդմամբ ինչ-որ չափով հակակշիռ է ստեղծվում ադրբեջանական քարոզչամեքենային:

Ի դեպ, 1992 թ. հունիսի 15-20-ը Թեհրանում անցկացվում է 2միացած երկրների ԶԼՄ-ների 6-րդ համաժողովը, որին ՀՀ-ից հրավերով մասնակցում են «Արմենպրես» լրատվական գործակալության տնօրեն Գ. Հովհաննիսյանը, ՀՀ ԱԳՆ մամուլի կենտրոնի ղեկավար Գառնիկ Բաղայանը և «Ազգ» թերթի աշխատակից Հակոբ Ասատրյանը դիտորդի կարգավիճակով¹¹⁸: Փաստորեն կողմերը քայլեր էին նախաձեռնում լրատվության դաշտում փոխգործակցության համար՝ միմյանց տեսակետները վստահելի աղբյուրներից ստանալու նպատակով:

Այդուհանդերձ, Բաքուն դիմում էր ցանկացած անհավանական քայլի՝ բորբոքելու ԻԻՀ-ում հակահայ տրամադրություններ և տեղադրելու դրանք մամուլում: 1993 թ. ապրիլյան բախումների ընթացքում Բաքվի խնդրանքով ադրբեջանցի վիրավորներ տեղափոխվեցին Թեհրանի հիվանդանոցներ¹¹⁹: Իրականում Ադրբեջանը ոչ այնքան բուժօգնության կարիք էր զգում, որքան քաղաքական խնդիր էր լուծում: Ադրբեջանի նպատակն էր իր կողմը գրավել իրանական հասարակական կարծիքը և հատկապես «հայ բարբարոսների» կողմից վիրավորված իրենց հայրենակիցներին ի ցույց դնելով՝ բորբոքել իրանցիների զգացումները: Այդ մասին է վկայում ԻԻՀ-ում Ադրբեջանի դեսպան Նասիբ Նասիբզադեի խոսքը. «Մենք այսօր կարողանում ենք հայ ազդեցությունների ոտնձգությունների և վայ-

¹¹⁵ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 326, ց. 9, գ. 84, թթ. 48-49:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, թթ. 50-52:

¹¹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 172, թ. 2:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 170, թ. 5:

¹¹⁹ Տե՛ս «Ազգ», 22.04.1993:

րագությունների մասին տեղյակ պահել Իրանի ժողովրդին, մինչդեռ համայնավարների ժամանակ հայերի և ռուսների բարբարոսությունների լուրն Արաքսից այն կողմ չէր անցնում: Ղա է պատճառը, որ Իրանի հասարակական կարծիքի մեջ գզալի փոփոխություն է տեղի ունեցել ի շահ Ադրբեջանի»¹²⁰:

Փաստորեն Ադրբեջանի կողմից հստակ խնդիր էր դրված ոչ թե ԻԻՀ-ի իշխանություններին, այլ ժողովրդին ներգրավել հակահայ քարոզչության մեջ սեպ առաջացնելով նրանց միջև: Այդ առումով դա նրան քարոզչության դաշտում որոշակիորեն հաջողվում է: Ավելին 1993 թ. Իսլամական համաժողով կազմակերպության անդամ շուրջ 20 երկիր դատապարտում է ՀՀ-ին¹²¹:

Բաբվի սադրանքներով Արցախի ձակատում տեղի ունեցած ռազմական գործողություններն արձագանք էին ունենում իրանական հասարակական շրջանակներում: Քարվաճառի (Քելբաջարի) ռազմական գործողության համար բավական կտրուկ բողոք է ներկայացվում ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատարին: ԻԻՀ-ի իշխանությունները հասկացրին, որ հայկական ուժերի հետագա հարձակողական գործողությունների դեպքում ԻԻՀ-ն վճռական քայլերի կդիմի: Որոշ տեղեկություններով՝ ԻԻՀ-ն 200-հազարանոց զորք էր կուտակել Ադրբեջանի սահմանագլխին¹²²: Ադրբեջանա-թուրքական ՋԱՄ-ները և անգամ որոշ պաշտոնական շրջանակներ հայտարարում էին, թե «ՀՀ-ն Քելբաջարի շրջանի գրավումով սկսել է Մեծ Հայաստանի ստեղծման ծրագրի իրականացումը»¹²³: Սակայն Քարվաճառի շտաբից գտնված քարտեզը հակառակն էր ապացուցում: Իրականում կար «Մեծ Ադրբեջան» ծրագիր, որի տարածքն ընդգրկում էր ՀՀ արևելյան մի շարք շրջանները, իսկ ԻԻՀ-ից Ադրբեջանի տարածքային պահանջները երեք ան-

գամ մեծ էին, քան Ադրբեջանը: Քարտեզի վրա գրված էր ադրբեջանցի խորհրդային գրող Բախտիար Վահաբզադեի խոսքը, թե Բաքուն ու Թավրիզն ադրբեջանական են¹²⁴: Այսպիսով, ադրբեջանական տարածքային հավակնությունները ՀՀ-ից և ԻԻՀ-ից մեր օրերում էլ չեն փոխվել:

ԻԻՀ-ում կրկին մեծանում է հակահայ քարոզչության ակիբը, երբ 1993 թ. հուլիսի 23-ին հայկական զինուժը վերահսկողության տակ է վերցնում 1988-ից հակահայ գործունեության կենտրոն Ակնա (Աղդամ) քաղաքը: Հուլիսի 27-ին Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթուլլահ Խամենեին Թավրիզում բազմահազար հավաքի ընթացքում հայտարարում է. «Մենք դատապարտում ենք Ղարաբաղի հայերի վերջին գործողությունները, որոնք կատարվել են ՀՀ կառավարության հովանավորությամբ և ակնկալում ենք, որ մեր երկրի ներսի հայերը ևս այդ շրջանի հայերի վերաբերմունքը կդատապարտեն»¹²⁵: «Ջոնհուրիէ Էլամի» և «Թեհրան թայմս» թերթերը հաղորդում են, որ Խամենեին այդ համատեքստում անդրադարձել է նաև Բոսնիա-Հերցեգովինայում, Տաջիկստանում և Հարավային Լիբանանում մուսուլմանների նկատմամբ ճնշումներին¹²⁶:

Խամենեի կոչին հետևում են իրանահայ երեք Թեհրանի, Սպահանի և Ատրպատականի թեմերի առաջնորդներ Արտակ արք. Մանուկյանի, Կոբյուն արք. Պապյանի և Նշան վրդ. Թովուզյանի հայտարարությունը¹²⁷: Թեմերի առաջնորդները դատապարտում էին Արցախի հայության գործողությունները: Իրականում, ինչպես նախորդ դեպքում, հիշյալ հայտարարության նպատակն էր չեզոքացնել իրանահայության անվտանգությանը սպառնացող և արձատական տրամադրված զանգվածի հնարավոր ցասումը:

¹²⁴ Տես **Գրիգորյան Վ.**, «Միացյալ և Մեծ Ադրբեջան» ի հաշիվ Իրանի ու Հայաստանի, «Իրան-Նամե», թիվ 4-5, (20-21), 1996, էջ 29:

¹²⁵ Տես «Ալիք», 28.07.1993:

¹²⁶ Տես ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, g. 1, q. 283, թթ. 82-83:

¹²⁷ Տես «Ալիք», 28.07.1993:

¹²⁰ Տես նույն տեղում:

¹²¹ Տես **Ղեմդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 80:

¹²² Տես **Բալայան Տ.**, նշվ. աշխ., էջ 73:

¹²³ Տես «Ազգ», 24.04.1993:

1993 թ. օգոստոսի սկզբին Ադրբեջանի բանակը գրավում է Վարանդայի (Ֆիզուլի) մոտակայքի մի շարք բնակավայրեր՝ սադրանքի ենթարկելով ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները¹²⁸: Անհրաժեշտ էր վնասագերծել հարավը՝ ապահովելով նաև ՀՀ-ի Մեղրու շրջանը: Սակայն օգոստոսի 12-ին ԻԻՀ-ի ԱԳ նախարարությունը, իսկ օգոստոսի 19-ին Ալի Աբբար Վելայաթին Բաքվում դատապարտում են Ադրբեջանի դեմ հայերի ագրեսիան¹²⁹:

Օգոստոսի 22-25-ին հայկական ուժերի կողմից Վարանդան, Ջրականի (Ջաբրայիլ) շրջանը, Որոտանի (Կուբաթլու) հենակետը հսկողության տակ վերցնելուց հետո Ադրբեջանը, թուրքիան ու ԻԻՀ-ն ամեն ինչ անում են, որպեսզի հարցը միջազգայնացվի¹³⁰: Օգոստոսի 26-ին թեհրանում ՀՀ գործերի հավատարմատար Գառնիկ Բաղայանը հրավիրվում է ԱԳՆ¹³¹: Նրան է փոխանցվում ԻԻՀ-ի պաշտոնական բողոքը՝ Ադրբեջանի տարածքում և ԻԻՀ-ի սահմանների մոտ հայկական ուժերի ռազմական գործողությունների սաստկացման պատճառով:

Օգոստոսի 27-ին թեհրանում ՈՂ-ի դեսպան Սերգեյ Տրետյակովը և ԻԻՀ-ի ԱԳՆ տեղակալ Մահմուդ Վայեզին դատապարտում են հայկական ուժերի հարձակումներն Արցախում¹³²: Նույն օրերին Վելայաթին նամակ է հղում Տնտեսական համագործակցության կազմակերպության ԷԿՕ-ի նախագահ և Պակիստանի ԱԳ նախարար Աբդուլ Սաթարին՝ առաջարկելով նրան՝ որպես ԷԿՕ-ի նախարարների խորհրդի նախագահ, մի պատվիրակություն կյանքի կոչել, որպեսզի համապատասխան միջոցներ գտնեն Ադրբեջանին վճռականորեն հովանավորե-

¹²⁸ Տե՛ս Պարաբադյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 698:

¹²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 179, թ. 40: Տե՛ս նաև «Ազգ», 20.08.1993:

¹³⁰ Տե՛ս Պարաբադյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 699:

¹³¹ Տե՛ս «Ալիք», 30.08.1993:

¹³² Տե՛ս նույն տեղում, 28.08.1993:

լու¹³³: Հայտնի է, որ Պակիստանը որդեգրել է հակահայ քաղաքականություն և ՀՀ-ի ու Պակիստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատված չեն: Արցախի հակամարտության մեջ Պակիստանին դիմելու և փաստորեն ներգրավելու իրանական քայլը հետապնդում էր իսլամական համերաշխության դրսևորում թեհրանի գլխավորությամբ, որը որոշակի վտանգ էր ներկայացնում հայկական կողմի համար:

Վելայաթին դիմում է նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս-Բուտրոս Ղալիին և պահանջում վճռականություն Ադրբեջանի տարածքների նկատմամբ հայերի ունեցածության դեմ¹³⁴: Նա կոչ է անում ՄԱԿ-ին՝ գործադրել 822-րդ և 853-րդ բանաձևերը¹³⁵ և վերականգնել միջազգայնորեն ճանաչված սահմանները:

ԻԻՀ-ի ղեկավարությունն Արաքս գետին է մոտեցնում բանակը և ժանդարմերիայի լրացուցիչ ստորաբաժանումներ: Այդ օրերին սևեռվելով Արցախի հակամարտության մեջ ԻԻՀ-ի նոր դերին «Վաշինգտոն փոստ» թերթը (24 օգոստոսի, 1993) կանխատեսում է ԻԻՀ-ի ռազմական միջամտության հավանականությունը՝ փորձելով ազգամիջյան հակամարտությունը ներկայացնել որպես քրիստոնյաների և մահմեդականների դիմակայություն: Իսկ Լոնդոնում հրատարակվող իրանական իշխանություններին ընդդիմադիր «Քեյհան» օրաթերթն էլ ավելի հեռու էր գնում. «Եթե վտանգ ծագի մեր սահմաններից, մեր առաջնորդները չպետք է իրադրությունը թողնեն առանց վերահսկողության»¹³⁶: Իրականում Արևմուտքը և արտասահմանի իրանական ընդդիմությունը ձգտում էր ԻԻՀ-ին ներքաշել պատերազմի մեջ:

Օգոստոսի 31-ին ՈՂ ԱԳՆ-ի միջնորդությամբ ԱՀ-ի և Ադրբեջանի միջև ստորագրվում է հրադադարի համաձայնա-

¹³³ Տե՛ս նույն տեղում, 30.08.1993:

¹³⁴ Տե՛ս նույն տեղում, 31.08.1993:

¹³⁵ Տե՛ս *Абасов А., Хачатрян А.*, указ. соч., էջ 129-131:

¹³⁶ Տե՛ս «Ազգ», 25.08.1993:

գիր դեպքերի զարգացումը կանխելու և մինչև հոկտեմբերի 10-ը ռազմագծի ամբողջ երկայնքով հաստատելու հարաբերական անդորր: Այդուհանդերձ, ռազմական գործողությունների շրջանի հարևանությամբ ԻԻՀ-ն սկսում է «Մոխանդ» արևապլանային գորավարժությունը¹³⁷: Բարձրացված անոնկը մեղմելու նպատակով սեպտեմբերի 6-ին ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանը Վելայաթիի, իսկ սեպտեմբերի 8-ին Անոն Տեր-Պետրոսյանը Հաշեմի Ռաֆսանջանիի հետ հեռախոսազրույցում հավաստիացնում են, որ Արցախի կողմից այլևս նոր հարձակում տեղի չի ունենա և գրավված շրջանները ևս աստիճանաբար կդատարկվեն¹³⁸:

Ռազմաշունչ հեռուդրաբանության իջեցման հարցում որոշակի նշանակություն ունեցավ սեպտեմբերի 10-ին ՌԴ-ի զգուշացումը ԻԻՀ-ին, որ խուսափի ուժի ցուցադրումից՝ ԻԻՀ-Ադրբեջան սահմանում¹³⁹: Այնուամենայնիվ, ԻԻՀ-ի զինուժի որոշ զինվորներ, անցել էին ԻԻՀ-Ադրբեջան սահմանը: Մոսկվայում սեպտեմբերի 1-ից սկսվել էին ոչ պաշտոնական բանակցություններ, որոնց մասնակցելու էր հրավիրվում ԻԻՀ-ն: Մինչդեռ ԻԻՀ-ն գորավարժություններով հասկացնել էր տալիս Մոսկվային, որ պետք է հաշվի առնել նաև իր կարծիքը:

Սեպտեմբերի 13-ին Թեհրանում ՀՀ գործերի Խավատարմատար Վահան Բայբուրդյանը Վելայաթիին է հանձնում ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանի գրավոր ուղերձը: Փափազյանը երաշխավորում էր, որ հայկական զինուժը ռազմական նոր գործողության չի դիմի: Նույն օրը հեռախոսազրույցի ընթացքում Վելայաթին հայտնում է Հեյդար Ալիևին, որ ՀՀ նախագահն ու ԱԳ նախարարը հավաստիացրել են, որ հայերը դուրս կգան ռազմակալված շրջաններից¹⁴⁰: Ըստ էության Թեհրանը փորձում էր հակամարտող կողմերի միջև հանդես

գալ՝ որպես «անուղղակի միջնորդ», ապա մրցակցում էր Մոսկվայի հետ միջնորդի իր նախկին կարգավիճակը վերադարձնելու համար:

Արդյունքում ԻԻՀ-ն դուրս բերեց իր ստորաբաժանումները Նախիջևանից, ինչը բացասական արձագանք ունեցավ ԻԻՀ-ի ազգայնական ուժերի շրջանում¹⁴¹: Այդուհանդերձ, 1993 թ. սեպտեմբերի 15-ին հեռախոսազրույցի ընթացքում Հաշեմի Ռաֆսանջանին մտահոգություն է հայտնում Բորիս Ելցինին հայ-ադրբեջանական պատերազմը դեպի ԻԻՀ-ի սահմանները ծավալվելու համար¹⁴²: Այդ օրերին «Ջահանէ էսլամի» թերթը (16.09.1993) ՀՀ-ն համեմատում է Իսրայելի հետ և առաջարկում «*խզել բոլոր տեսակի կապերը, այդ թվում նաև դիվանագիտական հարաբերությունները այդ երկրի հետ*»¹⁴³: Մինչդեռ «Ֆարհանգե Աֆարինեշ» թերթին տված հարցազրույցում Թեհրանում Ադրբեջանի դեսպանության հանձնակատար Ալի Բիգլուն իր երկրի ժողովրդի և կառավարության անունից շնորհակալություն է հայտնում ԻԻՀ-ին՝ զաղթականներին տրված օգնության համար¹⁴⁴: Բիգլուի շնորհակալությունը բացատրվում է նրանով, որ ԻԻՀ-Ադրբեջան սահմանագծի մոտ ԻԻՀ-ի հատկացրած ֆինանսական միջոցներով կառուցվում էր հարյուր հազարավոր մարդկանց պատասխարող ճամբար¹⁴⁵: Այնհայտ է, որ իրանական կողմի նպատակն էր թույլ չտալ այդ մարդկանց հոսքը երկրի խորքեր:

Հայկական կողմին հասցեագրված վերոնշյալ մեղադրանքներին հակադրվելու նպատակն ունեւր ՀՀ գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանի պատասխանը «Ռեսալաթ» թերթի թղթակցին: Հայ դիվանագետի խոսքով՝ «...*Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման ճանապարհին նախ պետք է ա*

¹³⁷ Տես Դարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 699:

¹³⁸ Տես «Ալիք», 07.09.1993, 09.09.1993:

¹³⁹ Տես նույն տեղում, 11.09.1993:

¹⁴⁰ Տես նույն տեղում, 14.09.1993:

¹⁴¹ Տես նույն տեղում, 02.11.1993:

¹⁴² Տես «Ալիք», 16.09.1993:

¹⁴³ Տես Դարաբաղյան Գ., Հայաստան-Իրան..., էջ 61:

¹⁴⁴ Տես «Ալիք», 14.10.1993:

¹⁴⁵ Տես նույն տեղում, 02.11.1993:

¹³⁷ Տես Դարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 699:

¹³⁸ Տես «Ալիք», 07.09.1993, 09.09.1993:

¹³⁹ Տես նույն տեղում, 11.09.1993:

¹⁴⁰ Տես նույն տեղում, 14.09.1993:

պահովել ղարաբաղցիների անվտանգությունը և այնուհետև կնքել զինադադար: Ընդ որում, քանի որ Լեռնային Ղարաբաղի հայությունը մղում է ինքնապաշտպանական պատերազմ, հետևապես նա կրակը կարող է դադարեցնել միայն այն բանից հետո, երբ այդ քայլը կանի նախահարձակ ադրբեջանական կողմը»¹⁴⁶: Փաստորեն, իրական ագրեսորին դատապարտելու փոխարեն իրանական հանրային և պաշտոնական շրջանակները ադրբեջանական քարոզչամեթոդային ագրեսիայի ներքո, անհարկի մեղադրում էին հայկական կողմին հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելուց խուսափելու համար:

Զնայած զինադադարի հաստատման գործում միջազգային միջնորդությանը՝ հոկտեմբերի 17-ին հակառակորդը հրետակոծում է Ակնայի և Վարանդայի շրջանները: Հոկտեմբերի 23-ին ԻՌՆԱ-ն հայտնում է, որ մարտերի վերսկսումով ԻԻՀ-ի Ալյանդուզի շրջանում և Մուղանի Փարսաբաղ քաղաքում լսելի է փոխհրաձգության ձայնը¹⁴⁷: Այդ օրերին Արցախի Պաշտպանության բանակն ազատագրում է Կովսականի (Զանգեզան), Զրականի (Զաբրայիլ), Սանասարի (Կուբաթլու) շրջանները¹⁴⁸ և իր հարավային սահմանի երկայնքով անմիջական շփման հնարավորություն է ստանում ԻԻՀ-ի հետ¹⁴⁹: Հոկտեմբերի 27-ին ԻԻՀ և ՀՀ նախագահների կոչով Արցախի Պաշտպանության բանակի հրամանատարությունը դադարեցնում է ռազմական գործողությունները, սակայն հաջորդ օրը հակառակորդը, խախտելով զինադադարը, հարձակման է անցնում: Արդյունքում Ադրբեջանը կորցնում է վերահսկողությունը Հորադիզ երկաթուղային հանգույցից մինչև ՀՀ-ի պետական սահմանը ձգվող տարածքի վրա¹⁵⁰:

Այսպիսով, ադրբեջանական ռազմաքաղաքական սաղ-

րանքները աշխատեցին կեղծ քարոզչության տարածման հարցում, ինչը զգայուն էր ընդունում իրանական հասարակությունը: Մինչդեռ փաստ է, որ հրադադարի պահպանման հարցում ադրբեջանական կողմը հավատարիմ չէր իր ստանձնած պարտավորություններին:

Հոկտեմբերի 26-ին Հաշեմի Ռաֆսանջանին այցելում է Ադրբեջան՝ որպես իր միջնորդությամբ զինադադարը հաստատած կողմ: Բաքվի մզկիթներից մեկում ԻԻՀ նախագահը կարևորում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանումը¹⁵¹: Ակնհայտ է, որ Բաքվում իսլամական համերաշխությամբ Թեհրանն ամրապնդում էր իր դիրքերը:

Ռաֆսանջանին իր հուշերում վկայում է, որ այդ այցելության ժամանակ նախագահ Հեյդար Ալիևը դիմել է իրեն Ադրբեջանի կառավարման դեկը ստանձնելու խնդրանքով: Այդ հուշերը հրապարակած «Շարդ» օրաթերթը վավերագրում է, որ Ռաֆսանջանին կասկածանքով է վերաբերվել կշալ առաջարկին ու բացահայտել Ալիևի խորամանկությունը՝ ի շահ Ադրբեջանի ռազմական գործողությունների մեջ Իրանը ներքաշելու հարցում¹⁵²:

Կարծում ենք, որ Արցախի ճակատում տեղի ունեցած ռազմական գործողությունները միջազգային ատյաններ ներկայացնելու և համապատասխան արձագանքներ ստանալու փորձերով Թեհրանն իրենից վանում էր Բաքվի հակաիրանական տրամադրությունները և խուսափում Բաքվի Իրանին պատերազմի մեջ ներքաշելու վտանգից: Ասվածի մասին է վկայում այն, որ հոկտեմբերի 29-ին ՄԱԿ-ում ԻԻՀ-ի դեսպան Ղուլամալի Խոշրուն Անվտանգության խորհրդի նախագահ եղվարդ Լինգվից պահանջում է հրավիրել արտահերթ նիստ Լեռնային Ղարաբաղի հարցով: Խոշրունի խոսքից պարզ է դառնում, որ

¹⁴⁶ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թթ. 36-40:

¹⁴⁷ Տե՛ս «Ալիք», 24.10.1993:

¹⁴⁸ Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 699:

¹⁴⁹ Տե՛ս Ступишин Вл., Карабахский конфликт 1992-1994, М., 1998, էջ 93:

¹⁵⁰ Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 378:

¹⁵¹ Տե՛ս «Ալիք», 27.10.1993, 28.10.1993:

¹⁵² Տե՛ս Հեյդարի աղետանքն ու Իլհամի հոխորտանքը՝ ըստ Իրանի երբեմնի նախագահ Ռաֆսանջանի օրագրի, թարգմանությունը՝ Գ. Առաքելյանի, «Ազգ», 02.12.2022, թիվ 44 (5732):

զինադադարի հարցում ԻԻՀ-ն ճնշել է Արցախին: Նա Ադրբեյջանին ներկայացնում է զոհի կարգավիճակում: Մինչդեռ կինզը, գնահատելով Արցախում հրադադարի հաստատման համար ԻԻՀ-ի թափած ջանքերը, ԻԻՀ-ից պահանջում է, որ բախվող կողմերը մասնակցեն Մինսկի խմբի՝ Վիեննայում գումարվելիք նոյեմբերի 2-ի նիստին: Այդ պայմաններում նոյեմբերի 13-ի դրությամբ հայկական զինուժը հսկում է Խուդափերինի կամուրջը¹⁵³, որը Ադրբեյջանին կապում էր ԻԻՀ-ի հետ:

Այսպիսով, միջազգային հանրությունը չէր ընդունում Արցախի հակամարտության կարգավորման հարցում իրանական միջնորդական նոր փորձերը:

Իրանական կողմի վերոնշյալ նախաձեռնությունների աճին զուգահեռ Արցախի հակամարտության ծավալման ընթացքում ուժեղացան ՌԴ-ի միջնորդական դիրքերը: 1994 թ. հունվարի 6-ին Թեհրանում Արցախի հարցով ՌԴ-ի հատուկ և լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովի հետ հանդիպման ընթացքում ԻԻՀ-ի ԱԳՆ-ի ԱՊՀ երկրների վարչության պետ Մոհամմադ Բանքը, ապա մարտի 2-ին ԻԻՀ-ի ԱԳՆ տեղակալ Մահմուդ Վայեզին հայտնում են, որ ԻԻՀ-ը պատրաստ է աջակցել Արցախի հարցի լուծմանը¹⁵⁴: Իրանական կողմն առաջարկում էր քառակողմ բանակցություններ՝ հրավիրելով ԻԻՀ-ի, ՌԴ-ի, ՀՀ-ի և Ադրբեյջանի համաժողով: Սակայն այդ ուղղությամբ քայլեր չկատարվեցին:

Արցախի հարցում իրանական կողմը սեփական հնարավորությունների սահմանները պարզելու համար 1994 թ. հունվարի վերջին Թեհրանում կազմակերպում է «Կենտրոնական Ասիայում և Կովկասում իրադարձությունների զարգացումը» խորագրով միջազգային կոնֆերանս, որին ՀՀ-ից որպես մասնավոր անձինք էլույթ են ունենում Ռաֆֆի Հովհաննիսյանը

և Հմայակ Հովհաննիսյանը¹⁵⁵: Կոնֆերանսում նկատվում է, որ ԻԻՀ-ի դիրքորոշումը փոփոխվել է Արցախը որպես հակամարտության «երրորդ կողմ» ճանաչելու հարցում: Փաստորեն, Արցախի կողմից ռազմական հաջողությունները ստիպել էին իրանական կողմին ընդունելու Ստեփանակերտին՝ որպես հակամարտության «երրորդ կողմ», այն էլ հանրային որոշ շրջանակներում:

ԻԻՀ-ի դիրքորոշումը Արցախի հարցում բնութագրելու համար կարևոր է այն ներկայացնել նաև Իսլամական համաժողովի կազմակերպության անդամ պետությունների գործելակերպի համեմատական համատեքստում: 1994 թ. մարտի 4-ին ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության աշխատակիցները հանդիպում են Վաշինգտոնում հավատարմագրված ԻՀԿ անդամ պետությունների ներկայացուցիչների հետ: Աֆղանստանի դեսպանությունը հաստատում է 800 աֆղան մոջահեդների առկայությունն Ադրբեյջանի բանակում հայտնելով, որ իրանական կողմը մերժել է իր օդային տարածքը տրամադրել նրանց փոխադրման համար և փոխադրումները իրականացվում են Ուզբեկստանի համաձայնությամբ¹⁵⁶: Փաստորեն, ի տարբերություն ԻՀԿ-ի անդամ մյուս պետությունների, ԻԻՀ-ն խուսափում էր մոջահեդներին աջակցելուց:

Ինչ վերաբերում է վերը նշված ՌԴ-ի միջնորդությանը, ապա այն պատկվեց հաջողությամբ: 1994 թ. մայիսի 12-ին ՀՀ-ի, ԱՀ-ի և Ադրբեյջանի միջև կնքված համաձայնագրով Արցախում հաստատվեց հրադադար: Այդ հարցում ՌԴ-ի աջակցություններից մեկը Արցախի ներկայացուցչի ստորագրությունն էր փաստաթղթում, որը բացակայում էր 1992 թ. Թեհրանի արձանագրության մեջ:

Ուշագրավ է, որ 1994 թ. հունիսի 7-ին Հաշեմի Ռաֆսանջանին մամուլի ասուլիսի ժամանակ անդրադառնում է Ար-

¹⁵³ Տես «Ալիք», 31.10.1993, 14.11.1993:

¹⁵⁴ Տես նույն տեղում, 09.01.1994, 03.03.1994:

¹⁵⁵ ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, գ. 1, գ. 285, թթ. 7-15:

¹⁵⁶ Տես նույն տեղում, թթ. 35-41:

ցախի հարցում ԻԻՀ-ի միջնորդական ջանքերին, որոնք նրա խոսքով՝ հաջող ընթացք չեն ունեցել¹⁵⁷: Մինչդեռ օգոստոսի 15-ին Ալի Աբբար Վելայաթին Բաքվում հայտարարում է, որ ազդե- սոր ուժերը պետք է նահանջեն գրավված շրջաններից¹⁵⁸: Ըստ էության, ԻԻՀ-ի նախագահի խոսքն առավել իրատեսական էր, իսկ ԱԳ նախարարինը՝ «շոյում» էր Բաքվի պատրանքները:

Հարկ է նշել, որ 1994 թ. սեպտեմբերի 12-ին ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Վահան Բայբուրդյանի և ԻԻՀ ԱԳՆ ԱՊՀ երկրների և Կովկասի գլխավոր վարչության նորանշանակ պետ Սոհամ- մադ Ռեզա Բախթարիի հետ հանդիպման ընթացքում վեր- ջինս ի թիվս այլ հարցերի ընդգծում է. «Վելայաթին ազդեսոր է անվանել ոչ թե Հայաստանին, այլ հայերին: Չէ՞ որ այդ երկու հասկացության մեջ հսկայական տարբերություն կա: Մենք հստակորեն գանազանում ենք և շեշտում ենք այդ տարբերու- թյունը»¹⁵⁹: Փաստորեն, իրանական կողմը Արցախի հարցում խմբագրել էր իր պաշտոնական դիրքորոշումը և ուղղակի մե- ղադրանքներ չկային ՀՀ-ի հասցեին:

Ի դեպ, ԻԻՀ-ի ԱԳ նախարար Վելայաթին 1994 թ. նոյեմ- բերի 25-27-ը Թեհրան այցելած ՀՀ փոխնախագահ Գագիկ Հա- րությունյանից պահանջում է «հայկական ուժերի դուրսբերումը «գրավված տարածքներից», որի վերաբերյալ կան հրապարա- կումներ իրանական մամուլի էջերում («Սալամ», «Ռեսալաթ», «Էթթելաաթ», «Ջոմհուրիե: Էսլամի» թերթեր)¹⁶⁰: Սակայն իրա- նական կողմի Բաքվի համար ցանկալի նման պահանջները բողոքներով էլ սահմանափակվում էին:

Միաժամանակ իրանական կողմը ջանքեր էր գործա- դրում Արցախի հակամարտության կարգավորման հարցում իր միջնորդական գործունեության վերսկսման համար: Այդ մասին են վկայում 1995 թ. օգոստոսի 20-ին Երևանում ԻԻՀ-ի ազգա-

յին անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Հասան Ռոհանիի շեշտադրումը՝ Ղարաբաղի ճակատում հրադադարը չխախտելու, հարցերը բանակցությունների ճանապարհով լու- ծելու անհրաժեշտությունը¹⁶¹, ապա՝ 1995 թ. նոյեմբերի 27-ին Թեհրանում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար Արտա- վազդ Ղարբինյանի և ՌԴ դեսպանության առաջին քարտուղար Սեմյոն Գրիգորևի հանդիպումը¹⁶²: Սակայն երկրորդ դեպքում ռուսական կողմը չէր ակնկալում, որ այդ միջնորդությունն ար- դյունավետ կլինի, քանի որ ԻԻՀ-ն Մինսկի խմբի անդամ չէր, ինչը նվազեցնում էր նրա հնարավորությունները և, բացի այդ, Ադրբեջանը չէր ընդունում իրանական միջնորդությունը: Այդու- հանդերձ, բանակցային գործընթացում իր դիրքերն ամրապըն- դելու նպատակով ԻԻՀ-ի միջնորդությամբ 1995 թ. տեղի է ու- նենում ադրբեջանցի ռազմագերիների ազատումը¹⁶³:

Այսպիսով, ԻԻՀ-ի միջնորդական առաքելության ձա- խողմանը նպաստեց միջազգային հանրության հակաիրանա- կան դիրքորոշումը: ԵԱՀԽ-ի ջանքերը և ՄԱԿ-ի մշակված մե- խանիզմները նպատակ ունեին ԻԻՀ-ը մեկուսացնել և մեծաց- նել Թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում: ԻԻՀ-ի ազ- դեցության սահմանափակմանն ուղղված քայլերի մասին էին վկայում նաև քաղաքացիական կռիվները Տաջիկստանում միակ կենտրոնափական պետությունում, որն ուներ իրանա- կան կողմնորոշում: Նման պայմաններում պատնեշվեց Թեհ- րանի մուտքն անգամ դավանակից երկրներ: Արևմուտքը, ինչ- պես նաև ՌԴ-ն, հազիվ թե թույլ տային ԻԻՀ-ին իր դիրքերն ամ- րապնդել Կովկասում:

Արցախի հակամարտության հարցում իրանական միջ- նորդական առաքելության ձախողումը բխում էր ՌԴ-ի, ԱՄՆ-ի,

¹⁵⁷ Տե՛ս «Ալիթ», 08.06.1994:

¹⁵⁸ Տե՛ս նույն տեղում, 09.08.1994:

¹⁵⁹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թ. 21:

¹⁶⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 285, թ. 138:

¹⁶¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.08.1995:

¹⁶² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 286, թթ. 160-161:

¹⁶³ Տե՛ս **Бигдели Алиреза**, Обзор отношений между Исламской Республикой Иран и Республикой Азербайджан, Аму-Дарья, иранская журнал по изучению Центральной Азии и Кавказа, Тегеран, 1999 г., Год первый, N 2, էջ 23-24:

Թուրքիայի և ԵՄ-ի շահերից: Սա այն դեպքերից է, երբ նշված պետությունների շահերը համընկնում էին:

Իրանի միջնորդական առաքելությունը ծախսողվել է նաև այն պատճառով, որ այն ձեռնառու չէր հայկական կողմին, քանի որ որպես հիմնարար սկզբունք Թեհրանի կողմից դրվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցը և Արցախն անվերապահորեն Ադրբեջանին պատկանելու հարցադրումը: Այդուհանդերձ, իրանական մաքոքային դիվանագիտության հաջողություն պետք է համարել հակամարտող կողմերի միջև 1992 թ. փետրվար-մարտ ամիսներին հաստատված փխրուն, սակայն տվյալ պահին կենսական նշանակություն ունեցող հրադադարները:

Այսպիսով, Արցախի առաջին պատերազմի տարիներին Իրանում բարձրացել է հակահայկական մի քանի ալիք: Առաջին խոշոր ալիքը կապված էր Շուշիի ազատագրման և Բերձորի միջանցքի բացման հետ, երկրորդը Քարվաճառի, երրորդը Ակնայի, չորրորդը Վարանդայի, Զրականի և Սանասարի ազատագրման, հինգերորդը իրանական ինքնաթիռի վթարի կործանման հետ, որին կանոնադաշնանք հաջորդիվ: Առաջին և հինգերորդ դեպքերում լրջորեն վտանգվել է ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերությունները: Նշված բոլոր դեպքերում առանց բացառության, ըստ էության, որպես սադրող կողմ հանդես է եկել Բաքուն, որը փորձել է ռազմական գործողությունները տեղափոխել հարավ ու ճավալվել դեպի ՀՀ-ԻԻՀ սահման Արաքս գետի երկայնքով:

Հետպատերազմյան շրջանում իրանական մամուլը շարունակում է անդրադառնալ Արցախում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացներին, սակայն սուր քննադատությունն աստիճանաբար մեղմանում է: 1997 թ. ապրիլ-մայիս միացյալ համարում «Իրան թրդեր» ամսագրի խմբագրական բաժնում նշվում է, որ Իրանը միշտ կողմնակից

է եղել երկխոսության և գտնում է, որ այդ ճանապարհով կկարողանա լուծել բազմաթիվ խնդիրներ: Ըստ դրա՝ այդ են վկայում Իրանի ջանքերն այնպիսի տարածաշրջանային հակամարտություններ լուծելու գործում, ինչպիսին են աֆղանական և տաջիկական հարցերը, Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը¹⁶⁴: Փաստորեն, Արցախի խնդիրը ավելի մեղմ տոնով կրկին ներկայացվում էր համախլամականության դրոշի ներքո:

1997 թ. սեպտեմբերի 3-ին «Ջոմհուրի-է Էսլամի» պաշտոնաթերթն էլ «Կրկնակի ճնշվածություն» վերնագրով հողվածում անդրադառնում է Արցախի նախագահական ընտրություններին: Թերթը գրում էր. «Հայությունն, ի վերջո, ՀՀ կառավարության նախանշած ծրագրով կարողացավ իրականացնել Ադրբեջանի անբաժան մասը կազմող երկրամասի՝ Ղարաբաղի նախագահական ընտրությունները: Ղարաբաղի հին վերջը և Երևանի կողմից այդ երկրամասի գրավումը, իսկ մյուս կողմից՝ իր բնական հարստություններն Արևմուտքին հանձնելու Ադրբեջանի անհազ տենդը կրկնակի հարված են հասցնում Ղարաբաղի ադրբեջանցի բնակչությանը: Երկու դեպքում էլ քամուն են տրվում Ադրբեջանի հարստությունները: Մի դեպքում՝ Բաքուն անտարբեր կեցվածք է դրսևորում, իսկ մյուս դեպքում՝ հանդես գալիս որպես գլխավոր դերակատար»¹⁶⁵:

Փաստորեն, տարածքային և տնտեսական բնույթի խնդիրները թերթը համեմատում էր միևնույն հարթության մեջ: Հարստությունն օտարելու¹⁶⁶ համար պախարակում էր Բաքվի արևմտամետ կեցվածքը, մյուս կողմից՝ համախլամականության քարոզչությամբ ներքին լսարանի պահանջն էր բավարարում:

¹⁶⁴ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 169, թ. 5:

¹⁶⁵ Տես նույն տեղում, ց. 1, գ. 285, թթ. 96-97:

¹⁶⁶ Խոսքը վերաբերում է Բաքվի նավթային քաղաքականությունը արևմուտքի հետ, որի ընթացքում հաշվի չառնվեց Թեհրանի շահերը: Այդ մասին տես 2.7. բաժնում:

Վերոնշյալի համառոտագրում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 1997 թ. օգոստոսի 13-ին «Իրան դեյլի» օրաթերթում հրապարակված հարցազրույցը Թեհրանում Ադրբեջանի դեսպան Ալիյար Սաֆարլիի հետ: Ըստ նրա՝ մեծ պահանջ կա բարելավելու երկկողմ հարաբերությունները և տարածայնությունները հարթելու համար անհրաժեշտ են կառուցողական միջոցներ: Նա տարածայնություններ ասելով նկատի ունի վերացնել հայ-իրանական առևտուրը, քանի որ նրա խոսքով՝ «Մենք Հայաստանի հետ վարում էինք արյունոտ պատերազմ, իսկ Իրանն աջակցում է Հայաստանին»¹⁶⁷: Փոխարենը Սաֆարլին դրանով էր պատճառաբանում, որ իրենք լավ հարաբերությունների մեջ են ԱՄՆ-ի և Իսրայելի հետ:

Փաստորեն, Բաքվի հակաիրանական քաղաքականությունը փորձ էր արվում ներկայացնել իբր ՀՀ-ԻԻՀ տնտեսական սերտ կապերի հետևանք: Թերևս այդ ամենը լավագույնս գիտակցում էր պաշտոնական Թեհրանը և այդ հարցում տոն չէր տալիս: Ավելին, ի պատասխան այդ հարցազրույցին՝ մեկ ամիս անց սեպտեմբերի 16-ին, «Արրայր» օրաթերթին ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ջամալ Խարազին ուղղակիորեն հայտնում է. «Թել Ավիլի և Բաքվի համագործակցությունը սպառնում է մեր ազգային անվտանգությանը և մենք անհանգստացած ենք այդ հարաբերություններով»¹⁶⁸:

Վերոնշյալի համառոտագրում իրանական քաղաքական գծի դրսևորում տեղի ունեցավ 1997 թ. դեկտեմբերի 6-11-ը, երբ Թեհրանում տեղի ունեցավ Իսլամական համաժողով կազմակերպության 8-րդ գազաթնաժողովը: Գազաթնաժողովի պաշտոնական հաղորդագրության 56-րդ բանաձևով և հռչակագրի 8-րդ կետով «Իսլամական երկրները կոչ էին անում ՀՀ-ին դուրս բերել ուժերը գրավյալ տարածքներից»¹⁶⁹: Ուշագրավ

է, որ ԻԻՀ նախագահ Մոհամադ Խաթամին, անդրադառնալով իսլամական երկրներում առկա թեժ կետերին, չի հիշատակում Արցախի խնդիրը: Իրանի հոգևոր առաջնորդ Խամենեին էլ նշում է, որ «ԻՀԿ-ը կարող է հիմնել հատուկ հանձնախմբեր լուծելու Բոսնիայի, Քաշմիրի, Սոմալիի, Ղարաբաղի և այլ շրջաններում մահմեդականների առաջ ծառայած խնդիրները, որին անդամ բոլոր պետությունները պետք է մասնակցեն»¹⁷⁰: Փաստորեն, ԻԻՀ-ի ղեկավարությունը Արցախի հարցում բավարարվեց միայն փաստաթղթերում ընդունված որոշումներով: ԱՀ-ի փաստացի հարևան լինելու իրողությունը հնարավորություն էր տալիս Ադրբեջանի վրա որոշակի ազդեցություն գործադրելու:

Արցախի հարցը քննարկվում է նաև 1997 թ. փետրվարի 1-3-ին ՀՀ ԱԺ նախագահ Բաբկեն Ադարբեյջանի ԻԻՀ-ի կատարած այցի ընթացքում: ԻԻՀ-ի խորհրդարանի նախագահ Ալի Աբբար Նաթեղ-Նուրիի հետ բանակցություններում համաձայնեցվում է երկու երկրների խորհրդարաններում ստեղծել բարեկամական խմբեր¹⁷¹: Առաջարկվում էր խնդրի լուծման լայն բանաձև՝ արժանապատիվ և արդար խաղաղություն, որը համապատասխանում էր ՀՀ սկզբունքներին, ապահովում Արցախի բնակչության անվտանգությունը:

Այդ այցի արդյունքում 1997 թ. օգոստոսին ստեղծվում է ԻԻՀ-ՀՀ խորհրդարանական բարեկամական խումբ: Խմբի նախագահն էր ԻԻՀ-ի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Մ. Հոսեյնին, փոխնախագահ՝ Վարդան Վարդանյանը, քարտուղար՝ Արտավազ Բաղումյանը: Սակայն Արցախի հակամարտության կարգավորման հարցը հետագայում չդարձավ օրակարգային խնդիր միջխորհրդա-

¹⁶⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 169, թ. 100-101:

¹⁶⁸ Տե՛ս նույն տեղում, թթ. 130-131:

¹⁶⁹ Տե՛ս «Ազգ», 13.12.1997, նույն տե՛ս նաև՝ Documents Tehran declaration The Eighth Islamic Summit conference, "The Iranian Journal of International affairs",

Vol., IX, No 4, winter 1997/98, էջ 612-619:

¹⁷⁰ Տե՛ս Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Ե., 2003, էջ 201:

¹⁷¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 01.02.1997, 04.02.1997:

րանական հարաբերություններում:

Արցախի հարցում իրանական կողմի «մեղմ» քննադատության պայմաններում «Ռեսպուբլիկ» աջ պահպանողական ուղղվածությամբ հայտնի թերթը (21 հունվարի, 1999) հրապարակում է ՀՀ դեսպանության խորհրդական Գառնիկ Բաղալյանի հետ հարցազրույց: Թերթը մեջբերում է հայ դիվանագետի խոսքը. «... 1921 թ. հուլիսի 5-ին խախտելով նախորդ օրը ՌԿԿ ԿԿ բյուրոյի կայացրած որոշումը, Ստալինի պարտադրմամբ, պատմության մեջ առաջին անգամ, առանց Ղարաբաղի ժողովրդի կամքը հաշվի առնելու, մշտապես Հայաստանի մաս կազմած Ղարաբաղը միացվեց Ադրբեջանին»¹⁷²: Հիրավի, Արցախի հարցի վերաբերյալ հրապարակումը նշանակում էր, որ իրանական մամուլը կարևորում է հարցի վերաբերյալ հայկական կողմի հիմնավորումը:

Այսպիսով, հաշվի առնելով մամուլում առկա գրաքննությունը ակնհայտ է դառնում, որ իրանական հասարակական-քաղաքական դաշտում պահանջված էր նաև ՀՀ պաշտոնական դիրքորոշումը ներկայացնելը պաշտոնական անարդարությունը լուսաբանելու համար:

1.4. Որոշ «խնդիրների» շուրջ

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների զարգացմանը սպասվում էր բարդ փորձաշրջան: Որպես կանոն, Արցախի հակամարտության գոտում տեղի ունեցող ցանկացած դեպք ուղղակի կամ անուղղակի ազդեցությունն էր ունենում ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների վրա: Շուշիի ազատագրումը ստիպեց ԻԻՀ-ին ինքնաբացարկ հայտնել միջնորդական առաքելության շրջանակներում: Դիվանագիտական հարաբերություններում առաջացավ անվստահություն:

¹⁷² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 239, թ. 110-112:

Բուրբուլին չփորձելով բացարձականացնել կրոնական գործոնը՝ այնուհանդերձ, նշենք, որ ԻԻՀ-Ադրբեջան հարաբերությունները պայմանավորված էին նախ և առաջ ընդհանուր կրոնական, մշակութային կապերով, և եթե անգամ ԻԻՀ պաշտոնական դիրքորոշումը Արցախի հարցում երբեմն մեղմանում էր (քննադատական բնույթի հայտարարությունները ընդունում էին փոքր-ինչ մեղմ տոն՝ մեծ հաշվով չփոխելով բովանդակությունը), ապա հասարակական-քաղաքական շրջանակներում այն կառավարելի դարձնելն ըստ էության բացառվում էր:

1992 թ. հունիսի սկզբին Ադրբեջանում իշխանության եկավ ժողովրդական ճակատը, որի կանոնադրության մեջ նշված էր ԻԻՀ-ի Ատրպատական նահանգը Ադրբեջանին միացնելու հավակնության մասին¹⁷³: Պահանջվում է «քաղաքական բոլոր սահմանների չեղարկումը Հարավային Ադրբեջանի (ԻԻՀ Ատրպատական նահանգ - Կ.Ս.) հետ»¹⁷⁴: Այդ պայմաններում հայկական կողմը նախաձեռնում է ԻԻՀ-ի հետ հարաբերությունների խորացմանը նպաստող քաղաքականություն: Օգոստոսի 13-ին «Նեգավիսիմայա գազետա» շաբաթաթերթին տված հարցազրույցում ՀՀ նախագահը նշում է, որ ՀՀ-ն զարգացնում է կապերն ԻԻՀ-ի հետ: Հեռանկարում ՀՀ-ի տեղը համագործակցության և անվտանգության մերձավորարևելյան համակարգի մեջ է¹⁷⁵:

Չնայած ԻԻՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել էին և տեղի էին ունենում բարձրաստիճան պաշտոնյաների պարբերաբար հանդիպումներ, Թեհրան-Յրևան և Թեհրան-Բաքու կապերի զարգացման համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք որակապես տարբերվում էին: Կրոնապետական ԻԻՀ-ն, բնականաբար, ա-

¹⁷³ Տե՛ս Բեգիջանյան Է., Իրան-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Ե., 2001, էջ 58:

¹⁷⁴ Տե՛ս Մկրտչեան Ա., Պանթիւրքական հոսանքնեղ ժամանակակից Իրանում, Ե., 2008, էջ 61:

¹⁷⁵ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 301:

ռաջնությունը պետք է տար շիա Ադրբեջանին՝ իր դիրքերն ամրապնդելու համար: Այդ է պատճառը, որ 1992 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Թեհրանը տնտեսական ոլորտում չէր շտապում Երևանի հետ կապերն աշխուժացնել: Մինչդեռ Բաքվի հետ սերտ կապեր հաստատելու ուղղությամբ ԻԻՀ-ն լուրջ ջանքեր էր գործադրում՝ օգնելով նրան անդամակցել միջազգային կառույցներին, այդ թվում՝ ԷԿՕ-ին: Միայն Ադրբեջանի բացահայտ թուրքամետ և արևմտամետ կողմնորոշումը ստիպեցին ԻԻՀ-ին համեմատաբար ավելի մեղմ և իրատեսական քաղաքականություն վարել ՀՀ-ի հետ:

Այսպիսով, եթե ԻԻՀ դեսպանության պաշտոնական բացումը Երևանում տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 30-ին՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից (09 փետրվարի, 1992) մոտ 2,5 ամիս անց, ապա ԻԻՀ-ն չցուցաբերեց համարժեք շտապողականություն Թեհրանում ՀՀ-ի ներկայացուցչություն բացելու: Այդ գործընթացն իրանական կողմի պատճառով ձգձգվեց, և միայն 1992 թ. դեկտեմբերի 22-ին Թեհրանում պաշտոնապես բացվեց ՀՀ-ի դեսպանությունը: 1992 թ. սեպտեմբերի 9-ին հայկական կողմը տեղեկացրեց իրանական կողմին, որ ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար և լիազոր ներկայացուցիչ է նշանակված արևելագետ, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը¹⁷⁶:

Հոկտեմբերի 28-ին Վահան Բայբուրդյանն ԻԻՀ ԱԳ նախարար Վելայաթիին է հանձնում ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնական նամակը՝ իրեն ՀՀ գործերի հավատարմատար նշանակելու մասին: Զրույցի ընթացքում Վելայաթին նշում է, որ Կովկասի քաղաքական կայունությունն ԻԻՀ-ի համար ունի առաջնակարգ նշանակություն և այդ հենքի վրա Ղարաբաղի հակամարտությունը կայունության խաթարման առաջին գործոնն է: Վելայաթիի խոսքով՝ Կովկասն ազգային և կրոնական առումով խիստ խայտաբղետ է և ի՞նչ տեղի կունենա, եթե այդ ժողո-

վուրդները փորձեն գենքի ուժով լուծել իրենց տարածայնությունները¹⁷⁷: Այսպիսով, Արցախի հակամարտությունը երկկողմ հարաբերություններում դարձել էր խնդրո առարկա ցանկացած առիթի դեպքում:

1992-1994 թթ. ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում նկատվեցին որոշ խնդիրներ: 1993 թ. հունվարի 11-ին ՀՀ գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանը ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնականատար Արման Կիրակոսյանին հայտնում է, որ երկկողմ հարաբերությունների դինամիկ զարգացումը կենսական անհրաժեշտություն է ստեղծում Թավրիզում բացելու հյուպատոսություն¹⁷⁸: ՀՀ հավատարմատարն առաջարկում էր հյուպատոսական ներկայացուցչի համար հնարավոր աշխատավայր ապահովել Թավրիզի առաջնորդարանում: Հակառակ դեպքում Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Նշան վրդ. Թովուզյանի վրա դնել պատվավոր հյուպատոսի պարտականությունները, մինչև որ հարցը ստանա իր լուծումը, մանավանդ որ դրա նախադեպը կար¹⁷⁹:

Թավրիզում ՀՀ հյուպատոսական ծառայության կազմակերպումը կարևոր էր, քանի որ ՀՀ այցելուները հյուպատոսությանն են վճարում վիզաների որոշակի գումար: Այն գնում էր պետբյուջե, որը ֆինանսական հոսքի կարիք էր զգում: Առաջարկվում էր նույն մեխանիզմը կիրառել նաև հայաշատ Սպահանում, որտեղից ՀՀ եկողների թիվը մեծ էր:

Փետրվարի 5-ին ՀՀ ԱԳՆ-ն հիշյալ հարցով դիմում է ԻԻՀ-ի դեսպանությանը¹⁸⁰, իսկ մարտի 22-ին Թեհրանում ՀՀ ԱԳՆ իրանի բաժնի վարիչ Գրիգոր Առաքելյանը հուշագիր է ներկայացնում ԻԻՀ ԱԳՆ: Սակայն ԱՊՀ և Կովկասի երկրների

¹⁷⁷ Տես նույն տեղում, գ. 84, թթ. 100-102:

¹⁷⁸ Տես նույն տեղում, գ. 176, թթ. 1-2:

¹⁷⁹ 1919-1920 թթ. Թավրիզում ՀՀ հյուպատոսական ներկայացուցչի պարտականությունները կատարել է Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը:

¹⁸⁰ Տես ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 176, թ. 9:

¹⁷⁶ Տես ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 170, թթ. 30, 32:

վարչության պետ Բահրամ Ղասեմին պաշտոնապես հայտարարում է, որ քանի դեռ Ադրբեջանը թավրիզում չի հիմնել հյուպատոսարան, իրանական կողմը նպատակահարմար չի գտնում ՀՀ-ին հնարավորություն տալ թավրիզում բացելու հյուպատոսարան: Փոխարենը թեհրանը դեմ չէր, եթե ՀՀ-ն թավրիզում հիմներ առևտրատնտեսական ներկայացուցչություն¹⁸¹: Իրականում պաշտոնական թեհրանը խուսափում էր Երևանին այդ հարցում «առավելություն» տալուց, որպեսզի չարժանանար Բաքվի անհարկի դժգոհություններին և սադրանքներին:

Գ. Առաքելյանը թավրիզում հանդիպում է Արևելյան Աստրախականի նահանգապետի խորհրդական Շահամաթի հետ և քանակություններ վարում առևտրատնտեսական գրասենյակ հիմնելու վերաբերյալ: Նաև դիմում է Աստրախականի թեմի առաջնորդ Նշան վրդ. Թոփուզյանին՝ ներկայացուցչությանը շենքային հարմարություններ տրամադրելու խնդրանքով և ստանում դրական պատասխան:

Հարկ է նշել, որ այսօր էլ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ավելի քան 30 տարի անց հյուպատոսության բացումը մնում է հրատապ նշանակության հարց, չնայած վերջին շրջանում որոշ քայլեր են նախաձեռնվել այդ ուղղությամբ: Այդ կապակցությամբ 2009-2014 թթ. ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանը թավրիզում հայկական հյուպատոսության բացումը հիմնավորում է այդ քաղաքի աշխարհաքաղաքական առանձնահատկություններով: Դիվանագետի խոսքով՝ Իրանում ընթացող բոլոր քաղաքական իրադարձությունների կիզակետը թե անցյալում և թե այսօր եղել և մնում է թավրիզ քաղաքը¹⁸²: Ակնհայտ է, որ հայկական շահերը ևս բախվում են այնտեղ:

Հարկ է նշել, որ ինչպես դեսպանության, այնպես էլ

հյուպատոսության բացման դեպքում իրանական կողմը շտապ նախաձեռնեց սեփական գլխավոր հյուպատոսության բացումը ՀՀ Կոստան քաղաքում 2022 թ. հոկտեմբերի 21-ին տարածաշրջանում Ադրբեջանի թագնաշունչ հռետորաբանության պայմաններում¹⁸³:

1993 թ. քաղաքական հարաբերություններում առկա էին որոշ խնդիրներ, որոնք այլ կերպ կարելի է անվանել ադրբեջանական սադրանքներ: Ապրիլի 13-ին թեհրանի համալսարանի թյուրքախոս ուսանողությունը կազմակերպում է հանրահավաք Քարւնաձառում Արցախի ուժերի վերահսկողությունը հաստատելու կապակցությամբ: ՀՀ դեսպանության շենքի առջև ԻԻՀ-ի խորհրդարանի Խոյի, Մակուի, Արդեբիլի, Մարաղայի պատգամավորները թուրքերենով հնչեցնում են հակահայկական ձառեր ու կարգախոսեր՝ «*Դաշնակները և սիոնիստները մեկ դրամի երկու երեսն են*», «*Հայաստանի բանակ՝ դուրս մահմեդական տարածքից*», «*Լաշինը, Քելբաջարը և Ղուրաթլին պետք է ազատվեն*», «*Չավթիչ պետության հետ պետք է խզվեն դիվանագիտական հարաբերությունները*»¹⁸⁴: Կառավարությունն անվտանգության ուժերի և զորքի օգնությամբ ցրում է հանրահավաքը: Հաջորդ օրը Վելայաթին ուղերձով դիմում է ՀՀ կառավարությանը՝ կոչ անելով հայկական ուժերը դուրս բերել «Ադրբեջանի գրավյալ տարածքներից և Ղարաբաղի խնդիրը լուծել քաղաքական ձևապարհով»: Ռաֆսանջանին նամակ է հղում ՀՀ նախագահին, որում ոչ միայն քննադատում էր վերջինիս Ղարաբաղյան քաղաքականությունը, այլև պարունակվում էին սիրաշահման նոտաներ Բաքվին¹⁸⁵:

Շատ էության, իրանական կառավարությունն էր թույլ տվել ՀՀ դեսպանության առջև այդ սադրիչ հանրահավաքի կազմակերպումը, որի պատասխանատվությունն էլ փաստո-

¹⁸³ Տես Մկրտչյան Վ., Հայ-իրանական հարաբերությունների օրակարգը, «Ազգ», 04.11.2022, թիվ 40 (5728):

¹⁸⁴ Տես «Ազգ», 15.04.1993:

¹⁸⁵ Տես Բայրուրյան Վ., Իրան-Ադրբեջան հարևաններ, թե՛... էջ 11:

¹⁸¹ Տես նույն տեղում, թթ. 12-13:

¹⁸² Տես Առաքելյան Գ., Հայկական հյուպատոսության հարցը թավրիզում, «Ազգ», 02.07.2021, թիվ 25 (5665):

րեն, բարդում էր ՀՀ-ի վրա¹⁸⁶։ Ապրիլի 15-ին Հաշեմի Ռաֆսանջանին նամակով դիմում է Աբուլֆազ Էլչիբեյին։ ԻԻՀ-ն դատապարտում էր «Հայաստանի ագրեսիան և Երևանից պահանջում դուրս հանել հայկական զորքերն Ադրբեջանի բոլոր գավթված տարածքներից»¹⁸⁷։ Պաշտոնական Թեհրանն ամեն-կին էլ չէր ծրագրել ծայրահեղորեն սրել հարաբերությունները ՀՀ-ի հետ՝ հաշվի առնելով Ադրբեջանի հակաիրանական դիրքորոշումը։

Ինչ վերաբերում է «թեհրանաբնակ ադրբեջանցիներ»-ին, ապա նրանք ժամանակ առ ժամանակ հանդես էին գալիս հակահայկական գործունեությամբ։ Այդ մասին է փաստում նաև նրանց կողմից Արցախում հաստատված հրադադարից հետո՝ 1997 թ. փետրվարի սկզբին Թեհրանի մզկիթներում և մահմեդաբնակ թաղամասերում պարսկերենով թռուցիկների տարածումը¹⁸⁸։ «Երկիրը մթագնած չի մնալու» կարգախոսով թռուցիկներում նշվում էր, որ թույլ չեն տալու տարածաշրջանում այս անգամ արդեն քաղաքակիրթ խաչակիրների ձեռքով նոր Իսրայելի ստեղծումը։ Խոսքը վերաբերում էր Արցախին։

Քաղաքական խնդիրներից զատ կային նաև յիվանագիտական հարցեր։ ԻԻՀ ԱԳՆ-ն գործող կանոնակարգից ավելի երկար էր ձգձգում ՀՀ դեսպանությանը տրվող թույլտվությունները։ Համաձայն ԻԻՀ ԱԳՆ-ի կողմից սահմանված ընդհանուր կարգի՝ եթե որևիցե դեսպան կամ դեսպանատան աշխատակից ցանկանում է հանդիպում կամ հեռախոսազրույց ունենալ որևէ պաշտոնատար անձի հետ, ապա նա նախապես այդ մասին հատուկ հուշագրով տեղեկացնում է ԱԳՆ-ին, որի գրավոր կամ բանավոր թույլտվությունը ստանալուց հետո միայն իրականացնում է իր ցանկությունը։ Չնայած այս կարգը պարտադիր պայման էր անխտիր բոլոր դեսպանատների համար, բայց ՀՀ դեսպանությանը տրվող պատասխան-թույլտվությունները

¹⁸⁶ Տես նույն տեղում, էջ 12։

¹⁸⁷ Տես «Ազգ», 17.02.1993։

¹⁸⁸ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 167, թթ. 40-42։

շատ ավելի էին ձգձգվում։ Արդյունքում ՀՀ դեսպանության գործունեությունը կաշկանդվում էր։ Անգամ հրատապ լուծման հարցեր ծագելու դեպքում ՀՀ դեսպանությունը իրավունք չուներ հեռախոսով կամ անձամբ կապի մեջ մտնելու այն պաշտոնյայի հետ, որի հետ կային անհապաղ լուծման կարող հարցեր, այլ նախապես պետք է հուշագիր ներկայացվեր ԱԳՆ-ին։ Սակայն այս ընդունված ձևով էլ լավագույն դեպքում պատասխանը ստացվում էր երկու շաբաթից մինչև մեկ ամսվա ընթացքում։ Այսպիսով, հանդիպումը կազմակերպվում էր այն ժամանակ, երբ այլևս դրա կարիքը չկար։ Հաճախ կիրառվում էր նաև հետևյալ ձևը. եթե ՀՀ դեսպանության աշխատակիցները ցանկանում էին հանդիպել այս կամ այն նախարարի հետ, ԻԻՀ ԱԳՆ-ից առաջարկում էին հանդիպել որևէ երկրորդական անձի հետ, որոնք կամ իրավասու չէին բարձրացված հարցերը լուծելու, կամ տեղյակ չէին գործից¹⁸⁹։

Այսպիսով, հիշյալ հանգամանքները պակաս արդյունավետ էին դարձնում Հայ-իրանական կապերի համաձայնեցման պետական հանձնաժողովի աշխատանքները և ակամայից ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ Թեհրանում ՀՀ դեսպանությունը, Երևանում ԻԻՀ դեսպանության հետ համեմատած, կրավորական, ոչ եռանդուն աշխատանք է կատարում։

Իրան-Հայաստան կապերի համաձայնեցման պետական հանձնաժողովի համակարգող Բիաբանին ՀՀ հավատարմատարին չէր կանչում այդ հանձնաժողովի գումարած որևէ նիստի, կամ չէր տեղեկացնում այդ նիստերում ընդունված որոշումների մասին, իսկ ՀՀ-ում հանձնաժողովի նիստերը չէին գումարում առանց Ահմադ Սոբհանու ներկայության։ Ուշագրավ է, որ Թեհրանում գտնվելու ժամանակ 1993 թ. հունիսին, Սոբհանին այցելում է ՀՀ դեսպանություն և առաջարկում դժվարությունների հանդիպելու դեպքում դիմել իրեն խոստա-

¹⁸⁹ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թթ. 30-32։

նալով կարգավորել բոլոր հարցերը:

Փաստորեն, իրանական կողմը ձգտում էր իրանա-հայկական հարաբերություններն իրականացնել ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության միջոցով, և դա փորձում էր զլուխ բերել ԻԻՀ-ում ՀՀ դեսպանությանը մի յուրահատուկ «շրջափակման» մատնելու ճանապարհով: Իրանական դիվանագիտությունը գործի էր դրել հարաբերությունների այնպիսի մեխանիզմ, որը ինչ-որ կերպ կաշկանդում էր ՀՀ դեսպանության ազատ աշխատանքը:

1993 թ. հուլիսին հաճախակի են դառնում անանուն զանգերը ՀՀ դեսպանություն, որոնց ընթացքում ադրբեջանական առողջանությամբ սպառնալիքներ են հնչում ՀՀ դեսպանության և աշխատակիցների հասցեին¹⁹⁰:

Երկկողմ հարաբերություններում կտրուկ լարվածություն նկատվեց Արցախյան պատերազմի ավարտին, երբ 1994 թ. մարտի 17-ին հայկական զինուժը խփեց Ստեփանակերտի մատույցներում հայտնված Մոսկվայից Թեհրան թռչող իրանական Ա-130 «Վերկուլես» ռազմատրանսպորտային ինքնաթիռը, որի հետևանքով 34 մարդ զոհվեց: Չնայած «Ջոմհուրիե-էսլամի» պաշտոնաթերթը կառավարությունից պահանջում էր ստիպել ՀՀ-ին ընդունել իր պատասխանատվությունն այդ միջադեպի համար, իրանական ղեկավարությունը չէր ցանկանում սուր կերպով վատթարացնել հարաբերությունները ՀՀ-ի հետ: Նա միայն նախագգուշացրեց հայկական և ադրբեջանական կողմերին խնդիրը լուծել բանակցությունների ճանապարհով, որպեսզի չապակայունանա իրադրությունը տարածաշրջանում¹⁹¹: Այդ ողբերգական դեպքի կապակցությամբ ՀՀ և ԱՀ ղեկավարությունը ցավակցական հեռագրեր հղեցին ԻԻՀ-ի ղեկավարությանը: Մարտի 21-ին Թեհրանից Երևան ժամանեցին ԻԻՀ-ի ԱԳՆ-ի օդային ուժերի փորձագետներ, իրավաբանական վարչության պետ Ամինիանին և տեխնիկական խմբի ղե-

կավար գեներալ Ռեզվանին¹⁹²:

ԻԻՀ-ի ԱԳՆ-ն մարտի 28-ին հայտարարում է, որ ինքնաթիռի կործանման պատճառը Արցախի տարածքից արձակված հրթիռն է և ՀՀ կառավարությունից պահանջում է պատասխանատվության ենթարկել մեղավորներին¹⁹³: Դրան հետևեց ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Լևոն Ջուրաբյանի և ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի հայտարարությունը, որով նրանք ափսոսանք էին հայտնում ինքնաթիռի կործանման համար¹⁹⁴:

Իրանցի մասնագետների վկայությամբ ապացուցվեց, որ ինքնաթիռը չէր ունեցել «սև արկղ»: Ավելին ինքնաթիռը ՀՀ-ի օդային տարածք չէր մտել: Վրաստանի տարածքից ինքնաթիռը շեղել էր թռիչքի ուղղությունը և խորացել Ադրբեջանի տարածք՝ մոտ 4000 մ նվազեցնելով բարձրությունը: Փաստորեն իրանական ինքնաթիռը մտել էր Արցախի հակամարտության գոտու օդային տարածք ադրբեջանական օպերատորի ուղղորդմամբ:

Հարկ է նշել, որ մայիսի 4-ին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը Թեհրանում հանդիպում է ԻԻՀ նախագահին և Արցախում օդանավի անկումը ցավալի արհավիրք է համարում: Մինչդեռ Ռաֆսանջանին պատահաբար համարում է Արցախի պատերազմի հետևանք և հայտարարում, որ ԻԻՀ-ն ՀՀ-ից համագործակցություն է սպասում հետաքննության արդյունքների հրապարակման և ողբերգության մեղավոր անձանց պատժելու հարցում, այն դեպքում, եթե մեղքն ապացուցվի¹⁹⁵: ԻԻՀ-ն փոքր-ինչ մեղմել էր իր պահանջները, քանզի Ռաֆսանջանի խոսքի վերջում ընդգծվում էր. «եթե մեղքն ապացուցվի» արտահայտությունը, որից կարելի է եզրակացնել, որ իրանական կողմն ընդունում էր դեպքի թեականությունը:

¹⁹⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 41:

¹⁹¹ Տե՛ս **Гаджиев К. С.**, Геополитика Кавказа, М., 2001, էջ 343:

¹⁹² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.03.1994:

¹⁹³ Տե՛ս նույն տեղում, 31.03.1994:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում, 01.04.1994:

¹⁹⁵ Տե՛ս «Ալիք», 05.05.1994, «Հայաստանի Հանրապետություն», 06.05.1994:

Կողմերը գիտակցում էին, որ վթարը կազմակերպել է Ադրբեջանը ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները վատթարացնելու նպատակով: Նման դեպքում ավելորդ է խոսել ՀՀ-ի կողմից որևէ մեղավորության մասին: Ինչ վերաբերում է Արցախին, ապա պետք է նշել, որ պատերազմի տարիներին սովորական էին Ադրբեջանի օդային գրոհները: Ահա թե ինչու իրանական ինքնաթիռի մուտքը Արցախի օդային տարածք ընկավ: Երբեք է որպես հակառակորդի հերթական նենգ քայլ և հակահարված ստացել: Այդ ադրբեջանական սադրանքով ավարտվում են ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերություններում առաջացած ամենաբարդ խնդիրները, որոնց լուծման հարցում լուրջ ներդրում է ունեցել Գ. Հարությունյանը:

ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում գրանցվել են նաև սահմանային միջադեպեր ադրբեջանական սադրանքով: Այդ մասին է վկայում 1992 թ. սեպտեմբերի 18-ին իրանական կողմի բողոքը հայկական կողմին, ըստ որի սեպտեմբերի 17-ին ՀՀ-ին պատկանող ռազմական ինքնաթիռը մոտ 300 մ մտնելով ԻԻՀ-ի օդային սահման, վերադարձի ճանապարհին ռմբակոծել է նշանների դիմաց գտնվող Ադրբեջանի շինությունները¹⁹⁶: 1993 թ. ապրիլի 21-ին ինչ արկ է ընկել ԻԻՀ-ի տարածքում, որի համար ԻԻՀ-ը մեղադրեց ՀՀ-ին¹⁹⁷: Իրականում Կովսականի (Ջանգելան) շրջանից Ադրբեջանի հրետակոծությանն ի պատասխան ՀՀ-ի զինուժը համազարկ էր տվել, որի հետևանքով տեղի էր ունեցել միջադեպ: Հայկական կողմն ավստսանք հայտնելով՝ ակնկալում էր համարժեք արձագանք Ադրբեջանի և ԻԻՀ-ի միջև նույն կարգի սահմանային միջադեպերին, որն էլ կհամապատասխաներ իրանական կողմի հռչակած չեզոքության սկզբունքին:

Հարկ է նշել, որ 1993 թ. մարտի 24-ին, 25-ին, ապրիլի 22-ին, 23-ին, 24-ին, 29-ին, մայիսի 2-ին, 3-ին տեղի է ունեցել

հրաձգություն ԻԻՀ-ի տարածքի ուղղությամբ¹⁹⁸: Այդ նպատակով 1993 թ. մայիսի 6-ին ՀՀ-ԻԻՀ սահմանին տեղի է ունենում հանդիպում ՌԴ և ԻԻՀ սահմանապահ կոմիսարների և ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցչի միջև¹⁹⁹: Ադրբեջանական սադրանքով սահմանային միջադեպեր տեղի են ունեցել նաև հետագայում, երբ 1997 թ. ապրիլին Ադրբեջան-Նախիջևան նոր ճանապարհի շինաշխատանքների պայթեցումների հետևանքով ՀՀ-ի Մեղրի քաղաքում, բնակելի ֆոնդի ավերածություններ ու բնապահպանական վնասներ են տեղի ունեցել²⁰⁰: Հայկական կողմը պահանջում է դադարեցնել պայթեցումները և ճանապարհի շինաշխատանքները կատարել այնպես, որ դրանք չվնասեն ՀՀ-ի տարածքը: 1998 թ. հուլիսի 16-ին ՀՀ ԱԳՆ-ն նույն հարցով կրկին դիմում է ԻԻՀ-ի ԱԳՆ-ին²⁰¹:

1997-1998 թթ. շինաշխատանքների ժամանակ կատարվել է տարբեր հզորության 18 պայթեցում, որի հետևանքով ժայռոտ հողածածկը լցվել է Արաքս գետը և փոխել գետի հունը՝ 60 մետրից դառնալով 30-35 մետր: Գետի վարարումների ժամանակ հունի նեղացումը վնաս էր պատճառել հայկական կողմի ձախ ափի հողատարածքներին, սահմանային կառույցներին, ճանապարհին: Հնարավոր աղետների մասին ահազանգում էին նաև «Արմենիա» զորախմբի հրամանատար գեներալ-մայոր Եվգենի Պոտեխինը, ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունը: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ ՀՀ ԱԳՆ-ն 1999 թ. մարտի 5-ին կրկին իրանական կողմի ուշադրությունն էր հրավիրում սահմանային ռեժիմի խախտման փաստի վրա՝ առաջարկելով երկկողմ հան-

¹⁹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 179, թ. 11:

¹⁹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 178, թ. 41:

¹⁹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 23:

¹⁹⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 176, թթ. 58-59: Նույնը նաև ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 79-80:

²⁰⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 239, թթ. 40-41, թթ. 53-54 և ց. 2, գ. 168, թ. 27:

²⁰¹ Տե՛ս նույն տեղում, թթ. 59-60:

դիպման անցկացում՝ հարցին լուծում տալու նպատակով²⁰²: 1999 թ. ապրիլի 6-ին Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը որոշում է դիվանագիտական խորովակներով կազմակերպել կողմերի փորձագետների հանդիպում²⁰³:

Այսպիսով, խնդիրը կարգավորվեց, երբ ավարտվեցին շինաշխատանքները և Ադրբեջանն ԻԻՀ-ի տարածքով ցամաքային կապ հաստատեց Նախիջևանի հետ՝ շրջանցելով ՀՀ-ն: Անկասկած, այն ունի տնտեսական և ռազմաքաղաքական նշանակություն: Դրանով մեծացավ Բաքվի կախվածությունը Թեհրանից:

Հիշյալ դեպքերը, «խնդիրների» ժամանակավոր առաջացումից զատ, չխանգարեցին երկու պետությունների հետագա բարիդրացիությանը: Թեհրանը և Երևանը գտան բարեկամությունն անսասան պահելու բանաձևը՝ անտեսել Բաքվի սադրանքները²⁰⁴: Փոխադարձ պետական շահերը ստիպեցին կողմերին դրսևորված պոթենցիալները չդարձնել միջպետական հարաբերություններում թելադրող գործոն: Լարված պահերին կողմերը ցուցաբերեցին ողջախոհություն և հեռանկարային մոտեցում՝ հավատարիմ մնալով իրենց սկզբունքներին և չվտանգելով երկկողմ կապերը:

1.5. ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները միջազգային հարաբերությունների համատեքստում

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները դեռևս հետխորհրդային տարիներին մեծ հետաքրքրություն են ներկայացրել միջազգային ատյաններում, իսկ մեծ տերությունները հետևել են այդ գործընթացին:

1994 թ. օգոստոսի 1-ին և 9-ին ՀՀ ԱԳ փոխնախարար Ժիրայր Լիպարիտյանն ընդունում է ԻԻՀ-ի դեսպանության խորհրդական Ֆարհադ Քոլեյնիին²⁰⁵: Հանդիպման ընթացքում արծարծվում են ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ ԱՄՆ այցին առնչվող հարցեր, այդ թվում՝ ՀՀ-ի հարևանների հետ ունեցած հարաբերությունները:

Հայկական կողմը հավաստիացնում է, որ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին ՀՀ-ի անդամակցությունն առնչվում է մյուս հարևաններին, և չէր գնահատվում որպես ԻԻՀ-ի հետ կապված հարց: Այլ կերպ ասած՝ ՀՀ-ն չէր դիպչում ԻԻՀ-ի շահերին:

Իրականում Քոլեյնին մտահոգված էր, որ ԱՄՆ-ն ԻԻՀ-ի դեմ ծավալել էր լայն քարոզչություն: Որպես քարոզչության մի բաղկացուցիչ մաս նա առանձնացնում է 1994 թ. հուլիսին ԻԻՀ-ի կառավարությանն ընդդիմադիր «Մոջահեդինե խալդե Իրան» կազմակերպության²⁰⁶ ահաբեկիչների կողմից Իրանի հայ բողոքական եկեղեցու հոգևոր պետ Թադեոս Միքայելյանի սպանությունը²⁰⁷, որի նպատակն էր սեպ խրել ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում: Քոլեյնին նշում է, որ խնդիրը բավականին զգայուն է և ցանկալի չէ, որ տարիների հետևողական աշխատանքով ստեղծվածը երրորդ ուժի կողմից փորձությունների ենթարկվի: Պարզ է, որ երրորդ ուժի անվան տակ Քոլեյնին

²⁰² Տես նույն տեղում, ց. 11, գ. 182, թ. 31-33:

²⁰³ Տես նույն տեղում, թթ. 34-35:

²⁰⁴ Տես *Ակտյան Կ.*, ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունների որոշ խնդիրների շուրջ (1992-1994 թթ.), «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, 14, Ե., 2013, էջ 252:

²⁰⁵ Տես ՀՀ ԱԳՆ ՊՐԱ, ց. 5, գ. 242, թթ. 4-6, թթ. 11-12:

²⁰⁶ 1960 թ. ստեղծված «Մոջահեդինե խալդե Իրան» պարտիզանական խմբավորումը մի շարք ահաբեկություններ է իրականացրել Իրանում:

²⁰⁷ Տես *Բաբուրյան Կ.*, Իրանն այսօր, էջ 306:

նկատի ունեւր ԱՄՆ-ին:

Իրանական կողմն անհանգստանալու պատճառ ունեւր, քանի որ օգոստոսի 10-ին Լևոն Տեր-Պետրոսյանին ընդունում է ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Վիլիամ Փերին: Վերջինս հայտարարում է 1994 թ. հոկտեմբերին բարձրաստիճան գին-վորական պատվիրակություն ՀՀ գործուղելու մտադրության մասին²⁰⁸: Իրականում ԱՄՆ-ը սկսել էր ջանքեր գործադրել վիժեցնելու ՀՀ-ՌԴ ռազմական պայմանագրի կնքումը, որը տեղի ունեցավ 1995 թ. մարտի 16-ին: Ակնհայտ է, որ ՀՀ-ում ամերիկյան ռազմաքաղաքական որևէ ձևաչափով ներկայությունն ընդունելի չէր Թեհրանի համար: ԻԻՀ-ում գտնում էին, որ դեպի ՌԴ տանող ամենակարճ ճանապարհը ՀՀ-ն է, քանի որ ԻԻՀ-ՀՀ սահմանը հսկվում էր ՌԴ զինուժի կողմից:

1990-ական թթ. ԻԻՀ-ի քաղաքականության մեջ առանցքային դեր ունեին երեք գործիչներ՝ նախ Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Խամենեին, ինչպես նաև նախագահի պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված Հաշեմի Ռաֆսանջանին, այնուհետև՝ Մոհամմադ Խաթամին: ԻԻՀ-ի Սահմանադրության համաձայն՝ Ռաֆսանջանին իրավունք չուներ 3-րդ ժամկետում քվեարկվելու նախագահի պաշտոնում: 1997 թ. մայիսի 23-ին ստանալով ավելի քան 20 մլն քվե՝ Մոհամմադ Խաթամին ընտրվեց ԻԻՀ-ի թվով 5-րդ նախագահ: Նրա ընտրությունն անակնկալ էր կառավարող ուժերի աջ թևի համար, որոնք համոզված էին, որ հաղթելու է խորհրդարանի խոսնակ Ալի Աքբար Նաթեղ-Նուրին²⁰⁹:

ԻԻՀ-ի նորընտիր նախագահի հետ հանդիպելու համար հայկական կողմը նախաձեռնեց կազմակերպել ՀՀ նախագահի այցն ԻԻՀ մայիսի 31-ին²¹⁰: Դեռևս 1997 թ. մարտի 17-ին ԱԳ փոխնախարար Սերգեյ Մանասարյանն իր պաշտոնակից

Մահմուդ Վայեզիի հետ քննարկում է այդ հարցը²¹¹: Սակայն ԻԻՀ-ի դեսպանությունը 1997 թ. մայիսի 27-ին հուշագրով առաջարկում է ՀՀ նախագահի այցը տեղափոխել մի այլ ժամանակ²¹²: Մինչդեռ հայկական կողմը նպատակային էր համարում ՀՀ նախագահի այցը կազմակերպել հնարավորինս շուտ²¹³: Այս նախաձեռնությունը բացատրվում էր նրանով, որ ՀՀ-ԻԻՀ հարաբերություններին առնչվող մի շարք հարցեր ամենաբարձր մակարդակով քննարկելու անհրաժեշտություն էր առաջացել: Հարկավոր էր ճշտել ԻԻՀ-ի նորընտիր նախագահի դիրքորոշումը տարածաշրջանի հարցերի մասին: Եվ միայն սեպտեմբերի 6-ին ԻԻՀ-ի ԱԳՆ-ի ՍՊՀ երկրների վարչության պետ Հոսեյն Նարադիանը Վահան Բայբուրդյանին հայտնում է, որ նորանշանակ ԱԳ նախարար Քամալ Խարազին համաձայն է Նյու-Յորքում մասնակցել ԱԳ նախարարների հանդիպմանը²¹⁴: Ստացվում է, որ իրանական կողմը պատրաստ չէր անգամ կազմակերպել ԱԳ նախարարների հանդիպում Երևանում կամ Թեհրանում, այլ առաջարկում էր երրորդ երկիր: Ընդհանրապես, ԻԻՀ-ի նոր ղեկավարությունը դանդաղ էր գործում²¹⁵:

Մինչդեռ իրանական մամուլը տվյալ շրջանում ավելի ուշադիր էր երկկողմ հարաբերությունների հարցում ՀՀ պաշտոնական հայտարարություններին: 1997 թ. հուլիսի 19-ին «Սալամ» օրաթերթն ընդգծում է, որ ԻԻՀ դեսպան Համիդեզա Նիքար Էսֆահանիի հետ հանդիպման ընթացքում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարել է, որ տարածաշրջանի ազդեցիկ և հզոր երկրի՝ Իրանի հետ հարաբերությունների զարգացման գործում որևէ սահման չի ձանաչում: Նույն

²¹¹ Տես «Ազգ», 18.03.1997:

²¹² Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, g. 2, q. 168, p. 146:

²¹³ Տես նույն տեղում, q. 167, p. 47:

²¹⁴ Տես նույն տեղում, թթ. 56-57:

²¹⁵ ԻԻՀ-ի կառավարությունում տեղի ունեցած փոփոխություններից հետո ՀՀ նախագահի այցի կազմակերպումը ԻԻՀ ընկալվում էր շտապողական քայլ, քանի որ ՀՀ-ի հետ համագործակցության մեխանիզմներին ավելի լավ տիրապետող նախարարներն այլևս պաշտոններ չէին զբաղեցնում:

²⁰⁸ Տես Սեյդաբադ Ս., ՀՀ-ԱՄՆ հարաբերությունները 1991-2000 թթ., Ե., 2010, էջ 33:

²⁰⁹ Տես Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 740:

²¹⁰ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, g. 2, q. 167, p. 39:

թերթը կարևորում էր այն, որ L. Տեր-Պետրոսյանը ԻԻՀ դեսպանության խնդրանքով հրաման է ստորագրել առանց որևէ պայմանի իրանցի բանտարկյալներին ազատ արձակելու մասին²¹⁶։ Փաստորեն, հայկական կողմը ցույց էր տալիս, որ չնայած թեհրանի համար ստեղծված ժամկետների անհարմարություններին, պատրաստակամ է բարի կամք դրսևորել ու համագործակցել իրանական կողմի հետ քաղաքացիա-իրավական ոլորտում։

Հարկ է նշել, որ 1990-ական թթ. վերջին երկկողմ հարաբերություններում «սառնությունը» շարունակվեց։ Եվ միայն 2000 թ. մայիսի 11-ին Երևան է այցելում ԻԻՀ-ի նորանշանակ դեսպան Մոհամմադ Ֆարիադ Քոլեյնին։ Վերջինս ՀՀ-ում ԻԻՀ-ի դեսպանի նշանակումը որակում է փոքր-ինչ ուշացում և չի վերագրում հարաբերությունների թուլացմանը²¹⁷։ Սակայն դեսպանի հիշատակած փոքր-ինչ ուշացումը վերաբերում էր 1,5 տարվա, ՀՀ-ում ԻԻՀ-ի նախկին դեսպան Հ. Էսֆահանիի՝ 1998 թ. նոյեմբերին թեհրան մեկնելուց հետո ԻԻՀ-ի դեսպանատան աշխատանքներն համակարգվում էին հավատարմատարի մակարդակով։

Այդուհանդերձ, միջազգային աստիճաններում հայկական կողմը շարունակում էր հավատարիմ մնալ ՀՀ-ԻԻՀ բարեկամության սկզբունքին։ 1996 թ. սեպտեմբերի 24-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 51-րդ նստաշրջանում քվեարկության դրվեց «ԻԻՀ-ում մարդու իրավունքների կացության մասին» բանաձևը։ Հայկական կողմի «դեմ» քվեն վերոհիշյալ բանաձևին արժանացավ ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթիի հատուկ շնորհակալությանը²¹⁸։ Հայկական կողմը գիտակցում էր մարդասիրական մտահոգությունները և քաղաքական նպատակները միմյանցից տարբերակելու անհրաժեշտությունը։

²¹⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 169, թ. 81։

²¹⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12.05.2000։

²¹⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 286, թ. 42։

Երկկողմ հարաբերությունների օրակարգում որոշակի նշանակություն ունեցավ 1995 թ. մարտի 16-ին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև կնքված պայմանագիրը, որով իրավական հիմքի վրա դրվեց ՀՀ-ում ռուսական զինուժի տեղակայման հարցը։ 1997 թ. օգոստոսի 29-ին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիր ստորագրվեց²¹⁹, որով ռուսական զորքերի հսկողության տակ էին առնվում ոչ միայն ՀՀ-Թուրքիա, այլև ՀՀ-ԻԻՀ միջպետական սահմանները։ Նշված պայմանագրով նախ ԻԻՀ-ՀՀ սահմանը հասանելի չէր ՆԱՏՕ-ին և, ապա, ԻԻՀ-ի սահմանին տեղակայված զինուժը տարածաշրջանում ապահովում էր ուժերի հավասարակշռությունը։

Ռուսական ազդեցության վերահաստատումն Այսրկովկասում թեհրանն ընկալում էր որպես «չարյաց փոքրագույն»²²⁰։ ՌԴ-ն և ԻԻՀ-ն թուրք-ամերիկյան ազդեցությանը դիմակայելու համար աշխատում էին համադրված քայլեր ձեռնարկել։ Պրանով էր պայմանավորված այն փաստը, որ ԻԻՀ-ն զուսպ մոտեցում ցուցաբերեց չեչենական իրադարձություններին։ Ավելին, ուրվագծվեց համագործակցություն ռազմական արդյունաբերության բնագավառում։ 1997 թ. ԻԻՀ-ի և ՌԴ-ի միջև ստորագրվել է 145 մլն դոլարի արժողությամբ պայմանագիր ռուսական ինքնաթիռների շարժիչների համատեղ արտադրության վերաբերյալ²²¹։

Վերոնշյալի համատեքստում աշխուժացան թեհրան-Երևան-Մոսկվա առանցքի ձևավորման մասին խոսակցությունները։ ԻԻՀ-ՌԴ-ՀՀ եռակողմ հարաբերությունները քննարկում են 1997 թ. նոյեմբերի 1-ին ՀՀ նախագահի հատուկ բանագնաց, փոխվարչապետ Շահեն Կարամանուկյանը և ԻԻՀ ԱԳ

²¹⁹ Երկկողմ հարաբերություններ. Ռուսաստան, <https://www.mfa.am/hy/-bilateral-relations/ru> դիտվել է 21.11.2022։

²²⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 286, թ. 171։

²²¹ Տե՛ս Гущер А., Исламское государство и теории и на практике, Азия и Африка, М., 1999, N2 (499), էջ 23։

նախարար Քանալ Խարազին²²²: «Զոմհուրի-է էլամի» պաշտոնաբերքը այդ հանդիպման վերաբերյալ նոյեմբերի 2-ին գրում է, որ «Իրանն ու Հայաստանը կարևորեցին այլ երկրների հետ եռակողմ համագործակցությունների ծավալման անհրաժեշտությունը»՝ նկատի ունենալով առաջին հերթին ՌԴ-ին²²³:

Նոյեմբերի 3-ին Իրանի ռադիոյից հնչում են քաղաքական մեկնաբանություններ հայ-իրանական հարաբերությունների մասին՝ նշելով, որ «երկկողմ հարաբերությունները հաստատվել ու զարգացել են Ղարաբաղյան ձգնաժամի տարիներին»²²⁴: Արվում է այն հարցադրումը, որ եթե այն ժամանակ ԻԻՀ-ը կարողացավ ՀՀ-ի հետ հարաբերություններ հաստատելու քաղաքական կամք դրսևորել, ապա այժմ առկա են ավելի նպաստավոր պայմաններ հարաբերություններին նոր ընթացք տալու համար: Սակայն այս դեպքում նպաստավոր պայմաններ էին համարվում Մինսկի խմբի՝ Արցախի հարցի կարգավորմանը վերաբերող առաջարկները: Մինչդեռ հայտնի է, որ Մինսկի խումբը հայկական կողմից ակնկալում էր զիջումներ, որոնք ՀՀ-ում առաջացրին ներքաղաքական ձգնաժամ: 1998 թ. փետրվարի 3-ին Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց: Մարտի 30-ին անցկացված արտահերթ նախագահական ընտրություններում ՀՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը:

ՀՀ-ում իշխանափոխությունը հավանության չարժանացավ ԻԻՀ-ում²²⁵: Իրանական մամուլը և ԻԻՀ-ում աղբբեջանական լոբբին հերթական «քաղաքական աշխուժացում» ցուցաբերեցին: «Ռեսալաթ» թերթում (07 փետրվարի, 1998) «Պատերազմի թմբուկը Հայաստանում» վերնագրով հողվածի հեղինակ Ֆարգադ Սամդալին գրում է. «Ներկայումս ՀՀ Սահմանադրության համաձայն՝ նախագահի հրաժարականի դեպքում,

նրան փոխարինելու է երկրի վարչապետը, իսկ սա խստորեն դեմ է Ղարաբաղի գրավյալ տարածքները և Լաչինի միջանցքը վերադարձնելու պայմանին, որի պատճառով չեզոքացվում է երրորդ երկրների (Մինսկի խմբի - Կ.Ս.) խաղաղարար ջանքերի արդյունավետությունը: Անկասկած, քաղաքական այդպիսի ուղղությունը կհանգեցնի Կովկասում նոր պատերազմների բռնկմանը: Լկս պարագայում ԻԻՀ-ի ԱԳՆ-ն պետք է իր ուշադրության կենտրոնում պահի այս ուժերի գործելակերպը, որոնց համար ազգայնականությունն ավելի գերադասելի է, քան իրատեսությունը: Ղարաբաղն իսլամական աշխարհի մի մասն է և ԻԻՀ-ը պետք է վերապահ մոտեցում դրսևորի ՀՀ-ի ժայռահեղական գործիչների նկատմամբ»²²⁶:

Մամուլում հրատարակված հակահայ բովանդակությամբ հողվածներն իրենց արձագանքը գտան հասարակական-քաղաքական դաշտում: Այսպես, 1998 թ. ապրիլի 21-ին անանուն հեռախոսագանգով ՀՀ դեսպանությունը զգուշացվում է, որ շենքում թունք է տեղադրված²²⁷: Եվակուացվում է դեսպանության անձնակազմը և հրավիրվում է սակրավորների ջուկատ: Ստուգումների արդյունքում թունք չի հայտնաբերվում: Հաջորդ օրը՝ ապրիլի 22-ին, անհայտ անձինք դեսպանությանն են հանձնում սադրիչ բովանդակությամբ երկու թուղիկ, որոնցում նշվում էր, որ իշխանության գլուխ է բարձրանում «Հայաստանի ֆաշիստ դաշնակցականների պարագլուխ Ռոբերտ Քոչարյանը, որի ասպարեզ գալով փակուղի են մտնում Մինսկի խմբի բանակցությունները»²²⁸: Հանիրավի մեղադրվում էր ՀՅԴ կուսակցությունը՝ 1915-1918 թթ. մահմեդականներին «կոտորելու» համար: Բողոք կար նաև ապրիլի 24-ին իրանահայ համայնքի կողմից կազմակերպվելիք ցույցի դեմ:

Փաստորեն, Արցախի հականարտության կարգավորման բանակցային գործընթացում հայկական շահերի առաջնդ-

²²² Տե՛ս «Ալիք», 02.11.1997:

²²³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 169, թ. 189:

²²⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 192:

²²⁵ Տե՛ս **Քեզիջանյան Է.**, Իրաքյան իրադարձությունների ու զարգացումների վերլուծություններ (1994-2004), Ե., 2004, էջ 48:

²²⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 158, թ. 35:

²²⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 49:

²²⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 50:

ման պայմաններում փորձ էր արվում արգելել Իրանի հայ համայնքի կողմից Հայոց ցեղասպանության անենամյա ոգեկոչման արարողությունները:

Ֆարգադ Սամդալի մեկ այլ «Ռեսալթ» թերթում տպագրված «Ղարաբաղը և Հայաստանի նոր քաղաքականությունը» վերնագրով հոդվածը (19 ապրիլի, 1998) ևս վերաբերում էր ՀՀ-ի նոր ղեկավարությանը: Ղրանում նշվում էր, որ «ՀՀ-ի նորընտիր նախագահը մերժում է Ղարաբաղի պատկանելությունը Ադրբեջանին և մտադիր է պայքարել այդ տարածքի շրջափակման դեմ»²²⁹: Այդ նպատակով, ըստ թերթի, Երևանը հրաժարվելու է Լաչինի (Բերձոր) միջանցքը Ադրբեջանին վերակցելու մտքից:

Ակնհայտ է, որ վերոնշյալ հրապարակումներն, ինչպես նաև թուրքիկներն ու հեռախոսագանգերը արհեստածին էին, ունեին ադրբեջանական հետազիծ և նպատակ ունեին սադրանքների ենթարկելու հայ-իրանական հարաբերությունները: Մինչդեռ հարկ է նշել, որ 1998 թ. իշխանափոխությունից հետո ՀՀ արտաքին քաղաքականության իրանական վեկտորի բնագավառում նախորդ կառավարության իրավանագրած քաղաքականության համեմատ էապես փոփոխություններ տեղի չունեցան: Այդ մասին է վկայում այն, որ 1999 թ. հունվարի 30-ին Ղավուսի միջազգային տնտեսական համաժողովի շրջանակներում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և ԻԻՀ ԱԳ նախարար Քամալ Խարազին վերահաստատում են ստորագրված փաստաթղթերը կյանքի կոչելու անհրաժեշտությունը²³⁰:

1999 թ. մարտի 3-ին ՀՀ նորանշանակ դեսպան Գեղամ Ղարիբջանյանն իր հավատարմագրերն է հանձնում ԻԻՀ-ի ԱԳ նախարար Քամալ Խարազին, իսկ մարտի 27-ին՝ ԻԻՀ-ի նախագահ Մոհամմադ Խաթամին²³¹: Խարազիի հետ գրույցի ժամանակ քննարկվում է Մոհամմադ Խաթամիի և Ռոբերտ Քո-

չարյանի այցերի հարցը: Փաստորեն, տևական ժամանակ լռության մատնված նախագահների այցելության հարցը դառնում է խնդրո առարկա:

ՀՀ նոր փոխարացման արտաքին քաղաքականությունը թույլ տվեց գործակցություն սկսել ԱՄՆ-ի ու ՌԴ-ի, ԵՄ-ի ու ԻԻՀ-ի, ԱՄՆ-ի ու ԻԻՀ-ի հետ միևնույն բնագավառներում այնպես, որ շահերը չբախվեն²³²: ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի ելույթները ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում կարևոր էին այնքանով, որքանով, որ ՀՀ-ն այդ հանձնաժողովի անդամ է ընտրվել երկու անգամ՝ 2002 թ. և 2004 թ.²³³:

Կողմերի համար մտահոգիչ էր Իսրայել-Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքի ձևավորումը: Այդ հարցը քննարկում է 1997 թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 52-րդ նստաշրջանի առիթով Նյու-Յորքում ԻԻՀ ԱԳ նախարար Քամալ Խարազին նախ ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանի²³⁴, ապա 1998 թ. օգոստոսի 24-25-ը Թեհրանում ՀՀ նորանշանակ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի հետ²³⁵: ԻԻՀ-ի նախագահ Մոհամմադ Խաթամին և Հունաստանի ԱԳ նախարար Թեոդորոս Պանգալոսը ևս քննադատում են նշված ռազմական դաշինքը²³⁶: Այսպիսով, նշված դաշինքը սպառնում էր և է տարածաշրջանի անվտանգությանը դառնալով մարտահրավեր հայ-իրանական հարաբերությունների համար:

1999 թ. մայիսի 30-ին ՀՀ-ում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց վերաբերյալ իրանական կանխատեսումները չնչին տարբերությամբ իրագործվեցին:

²²⁹ Տես Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, էջ 21:

²³⁰ Տես Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, Ե., 2013, էջ 259:

²³⁴ Տես «Ազգ», 30.09.1997:

²³⁵ Տես Բաղդասյան Գ., Հայաստան-Իրան..., էջ 71:

²³⁶ Տես «Ազգ», 25.08.1998, 26.08.1998, 09.09.1998:

²²⁹ Տես նույն տեղում:

²³⁰ Տես Բաղդասյան Գ., Հայաստան-Իրան..., էջ 71:

²³¹ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 8, գ. 86, թ. 32:

Նրանք մեծ հույսեր էին կապում Վազգեն Սարգսյան և Կարեն Դեմիրճյան զույգի հետ՝ համագործակցությունը շարունակելու առումով: Հոկտեմբերի 27-ի դեպքերից հետո ԻԻՀ-ի փոխնախագահ Հասան Հաբիբին թեհրանում ՀՀ դեսպանությունում և ԱԳ նախարար Քամալ Խարազին Երևանում փաստեցին, որ անկախ այդ ցավալի միջադեպից ուժի մեջ են մնում 1999 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Երևանում ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի հետ ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները և պատրաստ են համագործակցելու նոր կառավարության հետ²³⁷:

Դեկտեմբերի 7-9-ը՝ իրանական կողմի նախաձեռնությամբ Թեհրան է այցելում ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը: Իրանական կողմը գոհունակությամբ է ընդունում Օսկանյանի՝ տարածաշրջանի երկրների մասնակցությամբ «կլոր սեղան» կազմակերպելու առաջարկը: ՀՀ կողմից ներկայացված բանաձևը հանգում էր «3+3+2»-ի, որով ի նկատի էր առնվում երեք հարավկովկասյան երկրները՝ որպես կորիզ, գումարած երեք անմիջական հարևանները և Եվրոպական Միությունն ու ԱՄՆ-ը²³⁸:

Ավելին՝ 2000 թ. մարտի 29-30-ը Թբիլիսիում ՀՀ նախագահը կարևորում է Տրասեկա ծրագրի շրջանակներում նաև ԻԻՀ-ի ներգրավումը և էներգետիկ համագործակցության խորացման նպատակով՝ երկու երկրների էներգահամակարգերը ևս մեկ գծով միացնելու հնարավորությունը²³⁹: Սակայն ՀՀ-ի այս նախաձեռնությունը չիրականացավ, քանի որ ՎՈՒԱՄ-ի անդամ պետությունները՝ Վրաստանը, Ադրբեջանը կողմնորոշված էին դեպի ԱՄՆ-ը և Եվրոպա²⁴⁰: Ակնհայտ է, որ «Կլոր սե-

ղանի» իրականացման հարցում բախվում էին աշխարհաքաղաքական կենտրոնների շահերը:

ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում կարևորվում է պաշտոնական Երևանի փորձերը՝ հանդես գալու միջնորդական առաքելությամբ ԻԻՀ-Իսրայել և ԻԻՀ-ԱՄՆ հարաբերությունների կարգավորման հարցերում: Առաջին անգամ նման միջնորդության մասին քննարկվել է դեռ 1992 թ. ապրիլի 24-ին, երբ ՀՀ են այցելում ՌԴ-ում Իսրայելի պետության դեսպան Արյե Ակնը և դեսպանության առաջին քարտուղար Յուսեֆ Բեն-Դոռը²⁴¹: Սակայն գործնականում նման քայլ չեղավ: Վարդան Օսկանյանի՝ ԱԳ նախարար դառնալուց հետո միայն փորձ արվեց նոր լիցքեր տալ չիրագործված այդ առաջարկին: 1998 թ. հոկտեմբերի վերջին Օսկանյանն Իսրայելում առաջարկում է իր միջնորդությունը կարգավորելու Թել-Ավիվ-Թեհրան հարաբերությունները: Սակայն նոյեմբերի 4-ին ՀՀ ԱԳՆ-ից հայտնում են, որ Օսկանյանը ոչ թե միջնորդություն է առաջարկել, այլ նման դիմումի դեպքում չի բացառել ՀՀ-ի կողմից համապատասխան գործողությունների իրականացումը²⁴²:

Հայ-իսրայելյան կապերը աշխուժանում են 1999 թ. մայիսից, երբ Երևան է այցելում Իսրայելի ԱԳ փոխնախարար Շ. Շտայնը: Սակայն վերջինս սադրում է, երբ հայտնում է հայ-իսրայելյան կապերի զարգացման անհրաժեշտության մասին՝ «անկախ երրորդ երկրներից»²⁴³: Թեև հրեաները դա ողջունում են, ԻԻՀ-ի ԱԳՆ-ն դրան կոշտ է հակադարձում՝ ասելով, որ միջնորդելու ոչինչ չկա²⁴⁴:

Այսպիսով, ԻԻՀ-Իսրայել հարաբերություններում միջնորդական դեր ստանձնելու հայկական կողմի փորձերը հաջողություն չունեցան, քանի որ Թեհրանը և Թել-Ավիվը պատրաստ չէին հարաբերությունները կարգավորելուն:

²³⁷ Տե՛ս Բաղդասյան Գ., Հայաստան-Իրան..., էջ 72:

²³⁸ Տե՛ս Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, էջ 472, 477:

²³⁹ Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013, էջ 295:

²⁴⁰ Տե՛ս Մանուկյան Ժ., ՀՀ-ՎՈՒԱՄ փոխհարաբերությունները և Հարավային Կովկասի անվտանգության խնդիրները 1997-2006 թթ., Ստեփանակերտ, Մեծրոպ Մաշտոց համալսարան, Լրատու, գիտ. հոդվ. ժող., 2008, էջ 30:

²⁴¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թ. 33:

²⁴² Տե՛ս «Ազգ», 04.11.1998, 05.11.1998:

²⁴³ Տե՛ս Гаджиев К. С., նշվ. աշխ., էջ 360:

²⁴⁴ Տե՛ս Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, էջ 139:

Ինչ վերաբերում է ԻԻՀ-ԱՄՆ հարաբերությունների կարգավորման հարցին, ապա Օսկանյանի վկայությամբ բազմաթիվ առիթներ են եղել, երբ ԻԻՀ-ը մի շարք ուղերձներ է հաղորդել իմանալով, որ ՀՀ-ն կփոխանցի ԱՄՆ-ին և հակառակը²⁴⁵: Փաստորեն, այս դեպքում հայկական կողմի «հաջողությունը» պայմանավորված է եղել իրանական կողմի լուռ համաձայնությամբ:

Հայկական կողմի միջնորդական առաքելության մեկ այլ հարցով հիշարժան է 1998 թ. հունիսին պաշտոնական այցով ՀՀ այցելած Արգենտինայի նախագահ Կառլոս Մենենի դիմումը ՀՀ նախագահին: Ռոբերտ Քոչարյանի հետ հանդիպման ժամանակ նա խնդրում է, որ ՀՀ-ն միջնորդի կապ հաստատելու Արգենտինայի և ԻԻՀ-ի միջև, որը խզվել է 1994 թ. հուլիսի 18-ին Քուենոս Այրեսում հրեական կենտրոնի պայթյունից հետո: Այդ առաքելությունը հանձնարարվում է Վարդան Օսկանյանին, որը դա իրականացնում է²⁴⁶:

Կարծում ենք, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ արդյունք է ունեցել Մենենի դիմումը և մյուս հարցերը, փաստ է, որ տվյալ պահին միջազգային հանրության կողմից որպես իրանական կողմի հետ միջնորդ ընդունվել է հայկական կողմը: Փաստորեն որոշ դեպքերում հայկական կողմը կարողացել է իրագործել պայմանական ասած փոքր ձևաչափի միջնորդական առաքելություններ ԻԻՀ-ի և երրորդ կողմ հանդիսացող պետությունների միջև: Այդ առաքելությունների և հաջողման, և ձախողման դեպքերը հաստատում են, որ հայկական կողմը տարիների ընթացքում ձեռք էր բերել որոշակի քաղաքական ներուժ և, որ կարևոր է, ձևավորվել էր վստահության մթնոլորտ իրանական կողմի հետ:

Այդուհանդերձ, երկկողմ հարաբերություններում որոշակի խնդիր էր առաջացել 2000 թ. սկզբից, երբ հայկական կողմը

ջանքեր է գործադրում կազմակերպելու ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանի եռօրյա այցը Թեհրան: Սակայն, նկատի ունենալով, որ մարտի երկրորդ կեսը մոտ է Նովրուզի տոներին, իրանական կողմը խնդրում է այն հետաձգել: Նովրուզը ժամանակ շահելու պատրվակ էր: ՀՀ-ի ներքաղաքական զարգացումները հույսեր չէին ներշնչում իրանական կողմին կազմակերպելու ՀՀ վարչապետի այցը ԻԻՀ:

Քաղաքական զարգացումներին նոր շունչ է հաղորդում 2000 թ. նոյեմբերի 7-9-ը ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի այցն ԻԻՀ²⁴⁷: Ազ նախարար Քամալ Խարազիի հետ հանդիպման ընթացքում կողմերը կարևորում են տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցերը՝ շեշտելով Հյուսիս-Հարավ առանցքում ՀՀ-ի բացառիկ դերը: Տեղին է նշել, որ նշված առանցքի ձևավորման գործում մեծ ավանդ է ունեցել ՈՂ-ում ԻԻՀ դեսպան Մեհդի Սաֆարին²⁴⁸: Քննարկումներում փաստվում է, որ քաղաքական հարաբերությունները զարգանում են բնականոն և անհրաժեշտ է զարգացնել տնտեսական հարաբերությունները²⁴⁹: Փաստորեն Սերժ Սարգսյանի այցելությամբ պաշտոնական Երևանը փորձում էր աշխուժացնել տնտեսական կապերը, քանի որ մինչ այդ չէր հաջողվել վարչապետի վերոնշյալ այցի կազմակերպումն ԻԻՀ:

Ինչ վերաբերում է քաղաքական հարաբերություններին, ապա ԻԻՀ-ի ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Հասան Ռոհանին հայտնում է, որ ԻԻՀ-ն իրեն համարում է տարածաշրջանի պատասխանատու և բնական չէր համարում, որ մի շարք երկրներ (ԵԱՀԿ Մինսկի խումբ - Կ. Մ.) դրսից փորձում են կարգավորել Լեռնային Ղարաբաղի հարցը²⁵⁰: Սերժ Սարգսյանը հայտնում է, որ այդ առաջարկու-

²⁴⁷ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 8, գ. 86, թ. 89:

²⁴⁸ Տես նույն տեղում, թթ. 92-93:

²⁴⁹ Տես **Քաղաքային Գ.**, Հայաստան-Իրան..., էջ 79-80:

²⁵⁰ Տես նույն տեղում, էջ 81:

²⁴⁵ Տես նույն տեղում, էջ 138:

²⁴⁶ Տես նույն տեղում, էջ 139:

յունը մերժվել է²⁵¹: Խնդիրն այն է, որ միջնորդները ՀՀ-ին առաջարկել էին Մեղրիի տարածքի փոխարեն ստանալ Արցախը: Ակնհայտ է, որ դրանով կվերանար ՀՀ-ԻԻՀ միջպետական սահմանը, որը սպառնալիք էր երկու պետությունների ազգային անվտանգությանը:

Այդ պայմաններում 2001 թ. ապրիլին Քի-Վեստի բանակցություններից հետո ԵԱՀԿ ամերիկյան համանախագահ Քերի Քավանոն պատրանք էր ստեղծում, երբ հայտնում է, որ Արցախի հակամարտության բանակցային գործընթացի մասին անհրաժեշտ է տեղյակ պահել ԻԻՀ-ին²⁵²:

2001 թ. նշանավորվեց փոխադարձ այցելություններով²⁵³: ԻԻՀ-ի համար անընդունելի էին Արցախի հակամարտության կարգավորման համար շրջանառության մեջ դրված և հայկական կողմից մերժված վերոնշյալ տարածքային փոխանակումները: Ահա թե ինչու Թեհրանը մերժել էր Գոբլի ծրագիրը: Ավելին, շրջանառվում էր միջոցառումների մի փաթեթ, որն առնչվում էր Մեղրիի հետ: Դրանք էին Իրան-Հայաստան գազատարի կառուցումը, Արաքս գետի վրա համատեղ երկու հէկ-ի նախագծումը, բարձրավոլտ էլեկտրահաղորդակցման երեք գծերի անցկացումը, Քաջարանի թունելի շինարարությունը, Թավրիզ-Մեղրի-Երևան-Թբիլիսի ճանապարհի գործարկումը և այլն:

²⁵¹ Տե՛ս Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, էջ 33:

²⁵² Տե՛ս «Արաքս», թիվ 99-100, 2001, էջ 27: Տե՛ս նաև Խուդինեան Գ., Դարաբաղեան հիմնահարց. կարգավորման պատրանքներն ու ստեղծումն հնարաւորութիւնները, «Դրօշակ», թիւ 3, յունիս 2001, էջ 143

²⁵³ ԻԻՀ այցելեցին ՀՀ ԱԳ նախարար Կարոյան Օսկանյանը, ԱԳ փոխնախարար Ռուբեն Շուգարյանը (3 անգամ), ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գազիկ Հարությունյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը, ՀՀ էներգետիկայի նախարար, Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովի նախագահ Կարեն Գալուստյանը (2 անգամ), կրթության և գիտության նախարար Էդուարդ Ղազարյանը, արդյունաբերության և առևտրի նախարար Կարեն Ժճարիտյանը, քաղաքաշինության նախարար Ղալիբ Լոջյանը, քաղաքիացիայի վարչության պետի տեղակալ Ս. Մարգարյանը, տրանսպորտի և կապի փոխնախարար Վ. Քոչարյանը, «Հայուսագազարդ»-ի փոխնախարար Ա. Հովսեփյանը:

2001 թ. սեպտեմբերի 11-ին նյույորքյան ահաբեկչությունից հետո, ԻԻՀ-ԱՄՆ հարաբերությունների սրումն անուղակիորեն իր բացասական արձագանքն է ունենում տարածաշրջանում: Մյուս կողմից ՌԴ-ԱՄՆ մերձեցմամբ թուլանում է Այսրկովկասում մրցակցության ու բևեռացման հավանականությունը²⁵⁴: Տարածաշրջանում ավելանում է ՆԱՏՕ-ի առանցքային դերակատար ԱՄՆ-ի ներկայությունը:

Այդ պայմաններում ՀՀ-ն պատրաստակամություն է հայտնում մասնակցել 2003 թ. ՆԱՏՕ-ի համագործակցություն հանուն խաղաղության նախագծի զորավարժություններին: Իրանական տեսակետով ՀՀ-ն ձգտում էր անդամակցության Հյուսիսատլանտյան համագործակցության և Եվրո-Ատլանտյան գործընկերության խորհուրդներին, քանի որ 2001 թ. և 2002 թ. մասնակցել էր 4 զորավարժությունների²⁵⁵: Այս դեպքում ևս իրանական կողմի մտահոգությունները անհիմն էին, քանի որ ՀՀ-ՆԱՏՕ համագործակցությունը սահմանափակվում էր լուկ զորավարժություններով: Այդուհանդերձ, իրանական կողմը ևս երկու անգամ բարձրացրեց նշված հարցը: Նախ 2001 թ. դեկտեմբերի 25-27-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի Թեհրան²⁵⁶, ապա 2002 թ. մարտի 4-6-ին ԻԻՀ-ի պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար, ծովակալ Ալի Շամխանիի Երևան կատարած պաշտոնական այցելությունների ընթացքում²⁵⁷: Ի դեպ, հետխորհրդային շրջանում սա ԻԻՀ-ի պաշտպանական գերատեսչության ղեկավարի առաջին պաշտոնական այցն էր Այսրկովկաս: Կողմերի միջև ստորագրվում է պաշտպանության և անվտանգության բնագավառներում համագործակցության փոխընթացման հուշագիր: Ռազմական համագործակցության ոլորտում կողմերն ուշադրություն են դարձ-

²⁵⁴ Տե՛ս Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, էջ 392-393:

²⁵⁵ Տե՛ս «منوچهر مرادی، حضور نفو در قفقاز جنوبی، آباد، محدودیت ها و پیامدها، مروری بر آسیای مرکزی و قفقاز، شماره 59، تهران 2007، صفحات 7 تا 26»

²⁵⁶ Տե՛ս «Արաքս», թիվ 99-100, 2001, էջ 26, «Ալիք», 28.12.2001:

²⁵⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 05.03.2002:

նում երկու երկրների զինված ուժերի թիկունքային ապահովման խնդիրներին²⁵⁸: Հարկ է նշել, որ անվտանգության խնդիրների շուրջ կողմերի միջև պարբերական խորհրդատվությունների անցկացումն անհրաժեշտ է համարվում 2002 թ. հունիսի 21-ին ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի և ԻԻՀ ԱԳ փոխնախարար Մ. Ամինգադեի հանդիպման ընթացքում²⁵⁹: Այսպիսով, հայկական կողմին հաջողվեց փարատել իրանական կողմի մտահոգությունները ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության հարցում:

2001 թ. ՀՀ նախագահի ԻԻՀ կատարած պաշտոնական այցի պատասխանն էր 2004 թ. սեպտեմբերի 8-9-ը ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիրի այցը ՀՀ: Նախագահները ստորագրում են ՀՀ և ԻԻՀ միջև համագործակցության սկզբունքների ու հիմունքների մասին պայմանագիր²⁶⁰: ԻԻՀ-ի նախագահն առաջին անգամ այցելում է Հայոց ցեղասպանության հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցում անմեղ զոհերի հիշատակին:

Այսպիսով, ԻԻՀ նախագահի առաջին այցն ՀՀ կարելի է դիտարկել որպես պաշտոնական հարաբերությունների մակարդակի բարձրացմանն ուղղված կարևոր քայլ Թեհրանի կողմից: Ինչ որ իմաստով այն ուներ պատմական նշանակություն, քանի որ անկախ ՀՀ-ն առաջին անգամ էր ընդունում հարևան երկրի նախագահին: 1998-2000 թթ. «սառը տարիներ»-ին հաջորդեց համեմատաբար ակտիվ հարաբերությունները ժամանակաշրջան, որը կապված էր իրանական կողմի նախաձեռնությունների աճի հետ: Այդ նախաձեռնությունների «խթանիչն» էր իրանցի քաղաքական գործիչների մտավախությունը, թե ՀՀ-ն կարող է փոխել իր քաղաքական կողմնորոշումը դեպի ՆԱՏՕ: Թերևս այդ ամենի արդյունքում առավել խորացավ ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները և որակական նոր նշանո՞ղ սահման-

վեց կողմերի միջև:

1.6. Հայ համայնքի մասնակցությունը միջպետական հարաբերությունների գործընթացին²⁶¹

Իրանական կողմն ի սկզբանե ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացին ներառեց հայ համայնքը: Այդ մասին են վկայում ՀՀ պետական այն գործիչների կարծիքները, որոնք անձամբ որոշակի նպաստ են ունեցել երկկողմ հարաբերությունների զարգացման գործընթացին: Այսպես, հիմք ընդունելով 1993-1996 թթ. ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանի, 1998-2008 թթ. ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի, 1992-1998 թթ. ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Վահան Բայբուրդյանի, 1999-2005 թթ. ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գեղամ Ղարիբջանյանի արտահայտած տեսակետները²⁶² եզրակացնում ենք, որ միջպետական հարաբերություններում որոշ դեր են ունեցել հայ համայնքի գործիչները: Հենց նրանց մասնակցությամբ է կյանքի կոչվել տնտեսական բազմաթիվ ծրագրեր, հիմք դրվել քաղաքական սերտ կապերին:

Հարկ է նշել, որ դեռևս 1992 թ. հունիսի 14-22-ը ԻԻՀ այցելած ՀՀ ԱԳՆ մամուլի կենտրոնի ղեկավար Գառնիկ Բաղալյանը հանդիպումներ է ունենում Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Արտակ արք. Մանուկյանի, «Ալիք» օրաթերթի արտոնատու Ս. Ալբերտ Աճեմյանի, գլխավոր խմբագիր Նորայր Էլսալյանի, տնօրեն Վարուժան Հովհաննիսյանի և Իսլամական

²⁵⁸ Տե՛ս Բաղալյան Գ., Իրան. Հանրագիտարան, էջ 468:
²⁵⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.06.2002:
²⁶⁰ Տե՛ս Բաղալյան Գ., Հայաստան-Իրան..., էջ 111:

²⁶² Տե՛ս Իսկանդարյան Գ., նշվ. աշխ., էջ 302, 318, 337, 351:

²⁵⁸ Տե՛ս Բաղալյան Գ., Իրան. Հանրագիտարան, էջ 468:

²⁵⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.06.2002:

²⁶⁰ Տե՛ս Բաղալյան Գ., Հայաստան-Իրան..., էջ 111:

խորհրդարանի պատգամավոր Արտավազը Բաղումյանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվում է ՀՀ դեսպանության բացումից հետո հայ համայնքի օգնության հնարավորությունները²⁶³: «Ալիք» օրաթերթը պատրաստակամություն է հայտնում տեղական մամուլում տպված նյութերը հայերեն թարգմանելու և այլ հարցերում աջակցելու ուղղությամբ:

Վերոնշյալ խնդրից բացի կարևոր էր նաև այն, որ 1930-ական թթ. սկզբներին իրանական մամուլում և հեռուստատեսությամբ հետաքրքրությունը մեծ էր հայ-ադրբեջանական բախումների շուրջ: Գ. Բաղայանի խոսքով՝ «Ցավոք, այս բոլորը 70%-ը 30%-ի դիմաց հոգուտ Ադրբեջանի է: Ադրբեջանը չունենալով իր դեսպանությունը Թեհրանում (25.06.1992 թ. դրությամբ - Կ. Մ.) քաղաքական նպատակներով իր հազարավոր քաղաքացիներ, որոնք առանց մուտքի վիզայի իրավունք ունեն 45 կմ այցելել ԻԻՀ տարածք, որը իհարկե միշտ չէ, որ պահպանվում է: Թավրիզում և Թեհրանում ականատես եղա, թե ինչպես բազմաթիվ ադրբեջանցիներ, որոնք օգտվում են այդ հնարավորությունից, իրենց ներկայությամբ քարոզչական աշխատանքներ են տանում և հակահայկադեմոկրատիկություններ տարածում ադրբեջանաբնակ և պարսկաբնակ վայրերում»²⁶⁴: Փաստորեն, ադրբեջանական կողմը չարաշահում էր ԻԻՀ-ի տարածք ելումուտի արտոնությունը և այն ծառայեցնում էր քաղաքական նպատակներով:

Հաջորդ խնդիրն այն էր, որ ադրբեջանական քարոզչամեքենային պատասխանողի դերում հայկական կողմից լավագույն դեպքում հանդես էր գալիս հայ համայնքը, որն ուներ միայն մեկ տեղեկատվական աղբյուր՝ ՀՅԴ-ի կողմից Երևանի մամուլի կենտրոնը: Չնայած տվյալ պահին այն ուներ կարևոր նշանակություն, սակայն չէր արտահայտում ՀՀ պաշտոնական դիրքորոշումը: Ակնհայտ է, որ հայ համայնքն ի գորու չէր կա-

տարելու այն, ինչ անում էին Բաքվի կողմից ուղղորդված և պետական աջակցություն ստացած ներկայացուցիչները: Այս տեսակետից հրատապ էր Թեհրանում ՀՀ դեսպանության օր առաջ բացումը, որը կարտահայտեր պաշտոնական Երևանի տեսակետները և կպաշտպաներ ՀՀ շահերը:

Հիրավի, ՀՀ-ԻԻՀ կապերի սկզբնավորման գործում իրենց ավանդն ունեցան իրանահայերը: 1991 թ. մարտ ամսին Երևանում իրանական «Սաթի» ընկերության տնօրեն Լևոն Ահարոնյանը հանդիպում է ՀՀ վարչապետ Վազգեն Մանուկյանին և քննարկում Մեղրու կամրջի բացման հարցը²⁶⁵: Վ. Մանուկյանը Լևոն Ահարոնյանի հետ 7 հոգուց բաղկացած պատվիրակություն է ուղարկում Մեղրի՝ տեղում ուսումնասիրելու վիճակը: Դրանից հետո Լևոն Ահարոնյանը զեկույց է պատրաստում ԻԻՀ-ի Տրանսպորտի և Արտաքին գործերի նախարարությունների, Առևտրի պալատի և «Մոսթագաֆան» հաստատության համար: Ըստ Ահարոնյանի՝ երկկողմ համագործակցության վրա պատերազմական վիճակը չէր ազդի, որովհետև «մեր նախագահը և ԱԳ նախարարը ճշմարիտ քաղաքականություն են վարում՝ հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղի հանկարտությունը կրոնական չէ, այլ աշխարհագրական ու պատմական խնդիր է»²⁶⁶:

Անկասկած, երկկողմ կապերում ակնառու է իրանահայ անվանի գործարար և բարերար, համայնքային գործիչ Լևոն Ահարոնյանի (1930-2020) դերը: Դեռևս 2012 թ. նա՝ որպես Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ, վկայում է. «ՀՀ անկախության իրազարկումից անմիջապես հետո Իրանում մեր իրավաբանների աջակցությամբ որոշեցինք հիմնադրել Իրան-Հայաստան առևտրի պալատը: 40 իրանահայերի ջանքերով հիմնեցինք պալատը: Ամեն տարի առևտրական ֆորում էինք կազմակերպում, առաջին տարին այն գրանցեց 10 հազար դո-

²⁶³ Տե՛ս ՀԱԱ ֆ. 326, ց. 9, գ. 171, թթ. 1-5:

²⁶⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 4:

²⁶⁵ «Սաթի» տրանսպորտային ընկերությունը կենտրոնացնում էր Զուլֆայից ստացվող փոխադրումները և կարող էր միանգամից 450 տ քեռ տեղափոխել:

²⁶⁶ Տե՛ս «Ազգ», 28.07.1992:

լարի առևտուր, իսկ այժմ՝ (2012 թ. - Կ.Մ.) 300 մլն դոլարից ավելի առևտուր ունենք: ... Մի բան հստակ է, մինչև այժմ ՀՀ դեսպանատունը չունի առևտրական և տնտեսական բաժին, այդ գործերը մենք ենք անում անշահախնդիր կերպով²⁶⁷»: Փաստորեն այդ կառույցը Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ կատարել է տնտեսական կարևոր գործառնություններ, անշուշտ, իրանական իշխանությունների համաձայնությամբ և թույլտվությամբ:

Հիշարժան է, որ 1992 թ. մայիսի 5-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ նախքան թեհրան ժամանումը, իրանցի գործարար Սեյեդ Աբդոլլահ Դասթղեյի խնդրանքով Լևոն Ահարոնյանը պարսկերենով համառոտ զեկույց է պատրաստում Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, որը հանձնվում է ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիին²⁶⁸:

Հաջորդ կարևոր առաքելությունն այն էր, որ ՀՀ նախագահի՝ թեհրան կատարած այցելությունից հետո, ԻԻՀ ԱԳ նախարարությունը Լևոն Ահարոնյանին, որպես միջնորդ և վստահելի թարգմանիչ, հանձնարարում է բանակցություններ վարելու համար կապ հաստատել ՀՀ նախագահի խորհրդակցական Վահան Փափազյանի հետ: Եվ ահա որոշվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի անունից գրել երկու նամակ՝ մեկը ԻԻՀ առաջնորդ Խամենեյին, մյուսը՝ ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիին²⁶⁹: Հիրավի, Շուշիի ազատագրումից հետո այդ նամակների ուղարկումը վերոնշյալ հասցեատերերին ունեցավ կարևոր նշանակություն հայ-իրանական միջպետական տվյալ դեպքում հարցականի տակ դրված հարաբերությունները պահպանելու տեսակետից, քանի որ հայկական կողմը դրանով հավաստում էր թեհրանի նախածեռնած բանակցություններին իր հավա-

տարմությունը:

Հարկ է նշել, որ բազմաթիվ պաշտոնական այցելությունների ընթացքում Լ. Ահարոնյանը իրանական կողմի խնդրանքով կապ է հաստատել ՀՀ ղեկավարության հետ և հակառակը: Այդպիսիք են ԻԻՀ ԱԳՆ Կովկասի բաժնի պետի տեղակալ Հոսեյն Նարադիանի խնդրանքով Լևոն Ահարոնյանի կողմից, ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Նիքքար Էսֆահանիի՝ «Հրագրաններենա» արտադրության տնօրեն Թելման ՏերՊետրոսյանի, ՀՀ Արդյունաբերության նախարար Աշոտ Սաֆարյանի և ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանի, 1995 թ. մայիսի 3-6-ին թեհրանում ՀՀ վարչապետ Հրանտ Բազրատյանի և իրանահայ 500 գործարարների, ինչպես նաև 1996 թ. նոյեմբերի 7-ին և 1997 թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանի և ԻԻՀ ԱԳ նախարարության Կովկասի բաժնի ղեկավարի հետ երկու հանդիպումների կազմակերպումը²⁷⁰:

Իրանի հայ համայնքի աջակցությունը կարևոր էր տնտեսական ոլորտում: ՀՀ անկախության հռչակումից անմիջապես հետո ստեղծվում է Հայ գործարարների միջազգային համագումարը, որը կրում էր «Հայ գործարարների ֆորում» անվանումը: Ֆորումի փոխնախագահն էր Լ. Ահարոնյանը: Ֆորումի գործունեության շնորհիվ 1991 թ. սկսած ՀՀ-ն կարողացավ օգտվել Պարսից ծոցի և Կասպից ծովի իրանական նավահանգիստներից²⁷¹:

1995 թ. ֆորումի վարչական խորհրդի նիստը տեղի է ունենում Փարիզում, որտեղ որոշվում է ստեղծել «Հայ գործարարների միությունը»: Իրանի 55 գործարարներ գնում են մասնաբաժիններ դառնալով ամենամեծ բաժնետերերը²⁷²:

1992 թ. նոյեմբերին ստեղծվում է Իրան-Հայաստան

²⁶⁷ Տես Իսկանդարյան Գ., նշվ. աշխ., էջ 397:

²⁶⁸ Տես Ահարոնյան Լ., Փոթորկոտ կեանքիս օրերը (հասարակական ել թարգմանական յուշեր), գիրք Բ, Թեհրան, 2010, էջ 940:

²⁶⁹ Տես Ահարոնյան Լ., նշվ. աշխ., գիրք Բ, էջ 943-944:

²⁷⁰ Տես Ահարոնյան Լ., նշվ. աշխ., էջ 1065-1068, 1525, 1583, 1597:

²⁷¹ Տես Բայրուրյան Վ., Իրանի հայ համայնքը, էջ 148-149:

²⁷² Տես Ահարոնյան Լ., նշվ. աշխ., գիրք Բ, էջ 999-1000, 1005:

առևտրական պալատը, որի նախագահն էր Լ. Ահարոնյանը²⁷³: Իրանահայ գործարարներ Սեպուհ, Նժդեհ և Վիգեն Ասլանյանները, Լևոն, Ժորժիկ և Հենրիկ Ահարոնյանները, Շահբազյան եղբայրները, Ալբերտ Բաբայանը ամենօրյա կապի մեջ էին թեհրանում ՀՀ դեսպանության հետ²⁷⁴:

1992 և 1993 թթ. նորանկախ Հայաստանի ամենածանր տարիներին հայրենիքին աջակցել են իրանահայ տարբեր գործիչներ, անշուշտ, իրանական պետության թույլտվությամբ և ուրոշ հարցերում հույժ կարևոր արտոնագրերի տրամադրմամբ: Դրանց թվում են «Ալիք» օրաթերթի խմբագրակազմի անդամ Նորայր Էլսայանի միջնորդությամբ ավստրալահայության և Ռաֆիկ Յաղուբյանի միջոցով ավստրիահայության հատկացրած գումարը սննդամթերք գնելու և ՀՀ ուղարկելու նպատակով, ինչպես նաև 1992 թ. վերջերին հացահատիկի ջրաղացի սեփականատեր Վարուժան Առաքելյանի ջանքերով ՀՀ Գորիսի և Մեղրիի շրջաններ 500 տոննա ալյուրի գնումն ու առաքումը²⁷⁵: Բացի դրանից Լ. Ահարոնյանը և Վ. Առաքելյանը սեփական միջոցներով 270 հատ նավթավառ են գնում և ուղարկում Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի անդամներին: Գնահատելի է նաև Ահարոնյանի նախաձեռնությամբ 1000 կգ քաղցրավենիքի գնումը և Արցախի մանուկներին ուղարկումը: Իրանական պետության հումանիտար աջակցության համատեքստում կարելի է դիտարկել նաև 1993 թ. Լ. Ահարոնյանի օգնությամբ ՀՅԴ ներկայացուցիչ Ռաֆիկ Գասպարյանի նյութական աջակցության տրամադրումն Արցախին²⁷⁶:

1992 թ. ապրիլի 22-ին ՀՀ է այցելում ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամավոր Վ. Վարդանյանի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակությունը Երևան է բերում իրանահայ համայնքի հանգանակած միջոցներով ձեռք բերված

²⁷³ Տես Բայրուրյան Վ., Իրանն այսօր, էջ 309:

²⁷⁴ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 285, թթ. 57-58:

²⁷⁵ Տես Ահարոնյան Լ., նշվ. աշխ., գիրք Բ, էջ 970-973:

²⁷⁶ Տես նույն տեղում, էջ 974, 1060:

և իրանական կառավարության աջակցությամբ ուղարկված 24 տ դեղորայք ու սննդամթերք: ԻԻՀ-ի պատվիրակությանն ընդունում է ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարեցյանը²⁷⁷: Ակնհայտ է, որ իրանական կողմից այս օգնության առաքման թույլտվությունն ուներ և մարդասիրական, և քաղաքական նպատակներ:

Հարկ է նշել, որ հայ համայնքը որոշակի ներգրավվածություն է ունեցել նաև թեհրան-Երևան օդային կապի հաստատման կարևոր գործում: Թեհրանի Հայոց թեմական խորհրդի կողմից ստեղծված վերոնշյալ հանձնախումբն, ըստ Հայ Առաքելական եկեղեցու կանոնադրության, որն է առևտրական պայմանագիր կնքելու իրավունք չուներ: Փաստորեն այդ հանձնախումբն ուներ միջնորդի առաքելություն: Սակայն հանձնախմբի կատարած երկարատև աշխատանքների շնորհիվ բացվում է Երևան-Թեհրան ուղիղ չվերթը: 1992 թ. հունվարի 30-ին առաջին անգամ Երևանից օդանավը վայրէջք է կատարում թեհրանի օդանավակայան: Այդ չվերթի կազմակերպման գործը հանձնվում է թեհրանում երկարամյա գործունեություն ծավալած օդային փոխադրումների ընկերության տնօրեն եղվարդ Բաղդասարյանին²⁷⁸: Փաստորեն ի սկզբանե Իրանի հայ համայնքը վճռական էր տրամադրված ՀՀ-ի հետ տնտեսական կապեր խորացնելու և ԻԻՀ պետական կառույցներին ներգրավելու այդ գործընթացին, անշուշտ, իրանական պետության թույլտվությամբ և համաձայնությամբ:

Տնտեսական գործակցությունից զատ կարևոր նշանակություն ունեին Իրանի հայ համայնքի մասնավոր նվիրատվությունները հայրենիքին: Դեռևս Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնության նպատակով 1988 թ. դեկտեմբերի 15-ին Երևան է ուղևորվում Ա. Բաղումյանը բեռնատար օդանավով, իսկ դեկտեմբերի 21-ին Վ. Վարդանյանը Ամենայն Հա-

²⁷⁷ Տես Բայրուրյան Վ., Հայիրանական հարաբերություններ..., էջ 7:

²⁷⁸ Տես Ահարոնյան Լ., նշվ. աշխ., գիրք Բ, էջ 1486, 1488, 1490:

յոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին է հանձնում 100 հազար դոլարի չեկ²⁷⁹:

Հավելենք, որ 1993 թ. Թեհրանում ստեղծված Իրան-Հայաստան առևտրական պալատի կանոնադրությունը կազմել են համայնքի իրավաբաններ դոկտոր Ալբերտ Բեռնարդին և Օնիկ Սահակյանը: 1992 թ.-ին պալատի կանոնադրության գրանցման հարցում մեծ ներդրում է ունեցել Ժան Աբրահամյանը: Պալատն աշխատում էր Իրանի հանքերի, առևտրի, և արդյունաբերության պալատին կից²⁸⁰:

Իրան-Հայաստան առևտրական պալատը կազմակերպել է 1997 թ. (մասնակցել է 110 ընկերություն), 2000 թ. (գործադիր շտաբի կազմում էին Լևոն Ահարոնյանը, Ֆերեյդուն Ասքարյանը, Վարուժ Սուրենյանը, Սողոմոն Բարսեղյանը և Միրան Փիրումյանը) և 2003 թ. իրանական արտադրանքների ցուցահանդեսները Երևանում²⁸¹: Ահա թե ինչու ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մոհամմադ Քոլեյնին երկկողմ կապերի զարգացման և ամրապնդման գործում բարձր է գնահատել Լևոն Ահարոնյանի կրած ներդրումները տասնամյակի ընթացքում 1993-2003 թթ.²⁸²:

Նկատենք, որ 1995-2002 թթ. Երևանում տեղի է ունեցել իրանական 7 ցուցահանդես, որից 5-ը կազմակերպել է Իրան-Հայաստան առևտրի պալատը²⁸³: 1998 թ. նոյեմբերի 19-25-ը Երևանում տեղի է ունենում հայ-իրանական գործարար համաժողով: Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արա Վարդանյանը և Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ Լևոն Ահարոնյանը ստորագրում են համագործակցության և գործընկերության մասին պայմա-

²⁷⁹ Տե՛ս «Լոյս», N15, 31 հոկտեմբերի, 2000 թ., էջ 5: Տե՛ս նույնը նաև «Ալիք», 15.12.1988, 22.12.1988:

²⁸⁰ Տե՛ս *Իրանահայոց հանրագիտարան*, Ե., 2012, էջ 141, 423:

²⁸¹ Տե՛ս *Ահարոնյան Լ.*, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 1497, 1512-1519:

²⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 1520:

²⁸³ Տե՛ս Լոյս, N 57-60, սեպտեմբերի 30, 2002, էջ 17:

նագիր, որով հիմք է դրվում այդ կառույցների երկարաժամկետ փոխհարաբերությանը²⁸⁴:

Նշելի է, որ 1996 թ. դեկտեմբերին ԻԻՀ փոխնախագահ Հ. Հաբիբիի Երևան այցելության ընթացքում նրա գլխավորած պատվիրակության կազմում են եղել Իրան-Հայաստան առևտրական պալատի նախագահ Լևոն Ահարոնյանը, Մելինե Փիրումյանը և Ռազմիկ Թովմասը: Իրանական պատվիրակության ղեկավարի հետ հանդիպումից հետո ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Լ. Ահարոնյանին արժանացնում է բարձր գնահատանքի ազգային և հայրենասիրական ծառայությունների համար²⁸⁵: 2001 թ. ապրիլին Իրանի Արդյունաբերության նախարարությունը ևս բարձր է գնահատել Իրան-Հայաստան առևտրի պալատի և նրա նախագահ Լևոն Ահարոնյանի գործունեությունը²⁸⁶: Ի դեպ, Ահարոնյանն անմիջական ներգրավվածություն է ունեցել Իրան-Հայաստան հիմնական կամուրջի կառուցման գործին²⁸⁷:

Այսպիսով, առևտրական պալատը, որի կազմում են գտնվել հայ համայնքի գործիչները, զգալի նպաստ է ունեցել երկկողմ տնտեսական կապերի հիմնադրման և զարգացման գործում: Ցավոք, հայ համայնքի մասնակցությունը միջպետական հարաբերությունների գործընթացին տևական դադարով ընդմիջվեց, երբ ՀՀ-ում սկսվեցին ներքաղաքական խնդիրներ ՀՅԴ կուսակցության հետ: Այդ մասին արժեքավոր է Վահան Բայբուրդյանի հետևյալ վկայությունը. «1993 թ. սկսած իրավիճակը կտրուկ փոփոխության ենթարկվեց: Ինչպես հայտնի է, ՀՀ բարձրագույն ղեկավարության և ԻԻՀ-ում գործող և ազգային-համայնքային մարմինների մեծ մասը իր հսկողության տակ պահող ՀՅԴ կուսակցության միջև հայտնի պատճառներով սկսվեց խոր առձակատում, որը բնականաբար չէր կարող իր

²⁸⁴ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 182, ք. 10:

²⁸⁵ Տե՛ս *Ահարոնյան Լ.*, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 1609-1610:

²⁸⁶ Տե՛ս «Լոյս», N 25-26, ապրիլի 23, 2001 թ., էջ 10:

²⁸⁷ Տե՛ս *Բաղայան Գ.*, Իրան հանրագիտարան, 2011, էջ 51:

բացասական ազդեցությունը չթողնել դեպքում առանց աշխատանքների վրա: Ըստ էության Իրանի հայ գաղթօջախը պառակտվեց: Դեպքում գործունեությունը ենթարկվում էր բոլորովին: Համայնքի մի մասը պաշտպանում էր «Հիշատակություններին, իսկ մյուս մասը դեմ էր»²⁸⁸:

Նշված հարցին հանգամանորեն անդրադարձել է Լ. Ա. հարոնյանը. «Ազգային Իշխանության ընդդիմադիր կեցածքը առաջելու ցայտուն դրսևորվեց Հայաստանի այդ ժամանակաշրջանում Հրանտ Բազրատեանի Իրան կատարած այցի ժամանակ: ... Ցաւօք, այդ հանդիպմանը Ազգային Իշխանութիւնից եւ նրա պատկան մարմինների անդամներից որեւէ մէկը չներկայացաւ»²⁸⁹:

Այսպիսով, զգալիորեն թուլացավ հայ համայնքի աշխույժ մասնակցությունը ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերություններին, թեև շարունակվեց որոշ մասնավոր մարդկանց կողմից գործակցությունը, ինչպիսին է Լևոն Ահարոնյանը և այլոք: 1998 թ. իշխանավորությունից հետո, երբ ՀՀ-ում կուսակցության գործունեությունը ըստ էության վերականգնվեց ՀՀ-ում, համայնքային կառույցները ևս վերսկսեցին իրենց համագործակցությունը հայրենիքի հետ: 2000-ական թթ. սկզբներին համայնքն իր ներուժով ներգրավված էր հայ-իրանական տնտեսական կապերում:

²⁸⁸ Տե՛ս Իսկանդարյան Գ., նշվ. աշխ., էջ 336-339:

²⁸⁹ Տե՛ս Ահարոնյան Լ., նշվ. աշխ., գիրք Բ, էջ 956-962:

ՀՀ-ԻԻՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Տնտեսական հարաբերությունների սկզբնավորումը

ՀՀ-ի արտաքին կապերի զարգացումը չի կարելի լիարժեք համարել առանց ԻԻՀ-ի հետ տնտեսական, հատկապես առևտրական աշխույժ կապեր ծավալելու:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նախկին հանրապետությունները ներքաշվեցին հակամարտությունների մեջ, և ՀՀ-ն, բացի մի քանի երկրների կողմից շարունակվող ոչ մեծ օգնությունից, մնաց միայնակ իր ծանրագույն հոգսերի հետ²⁹⁰: Այդ պայմաններում հայկական կողմի համար մեծացավ իրանական կողմի հետ համագործակցություն սկզբնավորելու հարցը: Այդ մասին են վկայում հետևյալ երկու փաստերը: Նախ 1991 թ. դեկտեմբերին ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Նավասարդյանը դիմում է ԽՍՀՄ-ում ԻԻՀ-ի գործերի հավատարմատար Ալի Ռեզա Բիզգեյլիին, որ նա կազմակերպի ԻԻՀ-ի պատվիրակության այցը Երևան: Երկու պետությունների միջև հարաբերություններ հաստատելու նպատակով²⁹¹: Առաջարկվում էր ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ստեղծել սահմանային անցակետեր, ՀՀ-ի տարածքով դեպի Սև ծով կազմակերպել իրանական բեռնափոխադրումներ, կառուցել Իրան-Եվրոպա գազամուղ օգտագործելով ՀՀ-ի տարածքը և այլն: Հաջորդն այն է, որ 1992 թ. մարտի 28-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ԻԻՀ ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթիի հետ հանդիպմանը հայտնում է, որ ՀՀ-ն չի թաքցնում, որ ԻԻՀ-ի հետ համագործակցության մեջ է տեսնում տնտեսական խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը²⁹²:

²⁹⁰ Տե՛ս Մինասյան Է., Անցյալ-տնտեսական վերափոխումները ՀՀ-ում 1990-2003 թթ., Ե., 2003, էջ 65:

²⁹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 170, թթ. 63-64:

²⁹² Տե՛ս նույն տեղում, գ. 103, թ. 59:

1992 թ. փետրվարի 27-28-ը Երևանում ԻԻՀ ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթին հանդիպում է ունենում ՀՀ ղեկավարության հետ²⁹³: Ծանոթանալով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից տրանսպորտային շրջափակման ենթարկված ՀՀ-ի ծանր վիճակին՝ Վելայաթին շեշտում է, որ այսուհետև ԻԻՀ-ն ՀՀ-ի համար կլինի աշխարհին հաղորդակցվելու ամենակարճ ուղին և վերջինիս այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները²⁹⁴: Հիրավի, այդ այցը նոր թափ է հաղորդում ՀՀ-ԻԻՀ հարաբերություններին, եթե հաշվի առնենք, որ դրանից մեկ տարի անց՝ 1993 թ. ապրիլի 3-ին, Թուրքիան արգելեց իր տարածքով բոլոր տեսակի բեռնափոխադրումները ՀՀ²⁹⁵: Այսպիսով, շրջափակման պայմաններում ԻԻՀ-ը ՀՀ-ի համար դարձավ աշխարհի հետ հաղորդակցվելու բացառիկ հնարավորություն:

ՀՀ-ԻԻՀ տնտեսական համագործակցությունը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝ ա. սկզբնավորում՝ 1991-1994 թթ., բ. զարգացում՝ 1994-1997 թթ., գ. աճի նվազում՝ 1998-2000 թթ., դ. նոր զարգացում՝ 2000-2005 թթ.:

Մինչև միջպետական հարաբերությունների հաստատումը (09 փետրվարի, 1992) տեղի են ունենում մի շարք այցեր²⁹⁶: 1991 թ. մայիսի 6-ին իրանահայ գործարարները Երևանում մասնակցում են 1-ին միջազգային տնտեսական համաժողովին: Նրանք պաշտոնական թեհրանի կողմից գործուղված առաջին բանազնացներն էին և նպատակ ունեին փոխադարձ

ծանոթություն հաստատել անկախության ուղին բռնած ՀՀ-ի հետ: Նույն թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը իր պաշտոնամուտի ելույթում կարևորում է տնտեսական կապերի հաստատումը ԻԻՀ-ի հետ²⁹⁷:

Ակնհայտ է, որ Թուրքիայի բացակայության պայմաններում ԻԻՀ-ն վճռական էր տրամադրված ՀՀ-ի հետ տնտեսական համագործակցություն ծավալելու համար: 1993 թ. հունվարին ԻԻՀ-ի խորհրդարանը որոշում է Արևելյան Ատրպատական նահանգը բաժանել վարչական երկու միավորի՝ Արևելյան Ատրպատական Թավրիզ և Արդեբիլ՝ համանուն կենտրոններով²⁹⁸: ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի որոշմամբ երկրի հյուսիսում ստեղծված այդ նոր՝ Արդեբիլի նահանգի վրա դրվում էր Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների կազմակերպումը: Իսկ ՀՀ-ի և Նախիջևանի հետ նմանատիպ հարաբերություններ վարելը հանձնվում էր ԻԻՀ-ի Արևելյան Ատրպատական նահանգին²⁹⁹:

Կարծում ենք, որ վարչական բաժանմամբ Թեհրանը փորձում էր նվազեցնել Բաքվի կողմից սովորական դարձած ճնշումները (այդ թվում՝ հոգեբանական, «ազգակցական» պարտավորություն աջակցելու Ադրբեջանին ընդդեմ հայերի Արցախում) Արևելյան Ատրպատականի նահանգային իշխանությունների վրա՝ ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերի զարգացմանը չխոչընդոտելու համար: Միաժամանակ Թեհրանը փորձում էր զարգացնել ենթակառուցվածքները երկրի հյուսիս-արևմուտյան ծայրամասային շրջաններում:

1992 թ. փետրվարի 1-ի դրությամբ Ադրբեջանի ձեռնարկած շրջափակման հետևանքով ՀՀ-ին պատճառված ուղղակի կորուստները գերազանցում էին դեռևս շրջանառության մեջ գտնվող 1 մլրդ ռուբլին: ՀՀ-ն բանակցություններ էր վարում

²⁹³ Տես նույն տեղում, թ. 55:

²⁹⁴ Տես **Բայրուրյան Վ.**, Հայ-իրանական հարաբերությունները..., էջ 7:

²⁹⁵ Տես **Չաքրյան Հ.**, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Ե., 1998, էջ 23:

²⁹⁶ 1991 թ. փետրվարի 15-20-ը Երևան է այցելում ԻԻՀ-ի «Մոսբազաֆան և Տանբազան» հիմնադրամի նախագահի տեղակալ Ֆ. Շաբանիանը և հանքերի ու արդյունաբերական կազմակերպության նախագահ Զ. Միրաբբարին: Նույն թվականի նոյեմբերի 9-ին Թավրիզ ու Թեհրան է այցելում Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ Համբարձում Փալստյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին հայ-իրանական «Արիր» առաջին համատեղ ձեռնարկության ներկայացուցիչները:

²⁹⁷ Տես **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 259:

²⁹⁸ Տես **Բաղայան Գ.**, Իրանի պատմության նկարագրող տարեգրություն, Ե., 2007, էջ 190:

²⁹⁹ Տես «Ազգ», 06.02.1993:

ԻԻՀ-ի հետ՝ նրա միջոցով այլընտրանքային ուղիներ գտնելու համար: Այդ նպատակով փետրվարի 8-10-ը Թեհրանում ՀՀ-ի ԱԳ նախարար Րաֆֆի Հովհաննիսյանը և ԻԻՀ-ի արդյունաբերության և ֆինանսների նախարար Մոհսեն Նուրբախշը քննարկում են կամուրջի կառուցման, էներգետիկայի և այլ հարցեր³⁰⁰:

Այսպիսով, երկկողմ հարաբերությունների սկզբում կարիք էր զգացվում հստակեցնել տնտեսական օրակարգը, սահմանել առաջնահերթ խնդիրները:

Հարկ է նշել, որ ՀՀ տնտեսական քաղաքականության մեջ կարևորվում էր միջազգային ցուցահանդեսներին մասնակցությունը, քանի որ այն դիտարկվում էր շրջափակման մեջ հայտնված հայկական տնտեսության համար՝ որպես ելք արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու տեսակետից: Ահա թե ինչու ԻԻՀ-ում կազմակերպված նման միջոցառումներին հայկական կողմը ձգտում էր բաց չթողնել դրանք: Այդ մասին է վկայում այն, որ 1992 թ. մարտի 1-ին Թեհրանում կողմերի միջև կնքված համաձայնագրով նույն թվականի ապրիլի 21-26-ը ՀՀ մի շարք ձեռնարկություններ մասնակցում են Թեհրանի տեխնիկայի, էլեկտրոնիկայի և համակարգիչների 2-րդ միջազգային ցուցահանդեսին: Հայկական տաղավար են այցելում 300 ֆիրմաների ներկայացուցիչներ, որոնց հետ ձեռք է բերվում պայմանավորվածություն համագործակցելու վերաբերյալ³⁰¹: Ցուցահանդեսին պետք է մասնակցել նաև ՀՀ առևտրի և արդյունաբերության պալատի «Յունիստերվիս» ֆիրման, որը, սակայն ստորև նշված պատճառով³⁰², բացումից մեկ

շաբաթ առաջ դադարեցնում է ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքները³⁰³: 1991 թ. դեկտեմբերի 1-ին ԱՄԷ-ի Շարժա քաղաքում կողմերի միջև ստորագրված համաձայնագրով 1992 թ. մայիսին Երևանում բացվելու էր իրանական ապրանքների ցուցահանդես³⁰⁴: Սակայն բացումից մեկ շաբաթ առաջ իրանական կողմը հրաժարվում է մասնակցել դրան: Այդ պայմանավորված էր հայկական զինուժի կողմից Շուշիի ազատագրմամբ:

1992 թ. հոկտեմբերի 2-10-ը Թեհրանում կայանալիք ցուցահանդեսին հայկական կողմի մասնակցության հարցը և խնդրահարույց էր, քանի որ ՀՀ-ի հրավերն ուղարկվել էր ուշացումով: 1992 թ. օգոստոսի 26-ին ՀՀ ԱԳՆ-ն դիմում է ԻԻՀ դեսպանությանը, սակայն ապարդյուն: Հայկական կողմը խնդրում էր հստակեցնել վճարումների չափը՝ առաջարկելով Երևանի ցուցահանդեսում փոխադարձաբար տարածքներ տրամադրել անվճար³⁰⁵: Իրանական կողմը մերժում է այդ առաջարկը՝ նշելով, որ պայմանները բոլոր երկրների համար միևնույնն են և ԻԻՀ-ն բացառություն չի անի: Իրականում տնտեսական բնույթի հարցերը ԻԻՀ-ը պայմանավորում էր Արցախի ձակատում ռազմական գործողություններով:

Կողմերի միջև կնքված պայմանագրով 1993 թ. հունիսի 21-28-ը Երևանում տեղի է ունենում ԻԻՀ-ի արտադրանքի ցուցահանդես³⁰⁶, որին մասնակցում է իրանական 60 ընկերություն³⁰⁷: Ի պատասխան Երևանում կազմակերպված ցուցահան-

4-ին և 6-ին ֆիրման հեռագիր է ուղարկում ԻԻՀ-ի առևտրի փոխնախարար Հ. Թարաթաբային հաստատելու 150 մ² տարածքի անվճար տրամադրումը ՀՀ-ին: Իրանական կողմը ապրիլի 7-ին պատասխանում է, որ միայն 12 մ² տարածք է հատկացվել, որը ցուցահանդեսի ժամանակ փոխարինվում է 24 մ²: Փաստորեն ՀՀ-ի մասնակցությունը սահմանափակվում է խորհրդանշական ներկայությամբ:

³⁰³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, գ. 1, գ. 127, թթ. 6-9:

³⁰⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, գ. 9, գ. 84, թ. 60:

³⁰⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 170, թ. 26, նույն տեղում նաև գ. 84, թ. 61:

³⁰⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 827, գ. 1, գ. 139, թթ. 1-2:

³⁰⁷ Դրանց ցուցադրման համար հատկացվել էր 2000 մ² տարածք Երևանի մարզահամերգային համալիրում: ԻԻՀ-ից ներմուծվել էին 149 տ քեռներ՝ 205

³⁰⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 32, թ. 24-25:

³⁰¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 827, գ. 1, գ. 127, թթ. 47-48:

³⁰² ՀՀ արդյունաբերության նախարարության պատվիրակությունը մեկնում է ԻԻՀ մասնակցելու ցուցահանդեսին հաշվի առնելով նրա քաղաքական և տնտեսական նշանակությունը: «Յունիստերվիս» ֆիրման կատարել էր աշխատանքների 60%-ը, բայց իրանական կողմը չէր տալիս անգամ հրավիրող կողմի հասցեն: Երկկողմ պայմանավորվածությամբ ՀՀ-ում իրանական ապրանքների ցուցահանդեսը կազմակերպվելու էր հայկական կողմի հաշվին: 1992 թ. ապրիլի

դեսի՝ նույն թվականի օգոստոսի 21-27-ին ՀՀ արդյունաբերության նախարար Աշոտ Սաֆարյանի մասնակցությամբ Թեհրանում տեղի է ունենում ՀՀ-ի արտադրանքի առաջին ցուցահանդեսը, որին մասնակցում է հայկական 53 ձեռնարկություն: Արցախի հակամարտության թեժ պահին Թեհրանում ՀՀ-ի ցուցահանդեսի կազմակերպումը արտառոց երևույթ էր: Հասարակական շրջանակները կարծում էին, որ իրանական կողմը թույլ չի տա այն բացելու: Ցուցահանդեսի աշխատանքները լուսաբանվում էին՝ չորրորդելով ավելորդ կրթեր: Այնուհանդերձ տեղի էր ունեցել միջադեպ մի աղբրեջանցու հետ, որին ոստիկանությունը մեկուսացրել էր: Հարկ է նշել, որ ստորագրվում է ավելի քան 20 համաձայնագիր³⁰⁸: Փաստորեն, իրանական կողմը սկսել էր ուշադրություն չդարձնել Բաքվի սադրանքներին:

Ինչ վերաբերում է Թեհրանի 19-րդ միջազգային ցուցահանդեսին, ապա 1993 թ. սեպտեմբերի 30-ին Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը որոշում է չմասնակցել դրան, քանի որ մեկ ամիս առաջ հայկական կողմը Թեհրանում կազմակերպել էր ցուցահանդես և շուտով մասնակցելու էր ԱՄԷ-ի ցուցահանդեսին³⁰⁹:

Այսպիսով, տնտեսական կապերի մեկնարկին հայկական կողմը, թեև աղբրեջանական սադրանքների պայմաններում, դժվարությամբ կարողացավ մասնակցել իրանական միջազգային ցուցահանդեսներին, որոնք տվյալ պահին ունեին կարևոր նշանակություն իրանցի և այլ գործարարների հետ կապեր հաստատելու ուղղությամբ:

հազար դոլար արժողությամբ, որի մոտ կեսը կազմում էին տաղավարի հավաքովի տարրերը: Փաստորեն, լրացուցիչ ապրանքները գերակշռում էին վաճառքի ենթակա ապրանքներին: Վաճառված ապրանքներից որպես հավելյալ արժեքի վճար գանձվում է 3600 դոլար: Ցուցադրված ապրանքների մեծ մասը չվաճառվեց, և 151 հազար դոլար արժողությամբ արտադրանք վերադարձվեց ԻԻՀ կամ նվիրվեց պետական ձեռնարկություններին:

³⁰⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 118-120:

³⁰⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թ. 2:

2.2. Կենսապահովման միջոցների մատակարարման հարցը

Շրջափակման և պատերազմի պայմաններում ՀՀ բնակչության համար գոյատևման խնդիր էր դարձել այլուրի պակասուրդը: 1992 թ. նոյեմբեր ամսին հայկական կողմը մեծ ուշադրություն էր դարձնում ԻԻՀ-ով անցնող ճանապարհին: Նախատեսվում էր, որ այլուրի մի մասը ՀՀ-ն ստանալու էր Պարսից ծոցով, ԻԻՀ-ի տարածքով³¹⁰:

Վերոնշյալով հանդերձ, 1992 թ. սեպտեմբերին ՀՀ-ն նախընտրեց հացահատիկ գնել Թուրքիայից, այլ ոչ ԻԻՀ-ից չնայած ԻԻՀ նախագահի և ՀՀ-ի ԱԳ նախարարի միջև ձեռք բերված պայմանավորվածությանը: Մինչդեռ Նախիջևանը գրեթե ԻԻՀ-ի հաշվին էր ապրում. ԻԻՀ-ից ստացած վառելանյութի մի մասը Թուրքիա էր տեղափոխվում³¹¹: Հետագայում Վելայաթին հաստատում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո իրենք Աղբրեջանից դիզվառելիք են գնում և Նախիջևանին գազ տալիս (27-28 հուլիսի, 1997 թ., «Արար» օրաթերթ)³¹²:

1992 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանն այլուրի հարցով բանակցություններ է վարում ԻԻՀ-ի մթերումների նախարարության հետ³¹³: Սակայն այլուրի առաքման գործը հետաձգվում էր, քանզի պայմանագրով նախատեսված էր գումարը վճարել կանխիկ կամ եվրոպական բանկերում գրավ դնել համապատասխան արժեքներ, ՀՀ-ն պետք է 7 մլն դոլարի նախնական մուծում կատարեր, ինչը ծայրահեղ դժվար էր, քանզի շրջափակման պատճառով արդյունաբերությունը չէր աշխատում, և պետությունը գտնվում էր դրամական անմխի-

³¹⁰ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 322:

³¹¹ Տե՛ս Բեգիջանյան Է., Իրանի աշխարհայնաբանական դիրքը և Հայաստանը, Ե., 1995, էջ 17:

³¹² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 169, թ. 47:

³¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 173, թթ. 1-6:

թար վիճակում: Հայկական կողմն ԻԻՀ-ի կառավարությունից խնդրում է կարճաժամկետ վարկ պայմանագրով նախատեսված այլուրը կամ նրա մի մասը գնելու համար³¹⁴: Շրջանառվում էր նաև մեկ այլ տարբերակ. ԻԻՀ-ն ՀՀ-ին ցորեն է տալիս Մեդրիի տարածքով և փոխարենը ետ ստանում Պարսից ծոցում: Վերջին տարբերակն ավելի իրատեսական էր, բայց համաձայնության մասին Երևանից պատասխան չէր ստացվում:

ԻԻՀ-ը հետխորհրդային հանրապետություններում հիմնել էր վաճառատներ, որտեղ վաճառվում էին իրանական ապրանքներ: 1992 թ. հոկտեմբերի 31-ին Վահան Բայբուրդյանն առաջարկում էր Բահրամ Ղասեմիին Երևանում ևս բացել նման խանութներ, որոնք կխթանեին դանդաղ զարգացող առևտրական կապերը: Ղասեմին հայտնում է, որ պատրաստ են վաճառատուն բացել Երևանում: Նրա խոսքով՝ հայկական կողմը պետք է ընդունի ԻԻՀ-ի ներքին որոշ դժվարություններ և շատ հարցեր մեկնաբանի այդ տեսանկյունից: Նա նշում է, որ երկ-կողմ հարաբերությունները պետք է ունենան անշեղ և հետևողական զարգացում, սակայն այդ ամենը պետք է կատարվի առանց աղմուկի և ավելորդ քարոզչության³¹⁵: Փաստորեն, խուսափելով ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերը քարոզչության ենթարկելուց՝ Թեհրանի նպատակն էր չեզոքացնել Բաքվի հակադեցությունը:

Անուրանալի է, որ Արցախի պատերազմի տարիներին մինչև 1994 թ. մայիս ամիսը, ԻԻՀ-ն դարձավ ՀՀ-ին սննդամթերքի և նավթամթերքի մատակարարը (մոտ 100%), հատկապես ձմռան ամիսներին: Այդ է վկայում 1992 թ. հոկտեմբերի 26-ին ԻԻՀ-ի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի գումարած խորհրդակցությունը, որտեղ նա հայտնում է, որ բացի գենի արգելքից ոչ մի խոչընդոտ չպետք է լինի կամրջով ՀՀ-ի հետ առևտրի ու ապրանքափոխանակության գործում: Ընդ որում խիստ

զգուշացրել էր, որ կարգադրությունը չկատարողները անմիջապես կբերվեն Թեհրան՝ պատասխանատվության ենթարկելու համար³¹⁶: Հիրավի, ՀՀ բնակչության համար տվյալ պահին այդ որոշումն ուներ կենսական, իսկ այսօր՝ պատմական նշանակություն: Մյուս կողմից, իրանական կողմը արդարացիորեն մտահոգված էր, որ հնարավոր է որոշ անձինք քաղաքական ինչ-ինչ նպատակներով փորձեն սադրանքի ենթարկել այդ որոշումը, որի բացառման ուղղությամբ էլ իրավական մեխանիզմներ էին գործի դրվում:

1992 թ. նոյեմբերի 11-15-ը Երևանում Բահրամ Ղասեմին ՀՀ ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում տեղեկացնում է ՀՀ այլուր առաքելու վերաբերյալ համաձայնագրի կատարման մասին³¹⁷: Տեղին է նշել, որ ԻԻՀ-ը հացահատիկ ներմուծող երկիր է և օրենքով արգելված է ցորենի կամ այլուրի արտահանումը: Սակայն ԻԻՀ իշխանությունները նախագահ Ռաֆսանջանիի վերոնշյալ իրահանգով և խորհրդարանի համապատասխան հանձնաժողովի վավերացմամբ արտոնում են այլուրի վաճառքը ՀՀ-ին:

Այսպիսով, և տնտեսական, և քաղաքական տեսանկյունից այլուրի վաճառքի արտոնումը ՀՀ-ին կարևոր ձեռքբերում էր և գնահատելի որոշում:

Իրանական կողմի բարյացակամության պայմաններում 1992 թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը ՀՀ պետնախարար Վիգեն Զիթեջյանը բանակցում է Արևելյան Ատրպատականի նահանգապետ Ա. Ալիզադեի հետ: Իրանական կողմը պատրաստակամություն է հայտնում կազմակերպելու պարենամթերքի ու էներգակիրների ապրանքափոխանակություն: ԻԻՀ-ն կարող էր ՀՀ ուղարկել օրական 200 տ այլուր³¹⁸: Միաժամանակ իրանական կողմը համաձայնվում է 15 օրը մեկ

³¹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 84, թթ. 103-106:

³¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 173, թ. 105:

³¹⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 6:

³¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 84, թ. 105:

³¹⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 1, գ. 283, թթ. 14-16:

1000 տ մագուխ մատակարարել ՀՀ³¹⁹: ՀՀ էներգետիկայի ու վառելիքի նախարարության և Թեհրանի Հայ Կաթողիկե եկեղեցու միջև կնքված պայմանագրով ՀՀ պետք է արտահանվեր իրանական մագուխ: 1993 թ. սեպտեմբերի 30-ին Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը որոշում է հավանություն տալ այդ պայմանագրի իրականացմանը³²⁰: Մագուխն անհրաժեշտ էր կաթվածահար վիճակում հայտնված ՀՀ տնտեսության համար:

Ինչ վերաբերում է 1992 թ. դեկտեմբերի 22-25-ը ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի՝ Թեհրան այցելությանը, ապա պետք է նշել, որ նա համապարփակ բանակցություններ է վարում ԻԻՀ-ի ղեկավարության հետ³²¹: Գագիկ Հարությունյանը և Մոհսեն Նուրբախշը ստորագրում են ՀՀ-ի պատվիրակության այցի արդյունքների մասին արձանագրություն, որով հաստատում են կողմերի միջև մինչ այդ ստորագրված 21 փաստաթղթերի, այդ թվում՝ մաքսային և առևտրատնտեսական պայմանագրերի գործադրելիությունը: Իրանական կողմը համաձայնվում է, որ ՈՂ-ից ԻԻՀ-ի ենզելի նավահանգիստ հասցրած վառելանյութը և հացահատիկը ԻԻՀ-ի տարածքով տեղափոխվի ՀՀ: 1993 թ. հունվարի 29-ին ԻԻՀ-ից ՀՀ է մտնում վառելանյութի առաջին խմբաքանակը³²²:

Այսպիսով, իրանական կապուղիներով ՀՀ-ն հնարավորություն է ստանում ՈՂ-ի հետ կապ հաստատելու, ինչպես նաև բեռնափոխադրումներ կազմակերպելու համար:

1992 թ. դեկտեմբերի 25-ին Թավրիզում Արևելյան Ատրպատականի նահանգապետ Ա. Ալիզադեն և ՀՀ տրանսպորտի նախարար Հենրիկ Քոչինյանն ու ՀՀ էկոնոմիկայի նախարար Միրոն Շիշմանյանը ստորագրում են համագործակցության վե-

³¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 173, թ. 2:

³²⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 827, ց. 1, գ. 137, թ. 29:

³²¹ Տե՛ս «Ազգ», 29.12.1992:

³²² Տե՛ս **Բեզիջանյան Է.**, Իրանի աշխարհաքաղաքական դիրքը և Հայաստանը, էջ 17:

րաբերյալ պայմանագիր³²³: Պայմանագրով նահանգապետարանն ենզելի նավահանգստում ընդունելու էր ՀՀ-ին պատկանելիք ամսական 35 հազար տ ցորեն և այն վերածելով այլուրի, Ջուլֆայում հանձնելու էր ՀՀ-ին: Թավրիզում կազմված հանձնախումբը ճշտելու էր հացահատիկ աղալու և դրա փոխադրման ծախսերը, վճարման ձևերը: Երկրորդ հոդվածով ՀՀ-ն 35 հազար տ դիզվառելիք (5 օրը մեկ 2500 տ տարողությամբ նավ) հանձնելու էր նահանգապետարանին՝ Կասպից ծովի ենզելի կամ այլ նավահանգստում՝ սկսած 1993 թ. հունվարի 15-ից: Նահանգապետարանը բեռը ստանալուց 2 օր անց ՀՀ-ին պետք է հանձներ օրական 200-300 տ դիզվառելիք Ջուլֆայում:

Փաստորեն ԻԻՀ-ն ստանձնեց կենսապահովման առաջին միջոցների, ինչպես նաև վառելանյութի մատակարարման կարևոր գործը ՀՀ-ին: Այդ աշխատանքների մեջ ևս որոշակի ներդրում է ունեցել իրանահայ համայնքը:

1992 թ. դեկտեմբերի 31-ին իրանահայ Հ. Հովանյանի և նրա ընկերակիցների միջոցով որպես նվիրատվություն ՀՀ է ուղարկվում 50 տ, իսկ 1993 թ. հունվարին ևս 50 տ այլուր և որոշակի քանակությամբ բենզին: 1991 թ. սկսած Իրանի հայ ավետարանական եկեղեցին նյութական աջակցություն է ցուցաբերում ՀՀ-ի առանձին կառույցների³²⁴: 1993 թ. հունվարի 11-ին Թեհրանի հայոց թեմի թեմական վարչությունը Թավրիզից Մեդրի է ուղարկում 500 տ այլուր և 100 տ ածուխ, այնուհետև ևս 5500 տ այլուր, 60 տ արմավ և 20 տ պահածոներ³²⁵: Հայրենիքին օգնելու հարցում իր մասնակցությունն ունեցավ նաև ԱՄԷ-ի հայ համայնքը, որի հանգանակած 21 հազար դոլարով Վահան Բայբուրդյանը 100 տ այլուր է գնում և ուղարկում ՀՀ³²⁶: 1993 թ. հունվար-փետրվարին իրանահայ համայնքի հանգա-

³²³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 6-7:

³²⁴ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը, էջ 69:

³²⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 9-10:

³²⁶ Տե՛ս նույն տեղում, թթ. 11-12:

նակած միջոցներով (18.900 դոլար) հայրենիք է առաքվում 90 տ ալյուր³²⁷։ Պատգամավորական ժողովի առաջարկով Թեհրանի Հայոց թեմական խորհուրդը 1993 թ. ՀՀ-ին օգնություն հատկացնելու համար Լևոն Ահարոնյանի պատասխանատվությամբ շտապ օգնության հանձնաժողով է ստեղծում, որը 30 մլն իրանական ռիալ է հավաքում։ Իրանի Կարմիր մահիկը տրամադրում է երկու օդանավ գնված մթերքը ՀՀ փոխադրելու համար։ Հաջորդ օգնության պատասխանատուն Նորայր Մելքոնյանն էր, որը հավաքում է 6 մլն իրանական ռիալ, որով սննդամթերք է գնում և Թեմական խորհրդի անդամների միջոցով բաժանում Մեղրիի ու Ագարակի շրջաններում³²⁸։

Վերոնշյալ թվային տվյալները փաստում են, որ հայիրանական բարեկամությունը գործնականում արտահայտվել է օրհասական պահերին։

Այդուհանդերձ, ՀՀ-ի տնտեսությունը շարունակում էր մնալ կաթվածահար վիճակում։ 1992 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ-ի ԱԳՆ-ն Մոսկվայում գտնվող Մերձավոր և Միջին Արևելքի երկրների դեսպանություններ է ուղարկում ՀՀ նախագահի «Արտակարգ դիմումը» ուղղված աշխարհի բոլոր ժողովուրդներին ու պետություններին դեկավարներին³²⁹։ Դիմումում կոչ էր արվում պարեն և դիզավառելիք հասցնել ՀՀ։ Մարդասիրական օգնություն ստանալու նպատակով ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը հեռախոսազրույց է ունենում ԻԻՀ-ի էկոնոմիկայի և ֆինանսների նախարար Մոհսեն Նուրբախշի հետ։ 1993 թ. փետրվարի 17-ին իրանական կողմը հայտնում է, որ ԻԻՀ-ի կառավարությունը հայ համայնքի միջոցներով ձեռք է բերել 1000 հատ «Ալադին» տիպի վառարան և նավթ, որը որպես պետական օգնություն պետք է ուղարկվի ՀՀ։ Վառարաններն ուղարկվում են դպրոցականներին Թեհրան տեղափոխող ինք-

³²⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 13։

³²⁸ Տե՛ս «Լոյս», N13, 30 սեպտեմբերի, 2000 թ., էջ 12։

³²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 27, թթ. 78-88։

նաթիռով, իսկ նավթն ուղարկվում է Թավրիզից³³⁰։

Հարկ է նկատել, որ Արցախի պատերազմի տարիներին ՀՀ-ն առևտուր անելու փորձ ձեռք բերեց ՌԴ-ի և Թուրքմենստանի հետ ԻԻՀ-ի միջոցով։ Այդ մասին է վկայում 1993 թ. հունվարի 13-ին ՀՀ-ի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Հրանտ Բագրատյանի հրավիրած խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվում է ՌԴ-ի Մախաչկալա և Թուրքմենստանի Կրասնովոդսկ նավահանգիստներից ԻԻՀ-ի էնգելի նավահանգիստ ցորենի, նավթամթերքի և այլ պարենային ու արդյունաբերական ապրանքների փոխադրման կազմակերպչական հարցերը³³¹։

Նշված հարցին է վերաբերվում նաև այն, որ 1993 թ. հոկտեմբերի 25-ին Հրանտ Բագրատյանը հանդիպում է ԻԻՀ-ի գործերի հավատարմատար Սիմադ Սոբհանին։ ՀՀ փոխադրվելիք հացահատիկի մեծ մասը կուտակվել էր Բաթում նավահանգստում, որը ՀՀ տեղափոխելու համար խոչընդոտում էր Կրաստանի ներքին իրավիճակը։ Հայկական կողմը խնդրում է, որ ԻԻՀ-ի կառավարությունը ՀՀ-ին հատկացնի 10-20 հազար տ ալյուր։ հատուցումն այլուրով 1-1,25 հարաբերությամբ։ Սոբհանին հայտնում է, որ ԻԻՀ-ը պատրաստ է համագործակցել, և ՀՀ-ն կարող է օգտագործել ԻԻՀ-ի տարածքը³³²։ Փաստորեն, կողմերի միջև գրանցվել են հաջողված գործարքներ։

Հիրավի, տնտեսական կապերի զարգացմանը նպաստեց դեռևս 1992 թ. նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը, որի նախագահն էր ի պաշտոնե ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, իսկ փոխնախագահը՝ Թելման Տեր-Պետրոսյանը։ Հաշվի առնելով այդ հանձնաժողովի նշանակությունը ի սկզբանե այն ուներ միջպետական հանձնաժողովի բարձր կարգավիճակը։ Հետագայում այն իջեցվում է որպես կառավարությանը ենթակա հանձնաժողովի կարգավիճակի

³³⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 178, թ. 1։

³³¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1177, ց. 1, գ. 13, թթ. 4-5։

³³² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 133-134։

բյուրոկրատական քաշքշուկներից խուսափելու նպատակով:

1993 թ. հունիսի 17-ին և հուլիսի 8-ի Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը քննարկում է դիգ-վառելիքի և ալյուրի ներկրման, սահմանային առևտրի կազմակերպման հարցերը³³³: Ալյուրի և դիգվառելիքի առաքման հարցով Թավրիզ է մեկնում Պառնիկ Բադալյանը, իսկ Արևելյան Ատրպատականի փոխնահանգապետ Խաթիրին ցանկություն է հայտնում հուլիսի 24-ին նշված հարցի շուրջ բանակցություններ վարելու նպատակով այցելել ՀՀ³³⁴: Սահմանամերձ առևտրի և վառելիքի տեղափոխման հարցերը քննարկում են 1993 թ. հոկտեմբերի 10-ին ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության խորհրդական Գրիգոր Առաքելյանը և Իրանա-հայկական հանձնաժողովի նորանշանակ համանախագահ Նուրբախշը³³⁵: ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանի խոսքով՝ «Չափազանց բարձր գնահատելով սահմանին առևտրի զաղափարը՝ մենք նույնիսկ մի քանի անգամ հանձնաժողովի նիստերը կազմակերպեցինք Թավրիզում, Զուլֆայում»³³⁶: Հիրավի, սահմանամերձ առևտուրը նպաստում էր տնտեսական և ընդհուպ կենցաղային նշանակության բազմաթիվ խնդիրների լուծմանը:

Այսպիսով, Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովի ստեղծմամբ համակարգված բնույթ ստացավ երկկողմ առևտուրը:

2.3. Մտահոգիչ երևույթներ

1990-ական թթ. սկզբներին ԻԻՀ-ՀՀ տնտեսական հարաբերություններում կային մտահոգիչ երևույթներ: Այդ մասին է վկայում 1993 թ. ապրիլի 9-ին ՀՀ գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանի հրատապ հարցերով դիմումն ԱԳ նախարար Վահան Փափազյանին³³⁷: ՀՀ-ից ապրանքների հոսքն ԻԻՀ գերազանցում էր ԻԻՀ-ից ՀՀ ներմուծված ապրանքների քանակը, ինչն աղետալի հետևանքներ ուներ նորանկախ ՀՀ-ի համար: Մասնավոր անձանց կողմից տեղի էր ունենում ոչ թե տնտեսական, այլ ՀՀ-ն կողոպտելու մրցակցություն: Բերենք մի քանի փաստեր.

Իրանցի վաճառականները ՀՀ-ից արտահանության համար ապրանքներ էին ձեռք բերում խորհրդային ռուբլով և ոչ թե տարադրամով, որն անթույլատրելի էր, քանզի այդ ճանապարհով հարստությունը երկրից հոսում էր դուրս: Շատերն ԻԻՀ-ից ապրանքներ էին արտահանում Ադրբեջան, այնտեղ վաճառում և ձեռք բերած ռուբլով ՀՀ-ում գնում բազմապիսի ապրանքներ, արտահանում ԻԻՀ կամ այնտեղից այլ երկրներ: Ուստի, անհրաժեշտ էր, որ օտարերկրյա վաճառականները ՀՀ-ի հետ առևտուր անեին ապրանքափոխանակության սկզբունքով կամ տարադրամով, բայց ոչ մի դեպքում ռուբլով:

Հաջորդ խնդիրն այն էր, որ ԻԻՀ-ից ՀՀ բեռն ուղարկողն անմիջապես ՀՀ մուտքի վիզայով հայտնվում էր ՀՀ տարածքում, ստանում իր իսկ ուղարկած բեռը և այնուհետև այն վաճառում իր ուզած գնով, ում որ ցանկանա: Արդյունքում գներն արհեստականորեն բարձրանում էին:

Արտահանության համար ՀՀ-ում վաճառվող ապրանքների գները կայուն չէին, այսինքն՝ միևնույն ապրանքն օտարերկրյա վաճառականներին վաճառվում էր տարբեր գներով: Եղել են դեպքեր, որ վաճառվել է իր իրական արժեքի ընդամեն-

³³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 6-9:

³³⁴ Տե՛ս նույն տեղում, թթ. 10-15:

³³⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 293, թթ. 138-139:

³³⁶ Տե՛ս Իսկանդարյան Գ., նշվ. աշխ., էջ 281:

³³⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թթ. 16-18:

նը ¼-ին համապատասխանող գնով: Իրանցի գնորդները հապաղում էին հայկական ապրանքներ գնել ենթադրելով, որ առաջիկայում այդ նույն ապրանքները կարելի կլինի ձեռք բերել ավելի էժան: Սրա հետևանքը լինում էր այն, որ ՀՀ-ի ապրանքային շուկայի նկատմամբ կասկածանքով էին վերաբերվում: Ակնհայտ է, որ այդ մեխանիզմի հիմքում անբարեխիղճ մարդկանց անձնական շահն էր:

Կարևոր է նշել, որ իրանական մաքսատուներն այդ ապրանքները գնահատում էր միջազգային կամ իր շուկայի գներով, մինչդեռ հայ վաճառականները վաճառում էին «ինչ գնով որ պատահի» սկզբունքով: Փաստորեն, նախապես չէին ստուգվում ապրանքների միջազգային միջին արժեքները, որի հետևանքով էլ հաշվի չէին առնվում նաև հայկական ապրանքների որակը, մրցունակությունը և ըստ այնմ չէր որոշվում նրա գինը: Իհարկե, գնագոյացման աննշան տարբերություններ հնարավոր էին, բայց որ միևնույն ապրանքը վաճառվի, օրինակի համար, 100 ռուբլով կամ 2000-ով, բնական չէր:

Առկա էին փաստեր, երբ իրանցի գործարարները ՀՀ-ի գործարաններից գնում էին հաստոցներ, սարքավորումներ և այլն, դրանք վերավաճառում կամ դուրս բերում ՀՀ-ից: Բոլոր գործարանները քանդում, ավերում և վաճառում էին: Առհասարակ, պետք է արգելվեր պետական սեփականություն հանդիսացող որևէ սարքավորման արտահանումը, իսկ մասնավոր անձանց պատկանող սարքավորումների վաճառքի նպատակով արտահանումը պետք է գտնվեր պետական հսկողության տակ:

ՀՀ-ի կողմից վաճառվող պղնձի և մոլիբդենի խտանյութը ևս գնում էին իրանցի վաճառականները: Այս ոլորտում առկա սխալը գալիս էր հայկական կողմից, իրանցի որոշ առևտրականներ օգտվում էին պատեհ առիթից:

ԻԻՀ արտահանվող ապրանքների փաստաթղթերում գրվում էր միայն ապրանքի կշիռը, որը սխալ էր: Պետք է գրվեին ապրանքի նետտո (զտաքաշ) և բրուտտո (անզուտ,

տարայով հանդերձ ապրանքի քաշի մասին) կշիռները, այլապես կրկին բացվում էր կեղծիքներ կատարելու հնարավորություն: Հաստոցներ և մեքենաներ վաճառելու դեպքում փաստաթղթերում չէր նշվում հաստոցի կամ սարքավորման անունը, քանակը, կշիռը:

Արդյունաբերական ձեռնարկությունները սեփականաշնորհելիս դրանց ունեցվածքի պահպանման ուղղությամբ, բավարար չափով հոգ չտարվեց, որի հետևանքով մետաղյա թանկարժեք, այդ թվում նորագույն սարքավորումները, ջարդոնի անվան տակ, վաճառվեցին ԻԻՀ-ում: Դա ծանր հարված հասցրեց տնտեսությանը³³⁸:

Բարվոք չէր վիճակը նաև մաքսային ոլորտում: ԻԻՀ-ի մաքսատները հինգշաբթի և ուրբաթ օրերը չէին աշխատում, իսկ ՀՀ-ի մաքսատները՝ շաբաթ և կիրակի³³⁹: Ստացվում էր, որ ապրանքափոխանակություն կարող էր կատարվել շաբաթական միայն երեք օր, որը խոչընդոտում էր տնտեսական կապերի զարգացմանը:

Այսպիսով, արտաքին առևտրի բնագավառում առկա էին և՛ օրենսդրական դաշտի, և՛ կազմակերպչական հարցեր, որոնք զգալի վնաս էին պատճառում հայրենական տնտեսությանը:

Տնտեսական գործակցության համար նպաստավոր չէր ՀՀ կառավարության արտաքին առևտրի ազատական բեժմի քաղաքականությունը, որը թերևս ժամանակավրեպ էր: Գործում էին արտահանման տարիֆային (արտադրանքի գների կառուցման ձև) կարգավորում չունեցող ՀՀ կառավարության 1993-1995 թթ. որոշումները:

1993 թ. հունիսի 3-ին Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը քննարկում է ՀՀ ներկրված և մեծ

³³⁸ Տե՛ս Մինայան Է., ՀՀ սեփականաշնորհման քաղաքականությունը տնտեսության ոլորտում 1991-2005 թթ., Ստեփանակերտ, Մեսրոպ Մաշտոց համալսարան, կրտսու 2, գիտական հոդվածների ժողովածու, 2007, էջ 18:

³³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թթ. 17-18:

պահանջարկ ունեցող շեսուրսների էժան գներով ՀՀ-ից արտահոսքի հարցը³⁴⁰: Հանձնաժողովը որոշում է առաջարկել ՀՀ կառավարությանը՝ դադարեցնել մետաղների, դրանց ջարդոնների, ՀՀ-ում չարտադրվող քիմիական նյութերի արտահանման արտոնագրերի տրամադրումը և դրանց ու ներմուծված սարքավորումների՝ ՀՀ-ից արտահանումը մինչև կառավարության կողմից հարցի կարգավորումը:

ՀՀ կառավարության 1995 թ. հունվարի 17-ի որոշմամբ վերացվեցին արտահանման-ներմուծման թույլատրագրերն արտահանվող և ներմուծվող բոլոր ապրանքների (բացառությամբ դեղամիջոցների և պաշտպանական նշանակություն ունեցող արտադրանքի) նկատմամբ³⁴¹:

Հաշվի առնելով մետաղների արտահանման նկատմամբ պետական հսկողության անհրաժեշտությունը պայմանավորված ներքին շուկայական ցածր պահանջարկով և ապրանքները միջազգային գներից ավելի ցածր՝ «դեմպինգային» գներով արտահանումը կանխարգելու նպատակով, որպես սահմանափակիչ միջոց պահպանվեց տարիֆային (հարկացուցակի) կարգավորման մեկ այլ ձև՝ մետաղների արտահանման համար հսկիչ գների սահմանումը: ՀՀ-ից գումավոր մետաղների (ջարդոն և թափոն) արտահանման ծավալը 1994 թ. կազմել է 2870 տ 1 մլն 782 հազար դոլար ընդհանուր գումարով՝ 1993 թ. 1 մլն 112 հազար դոլար՝ 1813 տ դիմաց: Այլ կերպ ասած՝ 1993 թ. 1 տ վաճառվել է 613 դոլարով, իսկ 1994 թ. 1 տ՝ 621 դոլարով: Թանկացումը 1993-ի համեմատ 1994-ին կազմել է ընդամենը 1%: 1994 թ. արտահանվել է 370 տ գումավոր մետաղ և 2534 տ սև մետաղ: Սև մետաղների արտահանման ծավալը 1994 թ. կազմել է 18513 տ 1 մլն 382 հազար դոլար ընդհանուր գումարով 1993 թ. 329 հազար դոլարի՝ 4700 տոննայի

դիմաց³⁴²: Այսպիսով, ՀՀ-ից մետաղների ընդհանուր արտահանման ծավալը 1994 թ. կազմել է 3 մլն 164 հազար դոլար 1993 թ.՝ 1 մլն 441 հազար դոլարի դիմաց:

Այսպիսով, 1992-1994 թթ. աստիճանաբար ձևավորվում է ՀՀ-ԻԻՀ տնտեսական համագործակցություն, որն իր կենսական նշանակությամբ հանդերձ ուներ իրավական և կազմակերպչական բնույթի բազմաթիվ բացթողումներ: Շնորհիվ ԻԻՀ-ի ղեկավարության այն չենթարկվեց քաղաքական գործընթացների ազդեցությանը, թեև լիովին այդ բացառելը սխալ կլինի: Առաջացած խնդիրները լուծելու համար հայկական կողմին կոչ անելով ՀՀ-ԻԻՀ տնտեսական համագործակցության մասին քարոզչություն չանել՝ Թեհրանը խուսափում էր Ադրբեջանի հակաիրանական քայլերից և միաժամանակ իր դիրքերն էր հաստատում ՀՀ-ում:

2.4. Ելևէջումներ տնտեսական կապերում

1994 թ. մայիսի 12-ին Արցախի ձակառում հաստատված զինադադարը զարգացման նոր հնարավորություններ ընձեռեց տնտեսական կապերի ծավալման համար: Նույն թվականի մայիսի 16-18-ը ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը Սյունիքում Արևելյան Ատրպատականի նահանգապետի հետ քննարկում է սահմանամերձ առևտրի, սահմանային անցման, սահմանապահ ծառայության աշխատանքների, Մեղրիում մաքսային համալիրի շինարարության, Արևելյան Ատրպատականի և Արդաբիլի նահանգապետերին ՀՀ հրավիրելու հարցերը³⁴³: Նշված հարցերին Հայ-իրանական կապերի հանձնաժողովն անդրադարձնում է հունիսի 23-ի և օգոստոսի 30-ի նիստե-

³⁴² Տես նույն տեղում, թ. 5-6:

³⁴³ Տես ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թ. 55:

³⁴⁰ Տես նույն տեղում, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 1-5:

³⁴¹ Տես նույն տեղում, ֆ. 1177, ց. 1, գ. 59, թ. 4:

րում³⁴⁴: Որոշվում է սեպտեմբերի 2-ին Մեղրի գործուղել Թելման Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ պատվիրակություն մասնակցելու սահմանամերձ առևտրի բացման արարողությանը:

Օգոստոսի 12-16-ը ՀՀ պատվիրակությունը մասնակցում է Թավրիզի միջազգային ցուցահանդեսին³⁴⁵, իսկ սեպտեմբերի 8-18-ը Երևանում տեղի է ունենում ԻԻՀ-ի արդյունաբերական ապրանքների 2-րդ ցուցահանդեսը, որին մասնակցում են 94 ընկերություններ³⁴⁶: Սակայն էներգետիկ ցուցահանդեսների պայմանագրի կնքման, հանձնման վայրում ապրանքների բեռնաթափման, թեթև արդյունաբերական ապրանքների ներմուծման և արտահանման համար մպքսային տարիֆների մշակման հարցերն այնքան հրատապ նշանակություն ունենին, որ սեպտեմբերի 15-ին Իրան-Հայաստան կապերի հանձնաժողովը հուշագրով Հայ-իրանական կապերի հանձնաժողովին առաջարկում է կազմակերպել դրանց իրականացումը³⁴⁷:

Չնայած աշխուժացման նշաններին մասնավոր գրույցներում տնտեսական կապերի զարգացումը շաղկապվում էր Արցախի հարցի վերջնական լուծմանը: 1994 թ. սեպտեմբերի 25-ին Վահան Բայբուրդյանը հանդիպում է ԻԻՀ-ի խորհրդարանի իսլամական առաջնորդության հանձնաժողովի նախագահ, ազդեցիկ հոգևորական, հոջաթ-օլ-էսլամ Ռեզա Թադավիին: Վերջինս նշում է. «Քանի դեռ գովելի լավատեսությունը պայմանագրային փաստաթղթերով չի ամրապնդվել, ավելի հեռանկարային են մշակութային կապերի զարգացումը, քանի որ տնտեսական հարցերն առնչվում են քաղաքականությանը»³⁴⁸: Իրանական կողմն ակնարկում էր, որ տնտեսական գործակցության ոլորտում չպետք է ակնկալել նորը: Դեռ ավելին, կա-

³⁴⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 59, թթ. 63-66:

³⁴⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 64:

³⁴⁶ Տե՛ս **Բաղայան Գ.**, Հայաստան-Իրան, էջ 243:

³⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 67-70:

³⁴⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թ. 30:

յին որոշ խնդիրներ. օրինակ 1994 թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ երկու տարվա ընթացքում ՀՀ-ի գործերի հավաստարմատար Վահան Բայբուրդյանը չէր հրավիրվել մասնակցելու Իրան-Հայաստան կապերի հանձնաժողովի նիստերից թեկուզ մեկին³⁴⁹: Այդուհանդերձ, իրանական կողմից նկատվում էր որոշ շահագրգռվածություն կապերը որակապես նոր մակարդակի բարձրացնելու ուղղությամբ: Այդ մասին է վկայում այն, որ նոյեմբերի 11-ին ԻԻՀ-ի դեսպան Համիդթեզա Էսֆահանին ՀՀ վարչապետ Հրանտ Բազրատյանին հայտնում է, որ ժամանակն է հարաբերությունները սահմանամերձ առևտրից վերածել ռազմավարական և ապագային ուղղված սերտ-գործակցության՝ միջկառավարական մակարդակով³⁵⁰: Պատահական չէ, որ նոյեմբերի 25-27-ը Թեհրան և Քիշ կղզի այցելած ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը, անդրադառնալով այցի արդյունքներին, դրանք բնորոշում է որպես ԻԻՀ-ում քաղաքական նոր իրավիճակի արգասիք³⁵¹: Իրանական կողմը խոստանում է վերացնել ԻԻՀ-ի տարածքով հայկական ավտոմեքենաների անցման ժամանակ առկա արգելքները: Իսկ դեկտեմբերի 20-ին ՀՀ դեսպան Վահան Բայբուրդյանի հետ գրույցի ընթացքում ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին մաղթում է, որ «Պարաբայան պատերազմը շուտափույթ ավարտվի, որ զբաղվենք հարաբերությունների ընդարձակմամբ: Մեր հարաբերությունները ՀՀ-ի հետ, մեր մյուս հարևան երկրների հետ համեմատած, ավելի ընդարձակ կլինեն»³⁵²:

Այսպիսով, չնայած Արցախի ճակատում հաստատված հրադադարին, մի կողմից իրանական կողմն ուներ մտահոգություններ, իսկ մյուս կողմից էլ ձգտում էր խնդիրները լուծել ավելի բարձր միջկառավարական մակարդակով: Այդ նպատակն էր հետապնդում 1995 թ. հունվարի 11-ին ԻԻՀ-ի էկոնո-

³⁴⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 38:

³⁵⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 285, թ. 148:

³⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թ. 88:

³⁵² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թ. 49:

միկայի և ֆինանսների նախարար, Իրանա-հայկական կապերի համաձայնեցման միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մորթեզա Մոհամմադխանի այցելությունը ՀՀ: Հունվարի 12-ին ՀՀ նախագահի և Մորթեզա Մոհամմադխանի մասնակցությամբ բացվում է իրանական «Մելլաթ» բանկի երևանյան մասնաճյուղը³⁵³, որի հիմնադիր կապիտալը կազմում էր 3 մլն դոլար³⁵⁴:

Այսպիսով, բանկային գործարքների ներմուծմամբ սահմանային առևտուրն աստիճանաբար իր տեղը զիջում է ավելի համակարգված տնտեսական գործակցությանը, պայմաններ ստեղծում իրանական ներդրումների համար:

Ավելին՝ տարիների ընթացքում կողմերի միջև կնքված, սակայն դրանց մեծ մասը այդպես էլ թղթի վրա մնացած համաձայնագրերի կատարման գործընթացը դառնում է քննարկման առարկա, երբ հունվարի 11-13-ը տեղի է ունենում Հայ-իրանական և Իրան-Հայաստան կապերի հանձնաժողովների 1-ին համատեղ նիստը ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի և Մորթեզա Մոհամմադխանի գլխավորությամբ³⁵⁵: Այսպիսով, Մ. Մոհամմադխանի այցն ունենում է որոշակի արդյունքներ:

Նույն թվականի մայիսի 3-ին Թեհրան է մեկնում ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը: Բանակցությունների ընթացքում ԻԻՀ-ի փոխնախագահ Հասան Հաբիբին ընդգծում է, որ ապրանքաշրջանառության ծավալը երկու երկրների միջև չորս տարվա ընթացքում ավելացել է մոտ 15 անգամ³⁵⁶: Արդյունքում ստորագրվում է 15 համաձայնագիր ու հուշագիր: Միջկառավարական առևտրի համաձայնագրով փոխանակվող ապրանքները կարող էին վերաարտահանվել երրորդ երկր-

ներ³⁵⁷: Համաձայնագրի 12-րդ հոդվածով կողմերը ստեղծում էին համատեղ հանձնաժողով, որը տարին մեկ գումարելու էր նիստեր վերահսկելու համաձայնագրերի կատարման ընթացքը, վերացնելու վիճելի հարցերը, վերանայելու առևտրի զարգացման ուղիները:

Այսպիսով, նշված համաձայնագրով տնտեսական հարաբերությունները իրավապայմանագրային ձևակերպմամբ դրվում են միջկառավարական մակարդակի վրա:

Հիրավի, տնտեսական կապերում նկատվում էր աշխուժություն: 1995 թ. սեպտեմբերի 25-30-ը ՀՀ արդյունաբերության նախարար Աշոտ Սաֆարյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում է ունենում ԻԻՀ-ի էներգետիկայի, արդյունաբերության, մետաղների և հանքերի նախարարությունների ներկայացուցիչների հետ և այցելում արդյունաբերական ձեռնարկություններ³⁵⁸: Զննարկվում են ՀՀ-ից ԻԻՀ տարեկան 2000 տ քլորապրենային կաուչուկ արտահանելու, իսկ ԻԻՀ-ից ՀՀ բութադիենային կաուչուկ, պլիիէթիլեն, ծծումբ և այլն ներմուծելու հարցեր: Պայմանագիր է կնքվում միայն Ահար պղնձի հանքերի ընկերության հետ, մինչդեռ ռադիո-էլեկտրոնիկայի ոլորտում պայմանավորվածություն է ձեռք բերվում, որ իրանական կողմը «Հայկաբել»-ին մատակարարի պղնձ և նրանից վերցնի 3,5-5,8 մմ չափերի լարեր: Գորիսի և Թեհրանի միկրոշարժիչների գործարանները ևս պայմանավորվում են համագործակցելու ԻԻՀ-ից այլումին ներմուծելու և «Կանազ» ընկերության արտադրանքները ՀՀ-ից ԻԻՀ արտահանելու վերաբերյալ:

Այսպիսով, տնտեսական անհամաչափ կապերի պատճառներից մեկն էլ այն էր, որ իրանական կողմը հայկական ձեռնարկությունների մասին լայն տեղեկատվություն ուներ, որը հնարավորություն էր տալիս հոգուտ իրենց մշակելու և իրականացնելու տնտեսական քաղաքականություն: Մինչդեռ հայկա-

³⁵³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 102-104: Տե՛ս նաև «Մելլաթ» բանկ ՓԲԸ Կանոնադրություն, Ե., 2021, էջ 2: <https://www.mellatbank.am/am/about/history> դիտվել է 09.12.2022:

³⁵⁴ Տե՛ս «Ազգ», 13.01.1995:

³⁵⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թ. 103:

³⁵⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 05.05.1995:

³⁵⁷ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ., N-1(1), Ե., 2002, էջ 605-608:

³⁵⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 40, թթ. 3-31:

կան կողմը տեղեկատվություն չունեք ԻԻՀ-ում գործող հարկա-
յին, մաքսային, ձեռնարկությունների և այլ օրենքների մասին:
ԻԻՀ-ի կառավարությունն իրագործում էր հովանավորչական
քաղաքականություն, որը դժվարացնում էր հայկական ար-
տադրանքի արտահանումն ԻԻՀ:

ԻԻՀ նավթաքիմիական ընկերությունը համաձայնվում է
«Ներմուծել պենտան պլյուս («Նաիրիտ»-ում քացախաթթվի
արտադրության վերագործարկման համար), որը սկզբում
կազմելու էր 5000 տ, ապա աճելու էր տարեկան կազմելով 40
հազար տ: ՀՀ լուծիչներ ներմուծելու առաջարկը ևս ընդուն-
վում է: Այդ լուծիչների քանակությունը հասնելու էր 2000 տ,
տարվա կտրվածքով՝ 10 հազար տ: Կողմերը քննարկում են
նաև Սունգուինի հանքավայրի հետազոտման, նախագծման և
կառուցման աշխատանքներում «Հայգունմետաֆոսֆատնախագիծ»
ինստիտուտի մասնակցության հարցը և կնքում համագործակ-
ցության պայմանագիր: Փաստորեն, այդ ոլորտում որոշ հաջո-
ղություն է գրանցվում:

Տնտեսական կապերի տարեգրության մեջ առանձնա-
նում է 1996 թվականը: Այդ թվականի դեկտեմբերի 25-29-ը
Երևան է այցելում ԻԻՀ փոխնախագահ Հասան Հաբիբին: ՀՀ
նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և ԻԻՀ փոխնախագահ Հա-
սան Հաբիբին ստորագրում են մի շարք փաստաթղթեր՝ ՀՀ
արդյունաբերության մեջ ԻԻՀ-ի ներգրավման, նախատեսված
համաձայնությունների կարգավորման ու թեհրանում հերթա-
կան նիստերի գումարման մասին³⁵⁹: Կարևոր նշանակություն
ունեն ավրանքների տարանցիկ փոխադրումների, մաքսային
օրենսդրության և կանոնադրության, տեղեկատվության փոխա-
նակման, սահմանային մաքսատների կահավորման և շուրջօր-
յա ռեժիմով աշխատելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի
ստորագրումը: Այդպիսով, վերանում էր կողմերի՝ հանգստյան
օրերին չաշխատելու կարգը, որին արդեն անդրադարձել էնք:

³⁵⁹ Տես «Հայաստանի Հանրապետություն», 26,27,28.12.1996:

Հաջորդն այն էր, որ կողմերը համաձայնվում են համա-
գործակցել էլեկտրոնիկայի, միկրոսավտոբուսների, այլումինի,
տեքստիլ արտադրության ոլորտում, ինչպես նաև մոլիբդենի
արտադրության համատեղ ձեռնարկության ստեղծման հար-
ցում³⁶⁰:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի է
ունենում հանդիպում ԻԻՀ արդյունաբերության փոխնախարար
Հ. Նաջիի հետ³⁶¹: Կողմերը պատրաստակամություն են հայտ-
նում աշխուժացնելու տնտեսական կապերը սննդի արդյունա-
բերության, հատկապես՝ հրուշակեղենի և մակարոնեղենի, պա-
հածոների, ձեթ-օձառի, աղի, ապակե տարաների արտադրու-
թյան ոլորտներում:

1992-ից ի վեր 1996 թ. դարձավ ամենաարդյունավետ
տարին ԻԻՀ-ՀՀ հարաբերություններում: 1996 թ. առևտրաշր-
ջանառությունը կազմեց 193 մլն դոլար, որից մոտ 150 մլն ներ-
մուծում, իսկ 43 մլն՝ արտահանում: Ներմուծումն ավելի քան ե-
րեք անգամ գերազանցում էր արտահանմանը: Այդ նիշն ավե-
լացավ միայն 2008 թ. (260 մլն դոլար): Մինչդեռ 1997 թ. առևտ-
րաշրջանառությունը կազմեց 131 մլն դոլար, որից 88 մլն ներ-
մուծում, իսկ 42 մլն՝ արտահանում: 1996 թ. համեմատ, 1997 թ.
ԻԻՀ-ից ներմուծումը նվազեց 61 մլն դոլարով, որը պայմանա-
վորված էր մաքսային բարձր տուրքերով, իրանական ապ-
րանքների ցածր որակով, ՀՀ-ՌԴ տնտեսական խորացող հա-
մագործակցությամբ և այլ գործոններով:

Հարկ է նշել, որ ՀՀ-ԻԻՀ տնտեսապես համեմատաբար
պասիվ տարում, ըստ «Ռեսայլթ» շրաբերթի (21 սեպտեմբե-
րի, 1997), Ադրբեջանն արտաքին առևտրի 30 %-ը կատարել է
ԻԻՀ-ի հետ՝ զբաղեցնելով առաջին տեղը, իսկ իրանական ա-
վելի քան 120 ընկերություն Ադրբեջանում ունեցել է իր ներկա-

³⁶⁰ Տես ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, ց. 5, գ. 239, թթ. 1-4:

³⁶¹ Տես նույն տեղում, թ. 27:

յացուցչությունը³⁶²: Ըստ «Արար» օրաթերթի (23 սեպտեմբերի, 1997), ԻԻՀ-Աղբբեջան ապրանքափոխանակության տարեկան ծավալը կազմել է 300 մլն դոլար³⁶³:

ՀՀ-ԻԻՀ տնտեսական գործակցությունը վտանգվում է այն բանից հետո, երբ 1997 թ. հունիսի 29-ին ձեռքակալվում են ԻԻՀ քաղաքացիներ՝ «Մելլաթ» բանկի երևանյան մասնաճյուղի փոխտնօրեններ Ռ. Հախնազարյանը և Վ. Ջատիկյանը՝ կաշառք ստանալու մեղադրանքով: Նրանք ընդունել էին մեղադրանքը³⁶⁴: ՀՀ դատախազությունը, հարգելով ԻԻՀ ղեկավարության միջնորդությունը, որպես խափանման միջոց, ընտրում է ստորագրությունը բնակության վայրից չհեռանալու մասին: Հայկական կողմը փոխադարձ մեղադրանք չինչեցրեց, որի արդյունքում միջպետական հարաբերությունները մնացին բարվոք վիճակում:

Ավելին՝ երկկողմ կապերի խորացման նպատակով 1997 թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի ԱԽ-ի 52-րդ նստաշրջանի շրջանակներում Նյու-Յորքում ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանը և ԻԻՀ ԱԳ նախարար Քամալ Խարազին³⁶⁵, ապա նույն թվականին ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Շահեն Կարամանուկյանը և ԻԻՀ առևտրի նախարար Մոհամմադ Շարիաթմադարին ՀՀ-ում և ԻԻՀ-ում քննարկում են Հայ-իրանական տնտեսական հանձնաժողովի աշխուժացման հարցը: Արդյունքում Երևանում կազմակերպվում է ԻԻՀ առևտրաարդյունաբերական 4-րդ ցուցահանդեսը, որին մասնակցում է իրանական մոտ 90 ձեռնարկություն³⁶⁶: Ներկայացվում է իրանական արդյունաբերությունը, որի վարկը նսեմացվել էր ցածրորակ ապրանքներ ներկրողների գործունեությամբ:

³⁶² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՐԱ, ց. 2, գ. 169, թ. 131:

³⁶³ Տե՛ս նույն տեղում, թ. 136:

³⁶⁴ Տե՛ս «Ազգ», 09.07.1997, 12.07.1997:

³⁶⁵ Տե՛ս նույն տեղում, 30.09.1997:

³⁶⁶ Տե՛ս նույն տեղում, 06.06.1997:

Տնտեսական կապերում որոշ դժվարություններ էին առաջացել, քանի որ չունենալով փոխադրումների այլ շահեկան տարբերակ՝ ՀՀ-ԻԻՀ առևտուրն իրականացվում էր բեռնատար մեքենաների միջոցով: Այդ հարցը քննարկում են 1995 թ. ապրիլի 19-ին ԻԻՀ ԱԳՆ-ում Կահան Բայբուրդյանը և ԱՊՀ երկրների և Կովկասի գլխավոր վարչության պետ Մոհամմադ Ռեզա Բախթիարին³⁶⁷, ինչպես նաև ռոստոսի 7-ին ՀՀ-ի ղեկավարության աշխատակից Գագիկ Շալջյանը և ԻԻՀ-ի ԱԳՆ-ի հյուպատոսական վարչության պետ Մանուչեհր Թալեին³⁶⁸: Խնդիրն այն էր, որ Երևանում չէր թույլատրվում կայանել իրանական բեռնատարներն ու ավտոբուսները, ինչպես նաև վիզա չէր տրվում բեռնատար մեքենաների իրանցի վարորդներին:

1998 թ. հուլիսի 16-ին տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի 2-րդ նիստին մասնակցելու նպատակով կրկին Թեհրան է մեկնում ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար, օպերատիվ հարցերի նախարար, հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովի նախագահ Շահեն Կարամանուկյանը: Հուլիսի 20-ին ԻԻՀ էկոնոմիկայի նախարար Հոսեյն Նամազին և Շահեն Կարամանուկյանը ստորագրում են ՀՀ և ԻԻՀ միջև տնտեսական համագործակցության պայմանագիր: Ըստ դրա՝ ԻԻՀ-ի զարգացման բանկը ՀՀ-ին հատկացնում էր 5 մլն դոլարի վարկ, որով ՀՀ-ն ներմուծելու էր միայն ԻԻՀ-ում արտադրված ապրանքներ³⁶⁹: Փաստորեն տնտեսական կապերը խթանելու ուղղությամբ իրանական կողմը հանդես էր գալիս որոշակի ու սահմանափակ ներդրումներով:

Հայկական կողմն առաջարկում էր Սև ծով-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ ուղղությամբ ստեղծել բեռնափոխադրումների քառակողմ ընկերություն՝ ՀՀ-ի, ԻԻՀ-ի, Վրաստանի և ՌԴ-ի մասնակ-

³⁶⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՐԱ, ց. 5, գ. 242, թթ. 89-92, 96-97:

³⁶⁸ Տե՛ս նույն տեղում, թթ. 130-133:

³⁶⁹ Տե՛ս «Ազգ», 21.07.1998:

ցությամբ³⁷⁰։ Սակայն առաջարկները քննարկումով էլ սահմանափակվում էին։

1998 թ. ՀՀ արտաքին տնտեսական կապերի մեջ ԻԻՀ-ն ՌԴ-ից հետո գրավում էր երկրորդ տեղը։ ՀՀ-ում գործում էին ավելի քան 200 համատեղ ձեռնարկություններ։ ԻԻՀ-ի առանձին նահանգներ ուղղակի կապեր էին հաստատել ՀՀ-ի և պետական, և մասնավոր հատվածների հետ։ Անհրաժեշտություն էր զգացվում ԻԻՀ-ՀՀ համագործակցությունն առևտրականից տեղափոխել արտադրատնտեսական՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության ոլորտներ, խորացնել տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանակման գործընթացը և խթանել ներդրումներն այդ ճյուղերում։ Մյուս կողմից 1998 թ. դրությամբ կողմերի միջև ստորագրվել էին 80-ից ավելի փաստաթղթեր, բայց դրանց մեծ մասը չէր գործում։ Ահա թե ինչու 1998 թ. հուլիսին Թեիրանում համատեղ հանձնաժողովների նիստում մտահոգություն հայտնվեց տնտեսական կապերում հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործման մասին³⁷¹։ Անհրաժեշտ է համարվում ուսումնասիրել 6 տարվա ընթացքում ձեռք բերված հաջողություններն ու թերացումները և որոշակի ծրագրեր ներկայացնել։

Արդյունքում կողմերը համագործակցություն ծավալեցին գյուղատնտեսության ոլորտում։ 1997 թ. հունիսի 15-ին կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ իրանական կողմն էջմիածնի երկրագործության գիտահետազոտական ինստիտուտի 50 հա հողատարածության վրա անհատույց տեղադրում է իրանական արտադրության բարձր ճնշմամբ համակարգեր։ 1998 թ. հուլիսի 2-ին ՀՀ գյուղատնտեսության նախարար Վլադիմիր Մովսիսյանը Թեիրանում ստորագրում է համագործակցության մասին համաձայնագիր, իսկ հուլիսի 19-ին՝ հուշագիր գյուղատնտեսությանը վերաբերող աշխատանքների

մասին։ Նույն թվականի հոկտեմբերի 20-ին Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի և Խաղողագործության, գինեգործության ու պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատողներն այցելում են ԻԻՀ իրականացնելու այգեգործական ուսումնասիրություններ³⁷²։

Տնտեսական կապերում իր ուրույն տեղն ուներ ԻԻՀ նահանգների հետ համագործակցության ձևավորումն ու զարգացումը։ Այդ մասին է վկայում 1996 թ. հունիսի 24-ին ՀՀ դեսպան Վահան Բայբուրդյանի հանդիպումը ԻԻՀ-ի Գիլանի նահանգապետի խորհրդական Վահդաթին և Գիլանում միջազգային ցուցահանդեսի պատասխանատու, «Իրան էքսպորտ» ամսագրի խմբագրական կազմի անդամ Մանսուր Էբրահիմշահին³⁷³։ Վերջիններս ՀՀ դեսպանին են փոխանցում նահանգապետ Ալի Աքբար Թահայիի՝ Էնզելի նավահանգստում 1996 թ. օգոստոսի 1-ին բացվելիք միջազգային ցուցահանդեսին մասնակցելու հրավերը։ Իրականում նշված նահանգի ղեկավարությունը ստեղծել էր այդ առիթը, որ ՀՀ-ի մասնակցությունը ցուցահանդեսին բեկումնային քայլ դառնար ՀՀ-ի և Գիլանի նահանգի առևտրատնտեսական, մշակութային և այլ կարգի հարաբերություններում։ Ավելին՝ զրուցակիցները փաստարկներ են բերում, որ Գիլանի և ՀՀ-ի միջև առևտուրը կարող է լինել փոխշահավետ, որ «*չպետք է թույլ տանք, որ մեր երկրների (ՀՀ-ԻԻՀ Գիլանի նահանգ - Կ. Մ.), միջև առևտուրը կատարվի միջնորդավորված ձևով*»³⁷⁴։ Ակնհայտ է, որ ԻԻՀ-ի նահանգների միջև կար մրցակցություն ՀՀ հետ տնտեսական կապեր խորացնելու հարցում։ Իր հերթին հայկական կողմը ևս շահագրգռված էր այդ հարցում, քանի որ Կասպից ծովի հարավարևմտյան առափնյա Գիլան նահանգը և Էնզելի նավահանգիստը ՀՀ-ի համար ունեն բացառիկ նշանակություն։ Էնզելիի նավահանգստի միջոցով ՀՀ-ն կապ է հաստատում ՌԴ-ի և

³⁷⁰ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 158, թ. 73։

³⁷¹ Տես նույն տեղում, ց. 11, գ. 182, թթ. 4-5։

³⁷² Տես նույն տեղում, թ. 1։

³⁷³ Տես նույն տեղում, ց. 5, գ. 242, թթ. 242-243։

³⁷⁴ Տես նույն տեղում, թ. 243։

Կենտրոնական Ասիայի հետ: Էնգելին Փոթիից հետո երկրորդ ծովային ճանապարհն է ՀՀ-ի համար:

ԻԻՀ նահանգների հետ գործակցության խորացմանը նպաստում է նաև 1996 թ. սեպտեմբերին Երևանում իրանական արտադրանքի ցուցահանդեսի բացումը³⁷⁵:

1998 թ. հոկտեմբերի 23-ին Կապանում ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետի տեղակալ Մոհամադ Նաջաֆի Ազարին և ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոման Նավասարդյանը ստորագրում են միջպետական հանդիպման արձանագրություն, ըստ որի ուսումնասիրվելու էին Սյունիքի մարզում արտադրվող կաշվի հումքի և բրդի գնման իրանական կողմի օժանդակության հնարավորություններ: Կողմերը պայմանավորվում են երեք ամսվա ընթացքում մարզում կազմակերպել նահանգի, իսկ նահանգում՝ մարզի ապրանքների ցուցահանդես-վաճառք: Իրանական կողմը պատրաստակամ էր մասնակցել մարզի ճանապարհների նորոգման աշխատանքներին և ձկնաբուծության զարգացմանը, մարզն ապահովել անհրաժեշտ քանակությամբ դիզվառելիքով ու հեղուկ գազով: Առևտուրը խթանելու նպատակով կազմակերպվելու էր էժան և որակյալ ապրանքների վաճառք մարզում, պայմանով, որ հայկական կողմը տրամադրի համապատասխան տարածք և աշխատողներ, իսկ իրանական կողմն՝ ապրանքներ³⁷⁶: Փաստորեն, ՀՀ Սյունիքի մարզի և ԻԻՀ Արևելյան Ատրպատական նահանգի միջև ծավալվում է հաջողված գործակցություն տնտեսական մի շարք ճյուղերի ու ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

1998 թ. նոյեմբերի 19-25-ը Երևանում տեղի է ունենում հայ-իրանական գործարար համաժողով, որի մասնակիցներն ընդունում են «Դիմում երկու երկրների օրենսդիր և գործադիր

մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներին»³⁷⁷: Գործարարները երկու կառավարություններից ակնկալում են բարենպաստ պայմանների ստեղծում համատեղ ձեռնարկություններ հիմնելու, ներդրումային ծրագրերի իրականացմանը նպաստելու, տարանցիկ բեռնափոխադրումների տարիֆները նույնացնելու, ամենամյա արդյունաբերական ապրանքների ցուցահանդեսներ Երևանում և Թեհրանում կազմակերպելու, գործարարների մուտքի և ելքի վիզաների ձևակերպումը պարզեցնելու և երկու երկրների ստանդարտների համապատասխանությունը ապահովելու հարցերում:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արա Կարդանյանի խոսքով՝ 1997 թ.-ից երկկողմ կապերը մուտք են գործում լճացման փուլ, այն իմաստով, որ առևտուրը կայունանալով՝ նվազման միտումներ էր հետապնդում³⁷⁸: Խնդիրն այն էր, որ ներմուծվող ապրանքների մի մասը, օրինակ սննդամթերքը, ավելի լավ որակով արտադրվում էր արդեն ՀՀ-ում, որի հետևանքով կրճատվել էր ներմուծումը: Ուստի, անհրաժեշտ էր կոտրել իրանցի առևտրականների մեջ ձևավորված այն մոտեցումը, որ ՀՀ-ն իրենց արտադրանքների շուկան է հանդիսանում: Հենց դրա հետևանքով էլ կրճատվել էր ներմուծումը:

Այսպիսով, արտահանման և ներմուծման օրենքների բարդացումը, մաքսային և հարկային տոկոսադրույքների բարձրացումը խոչընդոտում էին տնտեսական կապերի լիարժեք զարգացմանը: Կերջին հարցին է անդրադառնում ԻԻՀ դեսպանության գործերի հավատարմատար Մոհամադ Ֆարհադ Քոլեյնին 1998 թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ հանդիպմանը³⁷⁹: Նա դժգոհում էր, որ ՀՀ ճանապարհների շահագործման համար իրանական ծանր բեռնատարներից զանձվում էր հարկ: Իրականում հայկական

³⁷⁵ Տես **Քաղապյան Գ.**, նշվ. աշխ., էջ 246:

³⁷⁶ Տես ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, g. 11, q. 182, p. 22:

³⁷⁷ Տես նույն տեղում, թթ. 10-11:

³⁷⁸ «Լոյս», թիվ 2, ապրիլի 15, 2000, էջ 18:

³⁷⁹ Տես ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, g. 5, q. 242, թթ. 260-264:

կողմը տրանզիտից շահույթ ստանալու նպատակ չուներ: Հարկը գանձվում էր սուկ մեկ պատճառով. ՀՀ-ն 1998 թ. Մեղրի-Կապան ճանապարհը վերանորոգելու համար ծախսել էր 4,5 մլն դոլար, պետք է ծախսվեր ևս 8-9 մլն դոլար, մինչդեռ բյուջեն չուներ նման միջոցներ: Այդ գումարն անհրաժեշտ էր ճանապարհի մյուս հատվածները վերանորոգելու համար:

Նշված խնդիրներին անդրադարձել է Թեհրանում լույս տեսնող «Ասիայե Միյանե» տնտեսական շաբաթաթերթը «ՀՀ նրանց կանաչ լույսերը և մեր կրիայի քայլերը» վերնագրով հոդվածում (10 ապրիլի, 1999 թ.): Հոդվածից հայտնի է դառնում, որ ՀՀ-ում գործող իրանցի առևտրականների միությանն անդամակցել ցանկացողներից ստիպողաբար վերցվում էր 500 դոլար: Նույն թերթը հեռատեստրեն ընդգծում է. «Հայաստան ասելով, մենք ոչ միայն հասկանում ենք Կովկասում գտնվող և հարևանի հետ վիճելի հարցեր ունեցող հանրապետություն «Ղարաբաղ», այլև շուկա, որտեղ ոչ հեռու ապագայում, Իրանը լուրջ շահեր կունենա: Լինելով իրանամետ՝ Հայաստանը դեռևս հույս ունի տեսնելու ուժեղ Իրանի ներկայությունն իր տնտեսության տարբեր ոլորտներում»³⁸⁰: Փաստորեն, իրանական կողմից արձանագրվում էր, որ ՀՀ-ի ակնկալիքներն ԻԻՀ-ից մեծ էին, սակայն վերջինս հապաղեց և նվազ ներդրումային քաղաքականությամբ նշանավորեց 1990-ական թթ.:

Ավելին՝ 1998 թ. իրանական կողմը որոշ սահմանափակումներ մտցրեց Ջուլֆայից ԻԻՀ-ի տարածք երթևեկող հայկական բեռնատարների համար³⁸¹: Շատ երկու երկրների միջև գործող համաձայնագրերի փոխադրամիջոցների երթևեկը կատարվում էր առանց տրանսպորտային անցագրի թույլտվության: Հայկական տրանսպորտային միջոցները երթևեկում էին մինչև Ջուլֆա: Ներմուծվող, արտահանվող և տարանցիկ ապրանքների տեղափոխումը և ընդունումը կատարվում էր Ջուլ-

ֆայի մաքսատանը: Իրանական տրանսպորտային միջոցների մի մասի կողմից բեռնափոխադրումը կատարվում էր մինչև Ջուլֆա, իսկ մյուս մասը մուտք էր գործում ՀՀ տարածք: Հայկական փոխադրամիջոցներից Նորդուգ-Ջուլֆա ճանապարհահատվածում վառելիքի գնի տարբերության գումար չէր գանձվում:

ԻԻՀ-ում օտարերկրյա փոխադրամիջոցների երթևեկության վերաբերյալ օրենքը հայկական բեռնատարների նկատմամբ չէր կիրառվում: Ահա թե ինչու իրանական կողմը հայտնում էր, որ ՀՀ փոխադրամիջոցները TIR-ի³⁸² մաքսային պահանջներին չհամապատասխանելու դեպքում, երկրի մյուս վայրերը երթևեկելիս պարտավոր են ապահովել մաքսային տուրքը³⁸³: Սակայն այդ օրենքի գործադրումն իրականում սահմանափակումներ մտցրեց երկկողմ կապերում: Դրա հետևանքով 1997 թ. համեմատ, 1998 թ. ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ապրանքաշրջանառությունը կրճատվեց մոտ 30-35%-ով³⁸⁴: Այսպիսով, իրանական կողմից մաքսատուրքերի և ճանապարհային վճարների բարձրացումը խոչընդոտում էր բնականոն հարաբերություններին, որի շուրջ կողմերն ընդհանուր հայտարարի չէին գալիս:

Հաջորդ խնդիրն այն էր, որ հայկական կողմն առաջարկում էր կառուցել մետաղական ջարդոնի վերամշակման համառոտ գործարան, բայց իրանական կողմը մերժում է և փոխարենն առաջարկում գյուղատնտեսական ծրագրերի իրականացում՝ ոռոգման ցանց 200 հազար դոլար ներդրումով, տրակտորների հավաքման գործարանի կառուցում, անասնաբուժական ֆերմա՝ 10 հազար գլուխ անասուններ՝ 7000-8000

³⁸⁰ ՄՏՄ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին մաքսային կոնվենցիան ընդունել է 1975 թ. ԱՄԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովը: Կոնվենցիայի նպատակն է՝ սպարզեցնել բեռների ձևակերպումը այն սահմաններ հասելիս:

³⁸³ ՄՏՄ ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, գ. 2, գ. 158, բ. 2:

³⁸⁴ ՄՏՄ նույն տեղում, գ. 11, գ. 182, բ. 14:

³⁸⁰ ՄՏՄ նույն տեղում, գ. 5, գ. 239, թթ. 133-137:

³⁸¹ ՄՏՄ նույն տեղում, գ. 2, գ. 158, բ. 2:

լիտր կաթնատվությամբ, ԻԻՀ-ում թռչնաբուծական ֆերմաների վարձակալությամբ տրամադրում³⁸⁵: Այսպիսով, իրանական կողմը խուսափում էր խոշոր ներդրումներից և շեշտը դնում գյուղատնտեսության վրա:

1990-ական թթ. 2-րդ կեսին առևտրի ոլորտում անցում է կատարվում ապրանքների քանակական ցուցանիշից որակականին: Թեև առևտրաշրջանառությունը 1999 թ. հասավ 112 մլն դոլարի, սակայն հաջորդ տարիներին այն կրկին նվազում է և 2004 թ. կազմում 107 մլն դոլար: Այդ տարիներին առևտրի ոլորտում պահպանվում էր մոտ 30-ը 70 %-ի հարաբերակցությունը՝ հօգուտ ԻԻՀ-ի: Այդուհանդերձ, 2000-ական թթ. սկզբներին երկու երկրներում ստեղծվեցին բազմաթիվ ընկերություններ, որոնք գործում էին անհատապես կամ «Իրանցի առևտրականների և արտադրողների միություն» հասարակական կազմակերպության շրջանակներում կամ Իրան-Հայաստան առևտրի պալատի հովանու ներքո: Դրանցից էին «Փաք գազ»-ը, որը կես միլիոն դոլար ներդրումներով շահագործման էր հանձնել հիգիենիկ և լվացող նյութերի գործարան, «Թաժ» ընկերությունը, որը 1 մլն դոլար ներդրումներով հիմնել էր հիգիենիկ նյութերի արտադրություն, «Արմեն Փարս» դեղագործական ընկերությունը, որը կատարել էր 1 մլն դոլար ներդրումներ, հայկական «Գրանդ» հողի ներդրումներով ԻԻՀ Ջուլֆայի ազատ առևտրի գոտում իրանական կողմի հետ համատեղ ներկայացվում էր արդյունաբերական արտադրանք: Համատեղ նախագծերից էին նաև իրանական կապիտալի գործածմամբ և «Գրանդ» հողի ներքին համագործակցությամբ Երևանում օձաթի արտադրությունը, Սյունիքի մարզում կաշվի, պսոլասակի և կոշիկի գործարանի գործարկումը: 2002 թ. հունվարի 1-ի դրությամբ իրանական ներդրումների ծավալը ՀՀ-ում կազմել է ավելի քան 17 մլրդ ՀՀ դրամ կամ օտարերկրյա ներ-

³⁸⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 15:

դրումների ընդհանուր ծավալի 26,8%-ը³⁸⁶:

2001 թ. ապրիլի 15-ին ՀՀ էներգետիկայի նախարար Հայ-իրանական կապերի միջկառավարական հանձնաժողովի նախագահ Կարեն Գալուստյանն այցելում է Մեդրիի կամուրջի հանդիպակաց մասում գտնվող իրանական նոր բեռնահամալիր³⁸⁷: Պայմանավորվածություն է ձեռք բերվում ապրիլի 21-ին վերաբացել Մեդրիի սահմանամերձ շուկան: Շուկան թեև բացվում է, բայց գործում էր ոչ լիարժեք: 2002 թ. մայիսին մրցույթով անցած 40 ձեռներեցներից շուկայում աշխատում էին 10-12-ը: Շուկայի գործունեության աշխուժացմանը խանգարում էր ամսական ներմուծվող մաքսատուրքից զերծ ապրանքի 50 կգ քաշի և 500 դոլար արժողության սահմանափակումը: Միայն 2003 թ. մարտ-սեպտեմբեր ամիսներին շուկայի շրջանակներում առևտրական փոխանակումների ծավալը կազմել է 5,5 մլն դոլար³⁸⁸:

ԻԻՀ-ի հետ արտահանման ծավալը 2001 թ. կազմել է 162,5 մլրդ ՀՀ դրամ, ներմուծումը՝ 44,5 մլրդ ՀՀ դրամ: Արտահանվել է հատկապես սև մետաղ՝ 1053,3 մլն դրամ, պղինձ և պղնձե իրեր՝ 1156,6 մլն ՀՀ դրամ, ներմուծվել են պլաստմասսե իրեր՝ 3177,1 մլն ՀՀ դրամ³⁸⁹: 2002 թ. ԻԻՀ-ն ՀՀ-ի առևտրական 3-րդ գործընկերն էր՝ ՌԴ-ից և Բելգիայից հետո: Սակայն իրանական մաքսային սակագները շարունակում էին չափազանց բարձր մնալ ՀՀ-ից ապրանքներ ներմուծելու համար: Մյուս կողմից՝ 2002 թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ ներմուծվող իրանական ապրանքների ծավալը մոտ 6%-ով կրճատվել էր նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ավելի քան 14 հազար բեռնատար մեքենա էր երթևեկել ՀՀ և ԻԻՀ տարածքով, որը գերազանցում էր նախորդ տարվա տվյալները: Օդային ճանապարհից շաբաթական 4-5 չվերթի

³⁸⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17.05.2002:

³⁸⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 8, գ. 86, թ. 91:

³⁸⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23.10.2003:

³⁸⁹ Տե՛ս նույն տեղում, 22.05.2002:

պայմաններում օգտվել է ՀՀ և ԻԻՀ 50 հազար քաղաքացի:

2002 թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5-ը և 2003 թ. հունիսի 13-ին Երևանում տեղի է ունենում իրանական արտադրանքի երկու ցուցահանդես: ԻԻՀ դեսպան Մոհամմադ Ֆարիադ Քոլեյնիի խոսքով ԻԻՀ-ն ամենախոշոր կապիտալ առևտրային ներդրումներն ունեւ ՀՀ-ում³⁹⁰:

2003 թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ նախագահն ընդունում է ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետ Մ. Ա. Սոբհանոլլահին և շուրջ 20 գործարարի³⁹¹: Իրանական կողմն առաջարկում է վերացնել սահմանափակումները, ինչպես վարվել է ԻԻՀ-ն, այսինքն՝ եթե նախկինում իրանական կողմը թույլատրում էր մինչև 500 դոլարի չափով առևտուր կատարել, ապա այժմ հանվել էր այդ սահմանափակումը: Վերջապես, իրանական կողմը հանդես էր գալիս խոչընդոտները վերացնելու դիրքերից:

Այսպիսով, ՀՀ-ԻԻՀ տնտեսական համագործակցությունը, թեև դանդաղ տեմպերով, որոշակի հաջողություններ ունեցավ: 1990-ական թթ. կեսերին ԻԻՀ-ի կողմից ՀՀ-ի արտաքին առևտրի մեջ մի պահ նույնիսկ առաջին տեղի գրավումը, երկրորդ տեղը մղելով ՈՂ-ին, ցույց է տալիս, որ կողմերը կենսականորեն շահագրգռված էին իրենց տնտեսական կապերը զարգացնելու հարցում:

2000-ական թթ. սկզբներին իրանական ներդրումները ՀՀ-ում մեծապես նպաստեցին տնտեսական կապերի բարելավմանը: ՀՀ մարզերի և ԻԻՀ նահանգների միջև գործակցությունը նոր ոլորտներ բացեց հատկապես ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Սակայն օրենսդրական դաշտի իրավական կարգավորումները միշտ չէ, որ նպաստում էին առևտրաշրջանառության անշեղ զարգացմանը: Ավելին՝ դրանք որոշակի խոչընդոտ էին դարձել երկկողմ հարաբերություններ

ում և ինչ-որ տեղ տեսանելի էր այդ գործիքակազմով կողմերի միմյանց վրա ազդելու մեխանիզմները: Անհարկի իրավական խստացումները դարձել էին ավելորդ, որի թուլացման ուղղությամբ կողմերը շահագրգռված էին: Հենց այդ մասին է վկայում վերը նշված 2003 թ. հոկտեմբերի 22-ի հանդիպումը:

2.5. Էներգետիկ համագործակցությունը

Էներգետիկ համագործակցության հարցը մշտապես եղել է կողմերի ուշադրության կենտրոնում: Դեռևս 1992 թ. փետրվարի 10-ին ԻԻՀ-ի նավթի նախարար Ղուլամ Ռեզա Աղազադեն ՀՀ պատվիրակության հետ քննարկում է գազամուղ անցկացնելու, մագուի մատակարարման և Մեղրիում համատեղ նավթամշակման գործարան կառուցելու հարցերը³⁹²: Այդ հանդիպմանը մասնակցում է իրանական կողմից ԻԻՀ-ի խորհրդարանի հայազգի պատգամավոր և էներգետիկայի հանձնախմբի անդամ Արտավազդ Բաղումյանը: Նա աշխատում էր նաև հատուկ հանձնաժողովում, որը ստեղծվել էր 1991 թ. մայիսի կեսերին ՀՀ-ի հետ առևտրական կապեր հաստատելու նպատակով³⁹³:

1992 թ. դեկտեմբերի 22-25-ը ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը բանակցություններ է վարում ԻԻՀ-ի ղեկավարության հետ³⁹⁴: Թեհրանում կնքվում են մի շարք պայմանագրեր, որոնցից կարևորը ԻԻՀ-ից ՀՀ գազատար անցկացնելու ծրագիրն էր: Պայմանագրով գազամուղի երկարությունը կազմելու էր 140 կմ: Նախատեսվում էր ԻԻՀ-ից տարեկան ՀՀ ներմուծել 1 մլրդ մ³ գազ³⁹⁵: Բանակցություններից կարելի է եզրակացնել, որ չնայած կողմերը շահագրգռված էին գազամուղի

³⁹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թ. 28:

³⁹³ Տե՛ս «Ազգ», 15.05.1991:

³⁹⁴ Տե՛ս նույն տեղում, 29.12.1992:

³⁹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թ. 1:

³⁹⁰ Տե՛ս նույն տեղում, 14.06.2003:

³⁹¹ Տե՛ս նույն տեղում, 23.10.2003:

արագացված կարգով կառուցմամբ, այդուհանդերձ ի սկզբանե առկա է եղել ֆինանսական հարցը:

Հարկ է նշել, որ 1993 թ. մայիսի 5-ին Իրանի գազի ազգային ընկերությունը հայտնում է, որ գազամուղի կառուցման և գազի գնի վերաբերյալ կնքվելիք պայմանագրերը կարիք ունեն տեխնիկական ուսումնասիրության, որի համար պահանջվում է մոտ մեկ տարի ժամանակ³⁹⁶: 1993 թ. սեպտեմբերի 20-25-ը Թեհրանում Իրանի գազի ազգային ընկերության տնօրեն Ռ. Սանին և ՀՀ էներգետիկայի նախարար Կ. Գալուստյանը պայմանավորվում են, որ ՀՀ-ի փոխարեն ԻԻՀ-ն վճարի նախագծային աշխատանքների ծախսերը: Փոխանակվում է գազի առուվաճառքին վերաբերող պայմանագրի նախագիծը: Կողմերը ստորագրում են գազամուղի շինարարության վերաբերյալ արձանագրություն, որի 12-րդ հոդվածում հայկական կողմն առաջարկում էր ավելացնել մատակարարվող գազի ծավալը, երկարացնել տարեկան ժամանակացույցը և Լիլաբ-Մեղրի հատվածում գազամուղի տրամագիծը 508 մմ-ից 609 մմ դարձնել: Պետք է նշել, որ իրանական կողմն իրագործելի էր համարում այդ առաջարկը, սակայն բանակցություններին ԻԻՀ ԱԳՆ-ից ոչ ոք չէր մասնակցում³⁹⁷: Այդ փաստը և ՀՀ-ի պատվիրակության այցի նկատմամբ Երևանում ԻԻՀ-ի դեսպանության սառը վերաբերմունքը վկայում էր, որ ԻԻՀ-ի գործադիր մարմիններում տիրում էր ոչ բարյացակամ մթնոլորտ, որը պայմանավորված էր Արցախի ճակատում ընթացող ռազմական գործողություններով:

1994 թ. հունվարի 23-30-ը ՀՀ պատվիրակությունը Թեհրանում քննարկում է գազատարի առուվաճառքի պայմանագրի կետերը: Նախատեսվում էր մարտի սկզբներին ավարտել քննարկումները և ստորագրել պայմանագիրը, սակայն այն հետաձգվում է: Օգոստոսի 21-28-ը ՀՀ պատվիրակությունը

Թեհրանում կրկին բանակցում է Իրանի գազի ազգային ընկերության հետ³⁹⁸: Տարեկան պայմանագրային քանակությունն ընդունվում է 738 մլն մ³: Հայկական կողմն առաջարկում է վերանայել ութ ամսում օրական 3 մլն մ³ գազ մատակարարելու և պայմանագրի 15-ամյա ժամկետի մասին կետերը³⁹⁹: Իրանական կողմը համաձայն էր ավելացնելու և օրական ծավալները, և՛ երկարացնելու տարվա մեջ մատակարարումների ժամանակաշրջանը, և՛ առաքման կետում 34 բարից բարձր պահելու գազի ճնշումը: Սակայն այս դեպքում էլ նախագծի ֆինանսավորման համար պետք է բանակցեին Համաշխարհային բանկի հետ: Չստ իության, սա ևս ժամանակ չափելու տարբերակ էր:

Արցախի ճակատում հաստատված հրադադարից հետո նոր պայմաններ են ստեղծվում հարցի քննարկման համար: 1995 թ. մայիսի 6-ին ՀՀ վարչապետ Հ. Բազրատյանի Թեհրան այցի ընթացքում կողմերի միջև կնքվում է գազի առուվաճառքի պայմանագիր, որով նախատեսվում էր օրական 4 մլն մ³ գազի առաքում յուրաքանչյուր տարվա մարտի 21-ից մինչև նոյեմբերի 21-ը, տարեկան 1 մլրդ մ³ ծավալով: ԻԻՀ-ի տարածքում կառուցվելու էր 100 կմ երկարությամբ և 600 մմ տրամագծով գազատար՝ 36 մլն դոլար ներդրումով: Նախատեսվում էր կառուցել կոմպրեսորային կայան՝ 26 մլն դոլար ներդրումով, որից ՀՀ-ի մասնաբաժինը՝ 6 մլն դոլար: ԻԻՀ-ի տարածքում պահանջվող 42 մլն դոլար ներդրումները կատարելու էր հայկական կողմը (որպես կանխավճար ապագա գազի դիմաց): ՀՀ-ի տարածքում գազատարի տրամագիծը կազմելու էր 700 մմ, չափ երկարությունը՝ 237 կմ՝ 78 մլն դոլար ներդրումով: Ծրագրի իրականացման համար ընդհանուր գումարը կսւմվում էր 120 մլն դոլար:

Փաստորեն, այդ պայմանագրի կետերը ավելի նպաստավոր էին, քանի որ նախատեսվում էր օրական 4 մլն մ³ գա-

³⁹⁶ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 92-93:
³⁹⁷ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 181, թթ. 11-15: Տես նույնը նաև ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 122-123:

³⁹⁹ Տես նույն տեղում, թթ. 91-95:

³⁹⁶ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 92-93:

³⁹⁷ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 181, թթ. 11-15: Տես նույնը նաև ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 122-123:

զի առաքում, քան նախորդը:

Թեև ընդհատումներով բանակցությունները շարունակվում են: 1996 թ. դեկտեմբերի 25-29-ը Երևանում ԻԻՀ փոխնախագահ Հ. Հաբիբին և ԻԻՀ Էկոնոմիկայի և ֆինանսների նախարար Մ. Մոհիամադխանը ՀՀ ղեկավարության հետ հանդիպումների ժամանակ կարևորում են զազամուղի կառուցումը և նավթավերամշակման գործարանի կառուցումը ՀՀ-ում⁴⁰⁰: Ստորագրվում է ԻԻՀ-ից ՀՀ զազի առաքման և ֆինանսավորման մասին փաստաթուղթը: Պայմանավորվում են նաև Ազարակում 220 կվտ լարման հզորությամբ կայանի կառուցման և ֆինանսավորման մասին⁴⁰¹: Հետպատերազմյան շրջանում ՀՀ տնտեսության վերականգնման համար կարևոր նշանակություն ունեն կողմերի միջև ձեռք բերված այն համաձայնությունը, որով ՀՀ-ի հեղուկ զազի պահանջարկը 5 տարի ժամկետով ապահովելու էր ԻԻՀ-ն:

1997 թ. ավարտվում է զազատարի Մեղրի-Քաջարան 40 կմ հատվածի նախագծային աշխատանքը: Ծրագրի իրականացման համար նախատեսվում էր 3 տարի⁴⁰²: Իրանական կողմը ծրագրում էր 2000 թ. 4,5 մլրդ մ³ զազ արտահանել, որից ՀՀ-ի 1 մլրդ մ³, Թուրքիա՝ 3 մլրդ մ³, Նախիջևան կես մլրդ մ³⁴⁰³: Մինչդեռ ՀՀ-ի հետ բանակցությունները վերջնական արդյունքի չհասնեցին անգամ 2000 թ.:

1998 թ. դեկտեմբերի 16-ին ԻԻՀ ղեկավարության գործերի հավատարմատար Մ. Ֆ. Քոլեյնին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ հանդիպմանը քննարկում է զազամուղի կառուցման հարցը⁴⁰⁴: Իրանական կողմը սպասում էր, որ ՀՀ-ն Մոսկվայի հետ հստակեցնեն կոնսորցիումի հարցը և քննարկեր իրանական կողմի հետ, որտեղ էլ առաջանում էին մի շարք խնդիրներ:

⁴⁰⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 27.12.1996, 28.12.1996:

⁴⁰¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 239, թթ. 1-4:

⁴⁰² Տե՛ս ՀՀ նույն տեղում, թթ. 32-34:

⁴⁰³ Տե՛ս «Ազգ», 18.02.1997:

⁴⁰⁴ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թթ. 260-264:

Նման դեպքում իրանական կողմը չէր կարող ներդրումներ անել: Քոլեյնին առաջարկում էր ստեղծել ժամանակավոր կոմիտե՛: լուծելու բոլոր հարցերը: Սակայն հայկական կողմի դժվարությունն այն էր, որ դրանք կյանքի կոչելու համար նախատեսվող 100 մլն դոլարը բացակայում էր: Փաստորեն, զազամուղի շինարարությունը հետաձգվում էր ռուսական կողմի հետ բանակցությունների պատճառով:

Փոխարենը իրանական կողմը որոշակի ռազմավարական նպատակներ էր հետապնդում՝ կառուցելով ԻԻՀ-ՀՀ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը: Ենթադրվում էր, որ այդ գիծը կշարունակվի դեպի Կրաստան, որը, սակայն, տեղի չունեցավ Թբիլիսիի մերժման պատճառով⁴⁰⁵: Նախատեսվում էր 1997 թ. փետրվարի վերջին ԻԻՀ-ից սկսել ՀՀ էներգամատակարարումը: Սկզբում պետք է ՀՀ մատակարարվեր 65 մգվտ հոսանք, իսկ 1997 թ. վերջին՝ 200 մգվտ: Ակնկալվում էր տարեկան ստանալ 330 մլն կիլովատ էլեկտրաէներգիա⁴⁰⁶: Սակայն տեխնիկական պատճառներով հոսանքացանցի միացումը հետաձգվում է, և միայն մայիսի 1-ից ՀՀ-ն ԻԻՀ-ից ստանում է էլեկտրաէներգիա:

1999 թ. ապրիլին «Հայիդրոէներգանախագիծ» ինստիտուտը մշակում է Մեղրիի հէկ-ի սխեման: Հէկ-ի նախագծային հզորությունը կազմում էր 75,5 մգվտ, էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը՝ 410 մլն կվտ/ժ: Միջազգային կոնսորցիումը «Գազ դե Ֆրանս», «Սիմենս», «Գազպրոմ» և այլ ընկերություններ պետք է իրականացնեին այս համատեղ նախագծերը: Նախագծի ընդհանուր արժեքը 120 մլն դոլար էր, որից 42 մլն դոլարը կազմում էր ԻԻՀ տարածքի շինարարության արժեքը⁴⁰⁷: Սակայն մայիսի 24-25-ը Մեղրիում «Հայիդրոէներգանախագիծ» ինստիտուտի և ԻԻՀ «Մահաբ Ղոդս» ընկերու-

⁴⁰⁵ Տե՛ս **Բարձրության Վ.**, ՀՀ տեղը և դերը ԻԻՀ տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, էջ 146:

⁴⁰⁶ Տե՛ս «Ազգ», 30.01.1997:

⁴⁰⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 238, թ. 51:

յան մասնագետների հանդիպումից պարզ է դառնում, որ վերջինիս հետ համաձայնեցված չէր հայկական կողմի կազմած սխեման⁴⁰⁸:

Ինչ վերաբերում է գազամուղի շուրջ բանակցություններին, ապա նոր աշխուժացում է նկատվում 1999 թ. հուլիսի 22-ին, երբ Կիևում տեղի է ունենում Ինոգեյթի⁴⁰⁹ գազաթնաժողովը: Հայկական կողմն առաջարկում է ՀՀ տարածքով անխաչ-րածինների փոխադրման էժան տարբերակ: Այդ ծրագիրը 2000 թ. հունիսի 29-30-ը Բրյուսելում ստանում է Եվրոպական հանձնաժողովի համաձայնությունը: Նույն հարցը քննարկվում է նաև 2000 թ. հուլիսի 14-ին Երևանում ՀՀ-ԻԻՀ-ԵՄ եռակողմ հանդիպման և օգոստոսի 9-ին Հայ-իրանական կապերի հանձնաժողովի նիստում⁴¹⁰: Սակայն փաստը մնում է փաստ, որ եվրոպական կողմից հետագայում չնկատվեց նախաձեռնողականություն այդ հարցում: Ավելին, եվրոպական երկրները ներգրավվեցին Իրանի դեմ ծավալած ԱՄՆ-ի պատժամիջոցներին, որով ըստ էության արգելափակվեց հարցի քննարկումը:

Եվ մինչ ընթանում էին ՀՀ-ԻԻՀ բանակցությունները, 1999 թ. նոյեմբերի 18-ին Ադրբեջանի, Թուրքիայի և Կրաստանի նախագահները ԵԱՀԿ Ստամբուլի գազաթնաժողովում ստորագրում են Միջկառավարական համաձայնագիր: ԱՄՆ նախագահ Բիլ Զլինթոնը և ստորագրում է այդ համաձայնագիրը որպես դիտորդ⁴¹¹: ԱՄՆ-ը շահագրգռված էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցմամբ որպես այլընտրանք գոյություն ունեցող Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղին: ԱՄՆ-ի նպատակն էր թուլացնել ՌԴ-ի և ԻԻՀ-ի կշիռը տարածաշրջանում և

⁴⁰⁸ Տես նույն տեղում, ց. 11, գ. 182, թ. 42:

⁴⁰⁹ Եվրոպական Միության INOGATE ծրագիրը տարածաշրջանային ծրագիր է, որին ՀՀ-ն հիմնման պահից իր մասնակցությունն է բերել: Այն հնարավորություն կընձեռի միանալ էներգակիրների Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա փոխադրման խողովակաշարային ցանցին:

⁴¹⁰ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 182, թթ. 48-49:

⁴¹¹ Տես Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Ե., 2009, էջ 155:

ուժեղացնել Թուրքիայի դերն այդ հարցում:

2000 թ. մայիսի 13-15-ը «Թեհրան թայմս» գործակալությունն անդրադառնում է ՀՀ-ԻԻՀ գազամուղի ծրագրի ֆինանսավորման հարցին նշելով, որ բանակցություններ են վարվում Ճապոնիայի, Չինաստանի, ՌԴ-ի և մի շարք օտարերկրյա բանկերի հետ⁴¹²: Հարկ է նշել, որ այս փուլում էլ Թեհրանը տարածաշրջանում տնտեսական զարգացման համար առաջնային էր համարում նավթարդյունաբերությունը, որի հետևանքով անտեսվում էր գազի արդյունաբերությունը: Այդուհանդերձ, գազամուղի կառուցման նպատակով 2000 թ. նոյեմբերի 8-9-ը ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, իսկ 2001 թ. փետրվարին ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը Թեհրանում բանակցում են ԻԻՀ-ի ղեկավարության հետ: Նավթի նախարար Զիթան Զանգանեն հանձնարարում է սկսել գազատարի շինարարությունը և անգամ քննարկվում է, որ ՀՀ-ին առաջարկվի գումարի փոխարեն ԻԻՀ-ին տրամադրել ՀՀ-ում արտադրվող ապրանքներ՝ լամպ, «Նաիրիտ»-ի և Վանաձորի գործարանների արտադրանք⁴¹³: Այդպիսով, լուծվելու էր նաև գնի հետ կապված տարակարծությունը:

2001 թ. ապրիլի 15-ին ՀՀ էներգետիկայի նախարար, Հայ-իրանական կապերի միջկառավարական հանձնաժողովի նախագահ Կարեն Գալուստյանը՝ ԻԻՀ այցի ընթացքում քննարկում է գազամուղի շինարարության հարցը⁴¹⁴: ԻԻՀ-ի շահագրգիռ նախարարների հետ տեղի ունեցած հանդիպումներին մասնակցում է ԻԻՀ-ի ԱԳՆ-ի Իրան-Հայաստան գազամուղի հատուկ հանձնարարականներով դեսպան Մոհամմադ Թահերին: Հայկական կողմի համար կարևոր էր, թե ով է ստորագրելու պայմանագիրը և ինչ տեքստով: Խոսքը վերաբերում է միջգերատեսչական հուշագրին կամ միջկառավարական համաձայնագրին: Խնդիրը նրանում էր, որ առաջինի դեպքում շա-

⁴¹² Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 6, գ. 67, թ. 40:

⁴¹³ Տես նույն տեղում, ց. 7, գ. 308, թ. 30:

⁴¹⁴ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 8, գ. 86, թ. 91:

հագրաբնակչական կլիմայի կողմերի գերատեսչությունները, իսկ երկրորդի դեպքում՝ կողմերի կառավարությունները: Սակայն իրանական կողմը հակված էր կնքել միջգերատեսչական համաձայնագիր: Նույն տարվա նոյեմբերի 14-ին երևանում ԻԻՀ ԱԳՆ ԱՊՀ վարչության պետ և Կասպից ծովի հարցերով նախագահի լիազոր-ներկայացուցիչ Մեհդի Սաֆարին և ԱՊՀ առաջին վարչության պետի տեղակալ Նաջաֆի խոշորդին հանդիպում են Կարեն Գալուստյանին: Այդ հանդիպումից պարզ է դառնում, որ Սաֆարիի ջանքերով գազամուղի ֆինանսավորումը ամրագրվել էր ԻԻՀ-ի կառավարության 2002 թ. բյուջեում: Սաֆարին՝ խորհրդարանում մի խումբ էր ձևավորվել, որը լոբբիստական աշխատանք էր տանում այդ հարցերով: Նախագիծն իրականացնելու էր իրանական «Մահաբ Ղոդս» ընկերությունը և ֆինանսավորվելու էր 50-50%-ով: ՀՀ-ն իր մասնաբաժինը վճարելու էր էլեկտրաէներգիայով, որն առանձին պայմանագրով էր ամրագրվելու⁴¹⁵:

Այսպիսով, հայկական կողմին հաջողվում է բանակցությունների ընթացքում ծրագիրը ներառել ԻԻՀ-ի բյուջեի մեջ: Դա նշանակում էր, որ պետական երաշխավորությամբ է կառուցվում 120-130 մլն դոլար արժողությամբ գազամուղը: Միջկառավարական համաձայնագրի կնքումը տալիս էր դրա հնարավորությունները: Հարկ է նշել, որ 2001 թ. դեկտեմբերի 4-ին Իրանի գազի ազգային ընկերությունը պատրաստակամություն է հայտնում բանակցելու հայկական կողմի հետ ԻԻՀ-ի տարածքով թուրքմենական գազի՝ ՀՀ տարանցման մասին փոխըմբռնման հուշագրի նախագծի կապակցությամբ⁴¹⁶:

Էներգետիկ ծրագրերի հարցը դառնում է քննարկման առարկա, երբ 2001 թ. դեկտեմբերի 25-27-ը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն այցելում է ԻԻՀ: Կողմերը փոխըմբռնման հուշագրի տեսքով պայմանավորվում են գազամուղի կառուցման մասին:

Իրան-Հայաստան գազատարին անդրադառնալիս ՀՀ նախագահը նշում է, որ այն փոխշահավետ է, և ԻԻՀ-ը հավասարապես օգտվելու է դրանից⁴¹⁷: Փաստորեն նախկին տեսակետը, թե իբր այն բխում է միայն ՀՀ շահերից, վերանայվում է և այժմ գնահատվում է իբրև ռազմավարական նշանակության օբյեկտ: Այցի ավարտին ստորագրվում է նաև Արաքս գետի վրա համատեղ հէկ-ի նախագծման մասին փաստաթուղթը: Այսպիսով, այցի ձեռքբերումը գազամուղի շինարարության համաձայնագրի ստորագրումն էր:

Բանակցությունների ընթացքում հայկական կողմն նպատակ ուներ ավելի մեծ վարկեր վերցնել «Մելլաթ» բանկից, բայց իրանական կողմը նախատեսում էր վարկեր տրամադրել այն պայմանով, որ դրանցով գնվեին միայն իրանական ապրանքներ: Հայկական կողմն ակնկալում էր ստանալ մոտ 7-10 մլն դոլարի կոմերցիոն վարկ և պատրաստ էր դրա դիմաց տալ պետական երաշխիք: «Մելլաթ» բանկը համաձայն էր տալ ընդամենը 2-2,5 մլն դոլար: Սակայն 2002 թ. հունիսի 14-ին ԻԻՀ-ի արտահանման երաշխավորման հիմնադրամը կրկին Սաֆարիի աջակցությամբ պատրաստակամություն է հայտնում 20 մլն դոլարի ապրանքային վարկ տրամադրել հայկական կողմին⁴¹⁸:

2004 թ. մայիսի 13-ին ստորագրում է Իրան-Հայաստան գազատարի կառուցման վերջնական պայմանագիրը: Հարկ է նշել, որ պայմանագիրը շահավետ է և ավելի ճիշտ կլինի այն անվանել «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիր⁴¹⁹:

Գազամուղի կառուցումը որոշակիորեն կապված էր ԱՄՆ-ի շահերի հետ: Դեռևս 2000 թ. հունիսի 8-ին ՀՀ ԱԳ փոխնախարար Արմեն Մարտիրոսյանի և ԻԻՀ արդյունաբերության փոխնախարար Էբրահիմ Բահադորանիի հանդիպումից պարզ

⁴¹⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 11, գ. 182, թ. 78:

⁴¹⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 86, թ. 95, թ. 108:

⁴¹⁹ Տե՛ս Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները էներգետիկայի ոլորտում, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ձանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2012, էջ 92:

⁴¹⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 92-93:

⁴¹⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 7, գ. 308, թ. 168:

է դառնում, որ Իրան-Հայաստան գազատարի ծրագրին դեմ էր ԱՄՆ-ը⁴²⁰: Ավելին՝ նույն հարցով 2004 թ. հոկտեմբերի 4-ին Վաշինգտոնում տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան աշխատանքային խմբի նիստի ընթացքում ՀՀ կառավարությանն առաջարկվում է ստանալ իրավական խորհրդատվություն՝ ԱՄՆ-ի կողմից ԻԻՀ-ի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասին օրենքի ազդեցությունից խուսափելու նպատակով⁴²¹: Ըստ էության, հայկական կողմին հաջողվում է չեզոքացնել այդ քննարկումները որպես անհերքելի փաստներ կայացնելով ՀՀ-ի շրջափակումը: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խոսքով՝ «Գազամուղի շինարարությունը հարվածային արագությամբ էր կատարվում, այնպես որ լրջորեն անհանգստացրեց ԱՄՆ Պետդեպին: ԱՄՆ դեսպանը շտապեց ԱԳ նախարար Վ. Օսկանյանի մոտ՝ ինձ նամակ փոխանցելու թախանձագին խնդրանքով: Նամակում ամերիկացիները դեմ էին արտահայտվում գազամուղի բացման հանդիսավոր արարողությանն ու համառորեն առաջարկում ինձ հրաժարվել դրանից»⁴²²: Այդուհանդերձ, 2007 թ. մարտի 19-ին տեղի է ունենում Իրան-Հայաստան գազամուղի բացումը ՀՀ և ԻԻՀ-ի նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Մահմուդ Ահմադինեժադի մասնակցությամբ⁴²³:

2002 թ. ապրիլին «Սանիր» ընկերությունը և հայ էներգետիկները հստակեցնում են Ազարակի փոխանջատիչ կետի շինարարությունն ավարտելու և «Սյունիք-Կենտրոն» բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի Ազարակ-Շինուհայր հատվածը կառուցելու հարցերը: Ստորագրված պայմանագրով Ազարակի փոխանջատիչ կետի շինարարությունն ավարտելու համար անհրաժեշտ էր 585 հազար դոլար, իսկ Ազարակ-Շինու-

⁴²⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թ. 265:
⁴²¹ Տե՛ս նույն տեղում, ց. 11, գ. 183, թ. 22:
⁴²² Տե՛ս Քոչարյան Ռ., Կյանք և ազատություն, Ե., 2019, էջ 443:
⁴²³ Բացվեց Իրան-Հայաստան գազամուղը, <https://armenia-am.ga:prom-com/press/about-company/2007/03/70/> դիտվել է 07.12.2022:

հայր հատվածի համար՝ 10 մլն դոլար: Երկուսն էլ հատկացնելու էր «Սանիր»-ը: Հայկական կողմը փոխհատուցելու էր համարժեք էներգիայով: Հուլիսի 8-11-ը Երևանում ԻԻՀ էներգետիկայի նախարար Հաբիբուլլահ Բիթարաֆը քննարկում է ոլորտում գործակցության հուշագրի կատարման ընթացքը⁴²⁴:

Հարկ է նշել, որ 1998 թ. սեպտեմբեր ամսից մինչև 2002 թ. հուլիս ամիսը յուրաքանչյուր ուղղությամբ փոխանցվել է ավելի քան 1,3 մլրդ կվտժ էլեկտրաէներգիա: Ըստ Բիթարաֆի էլեկտրաէներգիայի փոխանակումը, հէկ-երի կառուցումը և հետազոտական աշխատանքների իրականացումը ոչ թե առևտրային, այլ տարածաշրջանային հեռահար նպատակ էին հետապնդում⁴²⁵: 2002 թ. սեպտեմբերի 19-ին տեղի է ունենում 377 հազար դոլար արժողությամբ «Ազարակ 220 կվ» փոխանջատիչ կետի բացումը⁴²⁶:

Այսպիսով, իրանական կողմը նախադրյալներ էր ստեղծում էներգետիկայի ոլորտը տնտեսական կապերի ռազմավարական առանցքում ներառելու համար:

2004 թ. սեպտեմբերի 8-9-ը ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամիի ՀՀ այցի ընթացքում ստորագրվում է էներգետիկայի բնագավառում գործակցության հուշագիր, ըստ որի, իրականացվելու էին Ազարակի փոխանջատիչ կետի շինարարության ավարտի, Սյունիք-Կենտրոն բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի կառուցման և Արաքս գետի հիդրոէներգետիկ ներուժի օգտագործման տեխնիկատնտեսական հիմնավորման ծրագրերը: Իրանական կողմը ևս 2 մլն դոլար է տրամադրում այլընտրանքային քամուց արտադրվող էլեկտրաէներգիայի ծրագրի համար⁴²⁷:

Այսպիսով, Մեղրիի տարածքում իրականացված էներգետիկ ծրագրերը (շուրջ 10 մլն դոլարի) նպաստեցին, որ Մեղ-

⁴²⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11.07.2002:
⁴²⁵ Տե՛ս նույն տեղում, 17.10.2002:
⁴²⁶ Տե՛ս նույն տեղում, 21.09.2002:
⁴²⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 182, թ. 78:

րին քաղաքական շահարկումների առարկա չդառնա: Ինչ վերաբերվում է դեռևս կառուցման փուլում գտնվող էլեկտրահաղորդման երրորդ գծին, ապա դրա շահագործման դեպքում գազամուղը կարող է աշխատել իր ամբողջ հզորությամբ:

2.6. Իրանական կապուղիները՝ որպես կյանքի ճանապարհ

Հայտնի է, որ խորհրդային տարիներին Իրանի հետ սահմանը Հայաստանի հարավային հատվածում եղել է փակ, բացակայում էին հաղորդակցության միջոցները⁴²⁸: Սակայն ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին կառավարությունը խնդիր է դնում Արաքս գետի վրա կամուրջ կառուցել և Հայաստանը կապել Իրանի հետ: Այդ նպատակով 1987 թ. վերջերին պրոֆեսոր Ժորա Միրզաբեկյանը ստեղծում է նախաձեռնող խումբ՝ հարցերը Մոսկվայի և Թեհրանի միջև փոխհամաձայնեցնելու⁴²⁹: Ավելին կամրջի շինարարության հարցը ՀԽՍՀ կառավարության 1989 թ. դեկտեմբերի 13-ի թիվ 135 որոշումով գտնում է իր ձևակերպումը⁴³⁰: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզմամբ հարցը մնում է առկախ: Եվ ահա նորանկախ շրջակիակված ՀՀ-ի համար առաջնահերթ այդ հարցը դարձավ օրակարգային նշանակության: Այդ հարցում է, որ անփոխարինելի ներդրում ունեցավ Միրզաբեկյանի նախաձեռնությամբ վաղուց ստեղծված խումբը:

1992 թ. մարտի 11-13-ը ՀՀ է այցելում ԻԻՀ հաղորդակցության և ճանապարհների նախարարի տեղակալ Սաիդ Նե-

⁴²⁸ Տե՛ս Մկրտչյան Կ., Նոր փաստեր Հայաստան-Իրան հիմնական կամրջի կառուցման մասին, «Կանթեր» գիտական հոդվածներ, Ե., 2011, 2(47), էջ 157-160:

⁴²⁹ Տե՛ս Միրզաբեկյան Ժ., Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում, Ե., 1996, էջ 21, 27:

⁴³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 26-45:

ժաղը: Կողմերը քննարկում են Աղրբեջանի տարածքում մնացած 1 մլրդ դոլար արժողությամբ իրանական 2700 վագոն բեռների Մեղրի-Ջուլֆա ճանապարհով տեղափոխման հարցը: Ակնհայտ է, որ հայկական կողմը դեմ չէր, սակայն խնդիրը ստեղծել էր Աղրբեջանը, որը թույլ չէր տալիս բեռնափոխադրումը:

Նշված այցի ընթացքում կողմերը ստորագրում են փոխըմբռնման համաձայնագիր տրանսպորտային համագործակցության վերաբերյալ⁴³¹: Համաձայնագրի 1.2 կետով որոշվում է տրանսպորտային միջոցների ելումուտն իրականացնել Մեղրիի սահմանային անցակետով: 2-րդ կետով նախատեսվում էր կառուցել ժամանակավոր և հիմնական կամուրջներ: 4-րդ կետով կողմերը միմյանց թույլ էին տալիս իրենց տարածքով անարգել օգտվել երկաթուղուց: Իրանական կողմը համաձայնում է ՀՀ ներմուծվող, արտահանվող և տարանցիկ բեռները Կասպից ծովի ենթեղի և Պարսից ծոցի ենամ Խոմեյնի նավահանգիստների միջոցով փոխադրել այլ երկրներ և ապահովել բեռների պահեստավորումը:

ՀՀ պետնախարար Ռուբեն Զիֆթալարյանն ԻԻՀ-ի պատվիրակության հետ քննարկում է ԻԻՀ-ն ՀՀ-ին կապող երկաթգծի կառուցման հարցը: Տարբերակներից մեկով նախատեսվում էր Մեղրիից երկաթգծի կառուցել մինչև Երասխական կամ Ջերմուկ՝ հետագայում Մարտունի-Շորժա գծին միանալու պայմանով: Հայկական կողմի առաջարկած տարբերակով իրանական հատվածում նպատակահարմար էր կառուցել երկաթգծի Մեղրի-Ջուլֆա կամ Մեղրի-Մարանդ հատվածը: Մինչդեռ իրանական կողմի կարծիքով ԻԻՀ-ի տարածքում երկաթգիծ պետք է կառուցվի ոչ թե Ջուլֆայից մինչև Մեղրի՝ 64 կմ, այլ Ալամդար քաղաքից մինչև Մեղրի՝ 45 կմ հեռավորությամբ⁴³²: Հայկական կողմի առաջարկը հիմնավորվում էր ռազ-

⁴³¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 8, գ. 86, թթ. 1-6:

⁴³² Տե՛ս Բայրուրյան Կ., Հայ-իրանական հարաբերությունները..., էջ 17:

մաստրատեգիական նկատառումով, որի դեպքում բացառվում էր Նախիջևանի կողմից վտանգի ենթարկվելու հավանականությունը:

Ի կատարումն նշված համաձայնագրի՝ 1992 թ. մարտի 24-ին ընդունվում է «Մեղրու շրջանում Արաքս գետի վրա ավտոձանապարհային կամրջի շինարարության մասին» ՀՀ կառավարության թիվ 175 որոշումը: Հայկական կողմը ժամանակավոր կամուրջ է գնում ՌԴ բանակից և տեղադրում գետի վրա⁴³³: Մայիսի 6-ին ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանի մասնակցությամբ Արաքս գետի վրա բացվում է Մեղրի-Նորդուզ 120 մ երկարությամբ և 60 տ տարողությամբ զինվորական լաստակամուրջը⁴³⁴:

Թեհրանը հետաքրքրված էր նաև երկաթգծի բացման հարցով: Այդ նպատակով իրանական կողմի միջնորդությամբ 1992 թ. ապրիլի 1-ին Իջևանում տեղի են ունենում ՀՀ-ի և Ադրբեջանի (պատվիրակության ղեկավարն էր նախագահի խորհրդատու Ռասիմ Մուսաբեկովը) միջև բանակցություններ: Կողմերը պայմանավորվում են բացել երկաթուղային ձանապարհները և Ադրբեջանից ՀՀ եկող գազամուղը⁴³⁵: Սակայն ապրիլի 2-ին Ադրբեջանի վարչապետ Հասան Հասանովը ՀՀ-ի վարչապետի պաշտոնակատար Գ. Հարությունյանին հեռախոսազրույցում հայտնում է, որ իջևանյան բանակցություններին Ադրբեջանի պատվիրակությունը լիազորված չի եղել կնքելու նման համաձայնություն:

Փաստորեն, Բաքվի կողմից զրոյացվում են իրանական միջնորդական ջանքերը՝ տարածաշրջանում երկաթգիծը, ինչպես նաև Ադրբեջանից ՀՀ եկող գազամուղը բացելու ուղղությամբ: Մինչդեռ իրանական կողմը փորձում էր Արցախի հակամարտությունը չկապել խնդրի առարկայի հետ:

1992 թ. հոկտեմբերի 2-ին և 3-ին Նախիջևանում հանդի-

պում են ՀՀ-ի, ԻԻՀ-ի և Ադրբեջանի պատվիրակությունները⁴³⁶: Բանակցություններում կողմերը ձեռք են բերում պայմանավորվածություն, որի հիման վրա ՀՀ երկաթգծի վարչության մասնագետները հոկտեմբերի 8-ից ձեռնարկում են Մեղրու շրջանում երկաթգծի վերականգնման աշխատանքներ: Սակայն Ադրբեջանը, չպահպանելով համաձայնագրով նախատեսված հրադադարը, կրակի տակ է առնում երկաթուղագծի վերականգնման աշխատանքների հատվածները:

1992 թ. հոկտեմբերի 6-ին Երևանում ստորագրվում է ՀՀ-ի և ԻԻՀ-ի կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային փոխադրումների համաձայնագիր⁴³⁷: Դրանով երկաթգծի Մեղրիի հատվածի վերանորոգման աշխատանքների ընթացքում պետք է ներգրավվելին իրանական կողմի ներկայացուցիչները, իսկ հայկական կողմի ներկայացուցիչն իրանական վագոնների վրա դնելու էր իր կապարակնիքը, որոնք պետք է ընդուներ Զուլֆայում: Չնայած փաստաթուղթը կարևոր դրույթներ էր պարունակում, սակայն տարածաշրջանի լարվածությունը խոչընդոտում էր դրա իրականացմանը:

Այսպիսով, Ադրբեջանն իր գործողություններով ի սկզբանե տապալեց Երևանի և Բաքվի միջև իրանական միջնորդությունը կապուղիների բացման հարցում ևս, իսկ բանակցություններին մասնակցելը, ինչպես մյուս դեպքերում, ընդամենը խաղաղարարի տպավորություն գործելու նպատակն էր հետապնդում:

1992 թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ կառավարությունը իրանական կողմին առաջարկում է օգտագործել Իջևան-Երևան-Նախիջևան երկաթուղագիծը Ադրբեջանի տարածքում կուտակված վերը նշված իրանական 2700 վագոն բեռների փոխադրման համար⁴³⁸: Հոկտեմբերի 29-ին ԻԻՀ-ի ԱԳՆ-ում քննարկվում է երկաթուղու ապաշրջափակման հարցը: Ըստ ի-

⁴³³ Տե՛ս Ահարոնյան Լ., Փոթորկոտ կեանքիս օրերը, գիրք Ա, էջ 885:

⁴³⁴ Տե՛ս Բաղայան Գ., Իրան. Հանրապետարան, էջ 447:

⁴³⁵ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 326, ց. 9, գ. 45, թ. 26:

⁴³⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 170, թ. 37:

⁴³⁷ Տե՛ս «Ազգ», 07.10.1992, Տե՛ս նաև: ՀԱՍ, ֆ.326, ց. 9, գ. 94, թթ. 7-8:

⁴³⁸ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 326, ց. 9, գ. 170, թ. 41:

րանական աղբյուրների՝ ՀՀ-ն, ի տարբերություն Ադրբեջանի, լրջորեն չէր մոտենում երկաթուղու բացման հարցին, ավելին, իրանական կողմի պնդմամբ Ադրբեջանի կողմից չէին եղել հարձակումներ և գնդակոծություններ⁴³⁹։ Նոյեմբերի 11-15-ը Երևանում Բահրամ Ղասեմին ՀՀ ղեկավարության հետ քննարկում է երկաթգծի բացման և իրանական բեռների տեղափոխման հարցերը, որոնք լուծում չստացան։ Ղասեմին իրանական աղբյուրներում շրջանառվող տեսակետը ԻԻՀ-ի ԱԳՆ-ի պաշտոնական դիրքորոշումը չէր համարում։ Մինչդեռ փաստ է, որ եթե ՀՀ-ն չափագրգռված չլիներ երկաթուղու բացմամբ, ադրբեջանական կողմի բանվորներին չէր առաջարկի մասնակցել շինարարությանը և իրանական միջնորդներին չէր հրավիրի։ Իրականում Բաքուն Թեհրանին մոլորության մեջ էր գցել սխալ տեղեկատվությամբ։

1993 թ. օգոստոսի սկզբին վերսկսվում է իրանական կողմի նախաձեռնությունը երկաթուղու վերաբացման վերաբերյալ։ Թեհրանն առաջարկում է Նախիջևանի տարածքով անցնող Ջուլֆա-Երևան երկաթգիծը բաց հայտարարել իրանցի գործարարների համար⁴⁴⁰։ Առաջարկվում էր այդ ճանապարհով ՀՀ արդյունաբերական ձեռնարկություններին հումք և վառելանյութ տրամադրել ու փոխարենը պատրաստի ապրանք տեղափոխել ԻԻՀ։ Սակայն կրկին Ադրբեջանի համառ կեցվածքի պատճառով իրանական այս առաջարկը ևս ձախողվեց։

Ինչ վերաբերում է Ադրբեջանում կուտակված վերոնշյալ 2700 վագոն բեռների տեղափոխման հարցին, ապա 1992 թ. դեկտեմբերի 22-25-ը ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը բանակցություններ է վարում ԻԻՀ-ի ղեկավարության հետ⁴⁴¹։ ՀՀ-ն պատրաստ էր ցանկացած պահին Ադրբեջանում կուտակված վերոնշյալ բեռները տեղափոխել Իջևանի հանգույ-

⁴³⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 84, թթ. 103-106։

⁴⁴⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 1, գ. 283, թ. 88։

⁴⁴¹ Տե՛ս «Ազգ», 29.12.1992։

ցով՝ իր վրա վերցնելով տեղափոխման հարցերը անվտանգության երաշխիքներ ստեղծելու դեպքում։ ՀՀ-ի պատվիրակությանը հաջողվում է իրանական կողմին հավաստել հայերի բարի կամքը և ցրել նրանց մտավախությունները։ Ղախթանում է բանակցությունների ակտիվացմանը և հնարավոր դարձնում Գագիկ Հարությունյանի հանդիպումներն ԻԻՀ-ի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի, փոխնախագահ Հասան Հաբիբիի, խորհրդարանի նախագահ Ալի Աբբար Նաթեղ Նուրիի, ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթիի, նրա տեղակալ Մահմուդ Վայեզիի հետ։ Այսպիսով, հայկական կողմն իր առջև դրված գլխավոր խնդիրը հաջողությամբ իրագործում է։ Արդյունքում ստորագրվում են մի շարք պայմանագրեր, այդ թվում՝ ՀՀ-ի և ԻԻՀ-ի ավիացիայի վարչության միջև օդային կապի մասին, որով շաբաթը մեկ կազմակերպվելու էր Երևան-Թեհրան չվերթը։

Կողմերը ստորագրում են արձանագրություն, ըստ որի, տարանցիկ փոխադրումների համար ՀՀ-ն օգտագործելու էր ԻԻՀ-ի երկաթուղային, ցամաքային ուղիների և նավահանգիստների հնարավորությունները։ Ի կատարումն այդ փաստաթղթի 1993 թ. հունվարի 27-ին ՀՀ և ԻԻՀ-ի միջև կնքվում է տարանցիկ փոխադրումների պայմանագիր։ ԻԻՀ-ն պարտավորվում էր Էնգելի նավահանգստում ստացած ռուսական հեղուկ վառելիքի դիմաց Ջուլֆայում ՀՀ-ին տրամադրել նույն որակի վառելիք, և որպես այդ գործարքի վճար վերցնել վառելիքի 25%-ը։ ԻԻՀ-ն վառելիքի մատակարարումը ՀՀ-ին պետք է սկսեր ռուսական վառելիքը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում՝ օրական 200-300 տ ծավալով։ Առաջին հեղուկանավն Էնգելիում դատարկվում է 1993 թ. մայիսի 6-ին։ Ստացված վառելիքի դիմաց ՀՀ-ն պետք է ստանար 2000 տ դիզվառելիք⁴⁴²։ Հուլիսի 5-ին Գագիկ Հարությունյանը դիմում է Նուրբախշին՝ ԻԻՀ-ից ՀՀ հեղուկ վառելիքի տեղափոխման ձգձգում-

⁴⁴² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 1, գ. 283, թթ. 75-76։

ները վերացնելու համար⁴⁴³: Հարցը լուծվում է երկարատև բանակցություններից հետո, երբ Արևելյան Ատրպատականի փոխնահանգապետ Մ. Խաթիրին այցելում է ՀՀ: Փաստորեն, հարցի լուծման հանգույցը Թավրիզում էր, այլ ոչ թե Թեհրանում:

Պայմանավորված Արցախի ճակատում ընթացող ռազմական գործողություններով, իրանական կողմից բեռների փոխադրման ձգձգումներ են եղել նաև հետագայում, երբ 1993 թ. օգոստոսի 4-ին ՀՀ տրանսպորտի նախարար Հենրիկ Քոչինյանի և Մ. Խաթիրի ստորագրած պայմանագրի համաձայն էնդեվիով փոխադրված ՌԴ-ի դիզվառելանյութը ՀՀ հասցնելու համար իրանական կողմը Ջուլֆայում պետք է ՀՀ-ին հանձներ օրական 200 տ դիզվառելիք, բայց մինչև 1993 թ. սեպտեմբերի 14-ը իրանական կողմը բաց չէր թողել ՀՀ-ին հասանելիք 850 հազար լիտր վառելանյութը: Հայկական կողմը դիմում է ԻԻՀ-ի ճանապարհների և տրանսպորտի նախարար Ասքար Թորքանին, որ իրանական կողմից ավտոմեքենաներ չընդունելը և դիզվառելանյութ բաց չթողնելը կդիտվի որպես պայմանագրի չկատարում՝ դրանից բխող հետևանքներով⁴⁴⁴:

Հատուկ նշանակություն ունեն հիմնական կամուրջի կառուցումը, որի ֆինանսավորման հարցը ՀՀ-ի համար լուծվեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայ համայնքների հատկացրած 1 մլն դոլար գումարով⁴⁴⁵: Այն սկզբում նախատեսված էր ՀՀ աղետի գոտում բնակարաններ կառուցելու համար, սակայն շրջափակման և պատերազմի հետևանքով որևէ ապրանք չէր փոխադրվում ՀՀ ուստի աղետի գոտում աշխատանքներ չէին կատարվում: 1992 թ. հունիսի 28-ին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ և «Հայրենի աղետյալների օգնության ֆունդի» նախագահ Տ. Աղան եպս.

⁴⁴³ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 176, թթ. 38-39, թթ. 49-50:

⁴⁴⁴ Տես նույն տեղում, թ. 80:

⁴⁴⁵ Տես Միդլսեքսյան ժ., նշվ. աշխ., էջ 82-83:

Պալիոզյանը գումարը հանձնում է ՀՀ կառավարությանը⁴⁴⁶:

1993 թ. հունիսի 17-ին և հուլիսի 8-ին Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը⁴⁴⁷, ինչպես նաև հոկտեմբերի 10-ին ՀՀ-ի դեսպանության խորհրդական Գրիգոր Առաքելյանը ԻԻՀ-ի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության արտաքին կապերի վարչության պետ, Իրանա-հայկական համաձայնեցման հանձնաժողովի համակարգող Մ. Բիաբանիի հետ, հոկտեմբերի 12-ին ՀՀ կապի նախարար Հենրիկ Քոչինյանը Թավրիզում⁴⁴⁸, 1994 թ. հունվարի 11-12-ը կրկին Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովը Կապան ու Մեղրի քաղաքներում արտագնա նիստերի⁴⁴⁹, 1994 թ. մայիսի 16-18-ը ՀՀ-ի փոխնախագահ Գագիկ Հարությունյանը Գորիսում ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետի հետ հանդիպման ընթացքում⁴⁵⁰ քննարկում են կամուրջի կառուցման հարցը:

Այսպիսով, անհրաժեշտ էր վերջնական պայմանավորվածություն ձեռք բերել և իրանական ափում սկսել կամուրջի շինաշխատանքները: Իրանական կողմն անտեսում է հայկական կողմի նշանակած վերջնաժամկետը՝ կամուրջը շահագործման հանձնել 1994 թ. օգոստոսի 31-ին:

Կամուրջի կառուցման աշխատանքները տևեցին մի քանի տարի՝ պայմանավորված ռազմաքաղաքական և ֆինանսական խնդիրներով: 1994 թ. սեպտեմբերի 13-ին Հենրիկ Քոչինյանն իրանական կողմին բողոքում է, որ երկու տարի է Արաքս գետի վրա կառուցվում է կամուրջ, սակայն իրանական կողմը չէր փոխանցել իր ֆինանսական մասնաբաժինը⁴⁵¹: Նրա մեկ այլ դիմումում նշվում էր, որ 1993 թ. հոկտեմբերի 18-ին իր

⁴⁴⁶ Տես Միսրոնյան Լ., նշվ. աշխ., էջ 890:

⁴⁴⁷ Տես ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 6-15:

⁴⁴⁸ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 283, թթ. 138-139:

⁴⁴⁹ Տես ՀԱԱ, ֆ. 1177, ց. 1, գ. 52, թթ. 67-73:

⁴⁵⁰ Տես նույն տեղում, ֆ. 827, ց. 1, գ. 137, թ. 55:

⁴⁵¹ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 285, թ. 107:

և ԻԻՀ-ի տրանսպորտի ու ճանապարհների շինարարության նախարարի տեղակալ Զարին Ֆարազգադե Հավվայի հանդիպման ժամանակ որոշում էր ընդունվել, որ հիմնական համաձայնագրի կնքման համար իրանական կողմը կիրավորի ՀՀ-ի ներկայացուցիչներին: Սակայն անցել էր մեկ տարի և համաձայնագրի հարցը չէր լուծվել⁴⁵²: ՀՀ-ն իր բաժնեմասը հատկացրել էր, իսկ իրանական կողմը դրամական ներդրում չէր կատարում, որի հետևանքով կամուրջի շինարարությունը դադարել էր:

1994 թ. նոյեմբերի 11-ին ԻԻՀ-ի դեսպան Համիդեզա Միքքար Էսֆահանին ՀՀ վարչապետ Հրանտ Բազրալոյանին հայտնում է, որ իրանական կողմը լուծել է Մեղրիի կամուրջի կառուցման հարցը և պետք է կնքվի համաձայնագիր գումարի մասին⁴⁵³: Արդյունքում 1994 թ. նոյեմբերի 25-27-ը ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը Թեհրան այցի ընթացքում ստորագրում է Արաքս գետի վրայով սահմանային կամուրջի կառուցման մասին պայմանագիր, որով լուծվում է կամուրջի ֆինանսավորման հարցը⁴⁵⁴:

Զնայած փաստաթղթային ձևակերպմանը, այդուհանդերձ գործնականում խնդիրը մնում էր չլուծված: 1995 թ. օգոստոսի 20-ին ԻԻՀ-ի խորհրդարանի փոխնախագահ Հասան Ռոհանին ՀՀ կատարած այցի ընթացքում պայմանավորվում է օգոստոսի 29-ին Մեղրիում կազմակերպել հանդիպում: Սակայն նշված օրը Մեղրիում ՀՀ-ի պատվիրակությանը իրանական կողմից ոչ ոք չի դիմավորում: Օգոստոսի 31-ին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը դիմում է Իրան-Հայաստան կապերի հանձնաժողովի նախագահ, ԻԻՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարար Մ. Մոհամմադխանին, ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթին և ԻԻՀ-ի խորհրդարանի փոխնախագահ Հասան Ռոհանին և հայտնում իր մտահոգությունը

իրանական կողմից ֆինանսական պարտավորությունները չկատարելու համար⁴⁵⁵: Ի վերջո, հայկական կողմի բազմաթիվ դիմումներից հետո միայն 1995 թ. աշնանը ԻԻՀ-ն կատարեց ֆինանսական իր պարտականությունները: Շինարարությունն ավարտվեց 1995 թ. դեկտեմբերի 26-ին, երբ Արաքս գետի վրա զգված 192 մ երկարությամբ կամուրջն ավտոտրեզոնով կապեց ՀՀ-ն և ԻԻՀ-ն: Կամուրջի ընդհանուր արժեքը 2,46 մլն դոլար էր, որից 1 մլն-ը ներդրել էր իրանական կողմը:

Հարկ է նշել, որ հիմնական կամուրջի կառուցումը հրատապ էր դարձել, քանի որ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի խոսքով՝ ժամանակավոր կամրջի պանտոններն արդեն շարքից դուրս էին եկել և ամեն վերանորոգման համար նվազագույնը պետք էր լինում 5 ժամ, իսկ նավակամրջի փակվելու դեպքում Երևանում մոտավորապես 5%-ով գների ցատկ էր գրանցվում: «Շատ դժվար վիճակում էինք գտնվում, մանավանդ որ Հայաստանում մի շարք ասպրանքներ խիստ դեֆիցիտ էին, հատկապես այլուր՝ որ հաճախ Թուրքիայից էինք գնում, բայց Հայաստան էր մտնում Իրանի տարածքով»⁴⁵⁶:

Հիրավի, կամուրջի կառուցման գործընթացը բարդ «փորձություն» էր ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները անսասան պահելու դիտանկյունից: Իրականում կամուրջի կառուցման աշխատանքներին իրանական կողմի վրա փորձում էր ազդել Բաբուն: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը նամակ է հղում Հաշեմի Ռաֆսանջանիին, որը դառնում է ԻԻՀ ազգային անվտանգության խորհրդի քննարկման հարց: Նամակը, որը տեսել է Գ. Հարությունյանը, գրված է. «Ավելի լավ է դուք զենք մատակարարեք Հայաստանին, բայց հրաժարվեք կամրջի կառուցման գաղափարից: Եթե դուք այդ կամուրջը կառուցեք, մեր հարաբերությունները առնվազն 100 տարի այլևս չեն վերա-

⁴⁵² Տե՛ս նույն տեղում, թթ. 123-124:

⁴⁵³ Տե՛ս նույն տեղում, թ. 148:

⁴⁵⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 139:

⁴⁵⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 286, թթ. 125-126:

⁴⁵⁶ Տե՛ս Խականդադյան Գ., նշվ. աշխ., էջ 275:

կանգնվի»⁴⁵⁷:

Պրոֆ. Ժ. Միրզաբեկյանի խոսքով՝ կամուրջի կառուցումը ութ տարվա մաքառումների, ցանկացած շրջափակումը ձեղքելու և դեպի բաց աշխարհ դուրս գալու, չնայած շատ ծանր, բայց բարեհաջող փորձ էր⁴⁵⁸:

Այսպիսով, հայկական կողմի բազմաթիվ դիմումների անպատասխան մնալն ուներ ոչ այնքան ֆինանսական, որքան քաղաքական պատճառներ: Իրականում Թեհրանը ձգտում էր «բավարարել» ԻԻՀ-ում ադրբեջանական լրբբիի ցանկությունը և խուսափել Բաքվի հակաիրանական քարոզչությունից, իսկ Արցախում հաստատված հրադադարից հետո բացել Երևան-Նախիջևան-Զուլֆա երկաթգիծը:

ԻԻՀ-ի կառավարությունը բանակցում էր Ադրբեջանի հետ Նախիջևանով անցնող երկաթուղու ճանապարհը բացելու ուղղությամբ: Այդ մասին 1995 թ. փետրվարի 16-ին ԻԻՀ դեսպան Համիդբեգա Էսֆահանին տեղեկացնում է ՀՀ վարչապետ Հրանտ Բազրատյանին հանդիպման ժամանակ⁴⁵⁹: Ի վերջո, համոզվելով, որ խնդրո առարկա հարցում Բաքվի կողմից հնարավոր չէ հասնել որևէ ընդառաջման իրանական կողմն կատարեց իր ֆինանսական պարտականությունները:

1996 թ. հունվարի 9-ին տեղի է ունենում Արաքս գետի վրա ՀՀ-ԻԻՀ 400 տ բեռնակրությամբ հիմնական կամուրջի հանդիսավոր բացումը: Կամուրջն առաջին համատեղ կառույցն էր և ՀՀ-ի համար արտաքին աշխարհ դուրս գալու բացառիկ ուղի⁴⁶⁰: Կամուրջը նպաստեց առևտրաշրջանառության ընդլայնմանը: Բեռնափոխադրումներն ավելացան 3-4 անգամ:

⁴⁵⁷ Տես նույն տեղում, էջ 276:

⁴⁵⁸ Տես Միրզաբեկյան Ժ., նշվ. աշխ., էջ 91:

⁴⁵⁹ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 286, թթ. 24-26:

⁴⁶⁰ Կամուրջի կառուցման գործում մեծ դեր են ունեցել Թ. Տեր-Պետրոսյանը, պրոֆ. Ժ. Միրզաբեկյանը, Ա. Ավետիսյանը, Հ. Քոչինյանը, Ֆ. Փիրումյանը, ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամավորներ՝ Վ. Վարդանյանը, Ա. Բաղդումյանը և գործարար Լ. Ահարոնյանը: Վերջինիս 2003 թ. սեպտեմբերի 26-ին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից տրվում է շնորհակալագիր:

Բավական է նշել, որ եթե 1994 թ. երկկողմ առևտրաշրջանառությունը կազմում էր 57 մլն, 1995 թ.՝ 94 մլն, ապա 1996 թ. այն կազմեց 193 մլն դոլար, որը մինչև 2011 թ. մնաց անգերազանցելի: 1996 թ. կամուրջի հարևանությամբ շահագործման են հանձնվում ԻԻՀ-ի, իսկ 1998 թ. ՀՀ-ի մաքսակետերը⁴⁶¹: 1997 թ. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքով՝ եթե մեկ շաբաթով դադարի կամուրջի գործունեությունը, ապա գները ՀՀ-ում կաճեն երկու անգամ, այսինքն՝ տեղի կունենա բնակչության կենսամակարդակի 100 տոկոսանոց անկում⁴⁶²:

Հարկ է նշել, որ կամուրջի շահագործման հանձնումը ուղղակի հունից հանեց Բաքվին, որը դա գնահատեց՝ որպես Ադրբեջանի մեջքին Իրանի կողմից հասցված «դաշույնի հարված»: Ադրբեջանի արտաքին քաղաքական հարցերի գծով պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն մեղադրում էր Թեհրանին, որ նա դաշնակցային հարաբերությունների մեջ էր մտնում ՈՂ-ի ու ՀՀ-ի հետ ընդդեմ Ադրբեջանի: Նրա կարծիքով աստիճանաբար ձևավորվում է Մոսկվա-Երևան-Թեհրան առանցքը, որը կոչված է ռուս-հայ-իրանական սեպ խրել թուրքական մակրոսուբյեկտի մեջ⁴⁶³:

Հարկ է նշել, որ կապուղիների ստեղծման գործում կարևոր էր 1994 թ. հունվարին Երևան-Թեհրան ավտոբուսային երթուղու բացումը, Թեհրան-Երևան ուղիղ հեռախոսակապի կայան ստեղծելու համար ՀՀ կառավարության որոշմամբ անհրաժեշտ գումարի հատկացումը, 1994 թ. սեպտեմբերի 5-ին կողմերի միջև 8 մեգաբիթ վայրկյան թվային ռադիո-ռելեային միջազգային հեռախոսակապ ստեղծելու մասին փոխըմբռնման հուշագրի կնքումը⁴⁶⁴:

Երկկողմ կապերի խորացման գործում կարևոր էր օդային հաղորդակցության հարցը: Թեհրան-Երևան չվերթի իրակա-

⁴⁶¹ Տես Բաղդասյան Գ., Իրան. Հանրագիտարան, էջ 448:

⁴⁶² Տես Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 496:

⁴⁶³ Տես Բայրուրյան Վ., Իրան-Ադրբեջան հարևաններ, թե՛..., էջ 17:

⁴⁶⁴ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 285, թթ. 84-86:

նացման հարցում մեծ է եղել Լևոն Ահարոնյանի ներդրումը⁴⁶⁵։ Ինչ վերաբերվում է Երևան-Թավրիզ չվերթին, ապա այն կարճ է տևում։ Փոխարենը՝ 1997 թ. դեկտեմբերի 29-ին իրանական «Դիդարե սեյրաֆիթ» և Երևանի միջքաղաքային ուղևորաւորանսպորտային ընկերության միջև կնքված պայմանագրով 1998 թ. հոկտեմբերի 25-ից սկսում է գործել Երևան-Թեհրան ավտոբուսային երթուղին⁴⁶⁶։

Երկկողմ կապերի զարգացման գործում նոր ազդակ կարող էր լինել Քաջարանի թունելի կառուցումը, որի միջոցով անխափան կապ կհաստատվի ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ամբողջ տարվա ընթացքում, այդ թվում՝ նոյեմբերից մինչև ապրիլ ամիսներին՝ լեռնանցքում ձնահյուսերի ժամանակ։ Սակայն 1999 թ. հունվարի 22-ին Հայ-իրանական կապերի կառավարական հանձնաժողովը՝ Երվանդ Ջախարյանի նախագահությամբ, Քաջարանի թունելի հարցը հանում է օրակարգից իրանական կողմի ֆինանսավորման անհամաձայնության պատճառով։ Իրանական կողմը չհամաձայնվեց այն կառուցել սեփական ներդրումների հաշվին։

Քաջարանի թունելի շինարարության շուրջ նոր քննարկումներ սկսվեցին 2001 թ.։ Իրանական կողմն առաջարկում է 50% ներդրում կատարել, հակառակ դեպքում՝ իրանական ներդրումները 30%-ից չեն անցնի⁴⁶⁷։ Հարցը քննարկվում է նոյեմբերի 14-ին ՀՀ էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանի և ԻԻՀ ԱԳՆ ԱԴՀ գլխավոր վարչության պետ Մ. Սաֆարիի ու նրա տեղակալ Ն. Խոշուրդիի հանդիպման ժամանակ⁴⁶⁸։ Դեկտեմբերի 27-ին ՀՀ նախագահը Թեհրանում ստորագրում է Քաջարանի թունելի կառուցման մասին համաձայնագիրը, իսկ 2004 թ. սեպտեմբերի 9-ին ԻԻՀ նախագահը Եր-

ևանում ստորագրում է թունելի նախագիծն⁴⁶⁹ իրագործելու համար հնարավոր լուծումներ գտնելու վերաբերյալ փաստաթուղթը⁴⁷⁰։ Սակայն նույն թվականի դեկտեմբերի սկզբին պարզ է դառնում, որ թունելի նախագծային աշխատանքները դադարեցվել են։ Թունելի կառուցման համար անհրաժեշտ էր 50-60 մլն դոլար։ Իրանական կողմի խոստացած վարկի պայմաններն անընդունելի էին հայկական կողմի համար, քանի որ դրանք բիզնես-վարկեր էին։

Այսպիսով, տնտեսական հարաբերությունների զարգացման համար բացառիկ նշանակություն ունեցավ Արաքն գետի վրայով հիմնական կամուրջի կառուցումը, ինչպես նաև երկու երկրներն իրար կապող օդային և ավտոբուսային հանդիդակցության հաստատումը։ Այդ ամենի շնորհիվ մեղմվում է ՀՀ-ին սպառնացող շրջափակումը։ Կապուղիները լիարժեք գործելու հնարավորություն կստանան, եթե Քաջարանի թունելի և երկաթուղու կառուցման նախագծերն իրականություն դառնան։ Ցավոք, իրանական կողմը խուսափում էր խոշոր ներդրումներ կատարելուց, իսկ հայկական կողմն էլ չունեւր բավարար միջոցներ հարցը լուծելու համար։ Մինչդեռ հայտնի է, որ տնտեսական զարգացումն առնչվում է հեռահաղորդակցության հուսալի և մշտական ուղիների հետ։

⁴⁶⁵ Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 141։

⁴⁶⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 186, ք. 10։

⁴⁶⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 285, ք. 120։

⁴⁶⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 86, ք. 92։

⁴⁶⁹ 3 կմ երկարությամբ թունելը նախագծված է անցկացնել 2070 մ բարձրության վրա՝ Մեղրու լեռնանցքի տակ ԻԻՀ-ի հետ սահմանից 20 կմ դեպի հյուսիս։

⁴⁷⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 182, ք. 78։

2.7. ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերը բազմակողմ համագործակցության համատեքստում

1990-ական թթ. կեսերին թեփանում մշակվեց մի քաղաքականություն, որը կոչվեց տարածաշրջանային տնտեսական բազմակողմ համագործակցություն: Այն ենթադրում էր ԻԻՀ-ի տնտեսական գործակցությունը ոչ միայն հարևան պետությունների, այլև դրանց միջոցով երրորդ երկրների հետ: Թեփանը տարածաշրջանում տնտեսական նախաձեռնություններով հանդես գալու համար կարևոր պատճառներ ուներ: Նախ խնդիր կար նվազեցնել Թուրքիայից տնտեսական կախվածությունը, ապա օգտվել ՌԴ միջնորդությամբ Արցախի հակամարտության գոտում հաստատված զինադադարից հետո (1994 թ. մայիսի 12-ին) ստեղծված նոր իրադրության հնարավորությունից:

Ադրբեջանը չէր ներառվում այդ հաշվարկներում, քանզի թեփանի համար անսպասելի էր Բաքվի կատարած քայլը. 1994 թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի և միջազգային նավթային ընկերությունների միջև կնքված պայմանագրով վերջիններիս իրավունք տրվեց զբաղվելու Կասպից ծովում գտնվող «Ազերի», «Չերաղ» և «Գյունեշլի» նավթահանքերի արդյունահանման աշխատանքներով⁴⁷¹: Այդ պայմանագիրը ստորագրվել է աշխարհի ինը կոնսորցիումների (խոշոր բանկերի միավորում) մասնակցությամբ, որը ստացել է «Դարի պայմանագիր» անվանումը: Կոնսորցիումը տնօրինում էր «Բրիթիշ փեթրոլիում»-ը⁴⁷²: Կոնսորցիումի բաժնետոմսերի 70%-ը պատկանում էր ամերիկյան նավթային ընկերություններին, իսկ ռուսական «Լուկոյլ» և Ադրբեջանի ազգային նավթային ընկերության

մասնաբաժինները կազմում էին համապատասխանաբար 10 և 20-ական %: Բաքվի ԻԻՀ-ին հատկացված 5%-ի իրավունքը կտրուկ առարկության հանդիպեց ԱՄՆ-ի կողմից: Բաքուն հայտարարեց, որ չեղյալ է համարում ԻԻՀ-ին հատկացված 5% մասնաբաժնից նրա օգտվելու իրավունքը: ԻԻՀ-ի ԱԳ նախարար Վելայաթին մեղադրեց Բաքվին պայմանագրային պարտավորություններին հավատարիմ չմնալու համար: Չնայած սահմանափակ տարածքին և աննշան բնակչությանը, Ադրբեջանն իր հսկայական էներգետիկ ռեսուրսներով կարևոր նշանակություն ունի տարածաշրջանում⁴⁷³:

Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ դեռևս 1992 թ. Իրանը Կասպից ծովի ավազանի պետություններին առաջարկում է ստեղծել «Կասպյան երկրների» բլոկ ազատ առևտրի գոտու կարգավիճակով, ինչպես նաև գազ արտադրող և արտահանող երկրների միջազգային կազմակերպություն (Ադրբեջան, Թուրքմենստան, ՌԴ, Ուզբեկստան): Սակայն Իրանի նախաձեռնությունը հաջողությամբ չպսակվեց⁴⁷⁴: Այս համատեքստում արժե նշել, որ 1994 թ. սեպտեմբերի 12-ին ԻԻՀ ԱԳՆ ԱՊՀ և Կովկասի գլխավոր վարչության պետ Մոհամմադ Ռեզա Բախթիարին Վահան Բայբուրդյանի հետ հանդիպման ընդգծում է. «Հայաստանն Իրանի համար ունի երկակի հետաքրքրություն՝ առաջինը որպես ՀՀ-ն ԱՊՀ անդամ պետություն, իսկ մյուսը՝ որպես Իրանի սահմանակից պետություն, որի հետ մեր հարաբերությունները դարերի պատմություն ունեն»⁴⁷⁵: Ահա թե ինչու 1994 թ. դեկտեմբերի 12-ին ԻԻՀ էկոնոմիկայի նախարարության արտաքին տնտեսական կապերի վարչության պետ Մ. Բիաբանին հայտնում է, որ իրանական կողմը պատրաստ է մասնակցելու Երևան-Մեղրի ավտոճանապարհի վերակառուց-

⁴⁷³ Տե՛ս Եժեզինսկի Յ., Великая шахматная доска, М., 1999, էջ 62:

⁴⁷⁴ Տե՛ս Ա. Մալեկի, Иран и Туран: к вопросу об отношениях Ирана с государствами Центральной Азии и Закавказья, Центральная Азия и Кавказ, N-5, 2001, էջ 113:

⁴⁷⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, ք. 18-21:

⁴⁷¹ Տե՛ս Մամեդովա Ք., Формирование международно-правовой статус Каспийского моря в постсоветский период, "Центральная Азия и Кавказ" Швеция, N2 (14), 2001, էջ 84:

⁴⁷² Տե՛ս Amirahmadi H., The Caspian Region at Across Road: Challenges of a new Frontier of Energy and Development, 2000, էջ 138.

ման աշխատանքներին⁴⁷⁶: ԻԻՀ-ի որևէ պաշտոնյայի կողմից նման համաձայնության մասին լսվում էր առաջին անգամ: Այդ ճանապարհի նշանակության մեծացումը կապված էր ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-Սև ծով գիծը շահագործելու թեիրանի աճող հետաքրքրության հետ:

Իրականում ԻԻՀ-ն բեռների փոխադրման համար ավտոմոբիլային և երկաթուղային ուղիներ էր փնտրում, քանի որ Թուրքիան բարձր մաքսատուրք էր դրել իրանական ապրանքների վրա: Այդ մասին է վկայում 1994 թ. Սոֆիայում ՀՀ-ի դեսպանության քարտուղար Ռուբեն Կարապետյանի հանդիպումը Բուլղարիայի ԱԳՆ-ի ԻԻՀ-ի պատասխանատու Ա. Օրբեցովի հետ: Զրույցի ընթացքում Օրբեցովը հայտնում է, որ Բուլղարիան և Վրաստանը պայմանավորվել էին բեռնափոխադրումները կատարել Փոթի-Բուրգաս ծովային ճանապարհով⁴⁷⁷: ԻԻՀ-ն պատրաստվում էր բանակցել Վրաստանի հետ՝ այդ ճանապարհը մինչև Թեիրան հասցնելու նպատակով և մտադիր էր նույն ճանապարհով արտահանել նավթ:

Այսպիսով, զրկվելով ադրբեջանական նավթի իր բաժնից՝ Թեիրանը չէր ցանկանում, որ նավթամուղն անցնի Ադրբեջանի տարածքով և հակված էր այն ՀՀ-ով անցկացնելու տարբերակին: Ակնհայտ է, որ ՀՀ-ի տարածքով իրանական ոչ միայն նավթամուղի, այլև գազամուղի անցկացումը կունենար կարևոր նշանակություն: Այդ նպատակով Հայ-իրանական Լապերի հանձնաժողովը 1995 թ. հուլիսի 18-ին քննարկում է ԻԻՀ-ի ներգրավմամբ երրորդ երկրների հետ կապերի համաձայնեցման ենթահանձնաժողովների ստեղծման հարցը: ՀՀ նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովը պետք է համադրեր նաև եռակողմ համագործակցության ոլորտները⁴⁷⁸: Այսպիսով, փորձ էր արվում ընդլայնել երկկողմ համագործակցությունը բազմակողմ տնտեսական ձևաչափերով:

⁴⁷⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 285, թ. 152:

⁴⁷⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 242, թ. 84:

⁴⁷⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 105-109:

Ա. ՀՀ-ԻԻՀ-Հունաստան-Վրաստան բազմակողմ համագործակցության հարցը

1995 թ. հունվարին Աթենքում տեղի է ունենում տնտեսական գործակցություն ծրագրող ԻԻՀ-ի, ՀՀ-ի, Հունաստանի և Վրաստանի փորձագետների առաջին հանդիպումը: Նույն թվականի հունիսի 21-ին Թեիրանում ՀՀ-ի դեսպանության քարտուղար Գ. Մելքոնյանը հանդիպում է Հունաստանի դեսպանության քարտուղար Նիկոլաս Պլեքսիդասի հետ: Վերջինս հայտնում է, որ ՀՀ-ԻԻՀ-Հունաստան համագործակցության համար կա քաղաքական ցանկություն: Հունաստանը նավթի 90%-ից ավելին ներմուծում էր ԻԻՀ-ից⁴⁷⁹:

1996 թ. մարտ ամսին ձևավորվում է ԻԻՀ-ՀՀ-Հունաստան համագործակցությունը⁴⁸⁰: Այդ նպատակով տեղի են ունենում մի շարք հանդիպումներ⁴⁸¹, որոնց ընթացքում երեք երկրների առևտրական կապերը զարգանում էին ապրանքափոխանակության միջոցով: Նախատեսվում էր առևտրաշրջանառությունը հասցնել 20-50 մլն դոլարի⁴⁸²:

Հարկ է նշել, որ 1997 թ. նորընտիր նախագահ Մոհամմադ Խաթամին հայտարարում է ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ ԻԻՀ-ի համագործակցությունն ընդլայնելու ձգտման վերաբերյալ, որը

⁴⁷⁹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թթ. 106-109:

⁴⁸⁰ Տե՛ս **Բայություն Կ.**, Իրանն այսօր, էջ 325:

⁴⁸¹ 1996 թ. դեկտեմբերի 3-4-ը Թեիրանում և 1997 թ. դեկտեմբերի 22-ին Աթենքում ԻԻՀ-ի, ՀՀ-ի, Հունաստանի և Վրաստանի ԱԳ փոխնախարարները և նախարարները քննարկում են գործակցության ուղիները: 1997 թ. դեկտեմբերին Թեիրանում ԱԳ նախարարները ստորագրում են եռակողմ համագործակցության փոխըմբռնման հուշագիր: 1998 թ. սեպտեմբերի 8-ին Թեիրանում, 1999 թ. հուլիսի 12-ին Աթենքում, 1999 թ. սեպտեմբերին Երևանում տեղի են ունենում ԱԳ նախարարների, իսկ 2000 թ. Թեիրանում ԱԳ փոխնախարարների եռակողմ հանդիպումները: 2001թ. մարտի 8-ին Աթենքում հանդիպում են ԱԳ նախարար Կ. Օսկանյանը, Զ. Խառազին և Գ. Պապանդրեուն: 2001 թ. հոկտեմբերի 26-ին Երևանում բացվում է ՀՀ-ԻԻՀ-Հունաստան արդյունաբերական արտադրանքի համատեղ ցուցահանդես:

⁴⁸² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 05.12.1996, «Ալիք», 23.12.1997, «Ազգ», 20.03.1997:

դրական արձագանք է գտնում Եվրոպայում⁴⁸³:

1998 թ. սեպտեմբերի 8-ին անդրադառնալով Թեհրանում ԻԻՀ-ՀՀ-Հունաստան երկրորդ եռակողմ հանդիպմանը՝ «*Իրան նյուզ*» օրաթերթն այդ համագործակցությունը շտապում է գնահատել որպես ԱՄՆ-Իսրայել-Թուրքիա զարգացող դաշինքը չեզոքացնելու կոչված եռանկյունի: Մինչդեռ «*ԻՌՆԼ*» լրատվական գործակալությունը նշում է, որ եռակողմ համագործակցությունը ուղղված չէ որևէ երկրի դեմ⁴⁸⁴:

ՀՀ-ԻԻՀ-Հունաստան եռակողմ գործակցությունը լուրջ հակազդեցություն ունեցավ Արևմուտքում: 1999 թ. հուլիսի սկզբին արևմտյան լրատվամիջոցները հայտնում են. «*Պաշտոնական Աթենքը և Թեհրանն արդեն հրապարակել են հայ-իսրանա-իրանական ռազմական պակտի ստորագրման օրը՝ 1999 թ. հուլիսի 12*»⁴⁸⁵: Ավելին՝ ներկայացված իբրև թե «ՀԻ ռազմական պակտն» արևմտյան վերլուծաբանները որակում են որպես «ՆԱՏՕ-ի դեմ ուղղված» և հատկապես՝ Թուրքիայի, չնայած այն փաստին, որ Հունաստանը Հյուսիս-ատլանտյան դաշինքի անդամ է: ՀՀ-ն ներկայացվում էր նաև որպես ՎՈՒԱՄ-ին⁴⁸⁶ հակակշիռ, որն իբր պետք է մեկուսացներ Վրաստանին և Ադրբեջանին ՆԱՏՕ-ից:

Վերոնշյալին հետևում է այն, որ 1999 թ. հուլիսի 5-ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը պաշտոնապես հերքում է այդ լուրը: Իրավիճակը մեղմվում է միայն այն բանից հետո, երբ ԱՄՆ Պետական դեպարտամենտի ներկայացուցիչ Ջեյմս Ֆոլին հայտնում է, որ Իրանի և Հայաստանի հետ ռազմական պակտ ստորագրելու Հունաստանի մտադրության մասին հաղորդումները «սխալ» էին⁴⁸⁷:

⁴⁸³ Տես *Բարբորոյան Վ.*, Իրանի պատմություն, էջ 742:

⁴⁸⁴ Տես «Ազգ», 09.09.1998, 10.09.1998:

⁴⁸⁵ Տես «Ազգ», 03.07.1999:

⁴⁸⁶ ՎՈՒԱՄ-ը տարածաշրջանային կազմակերպություն է, որը ստեղծվել է 1997 թ.: Անդամ երկրներն են Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը և Մոլդովան (1999-2005 թթ. ՎՈՒԱՄ-ին անդամակցել է Ուզբեկստանը):

⁴⁸⁷ Տես «Ազգ», 07.07.1999:

Այսպիսով, Արևմուտքի անհանգստությունը բացատրվում է այն փաստով, որ Իրանի ազդեցության մեծացումը տարածաշրջանում ընկալվում էր որպես մրցակից Թուրքիային: Իրականում ի դեմս ՀՀ-ԻԻՀ-Հունաստան ձևաչափի, փորձ էր արվում ստվերել Իսրայել-Թուրքիա-Ադրբեջան ռազմական գործակցությունը:

Ինչ վերաբերում է եռակողմ տնտեսական հարցերին, ապա 2000 թ. հունիսի 7-ին ՀՀ առևտրի նախարար Կարեն Ճշմարիտյանը հայտնում է, որ հակառակ այն իրողության, որ հիշյալ երկրներից յուրաքանչյուրը երկրորդի հետ գործակցություն է զարգացնում, դրանով հանդերձ եռակողմ զարգացումը նույն թափով չի ընթանում⁴⁸⁸: Հունական պատվիրակության ղեկավար Վասիլիոս Կանելլակիսը ևս հաստատում է, որ քաղաքական գործակցությունը շատ ավելի դյուրին է, քան տնտեսականը: Կարծում ենք, որ բոլոր դեպքերում Աթենքի վրա Արևմուտքից եղել են ճնշումներ սահմանափակելու իր գործակցությունը Թեհրանի հետ:

Վերոնշյալով հանդերձ 1999 թ. հուլիսի 12-ին Աթենքում տեղի է ունենում եռակողմ համագործակցության երկրորդ հանդիպումը: ՀՀ-ի, ԻԻՀ-ի և Հունաստանի միջև ցամաքային և ծովային հուսալի անմիջական կապ ապահովող է դիտարկվում Վրաստանը: Այդ նպատակով դեռևս 1993 թ. Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն այցելում է ԻԻՀ, իսկ 1995 թ. Հաշեմի Ռաֆսանջանին՝ Վրաստան: ԻԻՀ-ն ցանկանում էր Փոթի նավահանգստի միջոցով իրանական բեռները փոխադրել դեպի Բուլղարիա: Մինչդեռ 1995 թ. հուլիսի 10-ին ԻԻՀ-ում Վրաստանի դեսպանության խորհրդական, քաղաքական հարցերով պատասխանատու Լևան Ասաթիանին ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության քարտուղար Արտավազ Դարբինյանի հետ հանդիպման ընթացքում ժամանակավրեպ է համարում այդ մասին խոսելը, քանզի, ըստ նրա, Փոթին կորցրել էր աշխատանքային

⁴⁸⁸ Տես «Ալիք», 11.06.2000:

հզորությունները և անհրաժեշտ էին շոշափելի ներդրումներ: Ասաթիանիի հավաստմամբ՝ իրենք ՀՀ-ի և Ադրբեջանի հաղորդակցության միջոցներից օգտվելու դեպքում նախապատվությունը ոչ մեկին չեն տալիս: Իրականում ԻԻՀ-ում Վրաստանի դեսպան Ջենձիդ Գիունաշվիլին Ադրբեջանի տարածքով բեռների փոխադրման կողմնակից էր⁴⁸⁹: Թբիլիսին շահագրգռված էր Թեհրանի բազմակողմ համագործակցության առաջարկով, սակայն Ադրբեջանի մասնակցությամբ:

Հարկ է նշել, որ Իրան-Եվրոպա տնտեսական ծրագրերում կարևոր տեղ ուներ նաև Ռումինիան: 1995 թ. հուլիսի 5-ին Թեհրանում Ռումինիայի դեսպան Քրիստիան Թեոդորեսկուն հանդիպում է ՀՀ դեսպան Վահան Բայբուրդյանին⁴⁹⁰: Նախատեսվում էր ստեղծել տրանսպորտային ընկերություն, որը ցամաքային և ծովային ճանապարհով (Կոնստանցա քաղաքի վրայով), իրականացներ Եվրոպա-Ասիա բեռնափոխադրումներ: Ռումինիան հակված էր, որպես տարանցիկ ուղի, օգտվել ՀՀ-ի ճանապարհներից: Սակայն այս դեպքում զարգացում չգրանցվեց:

1995 թ. հուլիսին Սոֆիայում տեղի է ունենում ԻԻՀ-Վրաստան-Բուլղարիա եռակողմ հանդիպումը, որին ՀՀ-ն չի մասնակցում: Փաստորեն Թեհրանը ՀՀ-ին տեսնում էր ԻԻՀ-ՀՀ-Հունաստան, իսկ Վրաստանին՝ ԻԻՀ-Վրաստան-Բուլղարիա եռակողմ ձևաչափում:

1995 թ. հոկտեմբերի 16-18-ը Բուրգաս քաղաքում ՀՀ-ի, ԻԻՀ-ի, Վրաստանի և Բուլղարիայի փորձագետները քննարկում են տրանսպորտային նոր կապի ստեղծման հարցը⁴⁹¹: Նախատեսվում էր Վառնա-Բուրգաս-Փոթի, Բաթումի նավահանգիստների երթուղիների միջանցքով տարեկան փոխադրել մինչև 10 մլն տ բեռ:

Հարկ է նշել, որ ԻԻՀ-ՀՀ-Վրաստան եռակողմ համագործակցությունը որոշակի հաջողություններ է ունենում թմրանյու-

թերի դեմ պայքարի ոլորտում, սակայն տնտեսական ոլորտում առաջընթաց չի գրանցվում: Գլխավոր պատճառը քաղաքական էր: Թեհրանի ակտիվությունը տարածաշրջանում անհանգստացնում էր Բաքվին: 1997 թ. փետրվարի 4-ին ՀՀ դեսպան Վահան Բայբուրդյանը հանդիպում է ԻԻՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Տրետյակովին⁴⁹²: Զրույցից պարզ է դառնում, որ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը ճնշում է գործադրել Էդուարդ Շևարդնաձեի վրա, հրապեսգի Վրաստանը հրաժարվի ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-Հունաստան քառակողմ համագործակցությունից: Շևարդնաձեն տեղի է տվել խոստանալով կատարել Ադրբեջանի կամքը:

Այսպիսով, ալիևյան դիվանագիտության ճնշման հետևանքով վրացական կողմը չմասնակցեց տարածաշրջանային նշանակություն ունեցող բազմակողմ գործակցությանը ըստ էության հարցականի տակ դնելով և օրակարգից հանելով ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-Հունաստան քառակողմ համագործակցությունը:

Հարկ է նշել, որ բազմակողմ համագործակցությունը նոր պետություններով համալրելու հարցում իրանական կողմը հաշվի էր առնում հայկական կողմի տեսակետը: Այլ կերպ ասած՝ Թեհրանի և Երևանի միջև խնդրո առարկա հարցի շուրջ ձևավորվել էին բավականին աշխույժ փոխադարձ խորհրդատվական հարաբերություններ: Այդ մասին են վկայում 1995 թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանի և ԻԻՀ-ի ԱԳՆ-ի ԱՊՀ երկրների վարչության պետ Հոսեյն Նարադիանի ՀՀ-Ղազախստան-ԻԻՀ, ՀՀ-Ֆրանսիա-ԻԻՀ⁴⁹³, և նույն թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ ԱԳ փոխնախարար Էդուարդ Զուլոյանի և ԻԻՀ-ի դեսպան Համիդեզա Էսֆահանիի ՀՀ-ԻԻՀ-Հնդկաստան հնարավոր եռակողմ համագործակցությամբ

⁴⁸⁹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թթ. 121-122:

⁴⁹⁰ Տե՛ս նույն տեղում, թթ. 162-164:

⁴⁹¹ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 286, թթ. 145-146:

⁴⁹² Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 167, թ. 23:

⁴⁹³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թթ. 196-200:

հարթակների ստեղծման հարցերի շուրջ քննարկումները⁴⁹⁴։ Ի դեպ, էսֆահանհի առաջարկում էր, որ Դելիի հետ գործակցության դրույթները ներկայացնի հայկական կողմը։ Հայկական կողմի համար կարծես լուծվում և բացվում էր նոր տնտեսական հեռանկարներ, սակայն, նշված երեք ուղղություններով կարող ենք ասել, որ աշխատանքները քննարկումների մակարդակով էլ ըստ էության սահմանափակվում էին։

Այսօր էլ նշված հարթակների ստեղծումն ունի խիստ արդիական նշանակություն, ինչպիսին կարող է դառնալ ՀՀ-ԻԻՀ-Հնդկաստան եռակողմ համագործակցությունը, որն ի զորու է տարածաշրջանում պահպանելու ուժերի հավասարակշռությունը և ամրապնդելու կայունությունը։

Բ. ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան եռակողմ համագործակցության շուրջ

ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան եռակողմ համագործակցության սկզբնավորման համար կարևոր նախադրյալ էր համարվում կողմերի միջև գրանցված առևտրաշրջանառության ծավալները։ 1994 թ. արտաքին առևտրի բնագավառում ՀՀ-ի գլխավոր գործընկերներն էին՝ ԻԻՀ-ը, որի հետ արտաքին առևտրի շրջանառությունը կազմում էր 104 մլն դոլար, և Թուրքմենստանը, որի հետ արտաքին առևտրի շրջանառությունը կազմում էր 44 մլն դոլար⁴⁹⁵։

ՀՀ-ի համար կարևոր էր Բանդար Աբբաս նավահանգստի թողունակության մեծացումը։ Այն բեռնափոխադրման հանգույց է Պարսից ծոցի ավազանի և Հարավ-արևելյան Ասիայի երկրներից տարանցիկ բեռներ ՀՀ տեղափոխելու համար⁴⁹⁶։ 1995 թ. մարտի 17-ին իրանական կողմի հրավերով ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մասնակցում է ԻԻՀ-ի Բանդար Աբ-

բաս-Բաֆղ երկաթուղու բացման հանդիսությանը⁴⁹⁷։ Այդ առթիվ առանձնակի նշանակություն է ունենում Ռաֆսանջանի-Նիյազով-Տեր-Պետրոսյան եռակողմ հանդիպումը Քիշ կղզում, որի ընթացքում քննարկվում են ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան տնտեսական գործակցության խնդիրները։ Այդպես, պաշտոնապես ձևավորվում է ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան եռակողմ համագործակցությունը⁴⁹⁸։

Հարկ է նշել, որ հայկական կողմի համար կարևոր էր ԷԿՕ-ի՝ որպես տնտեսական և տարածաշրջանային կազմակերպության հետ համագործակցումը, լքանի որ 1990-ական թթ. նրան սկսում են անդամակցել կենտրոնասիական պետությունները⁴⁹⁹, որոնց հետ հայկական կողմը տնտեսական կապերի մեծ փորձ ուներ դեռևս խորհրդային տարիներից։ Սակայն այդ կազմակերպության անդամակցում էին նաև Թուրքիան, Ադրբեջանը և Պակիստանը, որոնք լուրջ խոչընդոտ էին պաշտոնական Երևանի համար։ Ուստի, Քիշ կղզում հայ-իրանական բանակցությունների արդյունքում որոշվում է ԻԻՀ-ՀՀ-Թուրքմենստան առանձին ձևաչափով համագործակցության ձևավորման վերաբերյալ։ Տեղին է նշել, որ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի խոսքով եռակողմ հարաբերություններն ունեին ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն և կարող էին դառնալ տարածաշրջանային կայունության ամրապնդման գործոն⁵⁰⁰։ Փաստորեն հայկական կողմը տնտեսական կապերի զարգացումն այդ հարթակում համարում էր նաև իր անվտանգային համակարգի կարևոր բաղադրիչը։

⁴⁹⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17.03.1995։

⁴⁹⁸ 1995 թ. ապրիլի 8-ին Թեհրանում տեղի է ունենում առաջին խորհրդակցությունը, որի ժամանակ քննարկվում է թուրքմենական գազը ԻԻՀ տարածքով ՀՀ առաքելու նախագիծը։ 1995 թ. հուլիսի 27-ին Աշխաբադում հանդիպում են ՀՀ-ի, ԻԻՀ-ի և Թուրքմենստանի ԱԳ նախարարներ Վահան Փախաջյանը, Ալի Աբբար Վելայաթին և Բորիս Շելյանուրադովը։

⁴⁹⁹ Economic Cooperation Organization, About ECO, https://www.eco.int/general_content/86055-History.html?_t=General-content դիտումը 15.04.2023։

⁵⁰⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 03.06.1995։

⁴⁹⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 286, թթ. 183-185։

⁴⁹⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 06.01.1995։

⁴⁹⁶ Տե՛ս **Բայրուրյան Վ.**, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ծննդաբերումից հետո, էջ 19։

1996 թ. հունվարի 21-ին թեհրանում եռակողմ համագործակցության վերաբերյալ ընդունվում է համատեղ հայտարարություն: Բանակցություններ վարելու և ամփոփիչ փաստաթղթեր պատրաստելու համար չորս ուղղություններով ստեղծվում են աշխատանքային խմբեր՝ տրանսպորտ, առևտուր, բանկային գործ և էներգետիկա: Կողմերը համաձայնվում են ստեղծել համատեղ տրանսպորտային ընկերություններ՝ բացելով գրասենյակներ Երևանում և Թեհրանում, իսկ Աշխաբադում պետք է հիմնվեր հիշյալ գործունեությունը համադրող կենտրոն⁵⁰¹: Կարծում ենք անհրատեսական էր այն թեզը, որ հայկական կողմը ստեղծելու էր անհրաժեշտ պայմաններ Երևան-Նախիջևան-Ջուլֆա երթուղիով գնացքների երթևեկության համար: Ինչպես նշվեց, նման անաջարկությամբ հայկական և իրանական կողմերը հանդես էին գալիս 1992 թ.-ից, բայց Ադրբեջանը չէր ընդունում:

1996 թ. մարտի 5-ին Վելայաթին ՀՀ նախագահին է հանձնում Մաշհադ-Սարախս-Թաջան երկաթուղու⁵⁰² բացման արարողությանը մասնակցելու՝ ԻԻՀ-ի և Թուրքմենստանի նախագահների համատեղ հրավերը: Մայիսի 12-ին երկաթուղու բացման արարողությանը մասնակցում է 60 երկրի պատվիրակություն: Այցի ընթացքում ՀՀ նախագահը երկու անգամ հանդիպում է ունենում ԻԻՀ-ի և Թուրքմենստանի նախագահների հետ: Հուլիսի 4-ին Աշխաբադում ստորագրվում է ՀՀ-ի, ԻԻՀ-ի և Թուրքմենստանի միջև ապրանքափոխանակության և տնտեսական համագործակցության համաձայնագիր⁵⁰³: Ըստ համաձայնագրի՝ ՀՀ-ն 20 մլն դոլար արժողությամբ բնական գազ պետք է ներմուծեր Թուրքմենստանից՝ կաուչուկ և էլեկտրական լամպեր տալով ԻԻՀ-ին, իսկ ԻԻՀ-ն՝ համարժեք ապրանք և ծառայություններ պետք է տրամադրեր Թուրքմենստանին: Սա թերևս հաջողված գործարք էր: Ահա թե ինչու 1996 թ. դեկտեմբերի 25-29-ը պաշտոնական այցով Երևան

⁵⁰¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 286, թթ. 42-45:

⁵⁰² Մաշհադ-Սարախս-Թաջան 295 կմ երկաթուղային երկաթուղին ԻԻՀ-ը կապեց կենտրոնափակական և անուսիփիդյան երկաթգծին:

⁵⁰³ Տե՛ս «Ալիք», 06.07.1996:

այցելած ԻԻՀ փոխնախագահ Հասան Հաբիբին կարևորում է եռակողմ համագործակցության շրջանակներում ապրանքաշրջանառության ծավալները հասցնել 20 մլն դոլար⁵⁰⁴:

1997 թ. հունվարին Թեհրանում տեղի է ունենում 5-րդ, իսկ ապրիլի 16-ին Երևանում՝ 6-րդ եռակողմ հանդիպումը: Արդեն 1997 թ. մարտի 17-ին Երևանում ԱԳ փոխնախարարները տեսակետներ են փոխանակում գործնական փուլի մեջ գտնվող ծրագրերի իրականացման խոչընդոտները վերացնելու հնարավորությունների մասին: Գլխավոր խոչընդոտը, թերևս, ՈՂ-ին անտեսելն էր և էներգետիկ ծրագրերում չներառելը: Դրանով էր պայմանավորված այն, որ ապրիլի 15-16-ին Երևանում 6-րդ հանդիպման ընթացքում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ հանդիպմանը մասնակցում են Բորիս Շեյնմուրադովը և Ալի Աքբար Վելայաթին, իսկ դիտորդի կարգավիճակով՝ ՀՀ-ում ՈՂ արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը⁵⁰⁵: Բանակցությունների ավարտին ստորագրվում է հերթական հուշագիր, որը չդարձավ համատեղ գործողությունների ծրագիր:

Այսպիսով, եռակողմ համագործակցությունը՝ երեք նախագահների անմիջական համաձայնությամբ, ինքնին դրական երևույթ էր: ՀՀ-ին ընձեռվեց հնարավորություն ԻԻՀ-ի տարածքով կապ հաստատել և համագործակցել Կենտրոնական Ասիայի հետ: Թեև մեծ ծավալներ չընդունեց գործակցության այս ձևաչափը, այնուամենայնիվ, ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում այս ուղղությամբ առկա է ավելի շատ չօգտագործված մեծ ներուժ, քան մինչ այժմ օգտագործվել է: Որոշակի նշանակություն ունեցավ գազի գնումը Թուրքմենստանից այդ համագործակցության համատեքստում:

⁵⁰⁴ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 239, թ. 3:

⁵⁰⁵ Տե՛ս Մկրտչյան Կ., ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան եռակողմ տնտեսական համագործակցության ձևավորումը, «Պատմություն և նշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2011, Բ, էջ 162:

Գ. ՀՀ-ԻԻՀ-ՈՂ գործակցության կայացման շուրջ

Եռակողմ համագործակցության շրջանակներում ավելի իրատեսական էր ՈՂ-ԻԻՀ-ՀՀ համագործակցությունը: ՀՀ-ՈՂ ռազմաքաղաքական դաշինքը պաշտոնական ձևակերպում ստացավ Մոսկվա քաղաքում 1997 թ. օգոստոսի 29-ին Բորիս Ելցինի և Լևոն Տեր-Պետրոսյանի միջև կնքված «Մեծ պայմանագրով» և 2000 թ. Վլադիմիր Պուտինի և Ռոբերտ Քոչարյանի միջև կնքված «Նոր պայմանագրով»⁵⁰⁶: Պաշտոնական Թեհրանը դրական է արձագանքում ՀՀ-ՈՂ դաշինքին, որն իր ներկայությունն է ապահովում ՀՀ-ԻԻՀ սահմանում⁵⁰⁷: 2004 թ. ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնիի խոսքով՝ «Իրանը սահմանի վրա գտնվող ՀՀ-ի և ՈՂ-ի գործերին «օտար գործ» չի համարում»⁵⁰⁸:

Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմաքաղաքական համագործակցության նոր փուլ է սկսվում 1999 թ. ապրիլին Հեյդար Ալիևի՝ Անկարա կատարած այցից հետո, որի ընթացքում նշված պետությունները ստորագրում են ռազմավարական համագործակցության վերաբերյալ պայմանագիր⁵⁰⁹: Ըստ էության, այդ համագործակցության սկզբն ուղղված էր նաև ԻԻՀ-ի, ՈՂ-ի և ՀՀ-ի դեմ: Ավելին, Ադրբեջանը փորձում էր այդ եռակողմ համագործակցության դեմ տրամադրել նույնիսկ ՈՂ-ի կազմում գտնվող իսլամադավան որոշ սուբյեկտներ: Այդ մասին է վկայում 1996 թ. նոյեմբերի վերջին ՈՂ-ի Թաթարստանի Ինքնավար Հանրապետության նախագահ Մինտիմեր Շայմիևի⁵¹⁰ այցը Թեհրան՝ ԻԻՀ

առևտրի նախարարության հրավերով: Ուսանողների հետ զրույցի ժամանակ Շայմիևն առաջարկում է շրջանցել ՈՂ-ին և ստեղծել Թաթարստան-Ադրբեջան-ԻԻՀ եռակողմ համագործակցություն: Սակայն Ուսանողներին մերժում է այն՝ ելնելով ՈՂ-ի հետ իր կայուն հարաբերությունների կարևորությունից, փոխարենը Թաթարստանին առաջարկելով համագործակցություն ԻԻՀ-ի որևէ նահանգի հետ, ինչը չէր զոհաջրել Շայմիևին⁵¹¹: Իրականում Շայմիևի այցի նպատակներից էր չեզոքացնել ՈՂ-ԻԻՀ-ՀՀ եռակողմ համագործակցությունը: Թեհրանը լավ էր հասկանում ալիևյան դիվանագիտության նպատակը և գերծ մնաց դրան տոն տալուց:

Այսպիսով, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը գործադրում էր ամեն տեսակ միջոցներ՝ խափանելու տվյալ դեպքում նաև ՈՂ-ԻԻՀ-ՀՀ համագործակցությունը: Այդ ուղղությամբ Ալիևը չկարողացավ ազդել եռակողմ գործընթացին, քանի որ երեք կողմն էլ հաստատակամ էին իրենց ծրագրերում:

Հարկ է նշել, որ 1998 թ. մարտ ամսին «Վաշինգթոն փոսթ» օրաթերթը գրում է, որ ի հակակշիռ Ադրբեջան-Թուրքիա-Իսրայել դաշինքի, ՈՂ-ն, ԻԻՀ-ն և նրանց կրտսեր գործընկեր ՀՀ-ն կազմել են մի դաշինք, որը ծրագրված է Ամերիկային հեռու պահել Կովկասից⁵¹²: Մինչդեռ իրանական տեսակետով՝ քանի դեռ Իրանը գտնվում է մեկուսացման մեջ՝ համընկնում են նրա և ՈՂ-ի տեսակետները տարածաշրջանային անվտանգության և կայունության վերաբերյալ⁵¹³:

Այսպիսով, տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակով էր պայմանավորված ռուս-հայ-իրանական դաշնակցային հարաբերությունների հաջող ընթացքը:

⁵⁰⁶ Պայմանագիր ՀՀ և ՈՂ միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին, <http://www.irtek.am/views/act-asp?aid=25225> դիտվել է 01.02.2022:

⁵⁰⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 239, թ. 100:

⁵⁰⁸ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Արտաքին քաղաքականությունը և մամուլը, Ե., 2004, էջ 60:

⁵⁰⁹ Տե՛ս Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX-начала XXI веков, էջ 133:

⁵¹⁰ ՈՂ-ում ԻԻՀ դեսպանությունը 2 տարի շարունակ նախապատրաստում է Մինտիմեր Շայմիևի այցը ԻԻՀ: ԻԻՀ դեսպան Մեհդի Սաֆարին մի քանի անգամ հանդիպում է Շայմիևի հետ Մոսկվայում և Կազանում: Թաթարստանի հանդեպ

ԻԻՀ-ի ուշադրությունը պայմանավորված է նրանով, որ չնայած Թաթարստանի բնակչության գրեթե կեսը ռուսներ են, հանրապետությունը պաշտոնապես իսլամ է դավանում:

⁵¹¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 242, թ. 255:

⁵¹² Տե՛ս «Ազգ», 11.11.1998:

⁵¹³ Տե՛ս Санаи Мехди, Отношения Ирана с центральноазиатскими странами СНГ. М., 2002, էջ 43:

Վերոնշյալ գործոններով էր պայմանավորված նաև այն, որ 2002 թ. մայիսի 21-ին հայկական կողմը մասնակցում է Ս. Պետերբուրգում «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի նախագծի իրականացման վերաբերյալ խորհրդակցությանը⁵¹⁴ և նույն տարվա հունիսի 11-12-ը Թեհրանում «Իրան-Տրանզիտ-2002» միջազգային համաժողովին: Կողմերի համար ընդունելի էր համակցված տրանսպորտի հնարավորությունների օգտագործումը, որի համար իրական պայմաններ կարող էր ստեղծել «Տրասեկա» ծրագրի շրջանակներում վերանորոգված «Կարմիր Բլուր» երկաթգծային բեռնահամալիրը, որի բացումը տեղի է ունենում 2000 թ. հուլիսի 15-ին: Այն հնարավոր է դարձնում բեռնափոխադրումների իրականացումը Սև ծովից Կրաստանի, ՀՀ-ի և ԻԻՀ-ի տարածքով դեպի Պարսից ծոց, որոնց ծավալներն աճում էին 2000 թ. 156 հազար տոննայի համեմատ 2001 թ. հասնելով 231 հազար տոննայի⁵¹⁵: Բեռնահամալիրի արդիականացման դրամաշնորհային ծրագիրն իրագործվել է 1 մլն եվրո արժողությամբ:

Հաշվի առնելով, որ իրանական կողմը շահագրգռված է Ինոգեյթ և Տրասեկա ծրագրերին ՀՀ-ի անդամակցությամբ, ինչպես նաև ԻԻՀ-Կովկաս-ՌԴ և ԻԻՀ-Կովկաս-ՀՀ-Եվրոպա առանցքների ձևավորմամբ՝ հայկական կողմն առաջարկում էր իրանական կողմին պարզեցնել վիզայի տրամադրման կարգը, քանզի հայկական մեքենաներն ԻԻՀ տարածք կարող էին մտնել ոչ ալվել, քան 60 կմ, այնինչ իրանական մեքենաներն ՀՀ-ի տարածքով անցնում էին Կրաստան⁵¹⁶: Սակայն հետագայում նշված ուղղությամբ ԱՄՆ պատժամիջոցների պայմաններում գործակցություն չծավալվեց:

⁵¹⁴ ՀՀ-ն շահագրգռված էր դառնալ նախագծի լիիրավ անդամ: Նախագծի հեղինակներն են ՌԴ, ԻԻՀ և Հնդկաստանը: Այն Հնդկաստանից ԻԻՀ-ով և ՌԴ-ով անցնում է Հյուսիսային Եվրոպայի երկրներ՝ ներառելով երկաթուղային և ծովային տրանսպորտը:

⁵¹⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.06.2002:

⁵¹⁶ Տե՛ս նույն տեղում, 19.06.2002:

Այսպիսով, բազմակողմ համագործակցությունը բխում էր և՛ ԻԻՀ-ի և՛ ՀՀ-ի շահերից: ՀՀ տնտեսության զարգացման համար այսօր էլ այն ունի արդիական և հեռանկարային նշանակություն: 1990-ական թթ. վերջերին բազմակողմ համագործակցության մյուս հարթակների լիովին չկայացումը դեռևս չի նշանակում, որ այդպիսի տնտեսական կապերը անհրաժեշտ չեն տարածաշրջանին: Հակառակը՝ այն կարող է հիմք դառնալ նաև ընդհանուր տնտեսական անվտանգության համակարգի ձևավորմանը՝ դիմակայելու մարտահրավերները:

Տնտեսական բազմակողմ համագործակցությունը, հանդիպելով մի շարք խոչընդոտների, տարածաշրջանում չդարձավ ազդու ուժ Կրաստանի չեզոք դիրքի ընդունման, ինչպես նաև Ադրբեջանի նավթային քաղաքականության պատճառներով: Արևմուտքի հակաիրանական քաղաքականության համադրեքստում ավելի քան պարզ է դառնում բազմակողմ գործակցության լիովին չկայացման հիմնարար պատճառը:

Ինչ վերաբերում է ԻԻՀ-ՀՀ-Թուրքմենստան եռակողմ համագործակցությանը, ապա իրավապայմանագրային տեսակետից այն դրվել էր ամուր հենքի վրա, քանի որ կնքվում էին համաձայնագրեր, ձեռք բերվում պայմանավորվածություններ, որոնց մի մասը էներգետիկ գործակցության մասով կատարվել է: Նշված համաձայնագրերը որոշ փոփոխություններով այսօր էլ կարող են դառնալ կիրառական, սակայն արդեն ԵԱՏՄ կառույցի շրջանակներում:

Բազմակողմ համագործակցությունը համեմատաբար հաջողված է եղել ԻԻՀ-ՀՀ-ՌԴ գործակցության պայմաններում, քանի որ այն բխում էր նշված պետությունների ազգային շահերից:

ԳՆՈՒՆ ԵՐՐՈՐԴ
ՀՀ-ԻԻՀ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գիտակրթական կապերը

ՀՀ-ԻԻՀ գիտակրթական և մշակութային կապերի սկզբնավորման համար կային երկկողմ հետաքրքրություններ: Խորհրդային տարիներին ՀԽՍՀ-ն և ԻԻՀ-ը թեև սահմանակից երկրներ էին, բայց անմիջական կապ նրանց միջև չկար: Եղած հարաբերություններն էլ միջնորդավորված էին՝ ի դեմս Մոսկվայի: ՀԽՍՀ-ԻԻՀ գիտամշակութային կապն ապահովվում էր իրանահայ համայնքի և առանձին կազմակերպությունների գործունեությամբ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ ՀՀ-ի համար առաջացան և՛ դժվարություններ, և՛ նոր հնարավորություններ մշակութային ու գիտական համագործակցության բնագավառներում: ՀՀ-ն հնարավորություն ստացավ վարել ինքնուրույն գիտակրթական և մշակութային քաղաքականություն:

ԻԻՀ-ի հետ գիտակրթական և մշակութային կապերի պաշտոնական գործընթացը սկսվում է 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահի ԻԻՀ կատարած այցից հետո: Բանակցությունների արդյունքում երկու երկրների նախագահները ստորագրում են «Համատեղ հայտարարություն ՀՀ և ԻԻՀ միջև համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին» փաստաթուղթը⁵¹⁷, որի 11-րդ հոդվածում նշվում է, որ կողմերը գիտության, կրոնի, արվեստի, զրականության, բժշկության, լրատվության, ռադիոհեռուստատեսության, կինոյի, տուրիզմի և սպորտի բնագավառներում կապեր ստեղծելու ուղղությամբ միջոցներ կծեռնարկեն և նշված բնագավառներում կփոխանակեն համապատասխան խմբեր: Այս փաստաթուղթը դարձավ երկկողմ մշակութային համագործակցության

⁵¹⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ.11, գ.182, թ. 63:

պաշտոնապես հռչակված ծրագիր:

Գիտամշակութային կապերի խորացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1994 թ. նոյեմբերի 27-ին Թեհրանում «ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև մշակույթի, գիտության, սպորտի, տուրիզմի և ԶԼՄ-ների բնագավառներում համագործակցության» համաձայնագրի ստորագրումը⁵¹⁸, որով սահմանվում է ոլորտում համագործակցության օրակարգը:

Գիտական բնագավառում կողմերը համեմատաբար ավելի սերտ են համագործակցում սեյսմոլոգիայի, երկրաֆիզիկայի, բժշկագիտության, ինչպես նաև իրանագիտության ոլորտներում:

ԻԻՀ-ը հետաքրքրված էր ՀՀ-ի գիտատեխնիկական ներուժով, հատկապես՝ հիմնարար գիտությունների բնագավառում նրա ունեցած ձեռքբերումներով: Այդ մասին է վկայում այն, որ դեռևս 1992 թ. ապրիլի 28-ին ԻԻՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Բահրամ Ղասեմին ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Իրանի բաժնի վարիչ Գրիգոր Առաքելյանին առաջարկում է ՀՀ նախագահի ԻԻՀ այցի ընթացքում իրանական կողմի հետ քննարկել ՀՀ-ի հնարավորությունների մասին ֆիզիկայի բնագավառում⁵¹⁹: Սակայն հայ և իրանցի գիտնականները հաջողված համագործակցություն են ծավալում սեյսմիկ պաշտպանության ոլորտում⁵²⁰: Համագործակցությունը այս ոլորտում կրկնակի է արժևորվում այն առումով, որ երկու պետությունները, գտնվելով միևնույն սեյսմիկ համակարգում, կարիք ունեն փորձի փոխանակման և աղետների դեպքում փոխօգնության: 1992 թ. Թեհրանի համալսարանի երկրաֆիզիկայի ինստիտուտի և ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության միջև

⁵¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ.11, գ.184, թ. 92:

⁵¹⁹ Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 326, գ. 9, գ. 103, թ. 30:

⁵²⁰ Տե՛ս **Բայրուրյան Վ.**, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, էջ 16:

ստորագրվում է փոխըմբռնման հուշագիր, ինչպես նաև «Տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության համակարգ» ստեղծելու մասին համատեղ հայտարարություն⁵²¹:

Հիշարժան է, որ 1992 թ. հունիսի 26-ին ԻԻՀ ղեսպանությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ սեյսմիկ ազգային ծառայության տնօրեն, պրոֆեսոր Սերգեյ Բալասանյանը ղեսպանատանը նախօրոք տեղյակ էր պահել ԻԻՀ որոշ շրջաններում և Հնդկական օվկիանոսում հնարավոր երկրաշարժերի կանխատեսման վերաբերյալ, հայկական կողմին փոխանցում է իրավասու մարմինների երախտագիտությունը և անվանի գիտնականին հրավիրում է ԻԻՀ⁵²²: Հարկ է նշել, որ 1993 թ. սեպտեմբերի 27-29-ին Թեհրանում երկրաշարժերի կանխարգելման միջազգային սեմինարին ևս իրանական կողմի հրավերով մասնակցում են հայ մասնագետներ⁵²³:

Հաշվի առնելով նշված հանգամանքները 1992 թ. դեկտեմբերի 3-ին ԻԻՀ երկրաբուսական կազմակերպությունն առաջարկում է ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտին և Սեյսմիկ ծառայությունների կենտրոնին համագործակցել ԻԻՀ քաղաքաշինության նախարարության ստեղծած «Պատահարների դեմ կանխման» ուսումնասիրության կենտրոնի հետ⁵²⁴: Հիշարժան է նաև 1992 թ. սեպտեմբերի 5-16-ին Թեհրանում տեղի ունեցած Հիդրոդերևութաբանության Ասիա տարածաշրջանի 10-րդ համաժողովը, որին մասնակցում է ՀՀ հիդրոդերևութաբանության վարչության պետ Գենադի Կոջոյանը⁵²⁵:

Սեյսմիկ ոլորտում համագործակցությունը նշանավորվում է նաև եռակողմ ձևաչափով: 1999 թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ-ի, Հունաստանի և ԻԻՀ-ի միջև կնքվում է փոխըմբռնման հուշագիր, 2000 թ. հուլիսի 17-ին Թեհրանում տեղի է ունենում

⁵²¹ Տես «Հայաստանի Հանրապետություն», 09.05.1992:

⁵²² Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 26, թ. 51:

⁵²³ Տես նույն տեղում, գ. 176, թ. 26:

⁵²⁴ Տես նույն տեղում, գ. 27, թ. 53:

⁵²⁵ Տես նույն տեղում, գ. 170, թ. 27:

եռակողմ գործադիր, իսկ 2001 թ. հունիսի 2-ին Երևանում տարածքային հատակագծման և քաղաքաշինության կոմիտեների հանդիպումները⁵²⁶: Կողմերը պայմանավորվում են համագործակցել սեյսմակայուն շինարարության ոլորտում, անհրաժեշտ է համարվում քաղաքաշինական գործունեության ոլորտում լիցենզիաների փոխադարձ ճանաչումը, ցուցահանդեսների և սեմինարների կազմակերպումը և այլն:

Կողմերի միջև համագործակցությանը նպաստում է այն, որ ԻԻՀ-ում զարգացած է դիտարկումների ցանցը, իսկ ՀՀ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունն ունի ավելի քան 150 դիտակայան: ՀՀ ՍՊԱԾ-ը պատրաստակամություն է հայտնում գործնական քայլեր կատարելու Թավրիզի շրջանի ուսումնասիրության ուղղությամբ, քանի որ այդ տարածքը գտնվում է ՀՀ-ի հարավային շրջանների հարևանությամբ: 2000 թ. նոյեմբերի 11-ին ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետարանի տեխնիկական գրասենյակի տնօրեն Ջավադ Ռահմաթիի Երևան այցի ընթացքում հայկական կողմն առաջարկում է համագործակցել սեյսմիկ ռիսկի գնահատման ու նվազեցման, երկրաշարժերի կանխատեսման և վաղ ահազանգման համակարգի ստեղծման ոլորտներում⁵²⁷:

Խնդրո առարկա դարձած ոլորտում նկատվեց համագործակցություն նաև կրթական ծրագրերում: 2003 թ. հոկտեմբերի 6-9-ը Երևան է այցելում Թեհրանի Սեյսմակայուն շինարարության և սեյսմոլոգիայի միջազգային ինստիտուտի պատվիրակությունը: Իրանական կողմը Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի և Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ պայմանավորվում է ՀՀ-ի բուհերի շրջանավարտներին ԻԻՀ-ում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսանելու համար՝ հոգալով կացության և կե-

⁵²⁶ Տես ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, գ. 11, գ. 183, թթ. 53-54:

⁵²⁷ Տես նույն տեղում, գ. 6, գ. 67, թթ. 49-50:

ցության ծախսերը⁵²⁸: Հայկական կողմն էլ պատրաստակամություն է հայտնում ընդունելու ուսանողներ քաղաքաշինության և սեյսմակայուն շինարարության մասնագիտություններով: Պատվիրակությունը մասնակցում է այդ օրերին Երևանում ընթացող կառուցվածքների սեյսմիկ մեկուսացման, էներգիայի տարածման և ակտիվ վիբրացիայի վերահսկման համաշխարհային 8-րդ սեմինարի աշխատանքներին: Միջկառավարական փոխըմբռնման հուշագրի կատարման շրջանակներում կնքվում է երեք պայմանագրեր տեկտոնիկայի, սեյսմակայուն շինարարության և բնակչության իրազեկության ու երկրաշարժերին պատրաստվածության վերաբերյալ: Շնորհիվ այս ամենի սեյսմիկ պաշտպանության բնագավառում հիմք է դրվում երկկողմ համագործակցության նոր փուլի:

Նոր նախաձեռնությամբ հանդես է գալիս Երևանում ԻԻՀ-ի դեսպանությունը: 2003 թ. հոկտեմբերի 28-ին ԻԻՀ-ի դեսպան Ֆարիադ Քոլեյնին և ՀՀ ՍՊԱԾ գործակալության պետը քննարկում են սեյսմիկ պաշտպանության համատեղ աշխատանքի իրականացումը հարևանությամբ գտնվող ԻԻՀ Արևելյան Ատրպատական նահանգում և ՀՀ-Սյունիքի մարզում⁵²⁹:

Այսպիսով, սեյսմիկ ոլորտում հայ-իրանական հաջողված համագործակցությունը զարգացել է շնորհիվ երկկողմ պետական շահագրգռության, մասնագիտական շրջանակների փոխադարձ հետաքրքրվածության: Ակնհայտ է, որ այդ բնագավառում կանխատեսումներն ու սերտ համագործակցությունն ունեն և՛ գիտական, և՛ և՛ ենսական նշանակություն:

Հաջորդ բնագավառը, որտեղ ծավալվում է ՀՀ-ԻԻՀ համագործակցությունը, բժշկագիտությունն է: Դեռևս 1992 թ. մայիսի 7-ին՝ կողմերի միջև ստորագրված վերոնշյալ համատեղ հայտարարությամբ սկիզբ դրվեց այս ոլորտում երկկողմ կապերին: Այդ ոլորտում համագործակցելու նպատակով իրանա-

⁵²⁸ Տե՛ս նույն տեղում, ց.10, գ. 89, թ. 85:

⁵²⁹ Տե՛ս նույն տեղում, թթ. 95-96:

կան կողմի հրավերով 1992 թ. ԻԻՀ է այցելում ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Արդյունավետ պայմանավորվածություններ են ձեռք բերվում ԻԻՀ-ի մի շարք գիտաուսումնական հաստատությունների հետ: ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի մի խումբ նյարդագետ գիտնականներ տևական գործուղման են մեկնում Թեհրանի Շ. Բեհեշթիի անվան բժշկագիտական համալսարանում⁵³⁰: 1990-ականների թթ. սկզբին այդ համագործակցությունը սահմանափակվում էր մի քանի հայ բժիշկների՝ ԻԻՀ երկամյա աշխատանքային գործուղումների կազմակերպմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության և ԻԻՀ առողջապահության և բժշկական կրթության նախարարությունների միջև ստորագրվում են մի քանի փոխըմբռնման հուշագրեր⁵³¹: 1995 թ. մայիսի 6-ին կողմերի միջև ստորագրվում է «Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր, իսկ նույն թվականի հոկտեմբերի 31-ին՝ երկրորդ փոխըմբռնման հուշագիրը, որի 13-րդ հոդվածով իրանական կողմը պարտավորվում է ՀՀ-ում հիմնել դեղարտադրության գործարան կամ ՀՀ-ի հետ համագործակցելով՝ համալրել առկա գործարանները⁵³²:

1996 թ. հունվարի 20-ին Թեհրանում ստորագրվում է փոխըմբռնման երրորդ հուշագիրը, որի 5-րդ հոդվածում իրանական կողմը մտադրություն էր հայտնում հայկական կողմին ներկայացնել ՀՀ-ում դեղարտադրության միավոր ստեղծելու իր ծրագիրը: 1996 թ. ապրիլի 23-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվում, որով համաձայնություն ձեռք է բերվում համատեղ ձեռնարկություն ստեղծելու մասին, որը պետք է զբաղվեր բժշկական սարքավորումների, դեղորայքի ներմուծմամբ և ար-

⁵³⁰ Տե՛ս **Քայրուղյան Վ.**, Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ. հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, էջ 53:

⁵³¹ Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարության համագործակցությունը ԻԻՀ հետ, <https://www.moh.am/uploads/Iran.pdf> դիտվել է 27.01.2023:

⁵³² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 11, գ. 182, թ. 62:

տահանմամբ⁵³³.

Այս ոլորտում նոր աշխուժացում է նկատվում 2000-ական թթ. սկզբին, երբ կյանքի է կոչվում «Ֆարս-Արմեն» համատեղ ձեռնարկությունը՝ 1 մլն դոլար ներդրումով⁵³⁴։ 2000 թ. դեկտեմբերի 28-ին իրանահայ դոկտոր, կենսաքիմիկոս Ֆրիդա Զորդանի առաջարկով՝ Երևանում բացվում է «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստրը», որը սերտ կապեր ունի ԻԻՀ-ի բժշկական կենտրոնների հետ⁵³⁵։

2005 թ. ապրիլի 18-20-ը Երևանում ԻԻՀ առողջապահության, բուժման և բժշկական կրթության փոխնախարար Մոհամադ Նուրին և ՀՀ առողջապահության նախարար Նորայր Դավիդյանը քննարկում են հարաբերություններն ավելի գործնական հիմքերի վրա դնելու հարցը⁵³⁶։ Իրանական կողմը նշում է 4 բնագավառ (դեղերի, պատվաստումների և բժշկական սարքավորումների արտադրություն, բժշկական կրթություն, սիրտ-անոթային հիվանդություններ, օրգանների պատվաստումներ), որոնցում հասել է մեծ հաջողությունների և ցանկալի էր փորձի փոխանակումը հայկական կողմի հետ։ Հայկական կողմի համար այս դեպքում էլ կարևոր էր սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման և բուժման իրանական կողմի փորձի փոխանակումը։ 2005 թ. մայիսի 25-26-ը «Իրան մեդ» խորագրով բժշկական և դեղագործական տեխնոլոգիաների միջազգային 9-րդ ցուցահանդեսին մասնակցելու նպատակով ԻԻՀ է մեկնում ՀՀ Առողջապահության փոխնախարար Թաթուլ Հակոբյանը⁵³⁷։ Կողմերի միջև ստորագրվում է փոխըմբռնման հուշագիր։

Այսպիսով, թեև ընդհատումներով, որոշակի աշխա-

տանքներ են կատարվել բժշկագիտության ոլորտում։ Ակնառու են եղել ոլորտում իրանական կողմի ներդրումները։

Հարկ է նշել, որ գիտական կապերում հաջողված գործակցություն է նկատվել նաև իրանահայ գիտնականների մասնակցությամբ։ Տարիներ շարունակ Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ համագործակցել է Թավրիզի համալսարանի պրոֆեսոր, Իրանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր անդամ, սփյուռքահայ ճանաչված մաթեմատիկոս Մկրտիչ Թումանյանը⁵³⁸։

Ինչ վերաբերում է կրթական ոլորտում համագործակցության հարցին, ապա այն աչքի է ընկնում իրանական կողմի ՀՀ-ում պարսկերենի զարգացման ուղղությամբ կատարած քայլերով։ ՀՀ-ի 12 դպրոցներում հարյուրավոր աշակերտներ ուսանում են պարսկերեն։ 1994 թ. հունիսի 22-ին Երևանի Հ. Պարոնյանի անվան թիվ 56-րդ պարսկերեն թեքումով դպրոցի աշակերտներն այցելում են ԻԻՀ⁵³⁹։

Իրանական կողմի ուշադրության կենտրոնում էր գիտակրթական համագործակցությունը մայր բուհի հետ։ 1993 թ. հունվարին ԵՊՀ է այցելում ՀՀ-ում ԻԻՀ-ի գործերի ժամանակավոր հավատարմատար Ահմադ Սոբհանին⁵⁴⁰, իսկ 1996 թ. հուլիսի 16-ին ՀՀ-ում ԻԻՀ-ի դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար, դեսպանորդ Փարվիզ Զեյնալին։ Վերջինս և ԵՊՀ շեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը ստորագրում են պայմանագիր արևելագիտության ֆակուլտետում պարսկերեն լեզվի և գրականության, Իրանի մշակույթի և պատմության խնդիրներով զբաղվող ուսանողների և դասախոսների համար «Իրան» անունով կաբինետի ստեղծման վերաբերյալ⁵⁴¹։ 1996 թ. դեկ-

⁵³³ Տե՛ս նույն տեղում, թ. 63։

⁵³⁴ Տե՛ս «Կատավարում. գործնական և տեսական» թիվ 1 (15), Ե., 2003, էջ 24։

⁵³⁵ Տե՛ս «دانشگاه ایرانیان ارمنی، به کوشش ژانت د. لازاریان، شرح حال مشاهیر ارمنی، هیرمند، تهران، 2009, էջ 318։

⁵³⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 183, թթ. 35-36։

⁵³⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 11, գ. 184, թ. 94։

⁵³⁸ Տե՛ս «Երևանի համալսարան», 30 սեպտեմբերի, 1994։

⁵³⁹ Տե՛ս **Քայրուղյան Վ.**, Իրանն այսօր, էջ 326։

⁵⁴⁰ Տե՛ս «Երևանի պետական համալսարան. Տարեգրություն», էջ 299։ Տե՛ս նույնը նաև «Երևանի համալսարան», 15 հունվարի, 1993։

⁵⁴¹ Տե՛ս «Երևանի պետական համալսարան. Տարեգրություն», էջ 323։ Տե՛ս

տեմբերի 27-ին ԵՊՀ է այցելում ԻԻՀ-ի առաջին փոխնախագահ Հասան Հաբիբին և ներկա գտնվում արևելագիտության ֆակուլտետում պարսկերեն լեզվի կաբինետի բացմանը: 1997 թ. մարտի 20-ին ԻԻՀ-ի ԱԳ փոխնախարար Մահմուդ Վալազին, ՀՀ-ում ԻԻՀ-ի արտակարգ և լիազոր դեսպան Համիդեզա Էսֆահանին պարսկերեն լեզվով ընտիր գրականություն են նվիրում ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության կաբինետին⁵⁴²: Նույն թվականի ապրիլին ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ալի Աբբար Վելայաթին այցելում է իրանագիտական կովկասյան կենտրոն և մասնակցում կենտրոնի գիտական խորհրդի ընդլայնված նիստին⁵⁴³: Իսկ 1998 թ. փետրվարի 13-ին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում բացվում է Ֆիրդուսու անվան իրանագիտության սրահը⁵⁴⁴:

Այսպիսով, իրանական կողմի ԵՊՀ-ի հետ գիտակրթական համագործակցությունը հաջող մեկնարկ և ընթացք է ունեցել: ՀՀ-ում գտնվող իրանագիտական կենտրոնները գտնվել են ԻԻՀ դեսպանության ուշադրության ներքո, որը նրանց ցուցաբերել է մասնագիտական աջակցություն: Չևավորված ավանդույթի համաձայն, իրանցի բարձրաստիճան պաշտոնյաների պարբերաբար այցերը նշված կենտրոններ վկայում է տարածաշրջանում իրանական մշակութային արժեքների տարածման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մտադրությունների մասին:

Հետխորհրդային տարիներին մասնագիտական արժեքավոր գրականության նվիրաբերումը հայաստանյան իրանագիտական կենտրոններին հնարավորություն էր ընձեռում հայ գիտաշխատողներին հաղորդակից լինել համաշխարհային իրանագիտության ձեռքբերումներին:

ԻԻՀ նախագահ Մոհամադ Խաթամիի օրոք (1997-2005

թթ.) հայտարարվում է, որ լինելով իսլամական-աստվածապետական պետություն, ԻԻՀ-ն իր ազդեցությունը տարածելու գլխավոր գործոն է համարում ոչ թե իր իսլամական ընդհանրությունը մի շարք երկրների հետ, այլ մշակութային գործոնը, ֆարսի լեզուն որպես միավորիչ ազդակ, Իրանի դարավոր մշակութային ժառանգությունը և այլն⁵⁴⁵: Փաստորեն, գտամշակութային ոլորտում գործակցության սահմաններն ընդլայնվում էին: Այդ մասին է վկայում 1997 թ. հուլիսի 20-ին Երևանում պարսկերեն լեզվի ուսուցիչների և դասախոսների հանդիպումը, որի ընթացքում քննարկվում է ՀՀ-ում պարսկերեն լեզվի դասավանդման և դասագրքերի հրատարակման խնդիրները: ԻԻՀ-ի դեսպան Համիդեզա Էսֆահանին պատրաստականություն է հայտնում աջակցել ՀՀ-ում պարսկերեն լեզվի զարգացմանը:

Միջպետական համագործակցության շրջանակներում կարևոր էր 2001 թ. հունվարի 30-ից փետրվարի 1-ը ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվիրակության այցը ԻԻՀ: Արդյունքում կողմերը ստորագրում են «Գիտության, կրթության և գիտահետազոտական բնագավառներում համագործակցության վերաբերյալ» փոխընթերցման հուշագիրը և «Կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին 2001-2004 թթ. գործնական ծրագիրը»: 2001 թ. համաձայնագիր է կնքվում գիտական աստիճանների և բուհերի ավարտական վկայականների ձանաչման վերաբերյալ: Փաստորեն, կրթական գործակցությունը ստանում է իրավական հիմնավորում:

Միջբուհական համագործակցության շրջանակներում պետք է դիտարկել նաև 2003 թ. մայիսի 6-7-ը ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Մուսթաֆա Մոհինիի այցը, որի ընթացքում ստորագրվում է «2003-2006

նույնը նաև «Երևանի համալսարան», 15 սեպտեմբերի, 1996:

⁵⁴² Տե՛ս «Երևանի պետական համալսարան. Տարեգրություն», էջ 324:

⁵⁴³ Տե՛ս «Իրան-նամե», N 2-3, (24-25), Ե., 1997, էջ 1:

⁵⁴⁴ Տե՛ս «Երևանի պետական համալսարան. Տարեգրություն», էջ 330:

⁵⁴⁵ Տե՛ս **Քայրուրդյան Վ.**, Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները ..., էջ 36-37:

թթ. համար գործնական ծրագիրը»: Այդ ծրագրի 1-5-րդ կետերի շրջանակներում նախատեսվում էր տարեկան մեկական դասախոսի փոխանակում ԵՊՀ պատմության և բանասիրության ֆակուլտետների և Սպահանի հայագիտության բաժինների միջև, տարեկան երկուական ուսանողների փոխանակում Սպահանի համալսարանում՝ իրանագիտության և ԵՊՀ-ում՝ հայագիտության մեջ մասնագիտանալու նպատակով, գրքերի և պարբերականների փոխանակում երկու համալսարանների գրադարանների միջև, ՀՀ-ում և ԻԻՀ-ում ազգագրական և հնագիտական ուղղվածությամբ համատեղ արշավախմբերի կազմակերպում, երեք տարին մեկ գիտաժողովի կազմակերպում Երևանում և Սպահանում⁵⁴⁶: Մոինը կարևորում է այն փաստը, որ ԱՊՀ երկրների շարքում ՌԴ-ից հետո ամենաշատ իրանցի ուսանողներ սովորում են ՀՀ-ի բուհերում⁵⁴⁷: 2004 թ. ՀՀ-ում սովորել է իրանցի 2000, որից 800-ը իրանահայ⁵⁴⁸, իսկ 2005 թ. 1300 իրանցի ուսանող⁵⁴⁹:

Իրանագիտական կապերի աշխուժացմանը նպաստեցին 2003 թ. հունիսի 9-ին ՀՀ ԳԱԱ-ում «Իմամ Խոմեյնու աշխարհայացքը» խորագրով⁵⁵⁰, ինչպես նաև 2004 թ. ապրիլի 2-5-ը ԵՊՀ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովները: Վերջին գիտաժողովին շուրջ 20 երկրից 70 մասնակից հանդես է գալիս իրանագիտության հիմնախնդիրների վերաբերյալ զեկուցումներով⁵⁵¹:

Հիրավի, գիտակրթական կապերին նոր շունչ է հաղորդում 2004 թ. սեպտեմբերի 9-ին ԻԻՀ-ի նախագահ Մոհամմադ Խաթամիի այցելությունը ԵՊՀ: Ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը հյուրին հանձնում է «ԵՊՀ պատվավոր դոկտորի» կոչման

⁵⁴⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 10, գ. 89, թթ. 60-61:

⁵⁴⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 07.05.2003:

⁵⁴⁸ Տե՛ս **Թաղևոսյան Ռ.**, Իրան (տեղեկատու), Ե., 2005, էջ 56:

⁵⁴⁹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 184, թ. 56:

⁵⁵⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10.06.2003:

⁵⁵¹ Տե՛ս «Երևանի պետական համալսարան. Տարեգրություն», էջ 370:

վկայական և ԵՊՀ հոբեյանական ոսկե հուշամեդալ⁵⁵²: Հարկ է նշել, որ համալսարանական միջավայրում իրանագիտական մտքի զարգացմանն իր զգալի նպաստն է բերել 1997-2015 թթ. ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ, 1996 թ.-ից մինչ օրս Կովկասում իրանագիտության կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը, որը «Իրանը և Կովկասը» միջազգային ամսագրի գլխավոր խմբագիրն է: Պրոֆեսորը կազմել է «Պարսից լեզվի արմատական բառարանը»:

Երկկողմ կապերի խորացման գործում զգալի աշխատանք է կատարում 2001 թ.-ից գործող «Միիր» մշակութային ակումբը, որը հրատարակում է համանուն ամսագիրը՝ Գառնիկ Ասատրյանի խմբագրությամբ: «Միիր» ամսագիրն «Իրան-նամե» ամսագրի⁵⁵³ ժառանգորդն է: 2005 թ. ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծվում է «Պարսից լեզվի և գրականության բարեկամների միություն»-ը, որը հայերեն և պարսկերեն լեզուներով հրատարակում է «Փարսիան» պարբերականը⁵⁵⁴:

Կրթական կապերի զարգացման նպատակով 2005 թ. հունվարի 15-19-ը Թեհրանում ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը հանդիպում է ԻԻՀ-ի կրթության նախարար Մոհսեն Հաջիի, ԻԻՀ-ի գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Զաֆար Թոֆիդիի հետ⁵⁵⁵: Պայմանավորվածություն է ձեռք բերվում ԵՊՀ-ի, ԵՊՃՀ-ի, ԵՊԲՀ-ի և իրանական մի շարք բուհերի միջև ուղղակի համագործակցության վերաբերյալ: Նույն թվականի մարտի 15-ին Ռուս-հայկական պետական համալսարանում բացվում է

⁵⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 375:

⁵⁵³ «Իրան-նամե» արևելագիտական հանդեսը հրատարակվել է Երևանում 1993 թ.-ից և անդրադարձել Մերձավոր և Միջին Արևելքին, Կենտրոնական Ասիային, Հին Արևելքին, հայագիտությանը և մշակույթին վերաբերող հիմնահարցերին:

⁵⁵⁴ Տե՛ս **Փարսադանյան Վ.**, Հայ-իրանական գրական առնչությունների պատմությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 103:

⁵⁵⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 183, թ. 11:

իրանագիտության և մեկ ամբիոն:

Այսպիսով, գիտակրթական ոլորտում իրանական կողմի նախաձեռնությամբ և հայկական կողմի պատրաստակամությամբ, մասնավորապես՝ իրանագիտության, ինչպես նաև երկրաբանության և բժշկագիտության ասպարեզում որոշ ձեռքբերումներ են արձանագրվել:

3.2. Մշակութային կապերը

ՀՀ-ի հմնշակութային հարաբերությունները վկայում են իսլամ-քրիստոնեություն խաղաղ գոյակցության մասին: Քաղաքական առումով կրկնակի է արժևորվում այս իրողությունը՝ նախ չեզոքանում է Արևմուտքում տարածված ԻԻՀ-ի հակաքրիստոնեական քաղաքականության քարոզչությունը, ավելին ստեղծվում է հակակշիռ, ինչպես նաև ի դերև է ելնում Ադրբեջանի կողմից իսլամադավան աշխարհին հրամցվող այն հորինվածքը, թե իբր Արցախի հակամարտությունը հետևանք է հայերի կողմից դրսևորած կրոնական անհանդուրժողականության:

Խաղաղ գոյակցության մասին է վկայում այն փաստը, որ 1994 թ. օգոստոսի 26-ին Երևան է այցելում ԻԻՀ-ի պատվիրակությունը մշակույթի և իսլամական կողմնորոշման հանձնաժողովի նախագահ, երկրի հոգևոր առաջնորդների խորհրդի անդամ Հոջաթ-օլ էլլամ Թաղավիի գլխավորությամբ՝ մասնակցելու Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հուղարկավորությանը⁵⁵⁶: Հիշյալ պատվիրակությունը միակն էր իսլամական աշխարհից և վկայում էր կողմերի հոգևոր կառույցների փոխադարձ հարգանքի մասին: Հարկ է նշել, որ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի մահվան կապակցությամբ

և 1999 թ. հուլիսի 8-ին ԻԻՀ-ի ԱԳՆ-ի ԱՊՀ երկրների գլխավոր վարչության պետ Ֆիրուզ Դովլաթաբադին հանդիպում է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ հանձնելով ԻԻՀ-ի նախագահ Մոհամմադ Խաթամիի ցավակցական ուղերձը⁵⁵⁷:

Կողմերի մշակութային համագործակցությունը նշանավորվում է պաշտամունքային հուշարձանների վերադարձման և վերականգնման աշխատանքներով: 1995 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրվում է համագործակցության հուշագիր՝ Երևանի Կապույտ մզկիթի վերանորոգման և վերակառուցման մասին⁵⁵⁸: Ի կատարումն այդ հուշագրի՝ իրականացվում են մզկիթի վերանորոգման աշխատանքները՝ իրանական կողմի կապիտալ ներդրմամբ և երկու երկրների մշակութային փորձագետների հսկողության ներքո: 1999 թ. Երևանում հիմնվում է ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոն: ԻԻՀ-ի մշակույթի և իսլամական կապերի գրասենյակի ու «Մոսթազաֆան և Ջանբազան» հիմնադրամի տնօրենների որոշմամբ մզկիթի պահպանման պարտականությունը փոխանցվում է ՀՀ-ում ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոնին: Մզկիթում կազմակերպվում են կրոնա-մշակութային արարողություններ ու պարսկերենի դասընթացներ: Մզկիթն ունի հարուստ գրադարան⁵⁵⁹:

2000 թ. հուլիսի 18-ին ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ռուլանդ Շառոյանը Թեհրանում հանդիպում է ԻԻՀ մշակույթի և իսլամական կողմնորոշման նախարարին: Վերջինս նշում է, որ իր երկիրը հատուկ ուշադրություն է դարձնում Իրանի եկեղեցիների վերանորոգմանն ու պահպանությանը: Այդ ծրագրում իրենց առանձնահա-

⁵⁵⁷ Տե՛ս «Ապագա», թիվ 7 (10), հուլիս, 1999, էջ 7:

⁵⁵⁸ Կապույտ մզկիթը կառուցվել է 1765 թ. Երևանի խան Հուսեյն Ալիի օրոք և ունի 7000 մ² մակերես, 24 մ բարձրությամբ մինարեթ և 28 խուց: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո այն ծառայել է որպես Երևանի պատմակենդանաբանության թանգարան:

⁵⁵⁹ Տե՛ս Երևանի Կենտրոնական (Կապույտ) մզկիթ, Ե., 2004, էջ 7-8:

⁵⁵⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 242, թթ. 27-31:

տուկ տեղն ունեն հի՛հ-ի հյուսիսում գտնվող Ս. Ստեփանոսի և Ս. Թադեի վանքերը: Ս. Թադեի վանքը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում, իսկ 2004 թ. նշվել է Ս. Թադեի ուխտագնացության 50-ամյակը⁵⁶⁰:

Այսպիսով, հի՛հ-ի մշակութային քաղաքականության ցուցիչ պետք է դիտարկել այն փաստը, որ հի՛հ-ը ՀՀ-ի հարևան չորս երկրներից միակն է, որ պետական մակարդակով հոգածություն է ցուցաբերում իր տարածքում գտնվող հայկական եկեղեցիների նկատմամբ՝ հարկ եղած դեպքում վերականգնելով դրանք:

2000 թ. սկզբին Խոյ քաղաքից 8 կմ հեռավորության վրա գտնվող հայկական Մալիազան եկեղեցին գրանցվում է հի՛հ-ի պետական հուշարձանների ցուցակում⁵⁶¹: Միայն Սպահան քաղաքի Նոր Ջուղա հայկական թաղամասում գործում է 13 եկեղեցի⁵⁶²: 2001 թ. ՀՀ նախագահի այցի ընթացքում կողմերի միջև ստորագրվում է «Համաձայնագիր հուշարձանների պահպանման բնագավառում համագործակցության վերաբերյալ»:

2003 թ. հոկտեմբերի 1-ին «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի 32-րդ ընդհանուր ժողովում ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը գոհունակություն է հայտնում հի՛հ-ի կառավարությունից քրիստոնեական հուշարձանների պահպանությանն ուղղված համագործակցության համար⁵⁶³: Իրանական կողմը վերանորոգում է Արևմտյան Ատրպատականի Կարիսի, Դարադաղի և Գուլիարչինի հայկական եկեղեցիները⁵⁶⁴:

Ի՛հ-ի նախագահ Մոհամմադ Խաթամիի կոչը՝ 2001 թ. հռչակել քաղաքակրթությունների երկխոսության տարի, արձագանք է գտնում հայ հոգևոր-մշակութային կյանքում, քանզի

այդ թվականին նշվում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Այդ պատճառով հի՛հ-ի կառավարությունը, ցանկանալով Հայ Առաքելական եկեղեցու օրինակով ցուցադրել երկու կրոնների՝ իսլամի և քրիստոնեության միջև երկխոսության հնարավորությունը, Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդին հուշել էր հնարավորինս բարձր շուքով տոնել այդ հիշարժան տոնը և հրավիրել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինին: Հուլիսի 16-ին Թեհրանում Արամ Առաջինը մասնակցում է «Մահմեդականների ու հայ քրիստոնյաների համակցությունը» թեմայով սեմինարին՝ որպես մուսուլմանների և քրիստոնյաների միջև կրոնական երկխոսության համոզված ջատագով⁵⁶⁵: Մոհամմադ Խաթամին նշում է, որ ինքը հպարտ է լինել իրանցիների նախագահը՝ այդ թվում սիրելի հայերի⁵⁶⁶:

Հարկ է նշել, որ 2000 թ. Արամ Առաջին կաթողիկոսի առաջարկով եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կրոնական երկխոսության հատուկ հանձնաժողով է ստեղծում, որի իսլամադավան միակ ներկայացուցիչը Մերձավոր Արևելքում հի՛հ-ից է:

2005 թ. օգոստոսի 23-28-ը Թավրիզի թեմական առաջնորդարանի հրավերով ՀՀ Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատվիրակությունը մեկնում է հի՛հ ծանոթանալու կառավարության կողմից ֆինանսավորվող հայկական պատմամշակութային հուշարձանների վերականգնման աշխատանքներին և գիտամեթոդական խորհրդատվությամբ օժանդակելու իրանցի մասնագետներին⁵⁶⁷: ՀՀ պատվիրակությունն այցելում է Ս. Ստեփանոսի և Ս. Թադեի վանական համալիրներ, Դարաշամբի, Խոյ քաղաքի, Մահրազան և Գրիս գյուղերի, ինչպես նաև Ծործորի Ս. Աստվածածին եկեղեցիներ: Վերջինս (կառուցված 1298-1314 թթ.) 1995 թ.

⁵⁶⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 6, գ. 67, թ. 42 և գ. 11, գ. 182, թթ. 50-51:

⁵⁶¹ Տե՛ս «Լոյս», թիվ 1, մարտի 15, 2000, էջ 4:

⁵⁶² Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 25:

⁵⁶³ Տե՛ս Օսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 298:

⁵⁶⁴ Տե՛ս Մանուկյան Մ., Իրանահայ գաղթաբնակի առօրյան, Թեհրան, 2001, էջ 47:

⁵⁶⁵ Տե՛ս Բայրուրյան Վ., Իրանի հայ համայնքը, էջ 146:

⁵⁶⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 6, գ. 67, թ. 41:

⁵⁶⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 11, գ. 183, թ. 80:

Մակրուում արհեստական լիճ ստեղծելու պատճառով իրանահայ ճարտարապետ Վարուժան Առաքելյանի նախածնունդյամբ ու միջոցներով տեղափոխվել է բարձրադիր վայր՝ Բարոն գետի մոտ⁵⁶⁸:

Այսպիսով, հոգևոր-մշակութային համագործակցությունը դրսևորվում է քաղաքակրթական երկխոսության պայմաններում և միմյանց պաշտամունքային կոթողների նկատմամբ կողմերի դրսևորած հոգատար վերաբերմունքով:

Երկկողմ գործակցության շրջանակներում անցկացվում են մի շարք միջոցառումներ մշակույթի մյուս ոլորտներում: Դրանցից են՝ 1993 թ. և 1994 թ. փետրվարի 1-12-ը ՀՀ պատվիրակության մասնակցումը Թեհրանի միջազգային 11-րդ և 12-րդ կինոփառատոներին, հունիսին ՀՀ-ում իրանական ֆիլմերի փառատոնի անցկացումը, նույն թվականի հունիսի 17-ին Երևանի հանրապետական գեղագիտական կենտրոնի ցուցասրահում «Նկարում են Իրանի երեխաները» խորագրով ցուցահանդեսի բացումը, սեպտեմբերի 5-15-ը Երևանում իրանական ֆիլմերի փառատոնի անցկացումը, Երևանի տիկնիկային թատրոնի մասնակցումը Թեհրանի տիկնիկային թատրոնների փառատոնին⁵⁶⁹:

Հարկ ենք համարում անդրադառնալ ֆիլմարվեստի արտադրության բնագավառում երկկողմ գործակցության սկզբնավորման հարցին: Հիշարժան են առաջին քայլերն այդ ուղղությամբ, երբ 1993 թ. նկարահանվում է «Տավարիշ» ֆիլմը (Իրան), հետևյալ կազմով՝ սցենարը և բեմադրությունը Մեհդի Ֆախիմզադեի, օպերատոր՝ Ալբերտ Յավուրյան, նկարիչ՝ Ռաֆայել Բաբայան, մոնտաժը՝ Իրաջ Վոլաֆշանի, երաժշտությունը՝ Յուրի Հարությունյանի, դերերում՝ Սիմադ Նաջաֆի (Իրաջ), Մեհդի Ֆախիմզադե (Ռզա), Տիգրան Գրիգորյան (Տիգրան), Իրինա Գրիգորյան (Իրա), Սաիդ Ալեմզադե, Անահիտ Մանուկ-

⁵⁶⁸ Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., 2002, էջ 453-454:

⁵⁶⁹ Տե՛ս Բայբուրյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ., հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, էջ 52:

յան, Գեորգի Արզումանյան:

Հայաստանում նկարահանված կինոնկարը Իրանից ԽՍՀՄ փախած կոմունիստ Իրաջի մասին է: Արկածային ֆիլմ, որտեղ Երևանի փողոցներում ամերիկյան ֆիլմերին հատուկ ընդհարումներ են տեղի ունենում: Ոչ մի անգամ չի նշվում «հայ» կամ «Հայաստան» բառը, միայն մեկ անգամ հայկական եկեղեցի և ժամերգություն է ցուցադրվում, իսկ հերոսի անունն էլ հենց դերակատարի անունն է՝ Տիգրան Գրիգորյան: Նկարահանումները հատուկ կատարվել են ծմբանը, որպեսզի իրանական ֆիլմում հանկարծ կանայք գլխաբաց չերևան:

Հայաստանում նկարահանված երկրորդ իրանական կինոֆիլմն է «Ձինաթափությունը», (1993, բեմադրիչ՝ Ալիոզա Դավուդ Նեժադ, օպերատոր՝ Ալբերտ Յավուրյան, նկարիչ՝ Ռաֆայել Բաբայան, ձայնագրող՝ Լևոն Կարապետյան, թարգմանիչ և քարտուղար՝ Անահիտ Աբադ, դերերում՝ Ներսես Հովհաննիսյան, Վիկտոր Անանի, Ֆրեդ Դավուրյան)⁵⁷⁰:

Այսպիսով, 1993 թ. նկարահանված ֆիլմերը վկայում են, որ հարաբերությունների սկզբում կողմերը որոշ հետաքրքրություն են ցուցաբերել միմյանց կինոյի ընծեռած հնարավորությունների նկատմամբ: Ակնհայտ է, որ իսլամական կրոնական բարբերը հասարակական իրավահարաբերություններ ներմուծած ԻԻՀ-ն վերապահումներով է վերաբերվում երկրի սահմաններից դուրս նկարահանված ֆիլմերին և գործում է գրաքննություն: Իրանական կինոյի արտադրության չափորոշիչները պահանջում են որոշակի սահմանափակումներ, որոնք էլ պետք է դիտարկել որպես առանձնահատկություն:

Հարկ է նշել, որ 1999 թ. Հայաստանի «Արտ-13» հեռուստաընկերությունը «Քրիստոնեության 1700-ամյակ»-ի շրջանակներում Իրանի հայ համայնքի մասին ֆիլմի նկարահանումները կատարում է Թեհրանում, Սպահանում, Թավրիզում և

⁵⁷⁰ Տե՛ս Բախչինյան Ա., Հայերը համաշխարհային կինոյում, Ե., 2004, էջ 649-650:

Ուրմիայում⁵⁷¹, իսկ 2002 թ. Իրանի բարձրագույն հոգևոր խորհրդի ֆինանսական աջակցությամբ իրանցի և հայ կինեմատոգրաֆիստները նկարահանում են Հայոց ցեղասպանությանը նվիրված «Արարատ» վավերագրական ֆիլմը⁵⁷²: Հարկ է նկատել, որ գրաքննության պայմաններում այդպիսի բովանդակությամբ ֆիլմի նկարահանումը ինչ-որ կերպ վկայում է ԻԻՀ-ի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ: Տեղին է նշել, որ դեռևս 1979 թ. Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Խոմեյնիի խոսքով՝ Իրանն այն պետությունը չէ, իսկ պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայերի նոր ցեղասպանություն կազմակերպեն⁵⁷³:

Այսպիսով, վավերագրական բնույթի ֆիլմերի արտադրությունը համեմատաբար ավելի ոյուրին է եղել իրանական կողմի հետ իրագործելը, քան մյուս տեսակի ժանրերի դեպքում:

Հաջողված գործակցություն է ծավալվում թատերական ոլորտում: Դեռևս 1991 թ. մայիսին Թեհրանի Հայ փորձարարական թատրոնը Երևանում մասնակցում է սփյուռքահայ թատրոնների փառատոնին⁵⁷⁴: Նշված թատրոնի Գևորգ Ղարֆիի «Միավուշ և Սուդաբե» ու մի քանի հեղինակների գործերից կազմված «Մի խանգարի, որ տեսնեմ» ներկայացումներն արժանանում են դափնեկրի դիպլոմի: Իսկ գեղարվեստական ղեկավար Լուսանա Հովհաննիսյան-Աբրահամյանը՝ ռեժիսոր լավագույն աշխատանքի համար՝ ՀՀ մշակույթի նախարարության մրցանակին, նկարիչ Սմբատ Աբրահամյանը՝ նկարչական լավագույն աշխատանքի համար՝ Հայաստանի նկարիչների

⁵⁷¹ Տես «Ապագա», 1999, թիվ 5-6 (8-9), էջ 16:

⁵⁷² Տես «Հայաստանի Հանրապետություն», 29.10.2002:

⁵⁷³ Տես Հովհաննիսյան Ն., Այաթոլլահ Խոմեյնիի մուտեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը Հայաստանի ու հայության հանդեպ, Հայաստան-Իրան, 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2012, էջ 75:

⁵⁷⁴ Տես Հայ Սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 260:

միության մրցանակին⁵⁷⁵:

Հիրավի, ամրապնդվել են հայ-իրանական թատերական կապերը և ստեղծագործական փոխայցելությունների պայմանագրեր են կնքվում Իրանի մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպությունների և Հայաստանի թատերական գործիչների միության միջև: 1992 թ. նշված միության կողմից Թեհրան է այցելում Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի դերասանների մի խումբ⁵⁷⁶: Իսկ 1993 թ. Իրանի ազգային երգչախումբն իրանահայ երաժիշտ Գուրգեն Մովսեսյանի զխավորությամբ Երևանում մասնակցում է երգչախմբերի փառատոնին⁵⁷⁷:

1995 թ. հոկտեմբերի 11-ին ԻԻՀ-ի մշակույթի և իսլամական առաջնորդության նախարար Սեյեդ Մոսթաֆա Միր-Սալիմը մասնակցում է Երևանի Կամերային երաժշտական տանն ԻԻՀ-ի մշակույթի շաբաթվա բացման արարողությանը, որին ներկա են գտնվում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը, ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը: Ցուցադրվում են մետաքսագործ գորգեր, արծաթե սկահակներ, խճանկարային արվեստի, մանրանկարչության և լուսանկարչության նմուշներ: Ցուցահանդեսին ներկայացվում է բազմաժանր հրատարակություններ գեղարվեստական, մշակութային, հայկական դպրոցների դասագրքեր: Միջոցառման ժամանակ երաժշտական կատարումներով հանդես են գալիս իրանցի երաժիշտներ Ռասուլ Բեհբահանին, Շահաբ Ֆայազին, Մահմուդ Նեմաթին, Սիամակ Բանային, Մեհրդադ Դելնավազին, Չաքավաք Յադմին և Ջամալեդդին Սենբարին⁵⁷⁸: Այդ միջոցառումն իրանական մշակութային հարուստ օրակարգով առաջին ծրագիրն էր:

Այսպիսով, 1990-ական թթ. առաջին կեսին որոշ աշխու-

⁵⁷⁵ Տես «Ազգ», 29.05.1991:

⁵⁷⁶ Տես Հայկական համառոտ հանրագիտարան, 2-րդ հտ., Ե., 1995, էջ 389:

⁵⁷⁷ Տես «دانشنامه ایران ارمنی»: էջ 404:

⁵⁷⁸ Տես «Ապագա», 30 հոկտեմբերի, 1995, թիվ 2 (2), էջ 3-4:

ժացում նկատվել է իրանական կողմից, սակայն հետագայում թուլանում են մշակութային կապերը: 1999 թ. հունվարի 22-ին Հայ-իրանական կապերի հանձնաժողովի նիստի ընթացքում ՀՀ մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարար Ռուլանդ Շառոյանը նշում է, որ մշակութային կապերում աջակցում էր Իրանի հայ համայնքի «Արարատ» միությունը⁵⁷⁹: Իսկ ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գեղամ Ղարիբջանյանի խոսքով՝ ՀՀ-ից գալիս էին մշակութային խմբեր, նկարիչներ և մտավորականներ, որոնք միմիայն շփվում էին հայ համայնքի հետ և ԻԻՀ-ում հնարավորություն չէր ստեղծվում, որ իրանցիներն էլ առիթ ունենան ծանոթանալու հայկական մշակույթին⁵⁸⁰: Փաստորեն շեշտը դրված էր ՀՀ-ում ցուցահանդեսների կազմակերպման վրա: Պատճառներից էին նշված թույլատրելիությունը, ինչպես նաև այն, որ իրանական կողմն ավելի շահագրգռված էր իր խմբերը ՀՀ ուղարկելու, քան հայկական համույթներն ընդունելու:

Որոշակի ակտիվություն է նկատվում մշակույթի ոլորտում, երբ 2002 թ. փետրվարի սկզբին Հայաստանի ազգային պատկերասրահում ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ ներկայացվում են իրանական մանրանկարչության, մետաղագործության, փորագրարվեստի բացառիկ նմուշներ⁵⁸¹, իսկ 2003 թ. փետրվարի 3-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում բացված ցուցահանդեսում ներկայացվում է Ֆաթեմե Ղորֆեշանի մանրանկարները և Ամիր Ալի Ջավադիանիի լուսանկարչական աշխատանքները⁵⁸²:

Հարկ է նշել, որ նշված միջոցառումները կազմակերպվում են «Ֆաջրի տասնօրյակ» անունով հայտնի տոնակատարությունների շրջանակներում և այն երկրներում, որոնց հետ ԻԻՀ-ն ունի մշակութային սերտ կապեր: «Ֆաջր» միջազգային

թատերական ամենամյա փառատոնն անցկացվում է ամեն տարի փետրվարին և նվիրվում Իսլամական հեղափոխության հաղթանակի տարեդարձին:

2002 թ. հուլիսի 4-ին Թեհրանում Իրանի արվեստագետների տանը բացվում է Հայաստանի նորարար փորձառական արվեստի կենտրոնի 14 արվեստագետների ստեղծագործությունների երկշաբաթյա ցուցահանդեսը⁵⁸³: Այն ներառում էր բազմաժանր ծրագիր՝ գեղանկարչություն, գրաֆիկա, դասական ավանգարդ երաժշտություն, վիդեո տարբերակով թատերական ներկայացում, պերֆորմանս, լուսանկարչություն և այլն:

Մշակութային կապերի զարգացման գործում շարունակում էր նպաստել թատրոնը: 2000 թ. փետրվարին «Ֆաջր» փառատոնին մասնակցում է Երևանի պետական կամերային թատրոնը: Փառատոնին 35 երկրներ ցանկություն են հայտնել մասնակցել, որից միայն տասն են մասնակցում⁵⁸⁴: Նույն փառատոնին մասնակցում է նաև Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբը, որը հրավիրող կողմի ցանկությամբ կատարում է Ֆիրդուսու «Շահնամե» («Արքայապատում») պոեմից Լորիս Ճզնավորյանի հեղինակած համանուն գործը «Ռուստամ և Ջոհրաբ» հատվածը: Հիշարժան է, որ առաջին անգամ ԻԻՀ-ում բեմի վրա մեներգում է կինը⁵⁸⁵:

2000 թ. իրանահայ դերասան և ռեժիսոր Անդրանիկ Խեչումյանը Երևանում բեմադրում է «Ապակե զագանանոցը» պիեսը պարսկերենով, իսկ 2001 թ. կրկին հայ հանդիսատեսի դատին է հանձնում դոկտոր Ֆարիադ Նազերգադե Քերմանիի «Ռուսաբեռ» ներկայացումը հայերենով: Առաջին անգամ Իրանի հայկական թատրոնի դերասանների մի խումբ բեմի վրա հանդես է գալիս հայաստանցի դերասանների հետ համատեղ: 2000 թ. Խեչումյանը ՀՀ-ի և ԻԻՀ-ի թատրոնների համագործակ-

⁵⁷⁹ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 11, գ. 182, թ. 14:

⁵⁸⁰ Տես «Ապագա», 1999, թիվ 8-9 (11-12), էջ 13:

⁵⁸¹ Տես «Ալիք», 04.02.2002:

⁵⁸² Տես «Հայաստանի Հանրապետություն», 04.02.2003:

⁵⁸³ Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 8, գ. 86, թ. 175:

⁵⁸⁴ Տես «Լոյս», թիվ 1, 15 մարտի, 2000, էջ 13:

⁵⁸⁵ Տես նույն տեղում, թիվ 3, 30 ապրիլի, 2000, էջ 12:

ցության ընդլայնման գործում իր հետևողական ջանքերի համար Հայաստանի թատերական գործիչների միության կողմից արժանանում է «Արտավազդ» մրցանակի:

2004-2005 թթ. Անդրանիկ Խեչումյանը բեմադրում է Մոհամադ Ռահմանի «ժաննա դ'Արկը կրակի մեջ» և Էգաթոլլահ Մեհրավարանի «Համլետի դերասանը» պիեսները, որոնք ներկայացրնում է նաև «Արմմոնո» միջազգային փառատոնի ժամանակ: Խեչումյանը նաև կատարում է թարգմանություններ հայերենից պարսկերեն և հակառակը: Նրա թարգմանություններից են՝ Ժիրայր Անանյանի «Ես եմ եկա», Գուրգեն Խանջյանի «Դատավարություն», Սամվել Կոսյանի «Գուցե փրկվենք», Գևորգ Դարֆիի «Աիվաշը և Սուդաբեն», ինչպես նաև Ռահմաթ Ամինի «Ճենապակե ամուսինը», Ֆարիադ Նազերզադե Քերմանիի «Ուսաբեռը», Աբբաս Ջահանգիրիանի «Համուն և Դարիա» ստեղծագործությունները⁵⁸⁶:

2002 թ. մայիսին ԻԻՀ-ի Քերմանշահ քաղաքում «Սուրեի» թատրոնի միջազգային փառատոնին մասնակցում է Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնը: Հյուրախաղերը կազմակերպվում են ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի տնօրեն Մոհսեն Աբուբալթեբիի նախաձեռնությամբ: Առաջին կարգի մրցանակ է շնորհվում Սվետլանա Գրիգորյանին՝ կնոջ լավագույն դերի համար⁵⁸⁷:

Նշելի է, որ 2000-2002 թթ. ՀՀ-ից ԻԻՀ են այցելում 52 թատերական, սպորտային և մշակութային խմբեր⁵⁸⁸:

Թեև մշակութային կապերում նկատվում էր աշխուժություն, այդուհանդերձ, առկա էին որոշ հարցեր: 2003 թ. ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գ. Դարիբջանյանն ընդգծում է. «*Բավարար չեն համարում, որովհետև նախ Իրանի մշակութային օրերը Հայաստանում տեղի են ունեցել 1994 թ., դրանից հետո պետք է ասել, որ կարծես թե երկար դադար է: Մյուս կողմից արդեն մի*

քանի տարի է, որ ճիզեր ենք գործադրում պայմանավորվածության համաձայն Հայաստանի մշակույթի օրերը անցկացնելու Իրանում, բայց անընդհատ ձգձգվում է»⁵⁸⁹:

Հարկ է նշել, որ 2005 թ. իրանցի տարբեր ստեղծագործական խմբեր և անհատ կատարողներ մասնակցում են ՀՀ-ում կազմակերպված մշակութային միջոցառումներին: Դրանցից են «Ոսկե ծիրան» փառատոնին ռեժիսոր Աբբաս Քիառուստամի ֆիլմերի ցուցադրումը, ինչպես նաև «Հայաստան-Իրան մշակութային կամուրջներ» խորագրով համաժողովի, Երևանի ժողովրդատի թանգարանում Իսլամական հեղափոխության 26-րդ տարեդարձին նվիրված իրանցի նկարիչների և Ֆերեշթ Ազարբանիի «Մանրանկարչություն և զարդարվեստ» ցուցահանդեսների կազմակերպումը Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերությունում⁵⁹⁰: Այսպիսով, իրանցի մշակութային գործիչների հետ արդյունավետ համագործակցությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր:

Մշակութային օրակարգը նշանավորվում է գրական կապերով: 2004 թ. հունիսին Հայաստանի գրողների միությունը, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը և ՀՀ-ում ԻԻՀ-ի մշակույթի կենտրոնը կազմակերպում են «Հայաստան-Իրան գրական-մշակութային կամուրջներ-2004» ծրագիրը, որի շրջանակներում Երևան են այցելում իրանցի գրողներ⁵⁹¹:

Արժեքավոր գեղարվեստական գրականություն է թարգմանվել պարսկերենից հայերեն և հակառակը: 1990 թ. Երևանում հրատարակվում է «Մարգարտաշար» ժողովածուն, որտեղ ընդգրկված են պարսիկ դասական 22 գրողների քառյակները: Ժողովածուի թարգմանչական կազմում էին Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Վահագն Դավթյանը և այլք: Իսկ 2004 թ. հրատարակվում է «Պարսից պոեզիայի ընտրանի» ժո-

⁵⁸⁶ Տե՛ս Գ. Բահանե արժան, էջ 449:

⁵⁸⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 08.05.2002:

⁵⁸⁸ Տե՛ս նույն տեղում, 08.06.2002:

⁵⁸⁹ «Ալիք», 09.07.2003:

⁵⁹⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, ց.11, գ.184, թթ. 92-93:

⁵⁹¹ Տե՛ս նույն տեղում, 09.06.2004:

ղովածուն Միլվա Կապուտիկյանի թարգմանությամբ: Հիշարժան է 2002 թ. ամերիկաբնակ Գևորգ Նուբարյանի թարգմանությամբ Պարույր Սևակի «Անլռելի գանգակալուծում» պոեմի պարսկերեն հրատարակությունը⁵⁹²:

Իրանցի ընթերցողին հայ գրականությանը լավագույնս ծանոթացնելու գործում մեծ ավանդ ունի հայագետ, թարգմանիչ, բանաստեղծ Ահմադ Նուրիզադեն (1951-2021): Վերջինս աշխարհում միակ իրանցի բանաստեղծն էր, որ ստեղծագործում էր և՛ պարսկերեն, և՛ հայերեն: Նրա ուսումնասիրություններից են հանրագիտարանային արժեք ունեցող պարսկերեն ստվարածավալ «Հայաստանի պատմությունը և մշակույթը» (Թեհրան, 1997 թ.) գիրքը⁵⁹³: Նուրիզադեն պարսկերեն հրատարակել է «Հայ պոեզիայի հարյուր տարին» (Թեհրան, 1990) բանաստեղծությունների և Ստեփան Զորյանի «Խնձորի այգին», «Անձրև» (1999) պատմվածքների ժողովածուները: Նուրիզադեն ստեղծագործել է նաև հայերեն, («Բարև Ձեզ, հայեր», բանաստեղծությունների ժողովածու՝ 2000 թ.): 2001 թ. բանաստեղծը պարզևատրվել է ՀՀ «Մ. Խորենացի» մեդալով⁵⁹⁴:

Պարսկերեն - հայերեն գիտական-բառարաններ հրատարակման գործում էլ մեծ է իրանահայ ժիրայր Խոսրովյանի դերը⁵⁹⁵:

Իրանի հայ համայնքում տպագրվում են նոր պարբերականներ: 2000 թ.-ից Թեհրանում լույս են տեսել «Ապագա» հայագիտական-իրանագիտական եռամսյա հանդեսը, ինչպես նաև «Լոյս» մշակութային և հասարակական երկշաբաթաթերթը: Վերջինիս արտոնատերն ու գլխավոր խմբագիրն է Էդիկ Բաղդասարյանը: 2001 թ. դեկտեմբերից Թեհրանում լույս է տեսնում «Հանդես» գրական-գեղարվեստական եռամսյա պարբերականը Վարուժ Սուրենյանի խմբագրությամբ: 1999 թ.

⁵⁹² Տես նույն տեղում, 26.10.2002:

⁵⁹³ Տես Թաղևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 52:

⁵⁹⁴ Տես Հայ Ակիուռք հանրագիտարան, էջ 259:

⁵⁹⁵ Տես Իրանահայոց հանրագիտարան, էջ 117:

տևական ընդմիջումից հետո Երևանում լույս է ընծայել 1935 թ. Թեհրանում ստեղծված «Նոր էջ» գրական միավորի 24-րդ տարեգիրքը⁵⁹⁶: 2000 թ. բարերար Լևոն Ահարոնյանի օժանդակությամբ լույս է տեսնում «Լոյս» ամսաթերթը հայերենով և պարսկերենով: Նա նաև մշակութային-հասարակական և գեղարվեստական «Յոյս» ամսագրի արտոնատերն ու պատասխանատուն էր⁵⁹⁷:

Այսպիսով, ՀՀ-ԻԻՀ միջմշակութային համագործակցությունը, սկզբնավորվելով 1990-ական թթ., աստիճանաբար կարողացավ իր մեջ ներառել ոլորտի տարբեր ճյուղեր: Գիտակրթական և մշակութային համագործակցությունը պարբերաբար եղել է նաև երկու երկրների նախագահների ուշադրության կենտրոնում, այսինքն՝ չի սահմանափակվել լոկալ համապատասխան պաշտոնյաների հանդիպումներով և հարցերի քննարկումով:

3.3. Հայ համայնքի մասնակցությունը միջմշակութային կապերի գործընթացին

Միջմշակութային կապերի զարգացման գործում ևս իրենց ներդրումն են ունեցել իրանահայ որոշ մտավորականներ, որոնք ներգրավված են տարբեր նախաձեռնություններին և անհատական, և միջպետական կամ համայնքային կառույցների ծրագրերի շրջանակներում: Ըստ այդմ կարող ենք առանձնացնել մի քանի բնագավառ, ինչպիսիք են՝ պատմագիտական երկերի թարգմանություն, երկկողմ գրական կապերի զարգացում և մշակութային այլ ծրագրերի իրականացում:

Հիրավի, պատմագիտական արժեքավոր գրականութ-

⁵⁹⁶ Տես Հայ Ակիուռք հանրագիտարան, էջ 263, 265, 258:

⁵⁹⁷ Տես دانشنامه ایران ارمنی, էջ 177:

յուն է թարգմանվել հայերենից պարսկերեն: 2000 թ. Լևոն Մինասյանը պարսկերեն թարգմանել է Հարություն Հովանյանցի «Նոր Ջուղայի պատմություն» գրաքարով գրված գիրքը: Գարուն Սարգսյանի պարսկերեն թարգմանությամբ տպագրվել են Ագաթանգեղոսի «Հայոց Պատմությունը» 2001 թ., Կորյունի «Վարք Մաշտոցին» 2002 թ., Փավստոս Բուզանդի «Հայոց Պատմությունը» 2004 թ., ժամին Էլիբեկյանի «Հայաստանը և Սելևկյանները» 2003 թ. և այլ երկերը⁵⁹⁸: Հարկ է նշել, որ հայկական աղբյուրներն ունեն կարևոր նշանակություն Իրանի պատմության ուսումնասիրության համար: Դրանց միջոցով լրացվում է որոշ պատմափուլերի վերաբերյալ պարսկական աղբյուրներում առկա սակավ տեղեկատվությունը: Արժե նշել, որ Աբրահամ Հովասափյանը հեղինակ է «Մ. Խորենացի» (պարսկերենով), «Ալիգուդարգի հայկական գյուղերը», «Սուրբ պատմություն» եռահատորյակի, «Իրանի հայ Ավետարանական եկեղեցու 100 տարվա պատմությունը» և այլ գրքերի⁵⁹⁹:

Հայ-իրանական պատմական, հասարակական, մշակութային բազմապիսի հարցերին է նվիրված Լինա Մելքոնյանի պարսկերեն և անգլերեն յոթհատորանոց «Հայ-իրանական մշակութային ընդհանրություններն ու հարաբերությունները վաղ ժամանակներից մինչև մեր օրերը» վերնագրով գիրքը, որն իրանագետներ Գառնիկ Ասատրյանի և Գուրգեն Մելիքյանի հետ համատեղ կատարած աշխատանքն է⁶⁰⁰:

Հիրավի, գնահատելի աշխատանք է կատարել նաև Ժանետ Լազարյանը, որը կազմել է «Իրանահայոց հանրագիտարան»-ը: Դրա միջոցով պարսկալեզու ընթերցողն առաջին անգամ հնարավորություն ստացավ ծանոթանալու անվանի իրանահայերի հետ: Հանրագիտարանը տպագրվել է ԻԻՀ-ի քաղաքակրթությունների երկխոսության կենտրոնի տնօրեն, ԻԻՀ-ի մշակույթի և իսլամական առաջնորդության նախարար Ա-

թաօլլահ Մոհաջրանիի աջակցությամբ: Այն նվիրվել է Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին, նաև ՄԱԿ-ի կողմից 2001 թ. քաղաքակրթությունների երկխոսության տարի հայտարարելուն: Հանրագիտարանը լույս է տեսել Թեհրանում 2002 թ. և բաղկացած է 25 բաժնից:

Հարկ ենք համարում նշել, որ դեռևս 1997 թ. հունիսին ԻԻՀ նոր բարենորոգիչ նախագահ Մոհամմադ Խաթամին հանդես եկավ «տարբեր կրոնների ու քաղաքակրթությունների» միջև երկխոսություն սկսելու նախաձեռնությամբ⁶⁰¹: Ի դեպ, ԻԻՀ-ի Քաղաքակրթությունների միջև երկխոսությունների անհարժեշտության մասին ՄԱԿ-ի կողմից ընդունված բանաձևին ՀՀ-ն համահեղինակ է և 1998 թ. նոյեմբերի 4-ին կողմ է քվեարկել դրան⁶⁰²:

Անհրաժեշտ է նշել, որ իրանական կողմի հրավեր-նախաձեռնությամբ Հայոց եկեղեցին ևս իր ներդրումն է բերել այդ շարժմանը: Այդ մասին է վկայում այն, որ 1997 թ. օգոստոսի 26-ին ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բայբուրդյանը նամակով դիմում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսին հայտնելով, որ իրանական «Նավաք» մշակութային-հրատարակչական հաստատությունը մտադիր էր լույս ընծայել «Իսլամի և Արևմուտքի միջև խաղաղ գոյակցությանը խոչընդոտող գործոնները» խորագրով գիրքը: Այդ նպատակով նշված հաստատությունը ներկայացրել էր որոշ հարցեր՝ ՀՀ դեսպանությանը խնդրելով դրանք վերահասցեագրել Վեհափառ հայրապետին⁶⁰³: Հատկանշական է, որ հաստատությունը մտադիր էր այդ հարցերի պատասխանները, ի շարս այլ հոգևոր գործիչների հետ անցկացրած հարցազրույցների, գետեղել հիշյալ գրքում: Այսպիսով, իրանական կողմի բարյացակամությամբ հնարավորություն էր ընծեռվում Հա-

⁵⁹⁸ Տես Իրանահայոց հանրագիտարան, էջ 96, 210:

⁵⁹⁹ Տես նույն տեղում, էջ 96:

⁶⁰⁰ Տես նույն տեղում, էջ 118:

⁶⁰¹ Տես Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 742:

⁶⁰² Տես ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 2, գ. 158, թ. 22:

⁶⁰³ Տես նույն տեղում, գ. 5, գ. 239, թ. 69:

յոց եկեղեցուն ևս ներկայացնելու իր մոտեցումը, այն է՝ կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիքն են:

Երկկողմ գրական կապերի զարգացման հարցում ևս որոշակի նպաստ է բերել Իրանի հայ համայնքը: Այդ մասին է վկայում 2003 թ. հունիսի 9-ին հայ կանանց և հայոց հասարակական միությունների նախաձեռնությամբ Թեհրանի հայ ակումբի սրահում Գրիգոր Նարեկացու «Մատենանոց բերդաբանություն» պոեմի 1000-ամյակին նվիրված երեկույթի կազմակերպումը⁶⁰⁴: Հարկ է նշել, որ պոեմը պարսկերեն է թարգմանել Սպահանի համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս Ազատ Մաթյանը: Նա նաև հայերեն է թարգմանել «Հաֆեզի գազելներն» ու «Օմար Խայյամի քառյակները»:

Հիրավի, գնահատելի աշխատանքներ են կատարել իրանահայ որոշ գրող-թարգմանիչներ երկու ժողովուրդների գրականության արժեքավոր գործերը միմյանց ծանոթացնելու և առավել մատչելի դարձնելու հարցում: Այդպիսիք են՝ 2003 թ. Գարուն Սարգսյանի կողմից Նար-Ղոսի «Աննա» վիպակի պարսկերեն թարգմանումն ու տպագրումը, ինչպես նաև Խաչիկ Խաչերի կողմից՝ իրանցի նովելագիրների հատընտիրը «Մետաքսի ճանապարհը» 1996 թ., իրանցի գրողների 4 պատմվածք՝ «Կարմիր փողկապով տղամարդը» 2002 թ., «Յոթ պատմվածք» իրանական ժողովրդական հեքիաթների 2003 թ., Սադեղ Հեղայթի «Կենդանի թաղվածը» 2003 թ., Նորիկ Միջայեյանի կողմից՝ պարսիկ ժամանակակից բանաստեղծ Ահմադ Շամլուի «Ես ցավ եմ համընդհանուր» բանաստեղծությունների ժողովածուի (1992) և Բահրամ Բեյգալի «Հագվերտի մահը» ընտրանու՝ 1996 թ., հայերեն թարգմանությունները⁶⁰⁵:

Մեծ է իրանահայ հայաստանցի գրող Էդուարդ Հախվերդյանի ավանդը պարսից գրականությունը հայ ընթերցողին

ներկայացնելու գործում: Նրա թարգմանությամբ տպագրվել են 1992 թ. Սադեղ Հեղայթի, Սադեղ Չուբաքի, Հուշանգ Գուլչիրի, 1996 թ. Ֆորուզ Ֆարուխադեի «Մեկ այլ ծնունդ», իսկ 2000 թ. Սոհրաբ Սեփեհրիի «Կանաչ ծավալ» ստեղծագործությունները: Կրոնագիտական հայալեզու գրականության հարստացման գործում կրկին մեծ է Հախվերդյանի ներդրումը: Նա հայերեն է թարգմանել Իսլամի սուրբ գիրքը՝ «Ղուրանը»⁶⁰⁶:

Մշակութային կապերում ևս որոշակի ներդրում է ունեցել Լևոն Ահարոնյանը: Նրա նախաձեռնությամբ 1997 թ. հունվարի 14-ին իրանական «Մելլաթ» բանկի բացման առիթով Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանը համաձայնում է բացառիկ ելույթ ունենալ և ներկայացվում է մատուրդի հայտնի ստեղծագործությունը՝ «Ռուստամ և Ջոհրաբ» օպերան: Ի՞հ՛ է կրոնոմիկայի և ֆինանսների նախարար Մոհամմադխանը մեծ բավականություն ստանալով՝ Ճգնավորյանին հրավիրում է Թեհրան, որտեղ էլ «Վահդաթ» դահլիճում իրանցի հանրխատեսը վայելում է նշված օպերան⁶⁰⁷: 2002 թ. օգոստոսի 22-ին ևս Թեհրանի միջազգային ցուցահանդեսների «Միլադ» սրահում կրկին բեմադրվել է նշված օպերան⁶⁰⁸:

Մշակութային բարեկամության գործում իրենց ներդրումն են ունեցել իրանահայ այլ գործիչներ ևս: Իրանահայ (հետազայում այլ երկրներում, ի վերջո՝ ՀՀ-ում բնակություն հաստատած և իր գործունեությունը ծավալած) գեղանկարիչ-արվեստագետ Մարկոս Գրիգորյանի (1925-2007) ջանքերով 1993 թ. հիմնվում է Երևանի Միջին Արևելքի թանգարանը, որը գործում է Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանին կից: Թանգարանում ներկայացված են Իրանի պատմության վերաբերյալ ավելի քան 2000 ցուցանմուշներ⁶⁰⁹: Նրա

⁶⁰⁶ Տե՛ս Իրանահայոց հանրագիտարան, էջ 441:

⁶⁰⁷ Տե՛ս Ահարոնյան Լ., նշվ. աշխ., էջ 979, 989:

⁶⁰⁸ Տե՛ս «Լոյս», N 57-60, սեպտեմբերի 30, 2002, էջ 2:

⁶⁰⁹ Տե՛ս Թաղևադյան Ռ., նշվ. աշխ., էջ 56:

⁶⁰⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10.06.2003:

⁶⁰⁵ Տե՛ս «دانشنامه ایران برای منی», էջ 248, 250, 251:

Գառնի գյուղում հիմնած գորգագործական արհեստանոցում վերականգնում էին հնամաշ գորգեր և գործում նորերը: Վերջիններին էքզիզները նկարում էր Մարկոս Գրիգորյանը ուրարտական նախշերով⁶¹⁰:

Հաջորդ իրանահայ գործիչը նկարիչ Արմոնդ Այվազյանն (1964-2009) է, որի գործերը ներկայացվում են 2004 թ. հունիսի 12-ին Իրանի արվեստագետների «Երեք սերունդ» խորագրով ցուցահանդեսում: Թեհրանի ժամանակակից արվեստների թանգարանն ընտրում է նրա գործերը Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրելու համար: Այվազյանի «Խորհրդավոր ընթրիք» կտավը տեղափոխվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարան⁶¹¹:

Նշված ցուցահանդեսում նորարար ստեղծագործողների աշխատանքների թվում են եղել ավագ սերնդի իրանահայ արվեստագետներ Մարկոս Գրիգորյանի, Էդման Այվազյանի և Սիրաք Մելքոնյանի, իսկ երիտասարդ արվեստագետների բաժնում Արմոնդ Այվազյանի և Արմինե Թեյմուրյանի աշխատանքները: Ցուցահանդեսի կազմակերպիչն է եղել իրանահայ լրագրող, արվեստագետ, «Լազար» արտ-մոդելն թանգարան ցուցահանդեսի հիմնադիր ժանետ Տիգրանուհի Լազարյանը (1931-2014)⁶¹²: Լազարյանն է կազմակերպել նաև 2001 թ. Իրանի ժամանակակից արվեստի թանգարանում Հայաստանի նկարիչների գործերի ցուցահանդեսը⁶¹³:

Գիտական համագործակցության բնագավառում կարելի է ներառել իրանահայ ճարտարագետ Աբրահամ Այվազյանին: Նրա նախագծով 2002 թ. նոյեմբերի 25-ին իր աշխատանքն է սկսում Իրանում կառուցված առաջին հողմաէներգետիկ կայանը՝ «KAMI-600»⁶¹⁴ անվանումով Իրանի Մանջիլ քա-

ղաքից հարավ՝ Բաբայիան գյուղի բարձունքներում: Կայանի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 2003 թ. հունվարի 27-ին Էներգետիկայի նախարար Բիթարաֆի ներկայությամբ⁶¹⁵: Ի դեպ, 2002 թ. ՀՀ պատվիրակությունը Թեհրանում իրանական կողմի հետ պայմանավորվում է Այվազյանի նախածեռնությունը ՀՀ-ում օգտագործելու համար:

Այսպիսով, միջնադարյան համագործակցության շրջանակներում ակնհայտ է Իրանի հայ համայնքի մասնակցությունը տարբեր նախածեռնություններում: Միջպետական հարաբերությունների մակարդակով աշխուժորեն ներգրավված իրանահայ համայնքին և նրա մտավորականությանը հնարավորություն է ընձեռված իր գործունեությունը ծավալել նաև հայրենիքում, կապեր հաստատել մշակույթի, գիտության, արվեստի հայաստանաբնակ գործիչների հետ, կատարել փորձի փոխանակում:

⁶¹⁰ Տես Գառնի արհեստանոց, էջ 370:

⁶¹¹ Տես նույն տեղում, էջ 384:

⁶¹² Տես «Ալիք», 18.07.2004:

⁶¹³ Տես «Լույս», N 190, օգոստոս 2014, էջ 1:

⁶¹⁴ «KAMI-600»-ը 600 կիլովատ էներգիա արտադրությամբ ամենախոշոր

հողմաէլեկտրակայանն է Իրանում, որը փոխանցում է էներգացանցին:

⁶¹⁵ Տես «Ալիք», 15.02.2004:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել.

«Հ-ԻԻՀ» հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ քաղաքական իշխանությունների միմյանց հաջորդելուն և փոփոխություններին, ԻԻՀ-«Հ» հարաբերությունների պահպանումը, զարգացումն ու խորացումը կարևոր նշանակություն ունեն երկու պետությունների համար: Հետխորհրդային տարիներին, այսօր և ապագայում ԻԻՀ-ն կարևորել ու կարևորելու է «Հ-ի կայունությունը և անվտանգությունը: Թեհրանն աչալրջորեն հետևում է ինչպես «Հ-ի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական, այնպես էլ ներքաղաքական զարգացումներին՝ այն ընկալելով որպես տարածաշրջանային անվտանգության պահպանման բաղկացուցիչ մաս:

«Հ-ԻԻՀ» սահմանակից պետությունների ընդհանուր շահերը տարածաշրջանում հնարավորություն են տալիս երկկողմ արդյունավետ և փոխշահավետ միջպետական հարաբերություններ հաստատել ու զարգացնել: «Հ-ն, չլինելով ՆԱՏՕ-ի և հակառակը լինելով ԱՊՀ և ՀԱԳԿ անդամ պետություն, իրանական կողմից 1990-ական թթ. ընդունվել է որպես առավել վստահելի գործընկեր և հույսեր ներշնչում Թեհրանին, հատկապես՝ ՌԴ-ի հետ հարաբերությունները խորացնելու առումով:

Թեհրանի նախաձեռնած տնտեսական բազմակողմ համագործակցությունն, ըստ էության, կարող է լիովին աշխատել բնական դաշնակիցներ ԻԻՀ-ՌԴ-«Հ» եռակողմ ձևաչափի դեպքում, որն իր քաղաքական և տնտեսական ռեսուրսներով ի գորու է չեզոքացնել համաթուրանականության սպառնալիքը: Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ 2000-ական թթ. սկզբներին իրականացրած ներդրումային նոր քաղաքականության շնորհիվ իրանական կողմն իր մասնաբաժնով չեզոքացրել է տարածքային հնարավոր փոփոխությունների՝ Մեդրին Արցախի դիմաց Փոլ Գորլի ծրա-

գիրը: Ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում նպատակային է 1990-ական թթ. քննարկումների մակարդակում մնացած, սակայն մեծ ներուժ ունեցող «Հ-ԻԻՀ»-Հնդկաստան եռակողմ համագործակցությունը, որն ի գորու է չեզոքացնել համաթուրանականության սպառնալիքը:

Ինչ վերաբերում է Արցախի հիմնահարցի նկատմամբ ԻԻՀ-ի վերաբերմունքին, ապա այն քարացած ու անփոփոխ չի եղել: Եթե սկզբնական շրջանում Թեհրանը պնդում էր, որ հայկական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն Արցախից ու հարակից տարածքներից և դրանք պետք է վերադարձվեն իր իսկական տիրոջն՝ Ադրբեջանին, ապա հետագայում, զինադադարի հաստատումից հետո, տարբեր քաղաքական գործոնների ազդեցության ներքո իրանական կառավարությունը փոխում է իր տեսակետը և որդեգրում այն ձևակերպումը, որ «Ղարաբաղի հիմնահարցը ռազմական ուժում չունի և այն պետք է լուծվի արդարության հիմքի վրա»:

Պետք է ընդգծել, որ չնայած հայկական կողմի բազմաթիվ հորդորներին, Թեհրանը սկզբնապես երկրորդական է համարել Արցախի կարգավիճակը քննարկելը իր նախաձեռնած միջնորդական առաքելության և մաքրբային դիվանագիտության շրջանակներում: Ավելին՝ 1990-ական թթ.-ից մինչ օրս պաշտոնապես հանդես է եկել Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման օգտին:

«Հ-ԻԻՀ» հարաբերությունների սկզբնավորման և կայացման առաջին տարիներին որոշակի ազդեցություն է ունեցել Բաքվի կազմակերպած սադրանքները, որոնք նպատակաուղղված էին «Հ-ԻԻՀ» հարաբերությունները վերացնելուն: Այդ նպատակով մշակված և պարբերաբար թարմացված ու գործադրված ադրբեջանական քաղաքականությունը տարածվում էր «Հ-ԻԻՀ» քաղաքական և տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև իրանահայ համայնքի անվտանգության վրա: Թեև պաշտոնական Երևանը և Թեհրանը գտան այդ քաղաքականությունն անտեսելու բանաձևը, այդուհանդերձ, որոշ դեպքերում դա կողմերից պահան-

ջել է հավելյալ աշխատանքային ներուժ և ռեսուրսներ, ժամանակ և մեծ կամք, իսկ երբեմն էլ՝ առաջացրել է երկկողմ կապերին սպառնացող խնդրահարույց ու վտանգավոր իրավիճակներ:

ՀՀ-ԻԻՀ տնտեսական համագործակցության կայուն և շարունակական զարգացումն արդիական և հրամայական նշանակություն ունի: Հեռանկարային են համագործակցությունը հեռահաղորդակցության, ՀՀ-ի մարզերի և ԻԻՀ-ի նահանգների միջև, էներգետիկայի և այլ ոլորտներում: ԻԻՀ-ն և ՀՀ-ն նոր ծրագրեր իրականացնելու համար պետք է համախմբեն իրենց հնարավորությունները:

ԻԻՀ-ՀՀ տնտեսական համագործակցությունը չի զարգացել անշեղորեն դրական և կայուն դինամիկայով: Այստեղ եղել են ակնհայտ ելևէջումներ, երբ իրանական ապրանքները կամ ողողել են ՀՀ շուկան, կամ էլ ՀՀ տնտեսության զարգացման ու այլ երկրներից ներմուծումների մեծացման պատճառով, դուրս մղվել այնտեղից: Միանշանակ է, որ ԻԻՀ-ի հետ հարաբերությունների խորացման համար լավ հիմք և հեռանկար կարող է դառնալ էներգետիկ բնագավառը:

1990-ական թթ. անհատ ձեռներեցների կողմից ՀՀ-ի դեսպանությանը տնտեսական բնույթի բազմաթիվ առաջարկություններով դիմելը նշանակում էր, որ Թեհրանը խուսափելով պետական առաջարկից՝ իրականում ձգտում էր քաղաքական հարցադրումներից զերծ մնալ: Համագործակցության ձկուն և հնարավորինս անսխալ այդ գործելառնով ԻԻՀ-ն խուսափում էր Ադրբեջանի կողմից սանձազերծած հակաիրանական (մասամբ նաև՝ հակահայկական) քարոզչական հնարավոր հեղեղից: Եթե ՀՀ կառավարությունը երաշխավորում էր ԻԻՀ-ի հետ հարաբերությունների կայունությունն ու հուսալիությունը, ավելին, ԻԻՀ-ի հետ հարաբերություններում հայկական կողմն իրեն կարող էր թույլ տալ բացարձակապես հաշվի չառնել Ադրբեջանի վերաբերմունքը, ապա նույնը չի կարելի ասել ԻԻՀ-ի դեպքում: Հակառակը՝ ԻԻՀ-ն ինչ-որ չափով «կաշկանդված» էր և խուսափում էր Բաքվի հիստերիայից:

Տնտեսական համագործակցության ձեռքբերում պետք է դիտարկել 1990-ական թթ. կեսերին Արաքս գետի վրա համատեղ կամուրջի կառուցումը, ինչպես նաև 2000-ական թթ. սկզբներին մեկնարկած էներգետիկ ծրագրերի իրականացումը:

ԻԻՀ-ՀՀ միջպետական համագործակցության ձևավորման և զարգացման մեջ իր որոշակի ներդրումն է ունեցել բազմաթիվ գործառույթներ ապահովող Իրանի հայ համայնքը: Հիրավի, մեծ է Իրան-Հայաստան պալատի դերը, որը ՀՀ դեսպանության տնտեսական բաժնի բացակայության պայմաններում կատարել է նաև այդ կարևոր գործառույթը՝ իրանահայ անվանի բարերար և գործարար Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ:

ՀՀ-ԻԻՀ համագործակցությունն ունի մեծ հնարավորություններ գիտական, կրթական և հոգևոր-մշակութային ոլորտներում: Միջմշակութային հարաբերությունները պետք է դիտարկել որպես միջքաղաքակրթական քրիստոնեության և իսլամի խաղաղ գոյակցության կեցութաձև: Ըստ էության, այն իր խորքում պարունակում է հայ ազգային քրիստոնեական արժեհամակարգի բարիդրացիությունն իսլամի շիա կրոնական ուղղությունը պետական գաղափարախոսություն և աշխարհայացք հռչակած աստվածապետական ԻԻՀ-ի հետ:

«Այգաբացի տասնօրյակ» ամենամյա փառատոնի շրջանակներում ՀՀ տարբեր մշակութային օջախներում Իրանի իսլամական մշակույթի ներկայացումը Երևանում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի կազմակերպմամբ վկայում է մշակութային հարաբերությունների բարձր մակարդակի վերաբերյալ:

